23293
23294

892.7
Z-14

2003

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

892.7
3-14

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱԲԱԿԱՆ ՎԷՊԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. Մ.

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1870

24815-Կ-3

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1853ին Արշալոյս Արարատեան հանդէսին մէջ Հազար ու Մէկ Գիշերները բարեյիշատակ Յէսէեան Յարութիւն կտոր կտոր հրատարակելու սկսած և գործը մեծամասամբ անաւարտ ձգած ըլլալով՝ այս անգամ Մեծ. Սուքիաս Յէսէեան նոյնն 'ի կատար հանելու առաջարկեց մեզ։ Իր խնդիրն՝ իբր թարգմանիչ՝ յանձն առինք։

Թերևս կարծուածէն գլուխներ զարմանան և դժգոհ գտնեն այսպիսի երկի մը թարգմանութիւնը՝ թող հրատարակութիւնն, այնպիսի դար մ'ուր միայն Ֆէնելոն, Լըսաժ, Մարմոնթէլ, Մոնթէսքիէօ բառերն ամէն կողմէ դուռ ու դրսումը կը հանեն, և Յէնի, Յէրէի զոյգներ մեր մամուլին լեզուին յարմար ճարակ կը համարին . . . ։ Մենք չենք մեղադրեր այսպէս խօսողներու եռանդն և կը յորդորենք որ ամէն թարգմանիչ, գրագէտ և տպարան իրենց ընկածն ընեն բնութեամբ ազգին համար և ազգը միշտ շահաւոր կ'ընէ. սակայն կը զարմանանք միանգամայն որ արևելեան երևակայութեան այս համայնածանօթ հրաշակերտը մինչցարդ հինաւուրց արևելեան ազգէ մը թարգմանուած չըլլայ, թէև անոր անունն ամենուն բերնին մէջ կը պտըտի, և շատերը ծաղու համար կը յիշեն՝ երբ իրենց հանճարի բարձրութիւնը հասկցնել ուզեն, ինչպէս որ անցածները արհամարհօտ երեսով կ'ըսէր ինծ նորելուկ պարոն մ'որ իր գրասեղանին առջև նստած՝ մէկ ձեռքը Հէժէլի Քէյլօֆոտյոլինեան Էրտասոնէի վրայ դրեր էր և միւսը Ռըմանի Քերթուածը կը քրքրէր. — Է՛հ, դու ալ, բան չես գտեր և Հազար ու Մէկ Գիշերները թարգմանելու սկսեր ես . . . ։

— Չէ թէ քեզի համար — ըսի անոր — այլ անապատի այն ճամբորդին համար որ գետինը գտած անդամանդը մէկդի կը նետէ և կաթիլ մը ջրի կը կարօտի որ իր պապակը մարէ, չէ թէ քեզի համար, որովհետև դու շատ բարձր ես Վօլդէրէն, Նափոլէօնէն*, Քանինկէն, որոնք կարդալով առէպ կ'զմայլէին Հազար ու Մէկ Գիշերներուն վրայ։ Դու ալ Հէժէլդ թարգմանէ, և եթէ կարող ես մամուլ մը գտիր զայն տպելու, մանաւանդ՝ ընթերցող մը զայն կարդալու . . . . ։

---

*Կ'ըսուի թէ Նափոլէօն այս վէպերէն այնքան ախորժեր էր, որ երբ 'ի Սուրբ Հեղինէ կղզին՝ իր մտերիմներուն մէկուն աղաչէր որ խրատութիւն մը, պատմութիւն մը զրուցէ, սովորաբար կ'ըսէր. «Նուշէնէ, քոյր իմ Տինարզատ, եթէ չէ ննջեր, ինծի բան մը պատմէ։»

Պետական Գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան
3900-56

Գիրք մ՚որ համաշխարհային համբաւ մը ստացած է, չկրնար, ինչպէս որ ոմանք կը դատեն առանց կարդալու, թեթեւ ու տղայական երեւակայութեան մը ծնունդն ըլլալ. գիրք մ՚որ երեւելի հեղինակներու նիւթ տուած է, Արիոստին, Վօլթէրին եւ այլն, եւ մեծ ու պզտիկ հաճութեամբ կը յիշեն, անտարակոյս ներքին արժէք մը պիտի ունենայ:

Այս արժէքը կը կայանայ այն բարոյական դասերուն մէջ որով գիրքը լի է, այն նախնական ճշմարտութիւններու մէջ որոց Արեւելք աւանդապահն է եւ որ ամէն ժողովրդոց եւ ժամանակի իմացական պիտոյքը կը կազմեն, այն հետաքրքրութեան վրայ զոր ամէն մարդ կը տածէ հրաշալի, այլանդակ բաներու համար:

Եթէ յունական դիցաբանութիւնն իմաստասիրին աչաց առջեւ մարդկային կատարելութեանց եւ կրից զարդարուն ու սքօղեալ պատկերը կ՚ընծայէ, Հազար ու մէկ գիշերներն ալ արեւելեան աշխարհի պէս պէս սովորութիւններն, բարքն ու վարքը կը նկարագրեն առասպելական ոճով: Առակն Արեւելքի հարազատ ծնունդն է: Երբ մարդ ճշմարտութիւնը մարդկան մէջ չհամարձակիր խօսելու, զայն անասուններու բերնով կը պատմէ ասուններու, ըստ որում բռնութիւնը միշտ զինաթափ կը մնայ անասուն էակներու առջեւ, եւ բռնաւորը կը ներէ իր ծիծաղը շարժող առակախօսին համար: Բնութեան անշունչ արարածներն եւ մէրթ մնացածին էակներ կը շարժին, կը խօսին, կը գործեն: Ձին, թռչունը, ծառը լեզու կ՚ունենան եւ ընտիր ընտիր առածներ կ՚ըսեն, անուս միտքերու համար դիւրըմբռնելի եւ ուսեալներուն համար անգամ խրատական եւ զուարճալի:

Այս առածներն ամէն վէպի մէջ կը գտնուին եւ իմաստալից են: «Գաղտնիքդ պահէ, կ՚ըսէ Ջօպէիտ, եւ մէկու մ՚ըսեր. զայն յայտնողն ա՛լ անոր տէրը չէ: Եթէ քու միտքդ անկարող է պահել գաղտնիքդ, ինչպէս քու արտակցիդ միտքը պիտի կարենայ զայն պահել:» Ո՞վ չգիտեր սա ուշիմ առածն որ այս ազնիւ նշանաբանը կը յայտնէ՝ [illegible]: «Բարիզատ իշխանուհիին իմաց կու տան թէ թռչուն մը կայ որ կը խօսի եւ ծառ մ՚որ կ՚երգէ: Իշխանուհին այս հրաշալի բաները ձեռք ձգելու կը բաղձայ եւ իր փափաքին չհասնելուն կը տրտմի: Իր եղբայրները ճամբայ կ՚ելնեն որ զանոնք գտնեն, բայց չեն յաջողիր: Բարիզատ՝ իր եղբարց ճամբայ ցուցնող տերվիշին կը դիմէ, եւ խոհեմութիւն կը բանեցնէ, վասն զի կենաց մէջ՝ աղաւնիի պէս պարզ եւ օձի պէս խոհեմ ըլլալ պէտք է, իր ականջներուն մէջ բամպակ կը դնէ եւ կ՚սկսի անվեհեր ելնել լեռն ՚ի վեր ուր կը գտնուէր իր փառասիրութեան առարկան: Ճամբան ձայներ, աղաղակներ, նախատինքներ, նախանձոտ մարդոց զրպարտիչ սլաքները կը լսէ անորոշակի, եւ զանոնք անգոսնելով կը ծիծաղի, եւ կը տեսնէ որ ականջներուն մէջ դրած բամպակը մեծ օգուտ ունի իր ընթացքն անվրդով շարունակելու.

՚ի վերջէ այնչափ բարձր կ՚ելնէ որ վանդակն ու թռչունը կը տեսնէ, իսկ այս ալ վայրահաչներուն միանալով կը պոռար. «Անմիտ կին, վար իջիր, մի մօտենար:» Բայց իշխանուհին թռչունին տեսքէն աւելի վառուելով՝ ընդ առաջ կը ճեմէ, լեռան կատարը կը հասնի, շիտակ վանդակին կը վազէ եւ ձեռքը վրան կը դնէ ըսելով. «Թռչուն, բռնեցի քեզ կամացդ հակառակ, ձեռքէս ազատում չունիս:» Ամէն մարդ որ ազնիւ նպատակի մը հասնելու փառասիրութիւնն ունի, Բարիզատ իշխանուհիին պէս կ՚ընէ, ականջները կը գոցէ եւ անվեհեր կը քալէ, [illegible]:

Վերջը չենք բերեր եթէ ամէն ուշիմ եւ իմաստալից առածները նշանակենք: Շատերը՝ լոկ անգամ մը կարդալէն ետեւ՝ կը յիշեն, Կանէմի կամ սիրոյ գերիին արկածներն, Ալատէն եւ իր հրաշալի լապտերը, Զէյն Ալասնամի, ճիներու թագաւորը, Նախանձոտն՝ որ իր նախանձած անձին մեծութեան պատճառ կ՚ըլլայ, եւ այլն եւ այլն:

Կարծիք կայ թէ Հազար ու մէկ գիշերները Հէճիրի Դ դարուն յօրինուած են. Եւրոպայի մէջ Լուի ԺԴի դարուն երեցան, թէեւ մեր մէջ աւանդութեամբ ՚ի վաղուց ծանօթ են:

Երեւելի ու գիտուն արեւելագէտ՝ Ա. Կալլանի արաբերէնէ թարգմանած եւ Գ. Բէբրըվալի աւարտած Հազար ու մէկ գիշերները կը ծառայեն մեր թարգմանութեան: Մեր խօսքը կը լրացնենք Լա Հարբի հետեւեալ խորհրդածութեամբ:

«Հազար ու մէկ գիշերներն Արեւելք տիրող ժողովրդոց տեսակ մը տրամական նկարագիրն է: Իրենց կանանց յանդգնութիւնն ու հնարագիտութիւնն, որոնք՝ որչափ խստիւ կաշկանդուած՝ նոյնչափ ժպիրհ են եւ դիմագրաւ, իրենց կրօնաւորներուն կեղծաւորութիւնը, դատաւորներու կաշառակերութիւնը, գերիներուն խարէութիւններն, ամէն ինչ հաւատարմաբար, եւ ամենէն անսուտ ճամբորդին ընելիք պատմութենէ աւելի լաւ նկարագրուած են անոր մէջ: Կը գտնուին նաեւ այնհին աւանդութիւններէն շատերը՝ զոր շատ ազգեր ըստ քմաց իրենց սեփհականած են. դիւրին է ճանչել անոնց մէջ Փէտրայի եւ Կիրկէի պատմութիւնը: Շատ կտորներ Հրէից պատմական գիրքերու զրոյցներուն կը նմանին: Ցովսէփայ արկածն, որ հնութեան մէջ աւանդած պատմութիւններէն ամենէն սրտառուչն է, նախանձու նշանակ մը, որ եղբայրներ եղբօր մը դէմ կը զինէ, արաբական վէպերուն մէջ ալ կը գտնուի, սակայն եբրայական գործին մէջ պատմուածէն աւելի տարբեր կերպով մը:»

Զմիւռնիա, 11 մայիս 1870:

Մ. Մ.

ՀԱԶԱՐ ՈՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ԱՐԱՊԱԿԱՆ ՎԷՊԵՐ

Պարսկաստանի հին Սասանեան թագաւորներն՝ իրենց պետութիւնը՝ Հնդկաստան, ասոր տակ գտնուող մեծ ու պզտիկ կղզիներն, ու Գանգէս ետէն շատ հեռու՝ մինչև Չինաստան տարածեր էին։ Տարեգիրները կը պատմեն թէ՝ ատենօք այս հզօր ազգին մէջ թագաւոր մը կար որ ժամանակին ամենէն լաւ իշխանն էր։ Իր իմաստութեան ու խոհականութեան համար այնչափ սիրելի եղեր էր իր հպատակներուն՝ որ իր զօրութեանն ու պատերազմասէր և բարեկիրթ զօրացը համբաւին պատճառաւ դրացի ժողովրդոց ահարկու դարձեր էր։ Այս իշխանն երկու զաւակ ունէր, անդրանիկն՝ որ Շահրիար կ'ըսուէր, իր հօրն արժանաւոր ժառանգն ու անոր պէս առաքինի էր. կրտսերն՝ որ Շահզէնան կը կոչուէր, իր եղբօրմէն վար չէր մնար արժանաւորութեան կողմէն։

Երկար ու փառաւոր իշխանութիւն մը վարելէն ետև՝ այս թագաւորը մեռաւ, և Շահրիար աթոռը նստաւ։ Շահզէնան՝ պետութեան օրինաց համեմատ՝ ժառանգութենէ անմասն մնաց, պարզ մարդու պէս կեանք վարեց, և իր եղբօրը բաղդին նախանձելու տեղ՝ միտքը դրաւ անոր հաճելի դառնալ. և դիւրաւ յաջողեցաւ։ Շահրիար՝ որ բնականաբար այս իշխանին վրայ սէր ունէր, զմայլեցաւ անոր բարեսրտութեան վրայ՝ և սաստիկ բարեկամութենէ շարժած՝ իշխանութիւնն անոր հետ բաժնել ուզելով՝ Մեծ-Թաթարստանի թագաւորութիւնն ա-

նոր պարգևեց։ Շահզէնան շուտ մը ճամբայ ելաւ այս իշխանութիւնը վարելու և բնակութիւնը Սմրղանդ մայրաքաղաքը հաստատեց։

Արդէն տասն տարի անցեր էր որ այս երկու թագաւորներն իրարմէ զատուեր էին. Շահրիար իր եղբայրը տեսնելու սաստիկ կը փափաքէր. ուստի միտքը դրաւ դեսպան մը ղրկելու հրաւիրելու որ գայ հետը տեսնուի։ Այս դեսպանութեան համար առաջին վէզիրն ընտրեց. այս ալ իր աստիճանին վայել սպասաւորներով ճամբայ ելաւ և ըստ կարի արտորաց։ Երբոր Սմրղանդ քաղաքին մօտեցաւ, Շահզէնան անոր գալուստը լսեց, իր արքունի նախարարներն առաւ անոր առջին ելաւ. ամէնքն ալ սուլթանին պաշտօնէին պատիւ ընելու համար փառաւոր հագուստներ հագեր էին։ Թաթարստանի թագաւորը մեծ ուրախութեամբ ընդունեց զանի և նախ իր եղբօրը սուլթանին վրայօք լուրեր հարցուց։ Վէզիրն անոր հետաքրքրութիւնը գոհ ըրաւ և ապա իր դեսպանութեան նպատակը յայտնեց։ Շահզէնանի սիրտն ելաւ և ըսաւ. — «Իմաստուն վէզիր, սուլթան եղբայրս մեծ պատիւ կ'ընէ ինծ և ասկէ աւելի հաճելի բան մը չէր կրնար առաջարկել։ Թէ որ զիս տեսնելու կը փափաքի, ես ալ նոյն փափաքն ունիմ։ Ինչպէս որ ժամանակն իր բարեկամութիւնը չպակսեցուց, ինծ ալ անխափան պահեց։ Տէրութիւնս հանդարտ է, և միայն տասն օր ժամանակ կը խնդրեմ ձեզի հետ մեկնելու։ Ուստի հարկ չէ որ այսչափ քիչ ատենուան համար քաղաք մտնէք։ Կ'աղաչեմ որ այս տեղ դադար առնէք և ձեր վրանները կանգնել տաք։ Երթամ ապսպրեմ որ ձեզի և ձեր բոլոր սպասաւորներուն առատ պաշար բերեն։» Այս բանս շուտ մը գործադրուեցաւ. Թագաւորը Սմրղանդ մտնելուն՝ բազմառատ ուտելիք և մեծագին պարգևներ ղրկեց վէզիրին։

Այսպէս Շահզէնան մեկնելու պատրաստելով՝ ամենէն ստիպողական գործերը կարգի դրաւ. խորհուրդ մը հաստատեց որ իր բացակայութեան ատեն տէրութիւնը կառավարէ, և այս խորհուրդին գլխաւոր մը կարգեց՝ որուն իմաստութեանը քաջածանօթ ըլլալով՝ վրան մեծ վստահութիւն ունէր։ Տասն օրուան մէջ բոլոր սպասաւորները պատրաստ ըլլալով՝ իր կնոջը թագուհւոյն մնաս բարև ըսաւ, իրիկուան

դէմ Սմրղանտէն ելաւ, և իրեն ուղեկից պաշտօնատարներով արքայական տաղաւարը գնաց, զոր վէզիրին վրաններուն մօտ կանգնել տուեր էր։ Մինչև կէս գիշեր այս դեսպանին հետ խօսակցեցաւ և իր սիրելի թագուհին նորէն համբուրել փափաքելուն՝ վասն զի շատ կը սիրէր զանի, մէն մինակ պալատը դարձաւ։ Շիտակ թագուհիին սենեակը գնաց, որ իր թագաւորը տեսնելու յոյս չունենալով իր անկողինն ընդուներ էր տան պաշտօնէուհիներէն մէկը։ Արդէն շատ ատենէ վեր պառկեր էին և երկուքնին ալ խորունկ քուն մը կը քաշէին։

Թագաւորն անձայն ներս մտաւ, իր յանկարծական գալուստովը սիրասուն ամուսնոյն զարմանք պատճառելու յուսով։ Բայց յետին ծայր ապշեցաւ մնաց, երբ կանթեղներուն լուսովը, որոնք գիշեր ատեն իշխաններուն և իշխանուհիներուն սենեկաց մէջ վառ կը մնային, մարդ մը նշմարեց անոր գրկաց մէջ։ Քանի մը վայրկեան անշարժ կեցաւ և չգիտէր թէ արդեօք հաւտայ տեսածին։ Բայց, վերջապէս կասկածը փարատելով «Ինչ, ըսաւ ինքնիրեն, հազիւ թէ պալատէս դուրս ելայ, դեռ Սմրղանտի պարիսպներուն մէջն եմ և իմ պատիւս մրոտելու կը յանդգնին։ Ա՛խ, նենգաւոր, յանցանքդ անպատիժ չպիտի թողում։ Իբր թագաւոր, պէտք է որ տէրութեանս մէջ գործուած ոճիրները պատժեմ, իբր անարգուած ամուսին՝ պէտք է որ իմ արդար զայրոյթիս քեզ զոհ ընեմ։» Վերջապէս այս անբաղդ իշխանին աչքերը դառնալով՝ սուրը քաշեց, անկողնին մօտեցաւ և մէկ հարուած տալով երկու յանցաւորները քունէն մահուան անցուց։ Վերջը մի առ մի բռնելով՝ պատուհանէն վար՝ պալատին բոլորտիքը գտնուած փոսին մէջ նետեց։

Այս կերպ վրէժն առնելով՝ եկածին պէս քաղքէն դուրս ելաւ և իր վրանը քաշուեցաւ։ Հազիւ թէ հասաւ, առանց իր ըրածը մարդու մը յայտնելու, հրաման տուաւ որ վրանները ծալլեն և ճամբայ ելնեն։ Անմիջապէս ամէն բան պատրաստ եղաւ, և դեռ առտու չեղած՝ թմբուկներու և ուրիշ նուագարաններու ձայնով ճամբայ ընկան, որոնք ամէնուն ուրախութիւն կ'ազդէին, բայց 'ի թագաւորէն։ Այս իշխանը՝ թագուհւոյն անհաւատարմութեան վրայ անդադար մտածելուն՝ բոլոր ճամբորդութեան ատեն սոսկալի մելամաղձութեամբ կը տանջուէր։

Երբոր Հնդկաստանի մայրաքաղաքին մօտեցաւ, տեսաւ որ սուլթան Շահրիար իր բոլոր արքունիքով զինքը դիմաւորելու եկեր է։ Մեծ եղաւ այս իշխաններուն խնդութիւնն երբ զիրար տեսան։ Երկուքնին ալ ձիէն վար իջան և զիրար գրկեցին, և սիրոյ շատ մը նշաններ տալէն ետք՝ նորէն ձի հեծան և քաղաք մտան ժողովրդեան անհամար բազմութեան մ'ուրախութեան աղաղակներով։ Սուլթանն իր թագաւոր եղբօրը հետ՝ մինչև անոր համար պատրաստել տուած պալատը գնաց։ Այս պալատն իրենին հետ նոյն պարտէզով կը հաղորդակցէր. այնքան փառաւոր էր որ պալատան մեծ հանդէսներն ու խրախճանութիւններն այն տեղ կը կատարուէին. իսկ նոր կարասիներ ալ դնել տալով անոր շքեղութիւնն աւելցուցեր էր։

Շահրիար Թաթարստանի թագաւորը մինակ թողուց որ բաղնիք մտնէ և լաթերը փոխէ. բայց երբ բաղնիքէն ելնելն իմացաւ նորէն անոր քովը դարձաւ։ Սօֆի մը վրայ նստան, և որովհետև պալատականները պատկառանօք հեռու կը կենային, այս երկու եղբարք, որ աւելի կապուած էին բարեկամութենէ քան արենակցութենէ, սկսան իրարու հետ խօսակցիլ այնպիսի բաներու վրայ որ երկար բացակայութենէ մ'ետքը կարելի է գտնել։

Ընթրիքի ժամը հասնելուն, միասին սեղան նստան. ապա նորէն խօսքի սկսան, մինչև որ Շահրիար տեսնելով որ գիշերը տարաժամեր է, իր սենեակը քաշուեցաւ որ եղբայրը հանգստանայ։

Դժբաղդ Շահզէնան անկողին մտաւ. բայց որչափ որ իր սուլթան եղբօրը ներկայութիւնը ժամանակ մ'իր ցաւերը դադրեցուցին, դարձեալ աւելի բռնութեամբ երևան ելան։ Հանգիստ վայելելու տեղ, որուն շատ պէտք ունէր, շարունակ դառնակսկիծ մտմտուքի մէջ կ'իյնար։ Թագուհիին անհաւատարմութեան բոլոր պարագաներն այնպէս սաստիկ կը պաշարէին իր երևակայութիւնն, որ գրեթէ վրան խենդութիւն կ'գար։ Ի վերջէ, չկրնալով քնանալ, անկողնէն ելաւ, և այնպիսի վշտալի մտմտուքի մէջ ընկղմեցաւ որ դէմքին վրայ տրտմութեան մուայլ մը կ'երևէր. սուլթանն այս բանս նշմարեց իսկոյն և ինքն իրեն ըսաւ։ «Ի՞նչ ունի արդեօք Թաթարայ թագաւորն։ Իր վրայ տեսնուած

տրտմութեան պատճառն ո՞վ կրնայ ըլլալ։ Արդեօք իրեն ըրած ընդունելութենէս դժգոհ ըլլալու դրդիչ մ'ունի՞։ Ո՛չ, ես իմ սիրական եղբօրս պէս ընդունեցի զինքն, և այս մասին մեղապարտ չեմ։ Ո՞վ գիտէ, կարելի է իր տէրութենէ կամ իր թագուհիէն հեռու գտնուելուն կը վշտանայ։ Ա՛հ, թէ որ իր տրտմութեան շարժառիթն այս է, պէտք է որ անյապաղ անոր համար որոշած պարգևներս տամ որպէս զի երբոր ուզէ մեկնի, Սմրղանտ դառնայ։» Եւ իրաւի, հետևեալ օրը Շահրիար՝ Հնդկաստանի մէջ գտնուած ամենէն հազուագիւտ, ընտիր և ճոխ բաներէն անոր ընծայ ղրկեց։ Սակայն միւս կողմէն ալ նոր նոր զբօսանքներ պակաս չէին ըներ զանի զուարճացնելու համար. բայց ամենէն զուարճալի հանդէսներն անոր հաճոյք տալու տեղ՝ աւելի իր ցաւերը կը գրգռէին։

Օր մը Շահրիար հրամայեց որ որսի պատրաստութիւն տեսնուի. այս որսորդութեան պիտի ելնէր մայրաքաղաքէն երկու օրուան ճամբայ հեռու երկիր մ'ուր շատ եղջերուներ կային. Շահզէնան աղաչեց որ ներէ իրեն եթէ չէ կարող ընկերանալ, պատճառ բերելով թէ իր առողջութեան վիճակը չթողուր որ մասնակցի որսին։ Սուլթանը չուզեց ստիպել, զինքն ազատ թողուց, և իր բոլոր դրանիկներով ուղի ընկաւ այս զբօսանքը վայելելու համար։ Երբ Շահրիար մեկնեցաւ, Մեծին–Թաթարստանի թագաւորը՝ մինակ մնալով՝ իր սենեակը քաշուեցաւ։ Գնաց պատուհան մը նստաւ որ պարտէզին վրայ կը նայէր։ Այս գեղեցիկ տեղն ու անթիւ թռչուններու դայլայլիկը կրնային իր սիրտը բանալ, եթէ սիրտը զուարճութեան բաց ըլլար. բայց թագուհւոյն անօթալի գործին աղէտալի յիշատակէն վշտացած, աչքերը պարտէզին վրայ դարձնելէն աւելի երկինք կը վերցնէր որ իր թշուառ վիճակէն գանգատի։

Սակայն, որչափ որ իր վիշտերովը կը տագնապէր, դարձեալ ակամայ բան մը տեսաւ որ իր բոլոր ուշադրութիւնը գրաւեց։ Յանկարծ սուլթանին պալատին գաղտնի մէկ դուռը բացուեցաւ, և անկէ քսան կիներ դուրս ելան, որոց մէջ սուլթանուհին կը քալէր այնպիսի դէմքով մ'որ դիւրին էր իրեն ով ըլլալը հասկնալ։ Այս իշխանուհին կարծե-

լով որ Թամթարստանի թագաւորն ալ որսի գացած է, համարձակ ա-
ռաջ անցաւ մինչև իշխանին սենեկին պատուհաններուն տակն եկաւ, և
իշխանն ալ հետաքրքրութենէ զանի դիտել ուզելով՝ այնպիսի դիրք մը
բռնեց որ առանց տեսնուելու կարող էր ամէն բան տեսնել ։ Նայեցաւ
որ սուլթանուհւոյն ընկերուհիներն՝ զովանալու համար, երեսնին բա-
ցին, թէև մինչև այն ատեն գոց պահեր էին, և իրենց երկայն հա-
գուստները հանեցին որոց տակէն կարճ զգեստներ հագեր էին ։ Բայց
արմանքը զարմանքը տարաւ զինքն երբ տեսաւ որ իրեն կին երևցող
անձերէն տասը սև մարդիկ էին, որոց ամէն մէկն իր սիրուհին առաւ ։
Սուլթանուհին ալ ընդ երկար առանց սիրահարի չմնաց, ձեռքերն ի-
րարու զարկաւ կանչելով. Մասուտ, Մասուտ, և իսկոյն ուրիշ սև
մարդ մը ծառի մը սարէն իջաւ, և մեծ եռանդով անոր քովը վազեց ։

Համեստութիւնը չներեր այս տեսութեան ամէն պարագաները
պատմել, բաւական է միայն ըսել որ Շահզէնան տեսածէն հասկցաւ
որ իր եղբայրն ալ իրեն չափ ցաւակցութեան արժանի էր ։ Այս սիրա-
յօդ խմբին զուարճութիւնները մինչև կէս գիշեր տևեցին ։ Ամէնքը
մեծ աւազանի մը մէջ՝ որ պարտիզին աւոր զարդերէն մէկն է, լու-
ցուեցան. ապա, իրենց հագուստը հագան և գաղտուկ դռնէն սե-
րայէն սուլթանին պալատը մտան. և Մասուտ որ դրսէն եկեր էր
պարտիզին պատին վրայէն անցնելով նոյն տեղէն ետ դարձաւ ։

Որովհետև այս ամէն բաները Մեծն-Թամթարստանի թագաւորին
աչաց առջև պատահեր էին, շատ մը խորհրդածութիւններու առիթ
տուին ։ «Որչափ անիրաւ եմ եղեր, կ՚ըսէր, կարծելով թէ ինձի չափ
դժբաղդ մը չկայ ։ Անտարակոյս այս պիտի ըլլայ ամէն այրերուն ան-
խուսելի ճակատագիրը, քանի որ իմ եղբայրս սուլթանն, անբաւ աշ-
խարհներու վեհապետն, երկրիս ամենէն մեծ իշխանն, այս ճակատա-
գրէն ազատ չմնաց ։ Այս այսպէս ըլլալով՝ ինչ տկարութիւն է իմ որ
վիշտերով կը մաշիմ ։ Բաւական է, ալ կենացս հանդստութիւնը չպի-
տի վրդովեմ այսպիսի դժբաղդութիւն մը յիշելով որ հասարակ է ։» Եւ
իրօք, այն օրէն վեր տրտմութիւնը ցրուեց, և որովհետև չէր ընթրած
մինչև որ պատուհաններուն տակ անցած տեսարանը չտեսնէ, հրաման

տուաւ որ կերակուրը պատրաստեն, և այնպիսի ախորժակով նստաւ
սեղանն որուն նմանն ունեցած չէր Սամարղանդէն ելնելէն վեր. նոյնպէս
յօժարութեամբ մտիկ ըրաւ ախորժելի ձայներու և նուագարաններու
ձայներն որ ընթրիքին ատեն կը նուագէին ։

Հետևեալ օրը շատ զուարթ էր, և երբ իմացաւ որ սուլթանը
դարձեր է, անոր առջևն ելաւ և խնդալից դէմքով ողջունեց զանի ։ Շահրիար
առջի բերան այս փոփոխութիւնը չդիտեց, այլ միայն մեղմաբար գան-
գատ ըրաւ իրեն որսակից չգալուն, և իր յանդիմանութիւններուն
պատասխանին չսպասած՝ պատմեց թէ որչափ շատ եղջերուներ և ու-
րիշ կենդանիներ բռնած է, և վերջապէս իր վայելած զբօսանքին վրայ
խօսեցաւ երկարօրէն ։ Շահզէնան՝ մտադիր մտիկ ընելէն ետև՝ ինքն
ալ սկսաւ խօսիլ ։ Եւ որովհետև որչափ խելացի ըլլալն արգիլող
տրտմութիւն մը չունէր, շատ մ՚ախորժելի և ծաղրաշարժ բաներ ը-
սաւ ։

Սուլթանն որ կարծէր թէ իր եղբայրն առջի տրտում վիճակին մէջ
պիտի տեսնէր, զմայլեցաւ մնաց անոր զուարթութեան վրայ ։ «Եղ-
բայրս, ըսաւ անոր, փառք կուտամ Աստուծոյ որ իմ տարակայութեանս
ատեն այդպիսի ուրախալի փոփոխութիւն մ՚եկաւ վրադ. այս բանիս
համար ճշմարիտ խնդութիւն մը կ՚զգամ, բայց քեզի աղաչանք մ՚ու-
նիմ և կը խնդրեմ որ խնդիրս կատարելու չմերժես ։ — Կարելի՞ է բան
մը մերժել քեզի, ինչ որ հրամայես Շահզէնան պատրաստ է ընելու ։
Խօսէ, անհամբեր եմ իմանալու թէ ինչ կը փափաքիս ։ — Քանի պա-
լատս եկեր ես, ըսաւ Շահրիար, տեսայ որ սև սուգերու մէջ ընկղմեր
ես և պարապ տեղը ջանացի կերպ կերպ զուարճութիւններով թախ-
ծութիւնդ փարատել ։ Կարծեցի թէ տէրութենէդ հեռու գտնուելուդ
տխուր ես, մտածեցի նաև թէ կարելի է Սամարղանդի թագուհւոյն հա-
մար ունեցած սէրդ այս տրտմութեանդ պատճառ կոյ, քանի որ կա-
տարեալ գեղեցկութեան տէր պիտի ըլլայ ։ Չեմ գիտեր թէ արդեօք
այս ենթադրութիւնս սխալ է, բայց կը խոստովանիմ որ յատկապէս չու-
զեցի քեզ նեղել որպէս զի անհաճոյ չերևիմ ։ Սակայն առանց իմ կող-
մէս առիթ մը տալու, ՚ի դարձիս կը տեսնեմ որ բոլորովին խնդումերես

ես և մարդ ազատեր է այն տրտմութեան ամպէն որ անոր ցնծութիւնը կը պղտորէր: Հիմակ ըսէ ինծի, կ'աղաչեմ, թէ ինչու համար այնչափ տրտում էիր և ինչու համար հիմա ուրախ ես:»

Այս խօսքին վրայ Մեծն-Թաթարստանի թագաւորը պահ մը մտածեց, որպէս թէ պատասխանելու բան մը կը փնտռէր: Վերջապէս այս կերպով պատասխան տուաւ: «Դու իմ տէրս ես, բայց կ'աղաչեմ մի պնդեր որ քեզ գոհ ընեմ: — Ձէ, եղբայրս, պատասխանեց սուլթանը, պէտք է որ խնդիրս կատարես, շատ կը փափաքիմ և այս փափաքս մի մերժեր:» Շահզէնան Շահրիարին աղաչանաց չկրցաւ դէմ կենալ և անոր ըսաւ. «Շատ աղէկ, եղբայրս, քանի որ կը հրամայես, պէտք է որ քեզ գոհ ընեմ:» Այն ատեն Սմրղանտի թագաւորն անհաւատարմութիւնն անոր պատմեց, և երբոր իր պատմութիւնը լմնցուց, «Ահա, ըսաւ, իմ տրտմութեանս պատճառը. հիմակ ըսէ, իրաւունք չունէի տրտում ըլլալու: — Ո՜հ, եղբայր իմ, գոչեց սուլթանն այնպիսի ձայնով մ'որով կը յայտնէր Թաթարստանի թագաւորին ցաւակից գտնուիլն, այս ինչ սոսկալի պատմութիւն է ըրածդ. ինչպէս անհամբերութեամբ մտիկ ըրի մինչև վերջը: Կը գովեմ քեզ այնպիսի ծանր նախատինք մը ընող դաւաճանները պատժելուդ: Այս գործին համար յանցաւոր չես, վասն զի արդար է, և կը խոստովանիմ որ եթէ քու տեղդ ըլլայի աւելի խստութեամբ պիտի վարուէի: Միայն կնկան մը կեանքն առնելով չպիտի գոհ ըլլայի, կարծեմ թէ իմ բարկութեանս հազարէն աւելի մատաղ պիտի ընէի: Քու ցաւերուդ վրայ բնաւ չեմ զարմանար, անոր պատճառն այնչափ կծու և բուռն է որ մարդ չկրնար դիմանալ: Ո՜հ, Աստուած, այս ինչ արկած է: Ձէ, կարծեմ որ աստ նմանը քեզմէ զատ ուրիշի հանդիպած չէ: Բայց վերջապէս պէտք է գոհանալ Աստուծմէ որ քեզ մխիթարեց. և որովհետև կասկած չունիմ որ ուրախութիւնդ հաստատ է, հիմա շնորհ ըրէ ինծի իմացնելու և ձեր սիրտն ինձի բանալու:»

Շահզէնան այս կէտին վրայ աւելի դժուարութիւն ցցուց քան թէ առաջինին, քանի որ խնդիրն իր եղբօրը կը դպչէր. բայց հարկ եղաւ անոր նորա թախանձանաց զիջանիլ: «Որովհետև անպատճառ կը պա-

հանջես, պէտք է որ հնազանդիմ: Կը վախնամ միայն որ իմ հնազանդութիւնս իմինէս աւելի տրտմութիւն չպատճառէ քեզ. բայց յանցանքն իմս չէ այլ քուկդ է, վասն զի կ'ստիպես զիս երևան հանել այնպիսի բան մը զոր կը փափաքէի յաւիտենական մոռացման մէջ թաղել:» — Այդ ըսածդ, ընդմիջեց Շահրիար, իմ հետաքրքրութիւնս աւելի կը գրգռէ, շուտ յայտնէ ինծի այդ գաղտնիքն, ինչ որ կ'ուզէ թող ըլլայ:» Թաթարստանի թագաւորը չկրնալով անոր խօսքէն ելնել, մանրամասն պատմեց սևերուն ծպտեալ կերպարանը, սուլթանուհւոյն և իր նաժիշտներուն տոփանքն, և Մասուտն ալ չմոռցաւ: «Այս վատթարուն ընթացքին ականատես ըլլալէն ետև՝ շարունակեց նա, մտածեցի թէ բոլոր կանայք այսպիսի բաներու 'ի բնէ հակում մ'ունին և թէ այս հակումին չեն կարող դէմ կենալ: Այս մտածութենէ խրատուելով ինծի այնպէս երևցաւ որ մարդ մը շատ տկարամիտ ըլլալ պէտք է որ իր հանդարտութիւնն անոնց հաւատարմութեան վրայ դնէ: Այս խորհրդածութեամբ ուրիշ բաներ ալ միտքս ընկան, և վերջապէս դիտեցի որ ինքզինքս մխիթարելէն լաւագոյն միջոց մը չկայ: Այս բանիս համար բաւական նեղութիւն քաշեցի, բայց գլուխ տարի, և եթէ կ'ուզես խօսքիս անսալ, դու ալ իմ օրինակիս հետևէ:»

Թէև այս յորդորը շատ բանաւոր էր, սուլթանին մտքին յարմար չեկաւ. մանաւանդ թէ սաստիկ կատղելով. «Ի՞նչ, ըսաւ, կարելի՞ բան է որ Հնդկաստանի սուլթանուհին այսպէս վատօրէն պոռնկանայ: Ո՛չ, եղբայր իմ, յարեց նա, չեմ կրնար ըսածիդ հաւատալ, եթէ իմ աչքովս չտեսնեմ: Աչքերդ քեզ խաբած պիտի ըլլան. այս բանս այնչափ ծանր է որ հարկ է ինձ անձամբ ստուգել: — Եղբայր իմ, պատասխանեց Շահզէնան, թէ որ գործին ականատես ըլլալ կ'ուզես, շատ դիւրին միջոց մը կայ. բաւական է որ նորէն որսի ելնելու պատրաստուիս. երբ քաղաքէն դուրս գտնուինք քու և իմ պալատականներովս, մեր վրաններուն տակ կը քաշուինք, և գիշերը մէկ տեղ իմ սենեակս կը դառնանք առանձին: Հաւաստի եմ որ միւս օրն իմ տեսածս պիտի տեսնես:» Սուլթանն այս հնարքին հաւանութիւն տուաւ և իսկոյն նոր որսորդութիւն մը պատրաստելու հրաման հանեց, այնպէս որ նոյն օրն իսկ վրաններն որոշեալ տեղը կանգնեցան:

3900-56
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна

Հետևեալ օրն՝ երկու իշխաններն իրենց սպասաւորները մէկտեղ առ-
նած մեկնեցան, իրենց օթևանելու տեղը հասան և հոն մինչև գիշեր
սպասեցին։ Այն ատեն Շահրիար իր վէզիրը կանչեց, և առանց իր
դիտաւորութիւնը յայտնելու, ապսպրեց անոր որ իր բացակայութեան
ատեն իր տեղը բռնէ, ու որ և է բանի համար մարդու մը չթողու որ
բանակէն դուս ելնէ։ Այս հրամանը տալէն ետև՝ ինքն ու Թաթա-
րստանի թագաւորը ձի հեծան, բանակէն ծպտեալ անցան և Շահզէ-
նանի բնակած պալատն երթալով՝ քնացան. իսկ հետևեալ օրը կանուխ
գացին կենալու մի և նոյն պատուհանն ուսկէ Թաթարստանի թագա-
ւորը սևերուն տեսարանին հանդիսատես եղեր էր։ Դեռ արևն ելած
չէր, առտուան զով օդը կը վայելէին և ստէպ իրենց աչքը գաղտնի
դրան կողմը կը նետէին։ Վերջապէս այս դուռը բացուեցաւ, և հա-
մառօտ ըլլալու համար, սուլթանուհին երևցաւ իր կանանց և տաս
ծպտեալ սևերուն հետ. Մասուտը կանչեց և սուլթանը պէտք եղածէն
աւելի տեսնելով՝ լիովին համոզուեցաւ իր անարգանաց և դժբաղդու-
թեան վրայ. «Ո՛վ Աստուած, պոռաց, այս ինչ նախատինք, այս ինչ
քստմնելի բան է։ Միթէ ինձի պէս ինքնակալի մը կինը կարող է այս-
պիսի վատշուէր գործ մ՚ընել։ Այսուհետև ո՞ր իշխանը կրնայ պար-
ծիլ թէ բոլորովին երջանիկ է։ Ա՛հ, եղբայր իմ, ըսաւ, գրկելով Թա-
թարստանի թագաւորն, երկուքս ալ աշխարհէ հրաժարինք, հաւա-
տարմութիւնն ալ վերցեր է. եթէ մէկ կողմէն մեզ կը գգուէ, միւս
կողմէն կը մատնէ։ Թողունք մեր տէրութիւններն և ամէն փառք, եր-
թանք օտար աշխարհներ անշուք կեանք մը վարելու և մեր թշուա-
ռութիւնը պահելու։» Շահզէնան այս առաջարկութեան չէր հաւ-
նէր, իրաւ, բայց չհամարձակեցաւ անոր դէմ խօսիլ, քանի որ Շահրի-
ար սաստիկ զայրացած էր։ «Եղբայր իմ, ըսաւ, քու կամքդ իմս է, ու-
զած տեղդ քեզի հետ գալու պատրաստ եմ, բայց խօսք տուր ինձ ետ
դառնալու, եթէ մեզնէ աւելի թշուառ մարդու մը հանդիպելու ըլ-
լանք։ — Կը խոստանամ, պատասխանեց սուլթանը. բայց կը տարա-
կուսիմ որ մեզնէ աւելի դժբաղդ մարդ մը գտնուի։ — Ես այդպէս
չեմ կարծեր, պատասխանեց Թաթարստանի թագաւորը. շատ կարելի
է որ ասոր համար երկար ճամբորդութիւն ալ չընենք։» Այս ըսելով՝

գաղտնի դուրս ելան պալատէն, և եկած ճամբանէն տարբեր ճամբայ
մը բռնեցին։ Բոլոր օրը քալեցին որչափ որ լոյս էր, և առջի գիշեր
ծառերուն տակ անցուցին։ Առտու կանուխ ելնելով՝ իրենց ճամբան
շարունակեցին մինչև որ ծովուն եզերքը դալարաւէտ մարգագետին մը
հասան, ուր տեղ տեղ տերևախիտ մեծ ծառեր կային։ Ծառի մը տակ
նստան քիչ մը հանգիստ և զովութիւն առնլու համար։ Իրենց խօսակ-
ցութեան նիւթն եղաւ թագուհիներուն անհաւատարմութիւնը։

Այն ինչ խօսելու սկսեր էին՝ երբ իրենց շատ մօտ զարհուրելի աղ-
մուկ մը լսեցին ծովուն կողմէն, ահեղ աղաղակ մ՚որ զիրենք ահ ու
դողի մէջ ձգեց։ Այն ատեն ծովը բացուեցաւ. անոր մէջէն հաստ ու
սև սիւնի պէս բան մը բարձրացաւ, որ կարծես թէ մինչև ամպերը
կ՚ելնէր ու աներևոյթ կ՚ըլլար։ Այս առարկան իրենց սարսափն աւել-
ցուց. շուտ մը կանգնեցան և ծառի մը վրայ ելան, որ իրենց ապա-
հով և թաքուն տեղ մը կը թուէր։ Հազիւ թէ ծառին վրայ ելեր էին՝
որ աղմուկն ելած և ծովը բացուած կողմը նայելով՝ տեսան որ սև սիւ-
նը ջուրը ճեղքելով դէպ ՚ի ծովեզրը կը դիմէր. նոյն միջոցին չկրցան
որոշել թէ ինչ է, բայց քիչ մ՚ետքը բանին էութիւնն իմացան։

Դենգամիտ, չարասէր և մարդկան թշնամի ճիներէն մէկն էր այն։
Սև և նողկալի դէմք մը և հսկայի մը ձևն ու տարապայման բարձրու-
թիւնն ունէր. գլխուն վրայ ապակեայ մեծ սնտուկ մը կար, որ չորս
հատ պողպատէ բարակ կղպակներով փակուած էր։ Եկաւ մարգագե-
տինը մտաւ և սնտուկը ճիշտ երկու իշխաններուն գտնուած ծառին
տակը դրաւ, որոնք տեսնելով թէ ինչ մեծ վտանգի մէջ կը գտնուէին,
ինքզինքնին կորուսած սեպեցին։

Սակայն ճինը սնտուկին մօտ նստաւ, և երբ գօտիէն կախուած չորս
բանալիով բացաւ զայն, մէջէն խիստ փառաւոր հագուած, վսեմ հա-
սակաւ և անհամեմատ գեղեցկութեամբ կին մ՚ելաւ։ Հրէշը զայն իր
քովը նստեցուց և անոր երեսը նայելով սիրովին՝ ըսաւ. «Տիկին, դու
սիրազեղ էակ, դու որ իրենց գեղեցկութեան համար զարմանք պատ-
ճառող կանանց մէջ ամենէն կատարեալն ես, դու որ միշտ սիրելի ես
ինձ՝ հարսանիքիդ օրէն քեզ յափշտակելէս վեր, կը ներես արդեօք որ
քանի մը վայրկեան քովդ քնանամ. այնչափ քնհատ եմ որ այս կողմերն

Եկայ քիչ մը հանգիստ ընելու։» Այս ըսելով իր խոշոր գլուխը տիկնոջ ծնկներուն վրայ դրաւ. յետոյ ոտքերն երկնցնելով՝ որոնք մինչեւ ծովը կը հասնէին, շուտով քունը տարաւ եւ այնպէս խորդալ սկսաւ որ բոլոր ծովերը թունդ հանեց։

Այն ատեն տիկինն ըստ դիպաց աչքը վեր վերուց եւ իշխանները տեսնելով՝ ձեռքով նշան ըրաւ որ առանց ձայն հանելու վար իջնեն։ Մեծ եղաւ իրենց սարսափն երբ տեսան որ երեւան ելան։ Աղաչեցին՝ տարբեր նշաններով որ տիկինը ներէ եթէ իրեն չեն հնազանդիր. բայց տիկինը Ջինին գլուխը կամացուկ մ՚իր ծնկներուն վրայէն վերցնելէն եւ թեթեւ մը գետին դնելէն ետեւ՝ ոտք ելաւ, եւ ըսաւ անոնց մեղմ այլ վառվռուն ձայնով մը. «Վար իջէք. պէտք է որ անպատճառ ինձի գալու զիջանիք։» Պարապ տեղ աշխատեցան այլ եւ այլ նշաններով հասկցնել որ Ջինէն կը վախնան. «Իջէք կ՚ըսեմ, կրկնեց նոյն ձայնով. եթէ ինձ հնազանդելու չփութաք, Ջինը պիտի արթնցնեմ, եւ ես ինքս պիտի խնդրեմ որ ձեզ սպաննէ։

Այս խօսքերէն այնչափ վախցան իշխանները՝ որ Ջինը քունէն չարթնցնելու համար պէտք եղած զգուշութիւններն ընելով վար իջան։ Տիկինն անոնց ձեռքէն բռնեց, եւ միասին փոքր մը ծառերուն խորը մտնելով, անոնց բացէ ՚ի բաց խնդիր մ՚առաջարկեց աշխուժիւ. Իշխաններն առջի բերան այս խնդիրը մերժեցին, բայց երբ անոր ըրած սպառնալիքը լսեցին՝ ստիպուեցան զայն ընդունելու։ Երբ տիկինն իր փափաքը կատարելէն ետեւ տեսաւ որ ամէն մէկը մատը մատնի մ՚ունի՝ զանոնք պահանջեց։ Երբ ձեռք ձգեց, գնաց իր զարդերուն ծրարէն տուփ մը բերաւ. կերպ կերպ մատնիներու շարք մը հանեց եւ զայն ցուցնելով՝ ըսաւ. «Պարոններ, գիտէք արդեօք թէ այս գոհարներն ինչ կը նշանակեն. — Ո՛չ, պատասխան տուին, բայց կրնաք մեզի յայտնել։ — Այս մատնիներն, ըսաւ, այն մարդոցն են որ իմ շնորհացս մասնակից ըրած եմ։ Ճիշդ իննսուն ութ հատ են եւ զանոնք կը պահեմ որ յիշեմ նոյն մարդիկն։ Այս պատճառաւ ձերիններն ալ ուզեցի որ հարիւր թիւը լման ընեմ։ Այսպէս ուրեմն, շարունակեց նա, մինչեւ այսօր հարիւր սիրահար ունեցայ, այս գարշելի Ջինին հսկողութիւնն ու զգուշութիւններն ՚ի դերեւ հանելով՝ թէեւ միշտ հետս կը պտըտի։

Պարապ տեղ այս ապակեայ արկղին մէջ զիս կը փակէ, եւ ծովերուն խորը կը պահէ, դարձեալ զինքը խաբելու միջոցը գիտեմ։ Կը տեսնէք, երբ կին մը մտքին մէջ բան մը դնէ, ոչ էրիկ, ոչ սիրահար կրնան անոր գործադրութիւնն արգիլել։ Մարդիկ աղէկ կ՚ընէին եթէ կիներուն հետ խստիւ չվարուէին, զանոնք զգաստութեան բերելու միջոցն ազատութիւնն է։

Տիկինն այսպէս խօսելով՝ մատնիներն այն թելէն անցուց. ետքը գնաց առաջուան պէս նստաւ, Ջինին գլուխը վերուց, որ չարթնցաւ, իր ծնկներուն վրայ դրաւ եւ նշան տուաւ իշխաններուն որ հեռանան։

Անոնք եկած ճամբանէն ետ դարձան, եւ երբ տիկինն ու Ջինն աներեւոյթ եղան, Շահրիար ըսաւ Շահզէնանին. «Լաւ, եղբայր, ինչ կը մտածես այս մեր գլխին եկած դիպուածին վրայ։ Ջինն ալ շատ հաւատարիմ կին մը չունի, եւ միթէ չես խոստովանիր որ կանանց չարամտութեան հաւասարող բան մը չկայ։» — «Այո, եղբայր իմ, պատասխանեց Մեծն-Թաթարստանի թագաւորն. եւ դու ալ պէտք է համոզուիս որ Ջինը մեզնէ աւելի դժբաղդ եւ ցաւակցութեան արժանի է։ Ուստի, քանի որ մեր փնտռածը գտանք դառնանք մեր երկիրն եւ այս բանս մեզի արգելք մը չըլլայ կարգուելու։ Ես գիտեմ ինչ միջոց պիտի գործ դնեմ որ իմ կնկանս հաւատարմութիւնն անարատ պահուի։ Այս մասին չեմ ուզեր հիմակ իմ միտքս յայտնել, բայց օրին մէկը տեղեկութիւն կ՚առնաս, եւ ստոյգ եմ որ դու ալ իմ օրինակիս պիտի հետեւիս։» Սուլթանն իր եղբօրը համամիտ գտնուեցաւ եւ միասին շարունակելով՝ երրորդ օրուան գիշերը բանակը հասան ուսկէ մեկներ էին։

Սուլթանին դարձին լուրն արդէն տարածուեր էր եւ պալատականներն առտու կանուխ անոր վրանին առջեւ եկան։ Հրամայեց որ ներս մտնեն, եւ սովորականէն աւելի խնդումերեսով զանոնք ընդունելով՝ ամենուն ալ առատ առատ պարգեւներ շնորհեց։ Այնուհետեւ իմաց տուաւ որ աւելի հեռուն չուզեր երթալ, հրամայեց որ ձի հեծնեն եւ անմիջապէս իր պալատը դարձաւ։

Ներս մտաւ չմտաւ Սուլթանուհւոյն սենեակը վազեց. իր առջեւը զանի կապել տուաւ ու իր վէզիրին յանձնեց հրամայելով որ զանի խեղ-

դէն․ Վէզիրն այս հրամանը կատարեց առանց հարց ու փորձ ընելու թէ ինչ էր անոր յանցանքը։ Իշխանն այնքան բարկացած որ ասով գոհ չեղաւ, սուլթանուհւոյն բոլոր կանանց գլուխն իր ձեռօքը կտրեց։ Այս ծանր պատժէն ետքը՝ սոսկ ըլլալով որ իր երկրին մէջ պարկեշտ կին մը չպիտի կրնայ գտնել, իր առնելիք կանանց անհաւատարմութիւնն արգիլելու համար որոշեց ամէն գիշեր կին մ'առնուլ և հետևեալ առաւօտ խեղդել տալ։ Այս անգութ կանոնն իր վրայ պարտք դնելով՝ երդում ըրաւ որ Թաթարստանի թագաւորը մեկնելուն 'ի գործ դնէ․ Շահզէնան ալ քանի մ'օրէն իրմէ հրաման խնդրելով, Ճամբայ ելաւ պատուական ընծաներ առնլով։

Շահզէնան մեկնելէն ետև՝ Շահրիար խոյն հրաման տուաւ իր վէզիրին որ բանակին զօրապետներուն մէկուն աղջիկն իրեն բերէ։ Վէզիրը հնազանդեցաւ։ Սուլթանն անոր հետ գիշեր մ'անցնելէն ետև՝ միւս օրը զանի վէզիրին յանձնեց որ սպաննել տայ, և պատուիրեց որ առաջիկայ գիշերուան համար ուրիշ մը գտնէ։ Թէպէտ վէզիրը կը դժկամակէր այսպիսի հրամաններ կատարելու, բայց իր սուլթան տիրոջը կուրօրէն հնազանդելու ստիպուած ըլլալով՝ չէր կրնար ընդդիմութիւն մը ցուցնել։ Ուստի ստորին կարգի պաշտօնակալի մ'աղջիկը բերաւ, զոր նոյնպէս հետևեալ օրը սպաննել տուաւ։ Անկէ ետքն ուսումնականի մ'աղջիկը․ վերջապէս այսպէս ամէն օր կարգուած աղջիկ մ'ու մեռած կին մը կար։

Այս տարօրինակ անգթութեան համբաւը քաղքին մէջ ընդհանուր սարսափ մը ձգեց։ Ամէն կողմ ողբ ու կոծ կը լսուէր։ Աստ հայր իր աղջկան կորստեան վրայ յուսահատ կլար, անդին՝ գորովասիրտ մայրեր վախնալով որ իրենց աղջիկներն ալ նոյն բաղդը պիտի ունենան՝ առաջուց իրենց ողբերուն ձայնէն օդը կը հնչեցնէին։ Այսպէս՝ մինչև այն ատեն սուլթանին ընդունած գովեստներուն և օրհնութիւններուն տեղ՝ իր բոլոր հպատակներն անոր վրայ անէծք կը կարդային։

Վէզիրն՝ որ ինչպէս արդէն ըսինք, այսպիսի սոսկալի անիրաւութեան գործակատարն էր ակամայ, երկու աղջիկ ունէր, որոց անդրանիկը Շէհէրազատ (լուսնի աղջիկ) կ'անուանէր և կրտսերը Տինարզատ (ոսկիի պէս թանկագին)։ Այս վերջինը մեծ արժանիք ունէր,

բայց միւսն՝ իր կանացի բնութենէն վեր արիասրտութիւն մ'ու զարմանալի խելք և սրամտութիւն ունէր։ Շատ գիրքեր կարդացեր էր և անանկ սուր յիշողութիւն մ'ունէր որ բոլոր կարդացածները միտքը պահեր էր։ Փիլիսոփայութեան, բժշկութեան, պատմութեան և արուեստից յաջողութեամբ հետևած էր, և իր ժամանակի ամենէն երևելի բանաստեղծներէն լաւագոյն ոտանաւորներ կը շինէր։ Ասկէ զատ հրաշալի գեղեցկութիւն մ'ունէր և հաստատուն առաքինութիւն մը այս ամէն ընտիր հանգամանքը կը պսակէր։

Վէզիրն խանդալիր կը սիրէր իր աղջիկն որ արժանի էր այս սիրոյն։ Օր մ'որ միասին կը խօսակցէին, աղջիկն իր հօրն ըսաւ․ «Հայր իմ, քեզմէ շնորհ մը պիտի խնդրեմ, խոնարհաբար կ'աղաչեմ քեզ որ այս շնորհն ինծի ընես։ — «Յօժարակամ պիտի կատարեմ, պատասխանեց հայրը, բաւական է որ արդար և բանաւոր ըլլայ։ — Ասկէ աւելի արդար բան մը չկրնար ըլլալ, պատասխանեց Շէհէրազատ, և դու ալ կրնաս գտնել տեսնելով թէ ինչ շարժառիթ կ'ստիպէ զիս այս շնորհը խնդրելու։ Միտք ունիմ այս քաղքին ընտանեաց դէմ սուլթանին գործադրած բարբարոս ընթացքին վերջ տալ։ Կը փափաքիմ փարատել այն ամէն մայրերուն վախն որով կը տանջուին մտածելով որ իրենց աղջիկներն ալ թերևս այնպիսի աղետաբեր կերպով կորսուին։ — Քու դիտաւորութիւնդ շատ գովելի է, աղջիկս, ըսաւ վէզիրը, բայց այս չարեաց որուն հնարը գտնեմ կ'ըսես, կ'երևի ինծի որ դարման չկայ։ Ինչ կերպով գլուխ հանել կը մտածես այդ խորհուրդը․ — Հայր իմ, վրայ բերաւ Շէհէրազատ, որովհետև սուլթանը՝ քու միջոցաւ՝ ամէն օր կը կարգուի՝ իմ վրայ ունեցած գորովագութ սիրոյդ համար կը պաղատիմ որ զիս անոր կնութեան տաս։» Վէզիրն այս խօսքերը լսելուն սոսկաց։ «Ո՛ Աստուած, գոչեց նա պայրագին, խելքդ միթէ թռուցի՞ր, աղջիկս։ Այսպիսի վտանգաւոր խնդիր մ'ինչպէս կրնաս առաջարկել ինծի։ Գիտես որ սուլթանն իր հոգւոյն վրայ երդում ըրաւ գիշեր մը միայն պահել կին մը և հետևեալ օրը սպաննել տալ, և դու կ'ուզես որ քեզի առաջարկեմ իբր կին։ Մտածէ անգամ մը թէ քու անխոհեմ եռանդդ ինչ մեծ վտանգի մէջ կը ձգէ քեզ։ — «Այո, հայր իմ, պատասխանեց այս առաքինի աղջիկը, քաջ գիտեմ թէ ինչ մեծ վտանգի մէջ

պիտի լինամ, բայց այդ վտանգը չկրնար ինծ ահ ու դող ազդել։ Եթէ մեռնիմ, իմ մահս փառաւոր պիտի ըլլայ, և եթէ իմ ձեռնարկութեանս մէջ յաջողիմ, հայրենեացս կարևոր ծառայութիւն մ՚ըրած պիտի ըլլամ։ — Ո՛չ, ոչ, ըսաւ վէզիրն, ինչ պատճառ որ մէջ բերես իս համոզելու համար, մի յուսար ընաւ որ կրնամ հաւանիլ քեզ ասանկ սոսկալի վտանգի մէջ նետելու։ Երբ սուլթանը պատուիրէ ինծ որ դաշոյնս կուրծքդ մխեմ, աւա՜ղ, պէտք է որ հնազանդիմ։ Այս ինչ տխուր պաշտօն մ՚է հօր մը համար։ Ա՛հ, թէ որ մահուանէ չես վախնար, գոնէ վախցիր ձեռքս արեամբդ ներկուած տեսնելու մահուան վիշտ մ՚ինծ պատճառելէ։» — Ներէ՛ն կ՚աղաչեմ, հայր իմ, ըսաւ Շէհէրզատ, խնդրած շնորհս կատարելու բարեհաճէ։ — Կամակորութիւնդ, պատասխանեց վէզիրն, իմ բարկութիւնս կը գրգռէ։ Ինչո՞ւ համար դիտմամբ կեանքդ վտանգի մէջ կ՚ուզես ձգել։ Ով որ վտանգալի ձեռնարկութեան մ՚ելքը չտեսներ, անկէ անվնաս չկրնար ազատիլ։ Կը վախնամ որ իշուն գլխուն եկածը քեզ ալ չպատահի, որ թէև լաւ վիճակի մէջ էր, բայց անոր յարգը չգիտցաւ։ — Ի՞նչ դժբաղդութիւն պատահեցաւ այդ իշուն, վրայ բերաւ Շէհէրզատ։ — Հիմակ պիտի պատմեմ քեզ, պատասխանեց վէզիրն, ինծ մտիկ ըրէ։

ԱՌԱԿ

ԻՇ, ԵԶ ՈՒ ՄՇԱԿ

Հարուստ վաճառական մը շատ տուներ ունէր գիւղը, ուր ամէն տեսակ բազմաթիւ արջառներ կը պահէր։ Իր կնոջ և զաւակաց հետ հողերուն մէկուն մէջ քաշուեցաւ անձամբ վար ու ցան ընելու համար։ Անասուններուն լեզուէն հասկնալու ձիրքն ունէր, բայց միայն չէր կրնար առանց իր կեանքը վտանգի մէջ դնելու ուրիշի թարգմանել, այս պատճառաւ ներելի չէր իրեն տաղանդին միջոցաւ սորված բաները մարդու հաղորդել։

Մի և նոյն գոմին մէջ եզ մ՚ու էշ մ՚ունէր։ Օր մ՚որ այս վաճառականն անոնց մօտ նստած կը զուարճանար իր զաւակներուն խաղերը տեսնելով, լսեց որ եզն իշուն կ՚ըսէր. «Արթո՛ւն, որչափ երջանիկ կը գտնեմ քեզ՝ երբ վայելած հանգիստդ և քեզնէ պահանջուած թեթև աշխատութիւնն կը տեսնեմ։ Ծառայ մարդ մը քեզ խնամքով կը գարմանէ, կը լուայ, աղէկ մաղէ անցած գարի և զով ու յստակ ջուր կուտայ քեզ։ Քու ամէնէ մեծ աշխատութիւնդ մեր վաճառական տէրը կրել է, երբ պզտիկ ճամբորդութիւն մ՚ընել ուզէ. եթէ այս ալ չըլլար, բոլոր կեանքդ անգործ պիտի անցնէր։ Իսկ ինծի հետ շատ տարբեր կը վարուին, և իմ վիճակս որչափ թշուառ՝ քուկդ նոյնչափ ախորժելի է։ Հազիւ թէ կէս գիշեր կ՚ըլլայ և ահա արօրի մը կը կապեն զիս և օրն ՚ի բուն քաշել կուտան որ երկիրը պատռեմ. այնչափ կը յոգնիմ որ երբեմն բոլոր ոյժս կը հատնի։ Այս բաւական չէ, մշակն որ միշտ ետևէս կգայ՝ անդադար զիս կը ծեծէ։ Արօրը շարունակ քաշելէս՝ պարանոցիս կաշին քերթուած է։ Վերջապէս, առաւօտէն մինչև իրկուն աշխատելէ ետքն՝ երբ գոմս կը դառնամ՝ առջևս անշահ չոր բակլայ կը թափեն որ ուտեմ, և անոր մէջի հողի կտորուանքն և ուրիշ ասոր նման աղբեր հանելու անգամ հոգ չեն տանիր։ Թշուառութեանս չափը լեցնելու համար, երբ այսպիսի անախորժ կերակուրով մը կը յղփանամ գիշերն իմ քակորներուս վրայ պառկելու կ՚ստիպուիմ։ Ուստի կը տեսնես որ իրաւունք ունիմ քու վիճակէդ նախանձելու։»

Էշը կովին խօսքը չընդմիջեց, այլ թողուց որ ուզածն ըսէ, բայց երբ լմնցուց. «Բնաւ սուտ չես հաներ, ըսաւ անոր, քեզ տրուած ապուշ անունը. շատ պարզմիտ ես, կը թողուս որ ըստ հաճոյս վարեն քեզ և ամենևին խելք մը չես բանեցներ։ Սակայն կրած ամէն անարգանքէդ քեզի ինչ օգուտ կը ծագի։ Դու ինքզինքդ կը չարչարես այնպիսի մարդոց հանգստութեան, զուարճութեան և շահուն համար որ ամենևին յարգ չեն ճանչեր։ Քեզի հետ այդ կերպով չէին վա-

քուեր թէ որ ուժիդ չափ քաջասրտութիւն ունենայիր ։ Երբ քեզ մօտը կապելու կը բերեն ինչո՞ւ համար դէմ չես կենար․ ինչո՞ւ համար եղջիւրի աղւոր հարուածներ չես տար․ ինչո՞ւ համար ոտքդ գետին զարնելով բարկութիւնդ չես յայտներ, ինչո՞ւ համար, վերջապէս, ամենուն սարսափ չես ազդեր զարհուրելի կերպով բառաչելով ։ Բնութիւնն ինքզինքդ յարգեր տալու միջոցներ տուեր է քեզ, և դու զանոնք չես գործածեր ։ Քեզ անպիտան բակլայ և անպիտան յարդ կը բերեն, բնաւ մ'ուտեր․ միայն հոտուըտա և թող տուր ։ Եթէ քեզի տուած խորհուրդներուս հետևիս, քիչ ատենէն մեծ փոփոխութիւն մը պիտի տեսնես որ ինծի շնորհակալ պիտի ըլլաս ։»

Եզն իշուն խրատներն իբր անկեղծ ընդունեց, և մեծ շնորհակալութիւն յայտնեց անոր ։ «Սիրելի արթունս, յարեց նա, բոլոր ըսածներդ անպատճառ պիտի գործադրեմ և պիտի տեսնես թէ ինչպէս գլուխ պիտի հանեմ ։» Այս խօսակցութենէ ետք լուռ կեցան և վաճառականն ամէն բան մտիկ ըրաւ ։

Միւս օրը կանուխ մշակն եկաւ եզն առաւ, տարաւ արօրին կապեց և սովորական գործին աշխատցուց ։ Եզն որ իշուն խրատը չէր մոռցած՝ նոյն օրը գլուխ տնկեց, և երբ մշակն իրիկունը զանի մօտը բերաւ կապելու ըստ սովորութեան, չարաճճի անասունն՝ եղջիւրներն ինքնին ներկայացնելու տեղ, սկսաւ սոսկալի և բառաչելով ետ ետ քաշուիլ, եղջիւրներն ալ վար՝ ծռեց, որպէս թէ մշակին զարնել կ'ուզէր․ մէկ խօսքով իշուն խրատած բոլոր հնարքը բանեցուց ։ Միւս օրը՝ մշակն եկաւ որ նորէն առնու տանի զանի հերկելու, բայց տեսնելով որ երեկուան դրած բակլայով և յարդով լեցուն է մսուրն, և եզը գետինը փռուեր ոտքերը տնկելով այլանդակ կերպով մը կը հեւայ, կարծեց թէ հիւանդ է․ գթաց անոր վրայ, և դիտելով որ անօգուտ է զանի գործի տանիլը՝ գնաց շուտ մը բանը վաճառականին իմաց տուաւ ։

Վաճառականն իսկոյն հասկցաւ որ եզն Արթունին խրատ-

ները կէտ առ կէտ բռներ է, և անոր արժանի պատիժը տալու համար․ «Շուտ գնա՛, ըսաւ մշակին, եզին տեղ էշն առ և աղէկ մը յոգնեցուր որ խելքը գլուխը գայ ։» Մշակն այս պատուէրը կատարեց ։ Էշը ստիպուեցաւ բոլոր օրն արօրը քաշել, և սաստիկ յոգնեցաւ, վասն զի այսանկ աշխատանքի մը վարժած չէր ։ Անկէ զատ՝ այնքան ծեծ կերաւ, որ 'ի դարձին ոտքի վրայ կենալու կարողութիւն չունէր ։

Սակայն եզը շատ գոհ էր․ իր մսուրին մէջ ինչ որ կար կերեր և բոլոր օրը հանգիստ ըրեր էր ։ Ինքնիրեն կ'ուրախանար որ Արթունին յորդորներուն անսաց․ շատ մ'օրհնութիւններ կտար անոր ըրած բարիքին համար, և երբ անոր գալը տեսաւ փութաց իր շնորհակալութիւնը նորէն յայտնել ։ Էշն այնքան նեղացեր էր կրած չարչարանքին համար որ և ոչ բառ մը պատասխանեց ։ «Իմ անմտութենէս է որ այս ձիւնն իմ գլուխս եկաւ, կ'ըսէր ինքն իրեն․ երջանիկ կ'ապրէի, ամէն բան ինծ յաջող էր, բոլոր փափաքներս կը կատարէին, յանցանքն իմս է, եթէ այս ողբալի վիճակին մէջ ինկայ, և թէ որ խելքովս անկէց ազատելու հնար մը չգտնեմ, բանս բռնած է ։» Այս ըսելով՝ այնքան ուժէ ինկեր էր որ իր մսուրին տակ կիսամեռ գետին փռուեցաւ ։

Այս խօսքն ըսելէն ետև մեծ-վէզիրը Շէհէրազատին դառնալով անոր ըսաւ․ «Աղջիկս, դու ալ այս իշուն ընթացքը կը բռնես, անխոհեմութեամբդ քու կորստեանդ կը դիմես ։ Հաւտա՛ ինծ, հանգիստ տեղդ նստէ, և մահդ փնտռելու մ'ելներ ։

— Հայր իմ, պատասխանեց Շէհէրազատ, բերած օրինակդ չկրնար իմ դիտաւորութիւնս փոխել, և գլուխդ ցաւցնելէն չպիտի դադրիմ մինչև որ իբր կին իս սուլթանին առջև չհանես ։» Վէզիրը տեսնելով որ իր աղջիկը դիտաւորութեան մէջ հաստատ է միշտ, անոր պատասխան տուաւ․ «Լաւ ուրեմն, քանի որ կը յամառիս, ես ալ պիտի պարտաւորիմ քեզի հետ վարուիլ ինչպէս վարուեցաւ արդէն յիշած վաճառականս իր կնոջ հետ քիչ մը ժամանակ ետքն, և ահա ինչպէս․

Այս վաճառականն իմանալով որ էշը խղճալի վիճակի մէջ կը գտնուի , հետաքրքիր եղաւ իմանալու թէ անոր և եզին մէջ ինչ պիտի դառնայ : Ուստի , ընթրիքէն ետքը՝ լուսնկային դուրս ելաւ , և գնաց անոնց մօտ նստելու , իր կնկան հետ : Երբ հասաւ , լսեց որ էշն եզին կ՚ըսէր . «Սանահայր , ըսէ նայիմ , կ՚աղաչեմ , թէ ինչ պիտի ընես երբ վաղը մշակն ուտելիքդ բերէ : — Ինչ պիտի ընեմ , պատասխանեց եզը , պիտի շարունակեմ տուած խրատիդ հետեւելու : Առաջ պիտի հեռանամ , երէկուան պէս եղջիւրներս պիտի ցուցնեմ , սուտ հիւանդ պիտի ըլլամ , և հոգի տալու պէս պիտի ընեմ : — Զըլլայ որ այդպիսի բան մ՚ընես , ընդմիջեց էշն , այդ կերպով գլուխդ վրայ կուտաս . ինչու որ , այս իրկուն դառնալու ատենս , մեր վաճառականն տիրոջ մէկ խօսքը լսեցի որ սիրտս դող ելաւ քեզի համար : — Է՞հ , ինչ լսեցիր , ըսաւ եզը . կ՚աղաչեմ , բան մը մի պահեր ինծէ , սիրելի Արթունս . — Տէրս , յարեց էշը , մշակին սա ցաւալի խօսքերն ըսաւ . «Քանի որ եզը կերակուր չուտեր և չորս ոտքի վրայ կենալու ուժ չունի , կ՚ուզեմ որ վաղն անմիջապէս մորթուի : Աստուծոյ սիրոյն համար իր միսն աղքատներուն կը բաժնենք , իսկ մորթն , որ կրնայ մեզի օգտակար ըլլալ , խաղախորդին կուտաս . ուստի չմոռնաս սպանդարարը կանչելու : — Ահա այս կ՚ուզէի քեզի իմացնել , յարեց էշը . պահպանութեանդ համար ունեցած հոգս և իմ առ քեզ բարեկամութիւնս կ՚ստիպեն զիս գաղտնիքը յայտնել և նոր խրատ մը տալ քեզի : Նախ և առաջ՝ երբ բակլադ և յարդդ բերեն , ոտք ելիր , և զանոնք շուտ մը լափէ : Մեր տէրն այս տեսնելուն պիտի հասկնայ որ առողջ ես , և անշուշտ մահուան վճիռդ ետ պիտի առնու . իսկ եթէ ուրիշ կերպով վարուիս , բանդ կը բուսնի , ազատում չունիս :»

Այս յորդորն էշին յուսած ազդեցութիւնն ունեցաւ : Եզը չափազանց այլայլեցաւ և վախէն սկսաւ բառաչել : Վաճառականն որ այս խօսակցութեան մեծ ուշադրութեամբ ականջ կախեր էր , անանկ այլանդակ քահ քահ մ՚է ձգեց որ իր կինը յետին ծայր

զարմացաւ : «Հասկցուր ինծի , ըսաւ անոր , թէ ինչո՞ւ համար այդպէս սաստիկ կը խնդաս որ ես ալ քու հետդ խնդամ : — Կինս , պատասխանեց վաճառականն , իմ խնդալս լսելով միայն գոհ եղիր . — Չէ՛ , ըսաւ կինը , կ՚ուզեմ պատճառն իմանալ : — Չեմ կարող այդ կամքդ կատարել , պատասխանեց էրիկը . գիտցիր միայն որ մեր էշուն եզին ըսած խօսքին վրայ կը խնդամ . Միայնորդն անանկ գաղտնիք մ՚է որ ներելի չէ ինծ քեզ յայտնել : — Եւ ո՞վ կ՚արգիլէ քեզ այդ գաղտնիքդ ինծ յայտնելու , կրկնեց կինն : — Եթէ ըսեմ , պատասխանեց էրիկը , գիտցիր որ կը մեռնիմ : — Իմ վրաս կը ծիծաղիս , պոռաց կինն . ըսածդ չկրնար ճշմարիտ ըլլալ , եթէ այս միջոցիս չըսես թէ ինչու համար խնդացիր , եթէ էշին և եզին մէջ անցած խօսակցութիւնն ինծի ծածուկ պահես , երկնից մեծին Աստուծոյ վրայ կ՚երդնում , որ այսուհետև միասին չպիտի ապրինք :»

Այս խօսքերն աւարտելով տունը մտաւ , գնաց անկիւն մը նստաւ և նոյն տեղը գիշերը բոլոր ուժով լալով անցուց : Էրիկը մինակ մնաց , և միւս օրը տեսնելով որ իր լացը կը շարունակէ . «Ըրածդ խելք չէ , ըսաւ անոր , այսպէս տրտմելու ինչ պէտք ունիս , քանի որ չարժեր : Որչափ որ քեզի անպէտ է այս գաղտնիքը գիտնալդ նոյնչափ պիտանի է ինծ անյայտ պահելն : Ուստի հոգ մի ըներ այդ բանին վրայ , կը պաղատիմ քեզ : — Այնչափ հոգ կ՚ընեմ , պատասխանեց կինն , որ մինչև իմ հետաքրքրութիւնս գոհ ընելդ պիտի լամ : — Բայց կատակ չէ ըսածս , գիտե՞ս որ եթէ քու անխոհեմ թախանձանացդ զիջանիմ մէջը պիտի խաղամ : — Աստուծոյ կամքն ինչ որ է թող ըլլայ , պատասխան տուաւ կինն , ես շարունակ պիտի պնդեմ : — Կը նայիմ , ըսաւ վաճառականն , որ քեզի խօսք հասկցնելու ճարը չկայ , և քանի որ կամակորութենէդ ինքզինքդ պիտի մեռցնես , զաւակներդ պիտի կոչեմ որպէս զի մեռնելէդ առաջ քեզ տեսնելու մխիթարութիւնն ունենան :» Ուստի իր զաւակները բերել տուաւ , նոյնպէս մարդ

դրկեց որ կնկանը հայրը , մայրն և ազգականները կանչեն ։ Երբ ամէնքն եկան գումարուեցան և գործին էութիւնն անոնց բացատրեց , իրենց բոլոր ճարտասանութիւնը թափեցին որ համոզեն թէ իրաւունք չունի իր կամակորութեան մէջ մնալու . բայց կինն ամէնքն ալ վհատեցուց և ըսաւ թէ աւելի լաւ ունի մեռնիլ քան թէ այս մասին իր երկանը զիջանիլ ։ Հայրն ու մայրը պարապ տեղն առանձին խօսեցան և հասկցուցին իրենց աղջկան որ խնամալու փափաքած բանն ամենևին կարևորութիւն չունի իրեն համար , չկրցան զինքը համոզել ոչ իրենց իշխանութեամբ և ոչ յորդորներով ։ Երբոր իր զաւակները տեսան որ յամառութեամբ կը մերժէ և որ և է օրինաւոր պատճառ չուզեր միտ առնել , սկսան դառնապէս լալ ։ Վաճառականն ալ շուարեր և ըրածն ու դրածը չգիտէր ։ Իր տան դրան մօտ մինակ նստած՝ կը մտածէր արդէն թէ իր կեանքը զոհել պէտք էր թէ ոչ իր անչափ սիրած կնկան կեանքը ։

«Արդ , աղջիկս , շարունակեց վէզիրը միշտ Շէհերազատին խօսելով , այս վաճառականը յիսուն հաւ և աքաղաղ մ'ունէր , նոյնպէս շուն մ'որ շատ աղէկ պահպանութիւն կ'ընէր ։ Ինչպէս որ ըսի , երբ նստեր կը մտածէր որ ինչ ճամբայ բռնէ , տեսաւ որ շունն աքաղաղին վրայ կը վազէր որ հաւի մը վրայ ելեր էր , և լսեց որ շունը սա խօսքերը կ'ըսէր անոր . «Ո՛վ աքաղաղ , Աստուած չպիտի ներէ որ աւելի երկար ժամանակ ապրիս ։ Չես ամչնար և այդ ըրածդ կ'ընես և այսօր ։» Աքաղաղը բիտերուն վրայ կանկ առաւ և դէպ 'ի շունը դառնալով՝ «Ի՞նչ պատճառաւ , ըսաւ նա զուարթութեամբ , այսօր և չէ թէ ուրիշ օրեր այս բանս ինձ արգիլուած ըլլայ ։ — Քանի որ չգիտես , պատասխանեց շունը , գիտցիր որ մեր տէրն այսօր մեծ սուգի մէջ է ։ Կինը կը պահանջէ որ ծածուկ բան մը յայտնէ անոր որով կեանքը պիտի կորսնցնէ եթէ իրօք յայտնէ ։ Գործերն այս վիճակին մէջն են , և կը վախնամ որ բաւական արիութիւն պիտի չունենայ իր կնկանը կամակորութեան դէմ դնելու . վասն զի զանի կը սիրէ , և ան-

դադար թափած արտասուքէն սիրտը կը շարժի ։ Կարելի է պիտի մեռնի . ամէնքնիս ալ իրար կ'անցնինք այս բնակարանին մէջ , դու միայն՝ մեր տրտմութիւնը թշնամանելով՝ լրբութեամբ հաւերուդ հետ կը զուարճանաս ։

Աքաղաղը սապէս պատասխանեց շան . յանդիմանութեան . «Ի՛նչ անմիտ է մեր տէրը . լոկ կին մ'ունի , և անոր հետ գլուխ չկրնար ելնել , մինչդեռ ես յիսուն հատ ունիմ և իմ կամքէս դուրս չեն ելներ ։ Թող խելքը գլուխը ժողվէ , և շուտով այն դժուար վիճակէն ազատելու ճարը կը գտնէ ։ — Ի՛հ , ի՞նչ կ'ուզես որ ընէ , ըսաւ շունը ։ — Թող կնկանը գտնուած խուցը մտնէ , պատասխանեց աքաղաղն , և դուռը գոցելէն ետև՝ թող աղուոր փայտ մ'առնէ և զանի աղէկ մը կոփէ . հաւատա իմ որ ասով խելքը գլուխը կուգայ , և այնուհետև չպնդեր որ երիկը յայտնէ գաղտնիք մ'որ պէտք է ծածուկ պահէ ։»

Վաճառականն աքաղաղին ըսածը լսեց չլսեց որ ոտք ելաւ , խոշոր փայտ մ'առաւ , գնաց իր կնկան մօտ որ դեռ կլար , անոր հետ խուցը մտաւ դուռը գոցեց և անանկ աղէկ ծեծ մը քաշեց որ կինը չդիմանալով սկսաւ պոռալ . «Բաւական է , երիկս , բաւական է , թող տուր իս , ալ բան մը չեմ հարցներ քեզ ։» Այս խօսքին վրայ , երիկը տեսնելով որ իր կինը կը զղջայ այն իր անպատեհ հետաքրքրութեան վրայ , ծեծը դադրեցուց , դուռը բացաւ , բոլոր ազգականները ներս մտան , ուրախացան որ կինն իր կամակորութիւնը թողեր է , և շնորհակալ եղան երիկէն որ այս ճարին միջոցաւ անոր խելքը գլուխը բերեր է ։ «Աղջիկս , յարեց վէզիրն , ես ալ պէտք է վաճառականին իր կնկան հետ վարուած կերպով վարուիմ քեզի հետ ։

«Հայր իմ , ըսաւ այն ատեն Շէհերազատ , կ'աղաչեմ մի՛ մեղադրեր զիս եթէ իմ որոշմանս մէջ հաստատ կը մնամ ։ Այս կնկան պատմութիւնը չկրնար իմ միտքս սասանել ։ Ես ալ կրնայի ուրիշ շատ մը պատմութիւններ պատմելով համոզել

քեզ որ իմ դիտաւորութեանս դէմ չգնես ։ Սակայն, ներէ ինձ եթէ կը համարձակիմ բացէ 'ի բաց քեզ յայտնելու որ պարապ տեղ կ'ընդդիմանաս . եթէ քու հայրական գորովդ իմ աղաչանքս մերժէ, ես անձամբ սուլթանին առջևը պիտի նետեմ ։

Վերջապէս հայրն, իր աղջկան հաստատամտութեան հետ գլուխ չելնելով՝ անոր թախանձանաց զիջաւ, և թէ սաստիկ կը ցաւէր որ չկրցաւ իր աղջկան աղէտալի դիտաւորութիւնը փոխել տալ, իսկոյն գնաց Շահրիարը տեսնելու և անոր ըսաւ թէ հետևեալ գիշերն իր Շէհերազատ աղջիկն իրեն պիտի բերէ ։

Սուլթանը շատ զարմացաւ իր մեծ-վէզիրին ըրած զոհին վրայ ։ «Ի՞նչպէս կրցար աղջիկդ իմ ձեռքս յանձնելու որոշում ընել, ըսաւ անոր ։ — Տէր իմ, պատասխանեց անոր վէզիրն, ինքն իրմէ ուզեց ։ Իրեն սպասած աղէտալի ճակատագրէն անվեհեր երևցաւ և գիշեր մը միայն Ձեր վեհափառութեան կնոջ ըլլալու պատիւն իր կեանքէն վեր կը սեպէ ։ «Բայց չտարակուսիս բնաւ, վէզիրս, վրայ բերաւ սուլթանն, որ վաղը Շէհերազատը ձեռքդ յանձնելուս, կը պահանջեմ որ զանի սպաննես, եթէ այս հրամանս չկատարես, երդում կ'ընեմ որ քեզ սպաննել պիտի տամ ։ — Տէր իմ, պատասխանեց վէզիրը, սիրտս անշուշտ պիտի խշխշայ ձեզ հնազանդելով, բայց բնութիւնը պարապ տեղ պիտի տրտնջայ, թէև հայր եմ, բայց հաւաստի եղիք որ ձեզ հաւատարիմ պիտի մնամ ։» Շահրիար իր նախարարին նուէրն ընդունեց և ըսաւ անոր որ ուզած ատենը կրնայ իր աղջիկը բերել ։

Վէզիրն այս լուրը Շէհերազատին իմացուց որ այնպիսի ուրախութեամբ ընդունեց զայն որպէս թէ ամենախորժելի լուր մ'ըլլար ։ Շնորհակալ եղաւ իր հօրմէ այս մեծ բարիքն ընելուն, և տեսնելով որ սաստիկ վշտացած է, անոր ըսաւ, մխիթարելու համար, թէ կը յուսար որ չպիտի զղջայ զինքը սուլթանին հետ կարգելուն, նա մանաւանդ բոլոր կենացը մէջ այս մասին ուրախանալու առիթ պիտի ունենայ ։

Շէհերազատին բոլոր հոգն եղաւ այնուհետև սուլթանին ներկայանալու պատրաստութիւն տեսնել . բայց մեկնելէն առաջ՝ իր Տինարզատ քոյրը մէկդի կանչեց և անոր ըսաւ . «Սիրելի քոյրս, կարևոր գործի մը մէջ քու օգնութեանդ կարօտ եմ, կ'աղաչեմ զայն ինձ չմերժել ։ Հայրս զիս սուլթանին պիտի տանի 'ի կնութիւն, չըլլայ որ այս լուրէն սիրտդ դող ելնէ, միայն ինձ համբերութեամբ մտիկ ըրէ ։ Սուլթանին առջև ներկայանալուս, պիտի աղաչեմ զինքն որ թոյլ տայ քեզ հարսանեկան սենեակը պառկելու, որպէս զի այն գիշերն ալ քու ընկերութիւնդ վայելեմ ։ Եթէ այս շնորհը ստանամ, ինչպէս որ կը յուսամ, չմոռնաս զիս լուսնալէն ժամ մ'առաջ արթնցընելու և սա խօսքերն ըսելու ։ «Քոյր իմ, թէ որ քուն չես, կ'աղաչեմ որ մինչև լուսնալը պատմես ինձ գիտցած վէպերէդ մէկն ։» Ես ալ իսկոյն հատ մը կը պատմեմ և կը յուսամ որ այս միջոցաւ բոլոր ժողովուրդն ահ ու դողէ կ'ազատեմ ։» Տինարզատ պատասխան տուաւ իր քրոջը թէ խնդիրը յօժարակամ պիտի կատարէ ։

Վերջապէս ննջելու ժամը հասած ըլլալով վէզիրը պալատը տարաւ Շէհերազատն, և սուլթանին սենեակը մտնելէն ետև՝ ինքը ձգեց գնաց ։ Երբ սուլթանն անոր հետ մինակ մնաց՝ հրամայեց որ երեսը բանայ . Շէհերազատ այնքան գեղանի երևցաւ իրեն որ զմայլեցաւ, բայց տեսնելով որ կուլար, պատճառը հարցուց ։ «Տէր իմ, ըսաւ Շէհերազատ, քոյր մ'ունիմ զոր կաթոգին կը սիրեմ և այն ալ զիս կը սիրէ ։ Կը փափաքէի որ այս գիշեր մեր սենեակը պառկէր որպէս զի զինքը տեսնելու և անոր վերջին բարևս տալու կարող ըլլամ ։ Արդեօք կը հաճի՞ք որ այս իմ սիրոյս վերջին մէկ փորձն ալ անոր տալու մխիթարութիւնն ունենամ ։» Շահրիար հաւանութիւն տալուն վրայ, ղրկեցին որ Տինարզատը կանչեն, որ արտորնօք եկաւ ։ Սուլթանը Շէհերազատին հետ բարձր մահճի մը մէջ պառկեցաւ, արևելեան թագաւորաց սովորութեան համեմատ՝ և Տինարզատ ալ զատ անկողնոյ մը մէջ, զոր իրեն համար մահճին վարի կողմը պատրաստեր էին ։

Լուսնալէն ժամ մ՚առաջ՝ Տինարզատ արթննալով փութաց իր քրո-ջը պատուէրը կատարելու ։ «Սիրելի քոյր իմ, գոչեց, թէ որ չես քնանար, կ՚աղաչեմ քեզ՝ մինչև լուսնալը՝ պատմել ինծի այն գիտցած ախորժելի վէպերէդ մէկը ։ Բայց, կարելի է վերջին անգամ այս զուարճութիւնը պիտի վայելեմ ։

Շէհէրազատ՝ իր քրոջ պատասխան տալու տեղ՝ խօսքը սուլթանին ուղղեց ։ «Տէր իմ, ըսաւ, Ձեր վեհափառութիւնը կը ներէ՞ արդեօք որ քրոջս փափաքը կատարեմ . — Յօժարակամ» պատասխանեց սուլ-թանն ։ Այն ատեն Շէհէրազատ ըսաւ որ մտիկ ընէ, և այս խօսքը Շահրիարին ուղղելով այսպէս սկսաւ ։

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ՈՒ ՃԻՆԸ

Տէր իմ, ատենօք վաճառական մը կար որ շատ հարստութիւն ու-նէր, թէ իբր հող, թէ իբր ապրանք և թէ իբր կանխիկ դրամ ։ Նոյնպէս շատ գործակիցներ, գործաւորներ և գերիներ ունէր ։ Որով-հետև ատեն ատեն իր գործակալներուն հետ բերանացի խօսելու հա-մար ճամբորդութիւններ ընելու ստիպուած էր, օր մ՚որ խիստ կարե-ւոր գործի համար բնիկ երկրէն բաւական հեռու տեղ մը պիտի եր-թար, ձի հեծաւ և պարկ մ՚ետին ձգելով որուն մէջ պաքսիմատ և արմաւ պզտիկ պաշար մը կար, ճամբայ ընկաւ, վասն զի անապատէ մը պիտի անցնէր և ուտելու բան մը չպիտի գտնէր ։ Անվնաս հասաւ ուզած քաղաքն և երբ գործը լմնցուց, նորէն ձի հեծաւ իր երկիրը դառնալու համար ։

Իր ճամբորդութեան չորրորդ օրն՝ այնքան նեղութիւն զգաց արևուն ջերմութենէ և հրատապ աւազէն որ իր ճամբէն դուրս ելաւ որպէս զի հեռուն դաշտի մը մէջ տեսած ծառերուն տակ երթայ հանգչի և զովանայ . մեծ ընկուզենիի մ՚ոտքը յստակ և վազուկ ջուրի աղբիւր մը գտաւ ։ Ձիէն վար իջաւ, ծառի մը ճիւղին զայն կապեց և աղբիւրին մօտ նստաւ, իր պարկէն քանի մը արմաւ և պաքսիմատ հանելէն ետև ։ Արմաւներուն ուտելու ատեն կուտերն ասդին անդին կը նետէր ։ Երբ այս պարզ կերակուրը լմնցուց, ըստ որում բարի իսլամ մ՚էր, ձեռքն, ոտքն, երեսը լուաց և իր աղօթքն ըրաւ ։

Դեռ աղօթքն անկատար և ծունր դրած էր՝ երբ ոգի մ՚աչքին ե-րևցաւ, որ ծերութենէ ճերմկած՝ և ահագին բարձրութիւն մ՚ու-նէր . դէպ իրեն մօտ եկաւ ձեռքը սուր մը բռնած և զարհուրելի ձայնով մ՚անոր ըսաւ ։ «Ոտք ելիր որ սա թուրով սպաննեմ քեզ, ինչ-պէս որ դու ալ իմ որդիս սպաննեցիր ։» Այս խօսքերն ըսելով սոսկալի ձայն մ՚ալ հանեց ։ Վաճառականը՝ թէև այս հրէշին նողկալի դէմ-քէն՝ նոյնպէս անոր ուղղած խօսքերէն զարհուրեր էր, դողդողալով ը-սաւ անոր . «Ափսո՜ս, տէր իմ, քեզի դէմ ի՞նչ յանցանք գործած կրնամ ըլլալ որ իմ կեանքս բառնալու արժան գտնես ։ — Քեզ սպաննել կ՚ուզեմ, կրկնեց ճինն, ինչպէս որ դու ալ իմ որդիս սպան-նեցիր . — Է՛հ, տէր Աստուած, ինչպէս կրնայի որդիդ սպաննել քանի որ զինքը չեմ ճանչեր, և բնաւ տեսած չեմ ։ — Երբ այս տեղ հասար չնստա՞ր, հարցուց ճինը, պարկէդ արմաւ չհանեցի՞ր, և ուտելու ատենդ կուտերն ասդին անդին չնետեցի՞ր . — Այո՛, ը-սածդ ըրի, պատասխանեց վաճառականը, չեմ կրնար ուրանալ ։ Այս այսպէս ըլլալով, վրայ բերաւ ոգին, նորէն կ՚ըսեմ որ որդիս սպաննեցիր, և ահա ինչպէս . կուտերը նետած ատենդ որդիս կ՚անցնէր . մէկ հատն աչքին դպաւ ու անով մեռաւ . և ահա ասոր համար պէտք է որ քեզ սպաննեմ ։ Ա՜հ, տէր իմ, մեղա՜յ քեզ, պոռաց վաճառականը ։ — Մեղա՜յ կ՚ըսես, պատասխան տուաւ ո-գին, բայց քեզի ներում չկայ և ոչ գթութիւն ։ Միթէ արդար չէ՞ մարդասպանը սպաննել ։ — Համամիտ եմ քեզ, ըսաւ վաճառակա-նը, բայց, Ճշմարի՛տն, ես որդիդ չսպաննեցի . և եթէ այդպէս

ցան մ՚անցած ալ ըլլար , դարձեալ ես անգիտութեամբ գործած պիտի ըլլայի . ուստի , կը պաղատիմ որ ներես ինծ , և կեանքս շնորհես ։ — Չէ , չէ , ըսաւ ոգին , իր դիտաւորութեան վրայ հաստատ կենալով , պէտք է որ քեզ սպաննեմ , վասն զի իմ որդիս սպաննեցիր ։» Այս խօսքիս վրայ , Ճինը վաճառականին թեւէն բռնեց , երեսն 'ի վար գետին պառկեցուց և թուրը վերցուց որ գլուխը կտրէ ։

Սակայն վաճառականը լալով և իր անմեղութիւնը մէջ բերելով իր կինն ու զաւակները կը մեղքնար և շատ սրտաշարժ խօսքեր կ՚ընէր ։ Ճինը՝ միշտ թուրը վեր բռնած՝ համբերութեամբ կ՚սպասէր որ այս խեղճն իր ողբն ու կոծը լմնցնէ , բայց անոր խօսքերէն ամենեւին սիրտը չգթաց ։ «Բոլոր այս ողբերդ անօգուտ են , պոռաց նա ։ Եթէ արտասուքի տեղ աչքէդ արիւն անգամ թափէիր դարձեալ քեզ պիտի մեռցնէի , ինչպէս որ դու որդիս սպաննեցիր ։ — Ի՞նչ , պատասխանեց վաճառականն , այդչափ բարբարոս ես . միթէ անպատճառ անմեղ մարդու մ՚արիւնը պիտի մանես ։ — Այո՛ , ըսաւ ոգին , այդպէս միտքս դրեր եմ ։»

Այս խօսքերն աւարտելով . . . ։

Շէհերազատ՝ նոյն միջոցին նայելով որ լուսցեր է , և արդէն գիտնալով որ սուլթանը քունէն կանուխ կ՚ելնէր իր աղօթքն ընելու և ժողովին երթալու , խօսքը դադրեցուց ։ «Ո՛հ , ըսաւ այն ատեն Տինարզատ՝ ինչ հրաշալի պատմութիւն է ըրածդ . — Ասոր վերջն աւելի հիանալի է , պատասխանեց Շէհերազատ , և դու ալ նոյնը պիտի խոստովանիս , եթէ սուլթանը բարեհաճի թողուլ որ այսօր ալ ապրիմ , և ներէ ինծ պատմելու առաջիկայ գիշեր ։» Շահրիար որ Շէհերազատին ըսած վէպը մեծ հաճութեամբ մտիկ ըրեր էր , ինքն իրեն ըսաւ . «Մինչև վաղը կ՚սպասեմ , և իր վէպին վախճանը լսելէն ետև երբոր ըլլայ պիտի սպաննել տամ ։» Ուստի միտքը դնելով այն օրը Շէհերազատը սպաննել չտալ , ելաւ որ աղօթքն ընէ և ժողովին երթայ ։

Նոյն միջոցին վէզիրն անգութ անհանգստութեան մը մէջ կը գտնուէր ։ Քնանալու տեղ՝ մինչև լոյս լացեր ողբացեր էր իր աղջկան

վիճակին վրայ , որու դահիճն ինքը պիտի ըլլար ։ Բայց եթէ այս տխուր ակնկալութեան մէջ սուլթանին տեսքէն կը հեռանար , որչափ ուրախութեամբ տեսաւ և զարմացաւ երբ դիտեց որ այս իշխանը ժողովը կը մտնէր առանց իր սպասած աղէտալի հրամանը տալու ։

Սուլթանն՝ ըստ սովորականին՝ պետութեան գործերը նոյն օրը կարգի դնելու զբաղեցաւ , և երբ մութը կոխեց նորէն պառկեցաւ առջի գիշերուան պէս ։ Միւս օրն՝ արևը չելած՝ Տինարզատ իր քրոջ դարձաւ և անոր ըսաւ ։ «Սիրելի քոյր իմ , թէ որ չես քնանար , կը պաղատիմ որ մինչև արևուն քիչէն ելնելը , շարունակել երէկուան վէպը ։ Սուլթանը չսպասեց որ Շէհերազատ հրաման խնդրէ իրմէ , այլ ըսաւ . «Լմնցուր վաճառականին և ոգիին պատմութիւնը . հետաքրքիր եմ անոր վերջն իմանալու ։ Այն ատեն Շէհերազատ խօսքն սկսաւ և այս կերպով շարունակեց իր վէպը ։

2դ ԳԻՇԵՐ

Տէր իմ , երբ վաճառականը տեսաւ որ Ճինն իր գլուխը պիտի կտրէ , բարձր ձայն մը հանեց , և անոր ըսաւ ։ «Կեցիր , խօսք մի ալ ըսեմ , կ՚աղաչեմ , շնորհ ըրէ քիչ մը ժամանակ տալու ինծ , տուր ինծ ժամանակ որ երթամ կնկանս և զաւակներուս վերջին բարևս տամ և կտակս՝ զոր դեռ ըրած չեմ՝ գրելով ստացուածքս անոնց բաժնեմ որպէս զի մահուանէս ետև դատի չելնեն . այս գործս լմնցնելէն ետև՝ շուտ մ՚այս տեղս պիտի դառնամ որ ինչ որ հրամայես կատարեմ ։ — Բայց , ըսաւ Ճինն , եթէ խնդրած պայմանաժամդ քեզի շնորհեմ , կը վախնամ որ նորէն չես դառնար ։ — Եթէ երդմանս կը հաւատաս , պատասխանեց վաճառականն , երկնից և երկրէ Արարչին վրայ կ՚երդնում որ անպատճառ պիտի դառնամ ։ — Որչափ ատեն կ՚ուզես , հարցուց Ճինը . — Տարի մը միայն կը

խնդրեմ, վրայ բերաւ վաճառականն. այսչափ ժամանակի պէտք ու-նիմ որ գործերս կարգի դնեմ, և անվիշտ պատրաստուիմ այրելու դուարճութենէ հրաժարելու: Այսպէս կը խոստանամ որ գալ տարի վաղուան օրս, անվրէպ այս ծառերուն տակ պիտի գամ, ինքզինքս ձեռքդ յանձնելու համար: — Աստուած վկայ ըլլայ բրած խոստ-մանդ, հարցուց Ջինն: — Այո, պատասխանեց վաճառականը, կրկին վկայ կը բռնեմ Աստուած և այս երդմանս կրնաս վստահիլ:» Այս խօսքին վրայ, Ջինն աղբիւրին մօտ թողուց զանի և աներևոյթ եղաւ:

Վաճառականն իր վախը փարատելով նորէն ձի հեծաւ և իր ճամ-բան շարունակեց: Բայց եթէ մէկ կողմէն շատ մեծ վտանգէ մ'ա-զատելուն կ'ուրախանար, միւս կողմէն աղէտալի տրտմութեան մէջ կը գտնուէր երբ իր ըրած մահաբեր երդման վրայ կը մտածէր: Երբոր տուն հասաւ, կինն ու զաւակները մեծ ուրախութեամբ զինքն ընդունեցան, բայց նա՝ փոխանակ անոնց խնդակից ըլլալու, սկսաւ այնպէս դառնապէս լալ, որ իսկոյն իմացան որ իր գլխուն տարօրի-նակ բան մը հասեր է: Իր կինը հարցուց թէ ինչ պատճառաւ կուլայ և ինչո՞ւ այդքան տրտում կ'երևի: «Դարձիդ վրայ ուրախ էինք, կ'ը-սէր կինը, սակայն այդ ողբալի վիճակդ մեր սիրտը թունդ կը հա-նէ: Կ'աղաչեմ, իմացուր մեզ քու տրտմութեանդ պատճառն: — Աւա՜ղ, պատասխանեց էրիկն, ինչպէս տրտում չըլլամ մինակ տարի մ'ունիմ ապրելու:» Այն ատեն իր և Ջինին մէջ անցած դարձածը պատմեց, և յայտնեց թէ տարին լմննալուն խօսք տուած է անոր մօտ դառնալու և անոր ձեռօքը մեռնելու:

Երբ այս ցաւալի լուրն իմացան, ամէնքնին ալ սկսան ողբալ: Կինն երեսին զարնելով ողորմելի ձայներ կը հանէր ու մազերը կը փետէր. զաւակները յորդ արտասուք կը թափէին և իրենց հեծծանքներով տունը կը հնչեցնէին. իսկ իրենց հայրը, սաստիկ փղձկելով իր արտասուքն անոնց ողբերուն կը միացնէր: Մէկ խօսքով խիստ սրտա-շարժ տեսարան մ'էր այն:

Միւս օրն անմիջապէս վաճառականն որոշեց գործերը կարգի դնել, և ամէն բանէ առաջ իր պարտքերը վճարելու փութաց: Իր

բարեկամներուն ընծաներ և աղքատներուն ողորմութիւն բաշխեց և արու ու էգ գերիներուն ազատութիւն տուաւ. ստացուածքը զաւա-կացը բաժնեց, և փոքրներուն խնամակալներ կարգեց. իր ամուսնու-թեան պայմանագրին համեմատ իր կնոջ բոլոր բաները յանձնելէն զատ՝ տուաւ նաև իր հարստութենէ ըստ օրինի անոր ինկած մասը:

Վերջապէս տարին լրացաւ, ու հարկ եղաւ մեկնիլ. պարկը պատրաստեց, և անոր մէջ դրաւ պատանքն որով պիտի թաղուէր. բայց երբ իր կնոջ և զաւակացը վերջին բարևը տալու ելաւ, անպատ-մելի տրտմութիւն մը զգացին: Չէին կրնար անորմէ զատուիլ, և կը փափաքէին անոր ընկերանալ և հետը մեռնիլ: Սակայն, քանի որ վաճառականն ինքզինքը զսպել և իր սիրականներէն հեռանալու պար-տաւոր էր, «Զաւակներս, ըսաւ անոնց, ձեզնէ զատուելով Աստու-ծոյ հրամանին կը հնազանդիմ: Դուք ալ ինծի հետևեցէք. արիա-բար անոր այս անհրաժեշտ հարկին գլուխ ծռեցէք և մտածեցէք թէ մեռնիլը մարդուս ճակատագիրն է:» Այս խօսքերն ըսելէն ետև՝ իր ընտանիքէն հեռացաւ անոնց ողբն ու կոծը չլսելով և Ջինը տեսած տեղը հասաւ, ճիշդ իր խոստացած օրը: Ձիէն վար իջնելով՝ աղ-բիւրին եզրը նստաւ, ուր Ջինը սպասեց անպատում տրտմութեամբ:

Մինչդեռ հալումաշ սրտով անոր գալուն կ'սպասէր, բարի ծեր մը երևցաւ որ եղն մը լծելու կը տանէր, ու երբ մօտեցաւ իրարու բա-րև տուին. յետոյ ծերունին անոր ըսաւ. «Եղբայր իմ, այս անա-պատ տեղն ինչո՞ւ համար եկար. այս տեղ չար ոգիներէ զատ ուրիշ բան չկայ և մարդս ապահով չկրնար ըլլալ: Այս աղուոր ծառերը տեսնելով՝ կը կարծուի թէ մարդաբնակ է այս վայրս, բայց իրօք բո-լորովին առանձնութիւն մ'է ուր երկար ժամանակ կենալը վտանգա-ւոր է:»

Վաճառականը ծերունիին հետաքրքրութիւնը գոհ ըրաւ, և պատմեց անոր թէ ինչ դիպուածով այն կողմերը կը գտնուի: Ծե-րունին մեծ զարմանքով մտիկ ըրաւ, և այսպէս խօսեցաւ: «Այս ինչ զարմանալի բան է, գոչեց նա, և դու ալ անլուծանելի երդու-մով մը կապուեր ես խօսքիդ: Կը փափաքիմ ոգիին հետ ձեր ունեցած տեսակցութեան ներկայ գտնուիլ:» Այս ըսելով՝ վաճառականին մօտ

նստաւ, և երբ միասին կը խօսակցէին . . . ։

Բայց կը նայիմ որ լուսցեր է, ըսաւ Շէհերազատ խօսքը կտրելով. վէպիս ամենէն աղուոր մասը մնացորդն է ։ Սուլթանն որոշեց անոր վախճանը լսել և այն օրն ալ Շէհերազատը սպաննել չտուաւ ։

3րդ ԳԻՇԵՐ

Հետևեալ գիշերը, Տինարզատ՝ երկու նախորդ գիշերներուն պէս իր քրոջը մի և նոյն խնդիրն ըրաւ ։ «Սիրելի քոյր իմ, ըսաւ անոր, թէ որ չես քնանար, կ՚աղաչեմ քու գիտցած զուարճալի վէպերէն հատ մը պատմէ ինծ ։» Բայց սուլթանն ըսաւ որ վաճառականին և Ճինին մնացորդ պատմութիւնը կ՚ուզէ լսել. ուստի Շէհերազատ այսպէս շարունակեց.

Տէր իմ, երբ վաճառականն ու եղնաւոր ծերունին իրարու հետ կը խօսակցէին, ուրիշ ծերունի մը՝ որ իր հետն երկու սև շներ ունէր, վրայ հասաւ ։ Անոնց մօտեցաւ, բարևեց և հարցուց թէ ինչ բան ունին այս տեղ ։ Եղնաւոր ծերունին վաճառականին և Ճինին արկածն, անոնց մէջ անցածն և վաճառականին երդումն իմացուց անոր, ըսաւ նաև թէ այն օր պայմանաժամը կը լմնար և թէ միտքը դրած էր նոյն տեղը սպասելու որ տեսնէ թէ ինչ պիտի պատահի ։

Երկրորդ ծերունին՝ այս բանս իր հետաքրքրութեան արժանի գտնելով նոյնպէս սպասել ուզեց ։ Միւսներուն քովը նստաւ և հազիւ թէ անոնց խօսակցութեան մասնակից եղեր էր, երրորդ ծերունի մի ալ եկաւ և առաջիններուն դառնալով հարցուց թէ ինչ պատճառաւ այն տեղ գտնուող վաճառականն այնքան տրտում կ՚երևէր ։ Այս տրտմութեան պատճառն անոր իմացուցին և այնքան տարօրինակ գտաւ որ ինքն ալ փափաքեցաւ վաճառականին և Ճինին մէջ

պատահելիք անցքին ականատես ըլլալ. ուստի անոնց մէջ նստաւ ։

Շատ չանցաւ՝ դաշտին մէջ յանկարծ թանձր մշուշ մը տեսան որ հողմայոյզ փոշիի մրրկի մը կը նմանէր ։ Այս մշուշը մինչև իրենց մօտ հասաւ և յանկարծ ցրուելով՝ Ճինն երևան ելաւ, որ առանց բարև տալու, վաճառականին մօտեցաւ թուրը ձեռքն և անոր թևէն բռնելով ըսաւ. «Ոտք ելիր, որ սպաննեմ քեզ ինչպէս որ որդիս սպաննեցիր ։» Վաճառականն ու երեք ծերունիները զարհուրելով սկսան լալ և օդը հնչեցնել իրենց աղաղակներով . . . ։

Շէհերազատ՝ նոյն պահուն տեսնելով որ լուսցեր է, վէպը դադրեցուց, բայց սուլթանին հետաքրքրութիւնն այնքան գրգռուեր էր որ անպատճառ վէպին վախճանն իմանալ ուզեց և թագուհւոյն մահը հետևեալ օրուան թողուց ։

Կարելի չէ բացատրել թէ ինչ մեծ ուրախութիւն զգաց վէզիրն երբ տեսաւ որ սուլթանը հրաման չէր տար Շէհերազատը սպաննելու ։ Իր ընտանիքը, պալատականներն և ընդհանրապէս ամէն մարդիկ զարմացան մնացին ։

4րդ ԳԻՇԵՐ

Հետևեալ գիշերուան լուսնալու մօտ՝ Շէհերազատ այսպէս խօսեցաւ սուլթանին հրամանաւը ։

Տէր իմ, երբ եղնաւոր ծերունին տեսաւ որ Ճինը վաճառականը բռնեց և զանի անխնայ պիտի սպաննէր, այս հրէշին ոտքն ընկաւ և զանի համբուրեց և ըսաւ ։ «Ճիներու իշխան, խոնարհաբար կը պաղատիմ որ ձեր բարկութիւնը մեղմէք և ինծ մտիկ ընելու շնորհ ընէք ։ Ձեզի՝ իմ և այս եղին պատմութիւնը պիտի պատմեմ, բայց թէ որ իմ ըսածս այս վաճառականին, որուն կեանքն առնուլ կ՚ուզէք, արկածէն աւելի հրաշալի և հիանալի գտնէք, խօսք կտա՞ք

զինձ այս թշուառականին յանցանաց մէկ երրորդ մասը ներելու ։»
Ճինը քանի մը վայրկեան մտածեց և վերջապէս պատասխան
տուաւ . «Լա՛ւ , ըսէ նայիմ , հաւանութիւն կուտամ ։»

ԱՌԱՋԻՆ ԾԵՐԻՆ ԵՒ ԵԶԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Կսկսիմ ուրեմն , յարգոյ ծերը , պատմութիւնս ըսելու . մտիկ ըրէք ինձ ուշադրութեամբ , կ'աղաչեմ ։ Այս եզն որ կը տեսնէք հօրեղբօրս աղջիկն է և միանգամայն իմ կինս ։ Հազիւ տասն երկու տարու էր երբ հետը կարգուեցայ . այնպէս որ պարտաւոր էր ոչ միայն իբր իր ազգականն ու էրիկն այլև իբր իր հայրը նկատել զիս ։

Երսուն տարի միասին ապրեցանք առանց զաւակ մ'ունենալու . բայց իր ամլութիւնը չդադրեցուց իր վրայ ունեցած համարումս և բարեկամութիւնս ։ Զաւակ ունենալու բաղձանքէս գերի մը գնեցի , և որդի մ'ունեցայ , որ մեծ յոյսեր կուտար ինձ ։ Կինս անոր վրայ նախանձեցաւ , մօրն ու զաւկին դէմ ատելութիւն ունեցաւ և այնչափ ծածուկ պահեց իր միտն որ շատ ուշ կրցայ իմանալ ։

Սակայն որդիս կը մեծնար և արդէն տասը տարեկան էր , երբ ճամբորդութիւն մ'ընելս հարկ եղաւ ։ Մեկնելէս առաջ՝ գերիս և զաւակս կնկանս խնամոց յանձնեցի , քանի որ իրմէ կասկած մը չունէի և աղաչեցի որ հոգ տանի բացակայութեանս ատեն որ ամբողջ տարի մը տևեց ։ Կինս այս ատելութիւնը գոհ ընելու առիթ գտաւ ։ Կախարդութիւն սորվելու եռանդ եղաւ և երբ այս սատանայական արհեստին մէջ բաւական յառաջ գնաց իր մտածած սոսկալի խորհուրդն 'ի գործ դնելու համար՝ անգամ կինս տղաս ամայի տեղ մը տարաւ , իր հմայքով որթի փոխեց զանի և ագարակապանիս տալով՝ պատուիրեց որ անասունի պէս կերակրէ և ըսաւ որ տեղէ մը ծախու առած է զանի ։ Իր կատաղութիւնն այս գարշելի գործով չշատացաւ , գերիս ալ կովու փոխեց և նոյնպէս մշակիս տուաւ ։

Երբ քաղաքս դարձայ , գերիս և որդիս հարցուցի ։ Գերիդ մե-

ռաւ , ըսաւ ինձ , իսկ որդիդ , երկու ամիս կայ որ չտեսայ և չգիտեմ ինչ եղաւ ։ Սիրտս ցաւեցաւ գերիիս մահուան վրայ , բայց որովհետև որդիս կորսուած էր միայն , կը յուսայի նորէն տեսնել զինքը ։ Սակայն ութ ամիս անցաւ , մարդ չերևցաւ և ամենեկին լուր մը չառի երբ պայրամի մեծ տօնը հասաւ ։ Այս առթիւ զոհ մ'ընելու համար մշակիս իմաց տուի որ ինծի գէր կով մ'ընտրէ ու բերէ ։ Մարդը հրամանը կատարեց , բերած կովը նոյն ինք գերին էր , այսինքն որդւոյս թշուառ մայրը ։ Կովին ոտները կապեցի և երբ զայն մորթելու կը պատրաստէի , սկսաւ ողորմելի կերպով բառաչել , և տեսայ որ աչքերէն աղբիւրի պէս արտասուք կը վազէր ։ Այս բանս ինձ տարօրինակ երևցաւ , և ակամայ վրան խղճալովս՝ ձեռքս վրայ չգնաց որ մորթեմ ։ Մշակիս հրաման ըրի որ երթայ ուրիշ մը բերէ ։

Կինս՝ որ ներկայ էր՝ գոհ եղաւ կարեկցութիւնս տեսնելով , դէմ կենալ ուզեց որ իր չարութիւնը պարապ չելնէ և ըսաւ . «Բարեկամ , ինչ կ'ընես ։ Այս կովը զոհէ . մշակդ ասկէ աւելի լաւագոյն , և ոչ քու նպատակիդ յարմարագոյն կով մը չունի ։» Կնոջս կամքը կատարելու համար կովուն մօտեցայ , և դանակս զսպելով քիչ մնաց մահացու հարուածը պիտի տայի , երբ զոհն իր բառաչներն սկսելուն երկրորդ անգամ զէնքը ձեռքէս ընկաւ ։ Այն ատեն դանակը մշակին յանձնեցի , այսպէս ըսելով . «Առ սա զէնքն , և դուն մորթէ . իր բառաչներն ու արտասուքը սիրտս կտոր կտոր կ'ընեն ։

Մշակն՝ որ ինծի պէս անոր վրայ չէր գթար , զոհեց զայն ։ Բայց երբոր կովուն մորթը հանեցին , տեսանք որ ոսկորէ զատ ուրիշ բան չկար , թէև մեզ շատ գէր երևցեր էր ։ Սիրտս սաստիկ ցաւեցաւ ։ «Առ քեզի ըլլայ , ըսի երկրագործին , որու որ կ'ուզես պարգև ըրէ և իբր ողորմութիւն տուր , և թէ որ շատ գէր կով մ'ունիս , ինծի բեր ։» Չհարցուցի թէ կովն ինչ ըրաւ , բայց աչքիս առջևէն վերցընել տալէն քիչ մ'եաքը , նայեցայ որ եկաւ հետը բերելով խիստ պարարտ որթ մը ։ Թէպէտ չէի գիտեր որ այս որթն իմ որդիս է , բայց զայն տեսնելուս գութս սաստիկ շարժեցաւ ։ Ինքն ալ զիս տեսնելուն անանկ ճիգ մ'ըրաւ քովս գալու համար որ չուանը կտրեց ։ Եկաւ ոտքս ընկաւ , գլուխը գետին դրաւ , որպէս թէ կ'ուզէր գութս շար-

ձել և աղաչել որ անգթաբար զինքը չմերժեմ , կարելի եղած նշաններով կ'իմացնէր ինձ որ իմ որդիս էր ։

Այս բանս տեսնելուս աւելի շատ զարմացայ և ցաւեցայ քան կովուն արտասուքէն ։ Գորովալից կարեկցութիւն մ'զգացի անոր համար , կամ աւելի լաւ ըսեմ , արենակցութիւնս բարձր ձայնով կը բաղքէր ։ «Գնա՛ , ըսի մշակին , այս որթը տեղը տար , անոր վրայ հոգդ պակաս մի ըներ , և անոր տեղը շուտ մ'ուրիշ մը բեր ։»

Երբ կ'ինս այսպէս խօսիլս լսեց , նորէն սկսաւ . «Ինչ կ'ընես , Տէրիկս , հաւտա ինձ , այս որթէն աղէկ ուրիշ մը զոհ մ'ըներ ։

«— Կ'ինս , պատասխանեցի անոր , այս որթը չպիտի զոհեմ , անոր այս շնորհը պիտի ընեմ , կ'աղաչեմ իմ կամքիս մի հակառակիր ։ Չարասէր կ'ինն իմ աղաչանացս միտ չդրաւ , այնչափ շատ կ'ատէր իմ որդիս որ չէր ուզեր անոր ազատումն ։ Ոտք կոխեց կամակորութեամբ որ այս զոհն ընեմ , ես ալ պարտաւորեցայ անոր խնդիրը կատարել ։ Ուստի որթը կապեցի և մահաբեր դանակին առնելով . . . ։

Շէհէրազատ այս տեղ պատմութիւնը կտրեց , վասն զի տեսաւ որ լուսցեր է ։ «Քոյր իմ , ըսաւ այն ատեն Տինարզատ , զմայլեցայ այդ պատմութեանդ վրայ , որ ուշադրութիւնս բոլորովին գրաւեց ։ — Եթէ սուլթանն այսօր ալ թողու զիս որ ապրիմ , պատասխանեց Շէհէրազատ , պիտի տեսնես որ վաղուան պատմելիքս աւելի պիտի զուարճացնէ քեզ ։» Շահրիար՝ որ հետաքրքիր էր գիտնալ թէ եղավար ծերունիին որդւոյն ինչ պիտի հանդիպի , ըսաւ սուլթանուհւոյն որ շատ կը փափաքի յաջորդ իրկուն պատմութեան վերջը լսելու ։*

---

*Այս պատմութիւններուն շարունակութեան ատեն Շէհէրազատ մի և նոյն միջոցը կը բանեցնէ . առաւօտեան դէմ վէպին թելը կը կտրէ , և որպէս զի Շահրիարի հետաքրքրութիւնը գրգռէ , այսպէս ամէն օր կը յաջողի իր մահավճիռը հետևեալ օրուան ձգել տալ ։ Աւելորդ համարեցինք այս գիշերներու բաժանումը պահել և այսպէս հազար ու մէկ անգամ մի և նոյն բանը կրկնել ։ Լաւագոյն սեպեցինք ճշտիւ բնագրին հետևիլ առանց բան մը պակսեցնելու ։ (Ծ. Հ.)

Երդ ԳԻՇԵՐ

Տէր իմ , ըսաւ Շէհէրազատ , եղավար ծերունին , շարունակեց իր պատմութիւնը պատմել ջինին , երկու միւս ծերերուն ու վաճառականին ըսելով . «Դանակը ձեռքս առի , և տղուս կոկորդը պիտի խօթէի երբ իր լալագին աչքերն ինձ դարձնելով՝ անանկ սիրտս շարժեց որ զանի զոհելու ոյժս չմնաց ։ Դանակը վար նետեցի և կնոջս ըսի որ անպատճառ ուրիշ որթ մը մորթել կ'ուզեմ ։ Ամէն հնար բանեցուց որ միտքս փոխէ , բայց ինչ որ ըրաւ ես հաստատ կեցայ և խօսք տուի միայն զինքը հանդարտեցնելու համար , որ յաջորդ տարուան Պայրամին զանի պիտի զոհեմ ։

Հետևեալ առտու , ագարակապանս խնդրեց որ ինձի հետ առանձին խօսի . «Քեզի անանկ լուր մը տալու եմ , ըսաւ , որ յուսամ թէ շատ հաճելի պիտի գայ քեզ ։ Աղջիկ մ'ունիմ որ կախարդութեան մէջ բէչ շատ վարժ է ։ Երբ երէկ չզոհած որթդ տեղը կը տանէի , դիտեցի զայն տեսնելով խնդաց և վայրկեան մ'ետքը սկսաւ լալ ։ Հարցուցի անոր թէ ինչո՞ւ համար մի և նոյն ժամանակ երկու իրարու հակառակ բաներ կ'ըներ . «Հայր իմ , պատասխանեց ինձ , այս տարած որթդ մեր տիրոջ որդին է ։ Դեռ կենդանի տեսնելուս զանի՝ խնդացի ուրախութենէս , և լացի երբ երէկ անոր մօրը զոհուիլը յիշեցի , որ կովու փոխուեր էր ։ Այս երկու կերպարանափոխութիւնները մեր տիրոջ կնկան հմայքով կատարուեր էին , վասն զի զերին և որդին կ'ատէր ։ — Ահա աղջկանս ըսած խօսքը , յարեց երկրագործն , և այս լուրը տալու համար յատկապէս եկայ քեզ գտնելու ։»

«Այս խօսքերուն վրայ , ո՛ ջին , շարունակեց ծերունին կը թողում քեզ գտնել թէ ո՛րչափ մեծ եղաւ իմ զարմանքս ։ Շուտ մը մշակիս հետ ճամբայ ելայ որ անձամբ իր աղջկան հետ խօսիմ ։ Հասնելու ատենս նախ գոմը գացի ուր որդիս կը գտնուէր ։ Իմ գգուանացս չկրցաւ պատասխան տալ , բայց այնպիսի կերպով մ'ընդունեց որ վերջապէս համոզուեցայ որ իմ որդիս է ։

«Մշակին աղջիկն եկաւ . «Բարի աղջիկս , ըսի անոր , կ'ուզե՞ս իմ որդւոյս իր առջի կերպարանքը տալ : — Այո՛ , կ'ըսեմ , պատասխանեց : «Ա՛հ , թէ որ գլուխ հանես , կրկնեցի , իմ բոլոր ունեցածս քեզի կը շնորհեմ : Այն ատեն աղջիկն ըսաւ ինծի ժպտելով . «Դու մեր տէրն ես , և քաջ գիտեմ թէ ո՛րչափ շնորհակալ եմ քեզ . բայց քեզ առաջուց իմաց կուտամ որ երկու պայմանաւ միայն կրնամ որդւոյդ կերպարանքն այլափոխել , առաջինը սա է որ որդիդ ինծի հետ պիտի կարգես , երկրորդը սա է որ թշուառութիւն տաս ինծի զանի որթի փոխող անձը պատժել : — Առջի պայմանն , ըսի անոր , յօժարակամ կ'ընդունիմ , ասկէ զատ , կը խոստանամ որդւոյս ձգած ստացուածքէս զատ՝ շատ մի հարստութիւններ տալ քեզ : Վերջապէս պիտի տեսնես թէ ինչպէս կը վարձատրեմ քեզնէ սպասած ծառայութիւնս : Իսկ կնկանս վերաբերող պատիժն ալ սիրով կ'ընդունիմ : Ասանկ մեղսական գործ մ'ընողը պատժոյ արժանի է . քու ձեռքդ կը յանձնեմ զանի , ինչ որ կ'ուզես ըրէ , բայց կ'աղաչեմ միայն որ զանի չմեռցնես : — Ուրեմն , ըսաւ աղջիկն , ինչ որ որդւոյդ ըրաւ նոյնը պիտի ընեմ և իրեն : — Կը հաւանիմ , ըսի անոր , բայց նախ տղաս ազատէ և ինծի յանձնէ :

Այն ատեն այս աղջիկն աման մի լեցուն ջուր առաւ , և անոր վրայ անանկ խօսքեր արտասանեց որ ես բան մի չհասկցայ . «Ո՛վ որթ , ըսաւ , եթէ ամենակարող և գերագոյն Աստուծոյ ձեռօք այժմեան կերպարանքովդ ստեղծուեցար , այս կերպարանքիդ մէջ մնա . բայց թէ որ մարդ ես , և կախարդութեամբ որթ դարձար , առ քու բնական կերպարանքդ , գերագոյն Արարչին հրամանաւ :» Այս խօսքերս աւարտելով անոր վրայ ջուր թափեց և իսկոյն իր առաջին կերպարանքն առաւ :

«Որդեակ իմ , սիրելիդ իմ որդեակ , գոչեցի իսկոյն այնպէս եռանդալից զանի գրկելով որ ինքզինքս կորուսի . Աստուած ղրկեց մեզի այն նորահասակ աղջիկն որ քեզ կապող քամինելի հմայքը ջնջէ , և քեզի ու մօրդ կրած չարեաց վրէժը լուծէ : Անտարակոյս եմ որ երախտագիտութենէ շարժեալ պիտի կարգուիս այս աղջկան հետ՝ ինչպէս որ ես խօսք տուած եմ :» Տղան ուրախութեամբ յանձն առաւ ,

բայց ամուսնանալէն առաջ՝ դեռահասակ օրիորդը կնիկս եզի փոխեց , և ահա այս եզն է որ այս տեղ կը տեսնէք : Ես ուզեցի որ այս կերպարանքը մնայ քան ուրիշ անախորժ ձև մ'առնէ , որպէս զի առանց ընդդիմութեան ընտանեաց մէջ զինքը տեսնենք : Շատ չանցաւ որդիս անկին մնաց և ճամբորդութեան ելաւ : Եւ որովհետև շատ տարիէ վեր իրմէ լուր առած չեմ , ճամբայ ինկայ զանի փնտռելու համար , և կինս ուրիշ մարդու մի հաւատալ չուզելով այս խուզարկութեան ատեն՝ արժան դատեցի ամէն տեղ հետս տանիլ : Ահաւասիկ իմ և այն եզիս պատմութիւնը : Միթէ զարմանալի ու հրաշալի պատմութիւն մը չէ՞ :

— Քեզ համամիտ եմ այս մասին , ըսաւ ջինն , և ատոր համար՝ սա վաճառականին յանցանքին մէկ երրորդ մասը կը ներեմ :»

Երբ առաջին ծերունին , տէր իմ , շարունակեց սուլթանուհին , իր պատմութիւնն աւարտեց , երկրորդն՝ որ երկու սև շները կը տանէր , ջինին դարձաւ և անոր ըսաւ . «Քեզ գլխիս և այս երկու սև շներուն պատահածը պիտի պատմեմ , և ստոյգ եմ որ քիչ մ'առաջ լսածէդ աւելի զարմանալի պիտի գտնես : Բայց երբոր պատմեմ , այս վաճառականին յանցանքին մէկ երրորդ մասին ալ թողութիւն պիտի տաս : — Այո՛ , պատասխանեց ջինը , բաւական է որ քուկդ անոր պատմածէն գերազանց ըլլայ :» Այս պայմանը դնելէն ետև՝ յարեց Շէհերազատ՝ ջինին դառնալով այսպէս սկսաւ իր պատմութիւնը :

ԵՐԿՐՈՐԴ ԾԵՐՈՒՆԻՒՆ

ԵՒ ԵՐԿՈՒ ՍԵՒ ՇՆԵՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ո՛վ մեծդ իշխան ջիներու , պէտք է գիտնալ որ երեք եղբայր ենք . այս երկու սև շները՝ զոր կը տեսնես՝ իմ եղբայրքս են , ու ես՝ անոնց երրորդն եմ : Մեր հայրը մեռնելու ատեն հաւասարական ոսկի ձգեց ա-

մէն մէկուն․ այս գումարով երեքնիս ալ նոյն արհեստին հետեւեցանք․ վաճառական եղանք ։ Խանութ բանալէն քիչ մը ժամանակ ետքն՝ իմ անդրանիկ եղբայրս, որ այս երկու շներէն մէկն է, միտքը դրաւ ճամբորդութեան ելնել եւ օտար երկիրներու հետ առուտուր ընել ։ Այս նպատակաւ բոլոր կալուածները ծախեց, եւ իր առուտուրին յարմար ապրանք գնեց ։

Ելաւ գնաց ու լման տարի մը դուրս մնաց ։ Այս ժամանակէս ետքն՝ աղքատ մը՝ որ կարծես թէ ողորմութիւն կ'ուզէր, խանութս եկաւ ու անոր ըսի․ «Աստուած քեզ ողորմի․ — Քեզ ալ Աստուած ողորմի, պատասխանեց ինծի․ կարելի բա՞ն է որ զիս չճանչես ։ «Ա՛հ, եղբայր իմ, գոչեցի զանի գրկելով, ինչպէս կրնայի ճանչել քեզ այդ վիճակիդ մէջ ։» Խանութս մտցուցի զանի, իր առողջութեան եւ ճամբորդութեան յաջողութեան վրայ լուրեր հարցուցի ։ «Այդ հարցումը մ'ըներ ինծի, ըսաւ նա․ զիս տեսնելով ամէն բան կրնաս տեսնել ։ Եթէ տարիէ վեր գլխիս եկած փորձանքները քեզ պատմեմ որ զիս այս խեղճութեան մէջ ձգեցին, իմ ցաւերս պիտի նորոգեմ ։

Շուտ մը խանութս գոցել տուի, եւ ամէն հոգերս մէկդի թողլով՝ բաղնիք տարի զանի եւ մտածելիս ամենէ պատուական լաթերս հագցուցի անոր ։ Առ ու ծախի տետրակներս քննեցի, եւ տեսնելով որ դրամագլուխս կրկնապատկեր է, այսինքն երկու հազար ոսկիի տէր եմ, կէսն անոր շնորհեցի ։ «Եղբայր իմ, ըսի անոր, ասով ըրած կորուստդ կրնաս մոռնալ ։» Ուրախ սրտով հազար ոսկին առաւ, նորէն գործի սկսաւ եւ առաջուան պէս միատեղ ապրեցանք ։

Ժամանակէ մ'ետքն՝ իմ երկրորդ եղբայրս, որ այս երկու շներէն միւսն է, նոյնպէս իր կալուածքը ծախել ուզեց ։ Ես եւ մեծ եղբայրս ձեռքէ եկածն ըրինք որ անոր միտքը դարձնենք, բայց ճար չեղաւ ։ Ծախեց բոլորն ալ եւ առած ստակով ապրանք գնեց որ օտար երկիր տանի առ եւ տուր ընէ ։ Ուրիշ ճամբորդներու ընկերացաւ եւ ճամբայ ելաւ ։ Տարիէ մ'ետքն իր անդրանիկ եղբօր պէս թշուառ վիճակի մէջ ետ դարձաւ ։ Զանի հագցուցի, եւ որովհետեւ դրամագլխէս զատ հազար ոսկի ունէի, զանոնք անոր տուի ։ Խանութ բացաւ, եւ իր արհեստը բանիլ սկսաւ ։

Օրին մէկն իմ երկու եղբարքս եկան ինծի առաջարկելու որ միասին ճամբորդութիւն ընենք առուտուրի համար ։ Նախ իրենց առաջարկութիւնը մերժեցի ։ «Դուք արդէն ճամբորդութիւն ըրիք, ըսի անոնց ; եւ ինչ շահեցաք ։ Ո՞վ կրնայ ապահովել որ ես ալ ձեզի չափ դժբաղդ չպիտի ըլլամ ։» Պարապ տեղ բաղդ փնտռելու համար յորդոր կարդացին ինծի եւ աչք խաբող պատճառներ մէջ բերին․ բայց ես իրենց կարծիքը չընդունեցի ։ Բայց այնչափ շատ վրաս ընկան որ հինգ տարի շարունակ իրենց թախանձանաց դէմ դնելէ ետեւ՝ վերջապէս իրենց հետ մէկ եղայ․ սակայն երբ ճամբորդութեան պատրաստութիւններն ընել եւ պէտք եղած ապրանքը գնել հարկ եղաւ, տեսայ որ ամէն բան վատներ են եւ ամէն մէկուն տուած հազար ոսկիէս ստակ մը չէր մնացեր ։ Բնաւ յանդիմանութիւն մը չըրի ։ Ընդ հակառակն, որովհետեւ դրամագլուխս վեց հազար ոսկիի հասեր էր, կէսն անոնց մէջ բաժնեցի, ըսելով․ «Եղբարք իմ, պէտք է այս երեք հազար ոսկին աչքէ հանել եւ միւսն ապահով տեղ մը պահել, որպէս զի եթէ այս ճամբորդութիւնը ձեր ըրածին պէս ձախորդ վախճան մ'ունենայ, գոնէ ձեռքերնիս բան մը մնայ եւ անով մեր հին արհեստին հետեւելու կարող ըլլանք ։» Ուստի ամէն մէկուն հազար ոսկի տուի, նոյնչափ իմ քովս պահեցի, եւ միւս երեք հազար ոսկին տանս մէկ անկիւնը թաղեցի ։ Ապրանք գնեցինք, եւ մեր վարձու բռնած նաւը բեռնաւորելով ճամբայ ելանք յաջողակ հովով մը ։

Երկու ամիս նաւարկութիւն ընելէն ետեւ՝ ողջ առողջ նաւահանգիստ մը հասանք, դուրս ելանք եւ մեր ապրանքը շատ եւ սուղ գնով ծախեցինք ։ Բայց մանաւանդ ես, այնչափ յաջողութիւն գտայ որ տասին մէկ վաստակ ըրի ։ Նոյն քաղքին ապրանքէն ալ գնեցինք որ մեր երկիրը տանինք ծախենք ։

Այն միջոցին որ դառնալու համար նաւ մտնելու կը պատրաստէինք, ծովեզրը վայելչադէմ կնկան մը հանդիպեցայ, թէեւ հին լաթեր հագած էր ։ Քովս գալով ձեռքս պագաւ եւ թախանձագին աղաչեց զիս որ զինքը կնութեան առնեմ եւ հետս նաւը տանիմ ։ Այս բանիս դժուարութիւն ցուցուցի, բայց համոզելու համար ինծի այնչափ բաներ ըսաւ, իբր թէ իր աղքատութեան ուշ չդնեմ եւ թէ իրմէ գոհ

պիտի ըլլամ , որ վերջապէս գիջայ ։ Մաքուր հագուստներ շինել տալու , և կանոնաւոր դաշինքով անոր հետ կարգուելէն ետքը՝ հետս նաւը տարի և ճամբայ ելանք ։

Մեր նաւարկութեան ժամանակ՝ իմ առած կնկանս վրայ անանկ աղւոր յատկութիւններ գտայ որ օրէ օր աչքս կը մտնէր ։ Սակայն իմ երկու եղբարքս՝ որ ինծի չափ յաջողութիւն չէին գտած և իմ բարեբաղդութեանս վրայ կը նախանձէին , սկսան ծուռ աչքով նայիլ ինծի ։ Իրենց կատղութիւնն այն աստիճանի հասաւ որ մինչև իմ կենացս դէմ դաւ դրին ։ Երբ գիշեր մը ես և կինս կը քնանայինք՝ մեզ ծովը նետեցին ։

Կինս վհուկ մ՚էր , և հետևապէս ջին մը , ուստի կրնաք երևակայել որ այն չխեղդուեցաւ ։ Իսկ ես արդէն մեռած էի առանց անոր օգնութեան , բայց ջուրն ընկայ չընկայ որ զիս վերցուց և կղզի մը տարաւ ։ Երբոր լուսցաւ , վհուկն ինծի ըսաւ . «Կը տեսնե՞ս , ամուսինս , որ կեանքդ ազատելով քու ինծի ըրած բարեացդ փոխարէնը հատուցի ։ Գիտցիր որ վհուկ մ՚եմ , ու նաւ մտնելու ատենդ ծովեզրը գտնուելով՝ քեզի համար մեծ սէր մը զգացի ։ Սրտիդ բարութիւնը փորձել ուզեցի , և ծպտեալ քու առջևդ ելայ ։ Ինծի հետ վեհանձնաբար վարուեցար , և սաստիկ գոհ եմ որ առիթ ունեցայ իմ երախտագիտութիւնս քեզ յայտնելու ։ Բայց եղբարցդ դէմ բարկացած եմ , և չպիտի հանդարտիմ մինչև որ իրենց կեանքը չվերցնեմ ։»

Վհուկին այս ձայնը զմայլելով մտիկ ըրի , որչափ կրցայ շնորհակալ եղայ իր ըրած բարերարութեան համար ։ «Բայց , տիկին , ըսի անոր , եղբարցս ըրածին ուշ մի դներ , և անոնց ներէ , խնդրեմ ։ Թէև դանգատելու շատ պատճառներ ունիմ , սակայն այնչափ անգութ չեմ որ անոնց մահը պահանջեմ ։» Ամէն մէկուն ըրածս պատմեցի , և իմ պատմութիւնս անոնց դէմ ունեցած զայրոյթը կ՚աւելցնէր ։ «Պէտք է , գոչեց նա , թռիմ երթամ այն դաւաճան և ապերախտ մարդոց քով և շուտ մը վրէժ առնում ։ Երթամ պիտի անոնց նաւն ընկղմելու և ծովին խորը սուզելու ։ — Չէ , գեղանի տիկինս , ըսի անոր , յանուն Աստուծոյ , այդպիսի բան մ՚ըներ , բարկութիւնդ մեղմէ , մտածէ որ իմ եղբայրներս են և պէտք է չարեաց դէմ բարիք ընել ։»

Այս խօսքերէս վհուկին բարկութիւնն իջաւ , և այն ինչ լմնցուցի որ զիս առաւ և մէկ վայրկենի մէջ մեր գտնուած կղզիէն բնակարանիս տանիքին վրայ փոխադրեց որ պատշգամի ձևով էր , և իսկոյն աներևութ եղաւ ։ Վար իջայ , դուները բացի , պահած երեք հազար ոսկիս հանեցի և խանութս գտնուած տեղն երթալով զայն բացի և իմ վերադարձիս վրայ բոլոր դրացի վաճառականներէն շնորհաւորութիւններ լսեցի ։ Երբ տունս մտայ այս երկու սև շները տեսայ որ հլու դէմքով մ՚ինծի մօտեցան ։ Անկից բան մը չկրցայ հասկնալ և զարմացեր մնացեր էի . բայց վհուկը նորէն երևան գալով ամէն բան բացատրեց . «Երիկս , ըսաւ ինծի , մի զարմանար այս երկու շները տանդ մէջ տեսնելուդ , ատոնք քու երկու եղբայրներդ են ։» Այս խօսքիս , դող ելայ , և հարցուցի թէ ինչ հրաշքով այս վիճակին մէջ կը գտնուին . «Ես անոնք այս վիճակին մէջ դրի , պատասխանեց . կամ լաւ ևս ըսեմ , իմ քոյրերէս մէկուն հրաման տուի որ այս բանս ընէ և նոյն միջոցին նաւն ալ ընկղմեց ։ Անոր մէջ ունեցած ապրանքդ կորան , բայց ուրիշ կերպով վնասդ պիտի փոխարինեմ ։ Իսկ եղբայրներդ տասը տարի այս կերպարանքով մնալու դատապարտեցի . իրենց նենգութիւնն արժանի էր այս ապաշխարութեան ։» Վերջապէս իմաց տալով ինծի թէ իր վրայ ինչպէս կրնամ տեղեկութիւն առնալ , վհուկն աներևոյթ եղաւ ։

Հիմակ որ տաս տարին լրացաւ , ճամբայ ելայ որ երթամ զայն գտնեմ , և որովհետև ասկէ անցնելու ժամանակս այս վաճառականին և եղաւոր բարի ծերունիին հանդիպեցայ , ես ալ անոնց միացայ ։ Ահա այս է իմ պատմութիւնս , ո՛ ջիներու իշխանդ , միթէ տարօրինակ չե՞ս գտներ զայն ։ — Կը հաւանիմ , պատասխանեց ջինն , և վաճառականին ինծի դէմ գործած յանցանքին միւս երրորդ մասին ալ քու շնորհիւդ կը ներեմ ։

Երկրորդ ծերունին իր պատմութիւնն այն ինչ աւարտեց որ երրորդ ծերունին խօսիլ սկսաւ և առջի երկու ծերունիներուն խնդիրն առաջարկեց ջինին , այսինքն աղաչեց որ վաճառականին յանցանքին միւս երրորդ մասին թողութիւն շնորհէ եթէ իր պատմութիւնն ամենէն գերազանց գտնէ ։ Ջինն անոր ալ նոյն խոստումն ըրաւ ։ Երրորդ ծերունին ալ իր պատմութիւնը պատմեց ջինին . բայց ես չպիտի պատմեմ

փայտ , վասն զի անոր անտեղեակ եմ . սակայն այս գիտեմ թէ առջի երկու վէպերէն այնքան գերազանց գտաւ , անոր մէջի հրաշալի պատմութիւններու զանազանութեան պատճառաւ՝ որ ձինը զարմացաւ մնաց , և երրորդ ծերունիին ըսաւ . «Վաճառականին երրորդ մաս յանցանքէն կը ներեմ . պարտաւոր է ձեր երեքին շնորհապարտ ըլլալ քանի որ ձեր պատմութիւններով զինքը վտանգէ ազատեցիք , եթէ դուք չըլլայիք արդէն անդիի աշխարհը գացեր էր :» Այս խօսքերն աւարտելով՝ ձինն աներևոյթ եղաւ բոլոր հանդիսականաց ուրախութիւն պատճառելով : Վաճառականն իր երեք ազատարարներուն պարտ ու պատշաճ շնորհակալութիւնը մատոյց : Ամէնքն անոր խնդակից եղան որ վտանգէ զերծ մնաց , յետոյ իրարու բարև տուին և ամէն մէկն իր ճամբան շարունակեց : Վաճառականն իր կնոջ և զաւակաց մօտ դարձաւ և կեանքն անոնց հետ խաղաղութեամբ անցուց : «Բայց , վեհափառ տէր իմ , յարեց Շէհերազատ՝ որչափ որ պատմած վէպերս աղւոր են , ձկնորսին վէպին չեն հաւասարիր :» Տինարզատ տեսնելով որ սուլթանուհին խօսքը կ'ընդմիջէր , անոր ըսաւ . «Քոյր իմ , քանի որ դեռ ժամանակ ունիս , կ'աղաչեմ , պատմէ ինձ այն ձկնորսին պատմութիւնը , սուլթանը հաճութիւն պիտի առնու անշուշտ :» Շահրիար հաւանեցաւ և Շէհերազատ իր խօսքը նորէն սկսելով այսպէս շարունակեց :

ՁԿՆՈՐՍԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վեհափառ տէր , ատենօք ձկնորս մը կար շատ ծեր և այնքան աղքատ որ հազիւ կարող էր իր կնոջ և երեք զաւակները կերակրել : Ամէն օր կանուխ ձուկ որսալու կ'երթար և ամէն օր սովոր էր միայն չորս անգամ նետել ուռկանները :

Առաւօտ մը լուսնկային տունէն ելաւ և ծովեզրը գնաց . լաթերը

հանեց և ուռկանը ծովը նետեց : Երբ սկսաւ ուռկանը իրեն քաշել՝ առջի բերան ծանրութիւն մը զգաց , կարծեց թէ աղէկ որս մ'ըրաւ , և արդէն ինքն իրեն կ'ուրախանար : Բայց քիչ մը ետքը՝ դիտելով որ իր ցանցերուն մէջ ձկի տեղ իշու մը կմախքը կար , շատ ցաւեցաւ ասանկ անշահ որս մ'ընելուն : Սակայն իշուն կմախքը ցանցերը տեղ տեղ պատռած ըլլալուն՝ կարկտեց և նորէն նետեց : Քաշելու ատեն նորէն դժուարութիւն զգաց , և կարծեց թէ ուռկանը ձկներով լեցուն է . բայց անոր մէջ աւազով և տղմով լի կողով մը գտաւ : Ասոր վրայ շատ տրտմեցաւ : «Ո՛ բաղդ , գոռաց նա ողորմելի ձայնով մը , դադրեցուր ինձի դէմ բարկութիւնդ և մի հալածեր խեղճ մարդ մ'որ քու օգնութեանդ կը կարօտի : Տունէս ելայ , այս տեղ եկայ որ ապրուստս ճարեմ և դու իմ մահս կ'աւետես ինձ : Ապրելու համար միայն այս արհեստը գիտեմ , և թէև բոլոր ճիգս կը թափեմ , հազիւ թէ ընտանեացս ստիպողական պիտոյից կը հասնիմ : Բայց քեզի դէմ տրտունջ ընելու իրաւունք չունիմ , դու հաճոյք կ'զգաս պարկեշտ մարդիկը չարչարել և մեծ մարդիկը խաւարի մէջ թողուլ , մինչդեռ անզգամներուն կ'օգնես և բարձրերը կը հանես , անոնք որ առաքինութիւն մը չունին որով գովելի հանդիսանան :»

Այս տրտունջներն ընելէն ետք՝ շուտ մը կողովը նետեց , ցեխէն աւրուած ուռկանը լուաց և երրորդ անգամ ծովը նետեց : Բայց այս անգամ ալ լոկ քարեր , խեցիներ և աղբեր որսաց : Կարելի չէ երևակայել թէ որչափ մեծ եղաւ ձկնորսին յուսահատութիւնը . քիչ մնաց որ խելքը գլխէն պիտի երթար : Սակայն՝ լուսնալու վրայ ըլլալով իբր բարի իսլամ իր աղօթքն ըրաւ , յետոյ այսպէս վերջացուց . «Աստուած իմ , գիտես որ օրը չորս անգամ միայն ուռկանս ծովը կը նետեմ : Արդէն երեք անգամ նետեցի առանց աշխատութեանս պտուղը քաղելու . հիմակ միայն մէկ անգամն մնաց , կ'աղաչեմ յաջողցուր ծովն , ինչպէս որ Մովսէսին ըրիր :

Ձկնորսն այս աղօթքն աւարտելով՝ իր ուռկանը նետեց չորրորդ անգամ : Երբ կարծեց բաւական ձուկ որսած է , ուռկանն առաջուան պէս ծանր ծանր քաշեց : Սակայն մէջը ձուկ չկար , հապա դեղին պղնձէ անօթ մը գտաւ , որուն ծանրութենէ այնպէս կարծեց թէ մէ-

Ջր լեցուն բան կայ, այս ալ գտնուեց որ կապարով փակուած և կնքած էր, դրոշմի մը նշանով : Անոր վրայ ուրախացաւ : «Այս անօթը ձուլագործի մը կը ծախեմ, կ՚ըսէր, և ձեռք բերած ստակովս գրիւ մը ցորեն կը գնեմ :»

Անօթն ամէն կողմէ քննեց, թօթուեց որ տեսնէ թէ արդեօք մէջինը ձայն կը հանէ : Բան մը չլսեց, և այս պարագան և կապարեայ խուփին կնիքը կարծել տուին իրեն թէ մեծագին բան մը կը պարունակէ այն : Այս կէտն որոշելու համար՝ դանակն առաւ և քիչ մը դժուարութեամբ զայն բացաւ : Շուտ մը բերանը վար բռնեց, բայց մէջէն բան մը չելաւ, որով սաստիկ զարմանք զգաց : Իր առջևը դրաւ զայն և երբ ուշով կը դիտէր՝ մէջէն թանձր մուխ մ՚ելաւ և ստիպուեցաւ քանի մը քայլ ետ քաշուիլ : Այս մուխը մինչև ամպերն ելաւ, և ծովուն ու ափանց վրայ սփռուելով՝ լայնատար մշուշ մը ձևացուց . այս տեսարանն ինչպէս որ դիւրին է երևակայել, ձկնորսին տարապայման զարմանք պատճառեց : Երբ մուխը բոլորովին անօթէն պարպուեցաւ՝ միացաւ և հաստատ մարմին մը կազմեց, որմէ Ջին մը գոյացաւ՝ ամենէն մեծ հսկաներէն բարձրահասակ : Այս անչափ մեծութեամբ հրէշը տեսնելուն՝ ձկնորսը փախչիլ ուզեց, բայց այնքան շփոթած ու զարհուրած էր որ քալելու կարող չեղաւ :

«Սողոմո՛ն, գոչեց նախ Ջինը, Սողոմո՛ն, Աստուծոյ մեծ մարգարէն, մեղա՛յ, մեղա՛յ : Երբէք քու կամացդ դէմ չպիտի շարժիմ : Բոլոր քու հրամաններուդ պիտի հնազանդիմ :»

Ձկնորսը Ջինին այս խօսքերը լսելուն հանդարտեցաւ և անոր ըսաւ . «Վեհապանծ ոգի, ինչ կ՚ըսես : Արդէն հազար ութ հարիւր տարիէն աւելի է որ Սողոմոն, Աստուծոյ մարգարէն մեռած է, և հիմակ դարերուն վախճանին հասած ենք : Ըսէ ինծի պատմութիւնդ, և թէ ինչ բանի համար այս անօթին մէջ փակուեր էիր :»

Այս խօսքին վրայ՝ Ջինը ձկնորսին նայելով վես դէմքով մ՚անոր ըսաւ : «Աւելի մարդավարութեամբ խօսէ ինծի հետ, շատ յանդուգն ես եղեր որ իս վեհապանծ ոգի կ՚անուանես : — «Լաւ ուրեմն, կրկնեց ձկնորսը, միթէ աւելի քաղաքավար լեզու մը գործածած կ՚ըլլայի եթէ քեզ երջանկութեան բու կոչէի : — Քեզ կ՚ըսեմ, պատասխանեց Ջինն, որ հետս աւելի քաղաքավար կերպով խօսիս, քեզ սպաննելէս առաջ : — Է՛հ, և ինչո՞ւ համար զիս սպաննես պիտի, պատասխանեց ձկնորսը, հիմակ քեզ ազատութիւն տուի, միթէ արդէն մոռցա՞ր ըրած բարիքս : — Ո՛չ, կը յիշեմ, պատասխանեց Ջինը, բայց ասի արգելք մը չկրնար ըլլալ որ քեզ սպաննեմ, միայն շնորհ մը կրնամ ընել քեզ : — Եւ ի՞նչ է այդ շնորհն, ըսաւ ձկնորսն : — Այս է, պատասխանեց Ջինն, որ քու ընտրութեանդ կը թողում որոշել թէ ինչ կերպով կ՚ուզես որ սպաննեմ քեզ : Բայց ինչ վնաս ըրի քեզ, վրայ բերաւ ձկնորսը : Միթէ քեզի ըրած բարիքս այդ կերպով վարձատրել կ՚ուզես : — Չեմ կրնար ուրիշ կերպ վարուիլ քեզի հետ, ըսաւ Ջինն, և որպէս զի ըսածիս համոզուիս, իմ պատմութիւնս մտիկ ըրէ :

«Ես այն ապստամբ ոգիներէն մէկն եմ որ Աստուծոյ կամացը դէմ կը կենան : Բոլոր միւս ոգիները՝ Սողոմոն, Աստուծոյ մեծ մարգարէն ճանչցան և անոր հնազանդեցան : Ես միայն Սաքարին հետ այսպիսի ստորնութիւն մը չուզեցի ընել : Այս հզօր իշխանը վրէժը լուծելու համար՝ Պարաքէոյ որդին Ասափ անուն առաջին պաշտօնատարը ղրկեց որ զիս բռնէ : Ասափ եկաւ զիս բռնեց և բռնի տարաւ իր տիրոջն առջև : Սողոմոն, Դաւթի որդին, հրամայեց որ ընթացքս փոխեմ, իր իշխանութիւնը ճանչեմ և հրամաններուն հպատակիմ : Բայց ՚ի բաց անոր հնազանդելու մերժեցի, և աւելի լաւ սեպեցի իր ոխը գրգռել ինծի դէմ քան թէ պահանջուած հնազանդութեան երդումն առնուլ : Պատժելու համար զայն պղնձէ անօթին մէջ փակեց զիս, և որպէս զի ապահով ըլլայ, որ բանտս չխորտակեմ, կապարեայ խուփին վրայ իր կնիքը կոխեց, որուն վրայ Աստուծոյ մեծ անունը փորագրեալ է : Այս ընելէն ետև՝ անօթն իրեն հնազանդ ոգիներէն մէկուն յանձնեց, զիս ծովը նետելու հրաման տալով, և այս հրամանն ալ ՚ի մեծ ցաւ իմ կատարուեցաւ : Իմ բանտարկութեանս առաջին դարն երդում ըրի որ թէ մէկն զիս հարիւր տարին չլրացած ազատէ, զինքը հարստացնեմ, նոյն իսկ մահուանէ ետքը : Բայց դարն անցաւ, և ոչ ոք այս ծառայութիւնը մատոյց ինծ : Երկրորդ դարուն՝ երդում ըրի զիս ազատողին առջև երկրիս բոլոր գանձերը բանալ, բայց դարձեալ դժբաղդ միա-

ցի ։ Երրորդ դարուն՝ խոստացայ հզօր ինքնակալ մ՚ըլլալ աշխարհիս , միշտ անոր մօտ գտնուիլ ոգիի կերպարանքով և ամէն օր՝ իրեն երեք խնդիրներն՝ ինչ որ ըլլան , կատարել . բայց այս դարն ալ միւսներուն պէս անցաւ և միշտ նոյն վիճակին մէջ մնացի ։ Վերջապէս տրտում և զայրանալով այնքան երկար ժամանակ բանտը մնալուս , երդում ըրի որ եթէ վերջէն ինծի մէկն ազատէ , անխնայ զանի սպաննեմ , և ուրիշ շնորհ մը չընեմ անոր այլ թողուլ որ իր մեռնելու եղանակն ինքն որոշէ ։ Ուստի , քանի որ այսօր հոս եկար և զիս ազատեցիր , որոշէ , ինչ կերպով կ՚ուզես որ քեզ սպաննեմ ։

Այս խօսքերը մեծապէս վշտացուցին ձկնորսն ։ «Որչափ դժբաղդ եմ , գոչեց նա , որ այս տեղ եկայ ապերախտի մը մեծ ծառայութիւն մ՚ընելու ։ Լաւ նկատէ , կ՚աղաչեմ , այդ անիրաւութիւնն ու այդպիսի անհեթեթ երդում մը դրժէ ։ Ներէ ինձ , և Աստուած ալ քեզ պիտի ներէ ։ Եթէ կեանքս ինձ վեհանձնաբար բաշխես , ինքն ալ քեզ պիտի պահպանէ կենացդ դէմ լարուած որոգայթներէն ։ — Ո՛չ , մահդ որոշած եմ , ըսաւ Ճինը , միայն որոշէ թէ ինչ կերպով կ՚ուզես որ քեզ սպաննեմ ։» Ձկնորսը տեսնելով որ Ճինը հաստատ միտքը դրեր է զինքը սպաննելու , սաստիկ վիշտ զգաց , չէ թէ իր անձին , այլ իր երեք զաւակաց սիրոյն համար , որոց թշուառութեան վրայ կը ցաւէր , քանի որ իր մահուանէ ետքն անտերունջ պիտի մնային ։ Նորէն փորձ մը փորձեց Ճինին գութը շարժելու ։ «Ափսո՜ս , ըսաւ նա , հաճէ գթալ իմ վրայ քեզ տուած բարեացս 'ի նշան ։ — Արդէն ըսի քեզ , պատասխանեց Ճինը . ճիշտ այդ բանին համար պարտաւոր եմ քեզ ջնջել ։ — Ինչ այլանդակ բան է , պատասխանեց ձկնորսն , որ ըրած բարիքիս փոխարէն ինծ չարիք ընես ։ Առակը կ՚ըսէ թէ անարժան մարդու բարիք ընողը փոխարէն չարիք կ՚ստանայ իբր հատուցում ։ Ճշմարիտը կ՚ըսեմ , ես կարծէի թէ այս սուտ խօսք մ՚է . բայց յիրաւի , ասկից աւելի խելքի և ընկերական իրաւանց դպչող բան մը չկայ . հիմակ փորձով կ՚զգամ որ առակին խօսքն արդարացի է ։»

— Ժամանակ չանցնենք , ընդմիջեց Ճինը . քու ամէն դատողութիւններդ չեն կրնար իմ դիտաւորութիւնս փոխել ։ Շուտ մ՚ըսէ թէ ինչ կերպով կ՚ուզես որ քեզ սպաննեմ ։»

Հարկը մարդուս խելք կուտայ ։ Ձկնորսը հնարք մը մտածեց ։ «Քանի որ մահուանէ չպիտի կրնամ ազատիլ , ըսաւ Ճինին , Աստուծոյ կամաց կը հպատակիմ ։ Բայց մահուան կերպս ընտրելէս առաջ , կը պաղատիմ քեզ , Դաւթի որդւոյն Սողոմոն մարգարէին կնիքին վրայ փորագրած մեծին Աստուծոյ անունին վրայ , որ ինծ ճշմարտութիւնը յայտնես ընելիք մէկ հարցմանս վրայ ։

Երբ Ճինը տեսաւ որ իր վրայ երդում կը ձգուի որով պիտի պարտաւորէր ճշմարտութիւնը յայտնապէս ըսել , ինքն իրեն դող եկաւ և ձկնորսին ըսաւ . «Ինչ որ կ՚ուզես հարցուր , բայց շուտ ըրէ ։» Անոր վրայ ձկնորսն ըսաւ անոր . «Կը փափաքէի իմանալ եթէ իրօք այս անօթին մէջն էիր . կրնա՞ս մեծին Աստուծոյ վրայ երդնուլ այս բանիս համար ։ — Այո՛ , պատասխանեց Ճինը , կ՚երդնում այն մեծ անուան վրայ որ անոր մէջն էի , և բանս ճշմարիտ է ։ — Յիրաւի , պատասխանեց ձկնորսը չեմ կրնար քեզ հաւատալ ։ Այս անօթն ոտքերէդ մէկն անգամ չկրնար պարունակել , ինչպէս կարելի է որ բոլոր մարմինդ անոր մէջ փակուած ըլլայ ։ — Սակայն կ՚երդնում քեզ , պատասխան տուաւ Ճինն , որ անոր մէջն էի այնպէս ինչպէս որ զիս կը տեսնես ։ Միթէ չե՞ս հաւատար ինծ ըրած ծանր երդումէս ետքն ։ — Իրաւի չեմ հաւատար , ըսաւ ձկնորսն , և բնաւ չպիտի հաւատամ մինչև որ փորձով չհաստատես ։»

Այն ատեն Ճինին մարմինը հալեցաւ և մուխի փոխուելով առաջուան պէս ծովուն և եզրին վրայ տարածուեցաւ , և վերջն ամփոփուելով սկսաւ անօթին մէջ մտնել , հանդարտ և հաւասար կերպով մը , մինչև որ դուրսը բան մը չմնաց ։ Իսկոյն անոր մէջէն ձայն մ՚ելաւ և ձկնորսին ըսաւ . «Լա՛ւ ուրեմն , թերհաւատ ձկնորս , ահա անօթին մէջն եմ , հիմակ բանիս կը հաւատա՞ս ։»

Ձկնորսը Ճինին պատասխան տալու տեղ , կապարեայ խուփն առաւ և անօթը շուտ մը գոցելով . «Ճի՛ն , գոչեց անոր , հիմակ ալ դու իմէ շնորհ խնդրէ , և ընտրէ ինչ կերպով կ՚ուզես որ քեզ սպաննեմ ։ Բայց չէ , աւելի աղէկ է որ վերստին քեզ ծովը նետեմ , ճիշտ այն տեղն ուկէ քեզ քաշեցի . ապա նոյն ծովեզրին վրայ տուն մը պիտի շինել տամ և բնակիմ որպէս զի այս կողմերն իրենց ուռկանը նետող

ձկնորսներուն իմաց տամ որ չըլլայ թէ քեզի պէս չար ոգի մը նորէն որսան, որ երդում ըրեր ես ազատարարդ սպաննելու :»

Այս թշնամական խօսքերէն Ջինը զայրանալով իր բոլոր ճիգը թափեց որ անօթէն դուրս ելնէ, բայց անկարելի եղաւ, վասն զի Դաւթի որդւոյն Սողոմոն մարգարէին կնիքը կ'արգիլէր : Այսպէս Ջինը գիտելով որ ձկնորսին իշխանութեան տակն է, որոշեց իր բարկութիւնը պարտկել : «Ձկնորս, ըսաւ անոր մեղմ ձայնով մը, զգոյշ կեցիր, չըլլայ թէ այդ ըսածդ ընես : Իմ ըրածս կատակ մ'էր, և պէտք չէ որ իբր ճշմարիտ բան մը բռնես : — Ո՛ Ջին, պատասխանեց ձկնորսը, դուն որ պահ մ'առաջ՝ Ջիներուն մէջ ամենէն մեծ, և այս ժամուս ամենէն պզտիկն ես, լաւ գիտցիր որ քու սուտ ու պատիր խօսքերդ օգուտ մը չունին քեզ : Ծովը պիտի դառնաս նորէն : Եթէ՛ ըսածիդ պէս այնքան ժամանակ անօթին մէջ կեցար, կրնաս այսուհետև ալ կենալ մինչև վերջին դատաստանին օրը : Յանուն Աստուծոյ աղաչեցի քեզ կեանքս ինծի շնորհել, իմ աղաչանքս չլսեցիր, պէտք է որ ես ալ փոխարէնը քեզ հատուցանեմ :»

Ջինն ամէն փորձ փորձեց ձկնորսին գութը շարժելու. «Բաց անօթն, ըսաւ անոր, տուր ինծի ազատութիւնս, կ'աղաչեմ. հաւատացիր որ քեզի գոհ պիտի ըլլաս ետքէն : — Նենգաւոր մ'ես դու, պատասխանեց ձկնորսն : Եթէ քեզի վստահելու չափ անմիտ գտնուիմ կեանքս կորսնցնելու արժանի պիտի ըլլամ : Անշուշտ նոյն կերպով պիտի վարուիս հետս՝ ինչպէս որ Յոյն թագաւոր մը Տուպան անուն բժշկի մը հետ վարուեցաւ : Այս պատմութիւնը կ'ուզեմ պատմել քեզ . մտիկ ըրէ :

ՅՈՅՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ՏՈՒՊԱՆ ԲԺՇԿԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Պարսկաստանի Զուման քաղքին մէջ թագաւոր մը կար որուն հպատակները յոյներէ իջած էին : Այս թագաւորը բորոտ ունէր, և իր

բժիշկները զանի բուժելու համար ամէն տեսակ դեղ 'ի զուր գործածելէն ետև, շուարեր մնացեր էին, երբ խիստ յաջողակ բժիշկ մը Տուպան անուն իր պալատն եկաւ :

Այս բժիշկն իր գիտութիւնը քաղեր էր յունաց, պարսից, թրքաց, արաբացւոց, ասորւոց և եբրայեցւոց գիրքերէն. և փիլիսոփայութեան շատ հմուտ ըլլալէն զատ՝ ամէն տեսակ բոյսերու և տունկերու աղէկ ու գէշ յատկութիւնները քաջ գիտէր : Երբ իմացաւ որ հիւանդ է, և բժիշկներն անօգուտ ձեռք քաշեր են յուսահատ՝ ըստ կարի շուտով նոր լաթեր հագաւ ու թագաւորին ներկայանալու ճարը գտաւ : «Վեհափառ տէր, ըսաւ անոր, գիտեմ որ բոլոր ձեր բժիշկները չկրցան բորոտդ մաքրել, բայց եթէ հաճիք իմ ծառայութիւնս ընդունիլ, կը խոստանամ բժշկել ձեզ առանց ներքին և արտաքին ջուր կամ դեղ տալու :»

Թագաւորն այս առաջարկութիւնը մտիկ ըրաւ և պատասխանեց : «Եթէ ըսածդ ընելու չափ յաջողակ մարդ մ'ես, խօսք կուտամ քեզ հարուստ ընելու, քեզ և բոլոր սերունդդ . և 'ի բաց առեալ ընելիք պարգևներս, իմ սիրական մտերիմս պիտի ըլլաս : Ուրեմն կը հաւատա՞ս որ բորոտս պիտի բուժես, առանց որ և է ըմպելի և արտաքին դեղ տալու : Այո՛, տէր իմ, պատասխանեց բժիշկը, կը յուսամ յաջողիլ, Աստուծոյ օգնութեամբն, և վաղուանէ փորձն ընելու պիտի սկսիմ :»

Իրօք, Տուպան բժիշկը տուն դառնալով մական մը շինեց և կոթին կողմէն փորելով՝ անոր մէջ գործածելու դեղը դրաւ : Այս ընելէն վերջը՝ գնդակ մ'ալ շինեց ուզած կերպովը, և զանոնք հետն առնելով թագաւորին ներկայացաւ հետևեալ առտու . անոր ոտքն ընկաւ, գետինը պագաւ, ստորին խոնարհութիւն մ'ըրաւ և թագաւորին ըսաւ թէ յարմար կը դատէ որ ձի հեծնայ և հրապարակին երթայ մական խաղալու համար : Թագաւորը բժիշկին ըսածն ըրաւ, ու երբ մականախաղութեան տեղը հասաւ, բժիշկն անոր մօտեցաւ պատրաստած մականով և զայն տալով անոր ըսաւ . «Առէ՛ք սա մականը, վեհափառ տէր, և ասով կրթութիւն ըրէք գնդակը քշելով՝ մինչև որ ձեր ձեռքն ու մարմինը քրտնի : Երբ այս մականին կոթին մէջ դրած դեղս ձեռ-

քիդ ջերմութեամբը տաքնայ , բոլոր մարմինդ պիտի թափանցէ , և քրտնելէն ետքն այս կրթութիւնն ընելէ պիտի դադրիք , վասն զի դեղն իր ներգործութիւնն ըրած պիտի ըլլայ ։ Երբ պալատը դառնաք , բաղնիք պիտի մտնէք և լաւ մը մարմինդ լուալ և շփել պիտի տաք . ապա պիտի պառկիք , և երբ վաղն առտու քունէ ելնէք բժշկուած պիտի ըլլաք ։»

Թագաւորը թակն առաւ և նետած գնդակին ետևէն ձին քշեց ։ Զարկաւ զայն . իրեն հետ խաղացող պաշտօնատարները զայն նորէն իրեն դարձուցին . նորէն զարկաւ . վերջապէս այս խաղն այնքան տևեց որ ձեռքը քրտնեցաւ , ինչպէս նաև մարմինն ։ Ուստի մականին մէջ պահուած դեղն իր ազդեցութիւնն ըրաւ , ինչպէս որ բժիշկն արդէն գուշակեր էր ։ Այն ատեն թագաւորը խաղը դադրեցուց , պալատը դարձաւ , բաղնիք մտաւ և բժշկին բոլոր պատուէրները կատարեց ։ Ինքզինքը շատ լաւ վիճակի մէջ գտաւ , վասն զի միւս օրն , երբ ելաւ անկողնէն , զարմանքով և ուրախութեամբ տեսաւ որ բորոտը բժշկուեր է և մարմինն այնպէս մաքրեր էր որ կ'երևէր թէ բնաւ այս ախտն իր վրայ եկած չէր ։ Հագուելէ ետքն խորհրդարանը մտաւ , ու գահը նստելով բոլոր պալատականաց երևցաւ , որոնք շտապեր եկեր էին կանուխէն՝ որպէս զի նոր դեղին յաջողութեան ելքն իմանան ։ Երբ տեսան որ թագաւորը բոլորովին բժշկուեր է , ամէնքը մեծ ուրախութիւն մը յայտնեցին ։

Տուպան բժիշկը սրահը մտաւ ու գնաց աթոռին առջը երկրպագութիւն ըրաւ ։ Թագաւորը զանի տեսնելով՝ կանչեց , իր քովը նստեցուց և բոլոր ժողովին ցոյց տալով՝ իրեն արժան եղած գովեստները հրապարակաւ ըրաւ ։ Այս իշխանն ասով ալ գոհ չեղաւ . նոյն օրը պալատականներուն պարգևներ բաշխեց և Տուպանն իրեն սեղանակից ընելով երեկոյեան դէմ՝ երբ ժողովը ցրուել ուզեց , երկար ու ճոխ պարեգօտ մ'անոր հագցուց որ իր առջև ելնող պալատականաց հագածին կը նմանէր . ասկէ զատ երկու հազար ոսկի ալ անոր պարգևեց ։ Միւս և հետևեալ օրերն անդադար անոր գգուանք վաստնեց ։ Վերջապէս , այս իշխանը՝ կարծելով թէ սանկ ճարտար բժշկի մ'ունեցած

երախտագիտութեան պարտքն ըստ բաւականին չկրնար կատարել , ամէն օր նոր նոր բարերարութիւններ կ'ընէր անոր ։

Արդ՝ այս թագաւորը մեծ վէզիր մ'ունէր՝ որ ագահ , նախանձոտ և բնականապէս ամէն տեսակ չարիք գործելու հակամէտ էր ։ Խեթիւ կը նայէր բժշկին տրուած պարգևներուն և արդէն անոր արժանիքն իր նախանձը կը գրգռէր . ուստի միտքը դրաւ զանի զրպարտել թագաւորին առջև ։ Այս նպատակաւ իշխանը տեսնելու գնաց և ըսաւ որ ամենակարևոր խորհուրդ մ'ունի անոր տալու առանձին ։ Երբ թագաւորը հարցուց թէ ինչ է , վէզիրն ըսաւ . «Վեհափառ տէր , ինքնակալի մը համար վտանգաւոր բան մ'է վստահութիւն դնել այնպիսի մարդու մը վրայ որուն հաւատարմութիւնը փորձած չէ ։ Տուպան բժշկին անթիւ բարիքներ ընելով՝ անոր այնչափ պատիւ և գգուանք տալով՝ անտեղեակ ես որ դաւաճան մ'է նա որ այս պալատն եկաւ քեզ սպաննելու դիտմամբ ։ — Ո՞ւսկէ առիր այդ լուրը , հարցուց թագաւորը ։ Զե՞ս մտածեր որ այդպիսի բան մ'ինծ ըսելու կը յանդգնիս որուն դիւրաւ չեմ կրնար հաւտալ ։ — Վեհափառ տէր , պատասխանեց վէզիրը , կատարեալ գիտակցութեամբ կ'ըսեմ ինչ որ պատիւ ունիմ ձեզ հաղորդելու ։ Մի՛ վստահիք այնպիսի վտանգաւոր մարդու մը ։ Եթէ Ձեր վեհափառութիւնը քունի մէջ է , թող արթըննայ . վասն զի , նորէն կ'ըսեմ վերջապէս , Տուպան բժիշկը Յունաստանէն , իր երկրէն ելաւ ու ձեր պալատին մէջ հաստատուելու եկաւ մի միայն արդէն իմ ըսած սոսկալի խորհուրդն 'ի գործ դնելու համար ։ — Ոչ՛ , չէ՛ , վէզիր , ընդմիջեց թագաւորը , ստոյգ եմ որ այս մարդը , զոր դուն նենգաւոր և դաւաճան կ'ամբաստանես , մարդկան մէջ ամենէն առաքինին և լաւագոյնն է . անոր չափ սիրած մարդս չկայ ։ Գիտես թէ ինչ դեղով , կամ լաւ ևս , ինչ հրաշքով իմ բորոտս բժշկեց . եթէ իմ կենացս դէմ դաւաճանել կ'ուզէր , ինչո՞ւ համար ուրեմն զանի ազատեց ։ Բաւական էր որ թողուր զիս իմ ախտովս , որմէ պիտի մեռնէի . կեանքս արդէն կիսովին մաշեր էր ։ Ուստի մի՛ , այդպիսի անիրաւ կասկածներ մի՛ տար ինծ . անոնց ականջ կախելու տեղ , իմաց կուտամ քեզ որ այս օրէն սոյն մեծ մարդուն հազար ոսկի ամսական թոշակ կը կապեմ մինչև կենաց վերջն ։ Եթէ

քմ բոլոր հարստութիւններս և երկիրներս անոր հետ բաժնէի դարձեալ բաւական վարձատրած չպիտի ըլլայի զինքն ինձի ըրածին համար ։ Կը հասկնամ միտքդ ; իր առաքինութիւնը քու նախանձդ կը գրգռէ , բայց մի կարծեր թէ դիւրաւ կրնաս համոզել զիս անոր դէմ յանիրաւի վարուելու . քաջ կը յիշեմ ինչ որ վէզիր մ'ըրաւ Սինտպատ Թագաւորին իր իշխանազուն որդին սպաննութենէ ազատելու համար ։

— Վեհափառ տէր , ըսաւ վէզիրը ; կ'աղաչեմ ձեզ ներել համարձակութեանս որով պիտի հարցնեմ թէ Սինտպատ թագաւորին վէզիրն ինչ բան ըսաւ իր տէրոջ որդին մահուանէ ազատելու համար ։ Յոյն թագաւորը հաճեցաւ զանի գոհ ընել ։ «Այս վէզիրը , պատասխանեց նա ; Սինտպատ թագաւորին յայտնելէն ետև թէ՝ խորթ մօր մ'ամբաստանութեան վրայ՝ վախնալ պէտք է այնպիսի գործ մ'ընել որմէ վերջէն կրնայ զղջալ ; այս պատմութիւնը պատմեց ։

ԷՐԻԿԻ ԵՒ ԹՈՒԹԱԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բարի մարդ մը գեղանի կին մ'ունէր . այնքան սաստիկ կը սիրէր զանի որ շատ քիչ անգամ անորմէ կը հեռանար ։ Օր մը ստիպողական գործերու առթիւ անորմէ հեռանալու հարկ ըլլալով՝ թռչուններու շուկան գնաց ; թութակ մը գնեց , որ ոչ միայն քաջ կը խօսէր , այլ նաև իր առջևն անցած դարձած բաները պատմելու ձիրքն ունէր ։ Վանդակի մը մէջ դրաւ զայն և տուն բերաւ . աղաչեց իր կնոջ որ սենեկին մէջ դնէ ; իր ճամբորդութեան ժամանակ վրան հոգ տանի , և ինքն ելաւ գնաց ։

Երբ տուն դարձաւ՝ իսկոյն թութակին դիմեց և հարց ու փորձ ըրաւ թէ իր ճամբորդութեան ատեն ինչ անցաւ . ասոր վրայ՝ թռչունն անանկ բաներ յայտնեց՝ որ մարդուն առիթ տուաւ ծանր յանդիմանութիւններ ընել իր կնկանը ։ Կինը կարծեց թէ իր գերիներէն մէկը

մատնած է զինքը , բայց ամէնքն երդում ըրին որ իրեն համար բան մ'ըրած չեն , և թէ կարելի է որ այն լուրերը թութակն է ։

Այս ենթադրութեան վրայ՝ կինն իր էրկան կասկածները փարատելու և միանգամայն թութակէն վրէժ առնելու հնար մը փնտռեց ։ Գտաւ այս հնարն . իր էրիկն օրուան մը համար դուրս գացած ըլլալով՝ կինը պատուիրեց գերիի մ'որ գիշերով թռչունին վանդակին տակ ձեռնաղօրի մը դարձնէ , ուրիշի մ'ալ ապսպրեց որ անձրևի նման ջուր սրսկէ վանդակին վրայէն , երրորդի մ'ալ հրամայեց որ հայլի մը առնու և թութակին աչացն առջև ճրագին բռնելով աջ ու ձախ դին դարձնէ ։ Գերիները գիշերուան մէկ մասը տան տիկնոջ պատուէրները կատարելու զբաղեցան , և մեծ ճարտարութեամբ կատարեցին ։

Միւս առտու էրիկը դարձաւ և նորէն թութակը հարց ու փորձ ըրաւ տան մէջ անցած գացածին վրայ . Թռչունն անոր պատասխան տուաւ . «Իմ բարի տէրս , փայլակներն , որոտումներն ու անձրևն այնչափ անհանգիստ ըրին զիս բոլոր գիշերն , որ անհնար է ինձ պատմել բոլոր քաշածներս ։ Էրիկն որ քաջ գիտէր թէ այն գիշերն ոչ անձրև կար ոչ որոտում , կարծեց թէ թութակն , այս պարագայիս մէջ սուտ ըսելուն , կրնար նաև իր կնկան մասին ըսածն ալ ճիշդ չըլլալ . ուստի բարկութենէ թռչունը վանդակէն քաշեց հանեց և անանկ ուժգին գետինը նետեց որ զայն սպաննեց ։ Սակայն , վերջէն իր դրացիներէն իմացաւ որ խեղճ թռչունը սուտ չէր ըսած ինչ որ իր կնկանը վարմունքին վրայ խօսեր էր . ուստի սիրտը շատ ցաւեցաւ և ըրածին վրայ զղջաց ։

Դու ալ , վէզիր , ըսաւ յոյն թագաւորը , Տուպան բժշկին դէմ ունեցած նախանձուդ համար , որ քեզի վնաս մ'ըրած չէ , կ'ուզես որ զանի սպաննել տամ . բայց ես այդպիսի բան մը չպիտի ընեմ , վախնալով որ վերջէն կը զղջամ , այն էրիկ մարդուն պէս որ իր թութակը սպաննելուն զղջաց ։ Չարակամ վէզիրին ոխն այնքան մեծ էր Տուպան բժշկին դէմ որ չվհատեցաւ ։ «Տէր իմ , պատասխանեց , թութակին մահը մեծ բան մը չէ , և չեմ կարծեր որ իր տէրն անոր վրայ երկար ատեն ցաւած ըլլայ ։ Բայց ինչ է պատճառն որ անմեղութեան դէմ գործելու վախնալով այս բժիշկը չէք ուզեր սպաննել տալ ։ Մի-

թէ բաւական չէ՞ իբր կենացդ պատճառ ամբաստանել զինքն որ իրեն կեանքն ալ վերցնէք ։ Երբ թագաւորի մը կեանքն ապահովելու վրայ է խնդիրը, լոկ կասկած մ'իբր ստուգութիւն ընդունիլ պէտք է, և աւելի լաւ է անմեղը զոհել քան յանցաւոր մ'ազատել ։ Բայց տէր իմ, բանս անհիմն չէ, Տօպան բժիշկը քեզ սպաննել կ'ուզէ ։ Նախանձը չըլներ իս անոր դէմ, այլ Ձեր վեհափառութեան ունեցած հաւատարմութիւնս, այլ իմ եռանդս՝ որ կը յորդորէ իս այսպիսի կարևոր խորհուրդ մը տալ քեզ ։ Եթէ սուտ է բանս, արժանի եմ պատժուելու ինչպէս որ ատենօք վէզիր մը պատժուեցաւ ։ — Ի՞նչ ըրեր էր այն վէզիրն, ըսաւ յոյն թագաւորն, որ այն պատուհասը կրեց ։ — Հիմակ պիտի պատմեմ Ձեր վեհափառութեան, պատասխանեց վէզիրը. շնորհ ըրէք ինձ մտիկ ընելու ։

ՊԱՏԺԱՊԱՐՏ ՎԷԶԻՐԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ատենօք թագաւոր մը կար որ որսորդութիւնը սաստիկ սիրող որդի մ'ունէր ։ Սակայն կը թողուր որ այս զբօսանքը վայելէ. բայց իր մեծ վէզիրին պատուիրած էր որ միշտ անոր ընկերանայ և աչքէ չհեռացընէ ։ Օր մ'որ որսի ելեր էին, ձիաւոր որսորդներն եղջերուի մ'ետևէ ընկնելով՝ իշխանն՝ որ կարծեր թէ վէզիրը միշտ ետևէն կգայ, սկսաւ կենդանին հալածել ։ Այնքան առաջ քշեց և իր եռանդը զինքն այնչափ հեռացուց խմբէն որ առանձին մնաց ։ Կանգ առաւ և տեսնելով որ ճամբան կորուսեր է, ուզեց ետ դառնալ և վէզիրը գտնել, որ անոր ուղեկից ըլլալու համար բաւական արագաշարժ չըլլալուն զանի կորուսեր էր ։ Երբ իշխանն առանց որոշ շաւիղ մը բռնելու ասդիս անդին կը վազվզէր, ճամբուն վրայ բաւական վայելչագեղ կին մը տեսաւ որ դառնապէս կլար ։ Ձիուն սանձը քաշեց և հարցուց անոր թէ ո՞վ է, նոյն տեղը մինակն ինչ կ'ընէ և թէ օգնութեան կարօ՞տ

է ։ «Ես, պատասխանեց կինը, Հնդկաստանի թագաւորի մ'աղջիկն եմ ։ Դաշտին մէջ ձիով պտըտելու ատենս քունս եկաւ և վար ինկայ. ձիս փախաւ և չեմ գիտեր թէ ինչ եղաւ ։» Գեռաշհաս իշխանն անոր վրայ գթաց և առաջարկեց որ զինքը ձիուն գաւակին վրայ առնու. այն ալ հաւանեցաւ ։

Փլատակի մը քովէն անցնելու ատեն՝ կինը յայտնելով որ իրեն մեծ շնորհ մ'ըրած կ'ըլլայ եթէ վար իջեցնէ կարևոր գործի մը համար, իշխանը կանգ առաւ և զանի վար իջեցուց ։ Ինքն ալ իջաւ և փլատակին մօտեցաւ ձիուն սանձէն բռնելով ։ Դատեցէք թէ ո՛րչափ մեծ եղաւ իր զարմանքն երբ ներսէն կնկան ըսած սա խօսքերը լսեց. «Ուրախ եղէք, զաւակներս, ձեզի վայելչագեղ և գէր տղայ մը կը բերեմ ։» Եւ ուրիշ ձայներ շուտ մ'անոր պատասխան տուին. «Ո՞ւր է բերած տղադ, տուր որ շուտ մ'ուտենք, վասն զի աղւոր ախորժակ մ'ունինք ։»

Իշխանն իր գտնուած վտանգն իմանալու համար աւելի բան մը լսելու պէտք չունէր ։ Քաջ գիտեց որ ինքզինքը Հնդկաստանի թագաւորի մ'աղջիկը կոչող կինը պայուհի մ'էր, այս (փէրի) ըսուած վայրենի դևերուն կինն, որոնք ամայի տեղուանք կը բնակին և հազար ու մէկ հնարք կը գործածեն անցորդներուն որսալու և կլլելու համար ։ Ահ ու դողի մէջ ինկաւ և շուտով ձին հեծաւ ։ Սուտ իշխանուհին նոյն միջոցին երևցաւ, և գիտնալով որ որսը ձեռքէն պրծաւ. «Բանէ մը մի վախնար, պոռաց իշխանին ։ Ո՞վ ես դու. ինչ կը փնտռես ։ — Մոլորած եմ, պատասխանեց նա, և ճամբաս կը փնտռեմ ։ — Եթէ մոլորած ես, ըսաւ, Աստուծոյ ապաւինէ, այն պիտի ազատէ քեզ այդ նեղութենէդ ։» Այն ատեն իշխանն աչքերը դէպ 'ի երկինք վերուց և ըսաւ ։ «Աստուած, դու որ ամենակարող ես, ակնարկդ իմ վրայ դարձուր և այս թշնամիէն իս ազատէ ։» Այս աղօթքին վրայ արալէզին կինն աւերակներուն մէջ մտաւ և իշխանը շտապով հեռացաւ գնաց ։ Բարեբաղդաբար իր ճամբան գտաւ, և ողջ առողջ իր հօրը թագաւորին մօտ դարձաւ, և կէտ առ կէտ պատմեց մեծ վէզիրին սխալմամբը գլխին եկած վտանգը ։ Թագաւորն՝ այս պաշտօնատարին դէմ կատղելով՝ իսկոյն զանի սպաննել տուաւ ։

«Վեհափառ տէր, շարունակեց յոյն Թագաւորին վէզիրը, Տուպան բժշկին դառնալով՝ եթէ զգուշ չըլլաք՝ անոր վրայ ունեցած վստահութիւնդ աղէտալի պիտի դառնայ ձեզ. ստոյգ տեղէ իմացայ որ թշնամիներուդ կողմէն ղրկուած լրտես մ'է, և պաշտօն ունի Ձեր վեհափառութեան կենաց դէմ դաւաճանելու։ Կ'ըսէք թէ ձեզ բժշկեց, էհ, ո՞վ կրնայ հաստատել այդ բանը։ Կարելի է որ միայն արտաքուստ բուժեց և չէ թէ հիմնովին։ Ո՛վ գիտէ, կարելի է որ այն դեղը՝ ժամանակէ մ'ետքը վնասակար արդիւնք պիտի ունենայ։»

Յոյն Թագաւորն՝ որ 'ի բնէ քիչ խելք ունէր՝ ոչ բաւական սրամտութեան տէր էր իր վէզիրին չարաւէր դիտաւորութեան վերահասու ըլլալու, և ոչ հաստատամտութիւն ունէր իր առջի կարծիքին մէջ մնալու։ Վէզիրին խօսքը զինքը տատանեց։ «Վէզիր, ըսաւ, դու իրաւունք ունիս. կարելի է յատուկ դիտմամբ եկած է իս սպաննելու, և այս բանս ալ կրնայ կատարել իր դեղերուն մէկուն հոտովը միայն։ Մտածել պէտք է թէ այս պարագայիս մէջ ի՞նչ կրնանք ընել։»

Երբ վէզիրը տեսաւ որ Թագաւորն իր ուզած տրամադրութեան մէջ կը գտնուի, «Վեհափառ տէր իմ, ըսաւ, ձեր հանգստութիւնն ու կեանքն ապահովելու միակ միջոցն է Տուպան բժշկը կանչել, և գալուն պէս գլուխը կտրել տալ։ — Աղէկ ըսիր, վրայ բերաւ Թագաւորը, կարծեմ թէ այդ կերպով միայն կրնամ իր դիտաւորութեան առաջն առնլու։» Այս խօսքերն ըսելէն ետև իր պաշտօնակալներէն մէկը կանչեց և պատուիրեց որ երթայ բժիշկը բերէ, որ չգիտնալով թէ Թագաւորն ի՞նչ բանի համար կ'ուզէ զինքն, արտորնօք պալատը վազեց։ «Գիտե՞ս ինչո՞ւ համար քեզ կանչեցի, հարցուց անոր Թագաւորն. — Ո՛չ, տէր իմ, պատասխան տուաւ բժիշկն, և կ'սպասեմ որ Ձեր վեհափառութիւնը բարեհաճի իր հրամանն իմաց տալու ինձ։ — Կանչել տուի քեզ, յարեց Թագաւորն, որպէս զի կեանքդ բառնալով ձեռքէդ ազատիմ։»

Անկարելի է նկարագրել թէ քանի՛ մեծ եղաւ բժշկին զարմանքն երբ իր մահուան վճիռը լսեց։ «Տէր իմ, ըսաւ, ի՞նչ պատճառ կրնայ ունենալ Ձեր վեհափառութիւնը իս սպաննել տալու համար։ Ես ի՞նչ յանցանք գործեցի։ — Աղէկ տեղէ իմացայ, պատասխանեց

Թագաւորն, որ դու լրտես մ'ես, և հոս պալատս եկար իս սպաննելու համար. բայց չար խորհուրդդ անկատար թողլու համար ես քու կեանքդ պիտի վերցնեմ։ Զարկ, ըսաւ դահճին որ ներկայ էր, և ազատէ իս նենգաւոր մարդէ մ'որ պալատս եկած է իս սպաննելու համար։»

Այս անագորոյն հրամանին վրայ, բժիշկը քաջ հասկցաւ որ ստացած պատիւներն ու պարգևներն՝ իրեն դէմ թշնամիներ յարուցած են, և թէ այս տկարամիտ Թագաւորն անոնց զրպարտութեանց հաւատացեր է։ Կը զղջար անոր բորոտութիւնը բուժելուն, բայց անժամանակ զղջում մ'էր։ «Միթէ ձեզի ըրած բարիքս այսպէս կը վարձատրէք» կ'ըսէր Թագաւորին։ Թագաւորը մտիկ չըրաւ, և նորէն հրաման տուաւ դահճին որ մահատու հարուածը տայ։ Բժիշկը սկսաւ աղաչանքներ ընել. «Աւա՜ղ, տէր իմ, կը գոչէր նա, երկարեցէք իմ կեանքս, Աստուած ալ ձերինը կ'երկարէ, սպաննել մի տաք իս որ Աստուած ալ ձեզի հետ նոյն կերպով չվարուի։»

Ձկնորսն իր գրոյցը կտրեց այս տեղ, որպէս զի խօսքը Ճինին ուղղէ. «Էյ Ճին, ըսաւ անոր, կը տեսնե՞ս թէ ինչ որ այն ատեն յոյն Թագաւորին և Տուպան բժշկին մէջ անցաւ՝ նոյնը կ'անցնի և մեր մէջ։»

Յոյն Թագաւորը, շարունակեց ձկնորսը, փոխանակ բժշկին աղաչանաց միտ դնելու, որ Աստուծոյ անուան վրայ երդում կ'ընէր, խստութեամբ պատասխան տուաւ անոր։ «Չէ՛, անհրաժեշտ հարկ մը կը բռնադատէ իս քեզ սպաննել տալ. վասն զի ինչպէս որ իս բժշկեցիր նոյնպէս անզգալի կերպով կրնաս իս սպաննել։» Սակայն բժիշկը՝ յորդ արտասուք թափելով կը գանգատէր որ իր ծառայութեան փոխարէն Թագաւորն իրեն անիրաւ հատուցում մը կ'ընէ, և կը պատրաստուէր մահաբեր հարուածն ընդունելու։ Դահիճն աչերն ու ձեռքերը կապեց և սուրը քաշելու վրայ եղաւ։

Այն ատեն՝ ներկայ պալատականները՝ կարեկցութենէ շարժեալ՝ աղաչեցին Թագաւորն որ անոր ներում շնորհէ, հաստատելով որ յանցաւոր չէ, և անոր անմեղութեան համար երաշխաւոր կեցան։ Բայց

թագաւորն անողոքելի մնաց, և այնպէս խօսեցաւ որ վերստին բերան բանալ չհամարձակեցան։

Բժիշկը ծնկան վրայ՝ ու աչքերը կապած՝ պատրաստ էր մահուան հարուածն ընդունելու՝ երբ նորէն խօսքն ուղղեց թագաւորին ու ըսաւ։ «Տէր իմ, քանի որ Ձեր վեհափառութիւնը մահուան վճիռը չուղեր ետ կոչել, կ'աղաչեմ որ գոնէ արտօնութիւն տայ ինձ որ երթամ մինչև տունս, թաղմանս պատրաստութիւն տեսնեմ, կնոջս վերջին բարևս տամ, ողորմութիւն բաշխեմ և գիրքերս այնպիսի մարդոց կտակեմ որ անոնց գործածութիւնը լաւ գիտեն։ Ասոնց մէջ հատ մը ունիմ, զոր ձեզի պարգև տալ կ'ուզեմ. թանկագին և ձեր գանձին մէջ պահուելու արժանի գիրք մ'է։ — Եւ ինչո՞ւ համար այդչափ թանկագին է այն գիրքը, պատասխանեց թագաւորը։ — Տէր իմ, վրայ բերաւ բժիշկն, անոր համար որ շատ մը հետաքրքրական բաներ կը պարունակէ, և որոց գլխաւորը սա է թէ երբ գլուխս կտրուի և Ձեր վեհափառութիւնն այն գրքին վեցերորդ թերթը բանալու և ձախ կողմի երեսին երրորդ տողը կարդալու ծանրութիւնն առնու, ինչ հարցմունք որ ընէ՝ գլուխս պատասխան պիտի տայ ձեզ։» Թագաւորն այսպիսի հրաշալի բան մը տեսնելու հետաքրքիր ըլլալով՝ անոր մահը միւս օրուան թողուց և զանի իր տունը ղրկեց հաւատարիմ պահակներով։

Բժիշկն՝ այն ատեն՝ իր գործերը կարգի դրաւ, և որովհետև ձայն ելեր էր թէ իր մահուանէ ետքն անլուր հրաշք մը պիտի պատահի, վէզիրներն, էմիրները, պահապան պաշտօնեաները, վերջապէս բոլոր պալատականները հետևեալ օրը ժողովարան գացին ականատես ըլլալու համար։

Շատ չանցաւ Տուպան բժիշկն երևցաւ, որ մինչև թագաւորին գահուն մօտ գալով՝ խոշոր գիրք մը ձեռքը՝ կոնք մը բերել տուաւ, գրքին փաթթած ծածկոյթը հանեց, վրան փռեց, և յետոյ մատեանը թագաւորին ներկայացնելով ըսաւ. «Վեհափառ տէր, առէք սա գիրքը, թէ որ կը հաճիք, և գլուխս որ կտրեն, խնդրեմ հրաման տուէք որ զայն սա կոնքին մէջ՝ գրքին ծածկոյթին վրայ դնեն. վրան դրուելուն պէս արիւնը պիտի դադրի հոսելէ. այն ատեն գիրքը բացէք,

և գլուխս ամէն հարցումներուդ պատասխան պիտի տայ։ Բայց, վեհափառ տէր, ներեցէք ինձ անգամ մ'ալ ձեր գթութիւնը հայցել։ Աստուծոյ համար ըլլայ, գութ ունեցէք վրաս, կը բողոքեմ որ անմեղ եմ։ — Քու աղաչանքդ, պատասխանեց թագաւորն, անօգուտ են, և թէ որ մեռնելէն ետքը գլխուդ խօսիլը միայն մտիկ ընելու հարկ ըլլար, պիտի ուզէի որ մեռնիս։» Այս ըսելով բժշկին ձեռքէն գիրքն առաւ, և դահճին հրաման տուաւ որ անոր գլուխը կտրէ։

Գլուխն այնպիսի վարպետութեամբ կտրեց դահիճն որ կոնքին մէջ ինկաւ, և այն ինչ ծածկոյթին վրայ դրին զայն որ արիւնը կտրուեցաւ։ Այն ատեն 'ի մեծ զարմացումն թագաւորին և բոլոր հանդիսականաց, գլուխն աչքերը բացաւ, և խօսիլ սկսելով ըսաւ։ «Վեհափառ տէր, թող Ձեր վեհափառութիւնը գիրքը բանայ։» Թագաւորը զայն բացաւ, և տեսնելով որ առաջին թերթն երկրորդ թերթին կերպով մը կպած էր, զայն աւելի դիւրութեամբ դարձնելու համար, մատը բերանը տարաւ և թուք ըրաւ. նոյն բանը շարունակեց մինչև վեցերորդ թերթն և նշանակուած երեսին վրայ գիր չտեսնելով՝ «Բժիշկ, ըսաւ գլխուն, գրուած բան մը չկայ։ — Ուրիշ քանի մը թղթեր ալ դարձուցէք» պատասխան տուաւ գլուխը։ Թագաւորը քանի մը թերթ ալ թղթատեց, միշտ մատը բերանը տանելով՝ մինչև որ ամէն մէկ թերթին վրայ քսուած թոյնն իր ներգործութիւնն ընելով՝ այս իշխանը յանկարծ տարօրինակ եղանակ մ'զգաց. աչքերը դարձան և մարմինն աթոռէն վար ինկաւ սաստիկ ցնցումներ ընելով։

Երբ Տուպան բժիշկը, կամ լաւ ևս ըսելով՝ իր գլուխը տեսաւ որ թոյնն իր ներգործութիւնը կ'ընէ, և թագաւորը մինակ քանի մը վայրկեան ունէր ապրելու, «Բռնաւոր, պոռաց, ահա այդ կերպով վարուիլ պէտք է քեզի պէս իշխաններու հետ, որ իրենց իշխանութիւնը չարաչար գործածելով, անմեղ մարդիկը կ'սպաննեն։ Աստուած շուտ կամ ուշ անոնց անօրէնութիւններն և անգթութիւնները կը պատժէ։» Գլուխը հազիւ թէ այս խօսքերն աւարտեր էր որ թագաւորը ինկաւ մեռաւ, և ինքն ալ ունեցած քիչ մը կեանքը վերջացուց։

«Վեհափառ տէր, շարունակեց Հէհէրազատ միշտ Շահրիարին խօսելով, ձկնորսը յոյն թագաւորին և Տուպան բժշկին պատմութիւնը լմնցնելէն անմիջապէս ետքը, զանի Ջինին նմանցուց զոր շարունակ իր ձեռքը գտնուած անօթին մէջ փակուած կը պահէր։

— Եթէ յոյն թագաւորն, ըսաւ անոր, թող տար որ բժիշկն ապրէր, Աստուած ալ իրեն կը թողուր որ ապրի. բայց իր խոնարհ աղաչանքը մերժեց և Աստուած զանի պատժեց։ Հիմա, դու ալ անոր կը նմանիս, ո՛վ Ջին, եթէ կարենայի սիրտդ շարժել և խնդրած շնորհս ստանալ, քու ներկայ վիճակիդ կը խղճայի, բայց քանի որ քու ապերախտութիւնդ շնորհելուս ինձ ունեցած երախտագիտութիւնդ չնայելով՝ իս սպաննելու կամքդ կատարեցիր յամառութեամբ, ես ալ իմ կողմէս անգութ պիտի ըլլամ։ Ես ալ հիմա սոյն անօթին մէջ պահելով քեզ ծովը նետեմ և կեանքդ վերցնեմ մինչև յաւիտեան, քեզմէ զերծ առած պիտի ըլլամ։

— Ձկնորս, բարեկամդ իմ, պատասխանեց Ջինը, նորէն կը պաղատիմ որ սանկ անգութ գործ մը չընես։ Մտածէ որ իրաւացի չէ վրէժ լուծելն, և թէ ընդ հակառակն չարեաց տեղ բարիք ընել գովելի է. մի վարուիր ինձի հետ այնպէս ինչպէս որ Իմմա վարուեցաւ Ադէգային հետ։ — Եւ ինչ ըրաւ Իմմա Ադէգային հարցուց ձկնորսն։
— Ո՛հ, եթէ գիտնալ կ'ուզես, պատասխանեց Ջինը, բաց սա անօթը. միթէ կարծես թէ սիրտ ունիմ սանկ նեղ բանտի մը մէջ վէպեր պատմելու։ Առաջ հանէ զիս ասկէ և ապա ուզածիդ չափ վէպեր կը պատմեմ քեզ։ — Ո՛չ, ըսաւ ձկնորսը, քեզ ազատ չպիտի թողում, ալ շատ խօսեցանք, քեզ ծովուն յատակը պիտի նետեմ։ — Կեցիր, ուրիշ խօսք մ'ալ ունիմ ըսելու, ձկնորս, գոչեց Ջինը. խօսք կը տամ քեզի վնաս մը չհասցնելու, ընդ հակառակն, յետին ծայր հարուստ ըլլալու հնարը պիտի սորվեցնեմ քեզ։»

Աղքատութենէ ազատելու յոյսը ձկնորսին միտքը դարձուց։ «Եթէ խօսքի տէր մէկն ըլլայիր կրնայի հաւատալ քեզ, ըսաւ, երդում ըրէ Գուլթի մեծ անուան վրայ թէ անկեղծօրէն ըսածդ պիտի կատարես. և այն ատեն անօթը կը բանամ։ Չեմ կարծեր որ սանկ երդում մը դրժելու չափ յանդուգն ըլլաս։» Ջինն երդում ըրաւ, և ձկնորսն խու-

կոյն անօթին ծածկոցը բացաւ։ Իսկոյն մուխ ելաւ անկէ և Ջինն առաջուան պէս իր ձևն առնլով, իր առջի գործն եղաւ անօթը ծովը նետել ոտքի հարուած մը տալով։ Այս գործողութենէ ձկնորսը զարհուրեցաւ. «Ջին, ըսաւ, այդ ինչ կը նշանակէ։ Միթէ քիչ մ'առաջ ըրած երդումդ չես ուզեր պահել, և հարկ է ինձ ըսել Տուպան բժշկին ըսածը յոյն թագաւորին. Թող որ ապրիմ և Աստուած ալ քեզ երկար օրեր պիտի տայ։»

Ձկնորսին վախը Ջինին խնդուքը գրգռեց և անոր պատասխանեց. «Տէ՛ր, ձկնորս, երկիւղդ փարատէ, անօթն անոր համար միայն նետեցի որ տեսնեմ թէ պիտի յուզուիս և անով զուարճանամ, և քեզ համոզելու համար որ քու բարիքդ կ'ուզեմ, առ ուռկանդ ու ետևէս եկուր։» Այս խօսքերն արտասանելով՝ սկսաւ ձկնորսին առջևէն քալել, որ ուռկանն առած՝ կասկածելով անոր կը հետևէր։ Քաղքին առջևէն անցան և լեռան մը գագաթն ելան, ուսկէ ընդարձակ դաշտ մ'իջան որ չորս բլուրներու մէջ գտնուած լճակի մը տարաւ զիրենք։

Երբոր լճակին եզերքը հասան, Ջինն ըսաւ ձկնորսին. «Նետէ ուռկանդ ծովս, և ձուկ բռնէ։» Ձկնորսն անկասկած էր որ պիտի որսայ, վասն զի անթիւ ձկներ տեսաւ լճակին մէջ. բայց իրեն զարմանք տուողը սա էր որ բոլորն ալ չորս տարբեր գոյներ ունէին, այսինքն ճերմակ, կարմիր, կապոյտ ու դեղին։ Ուռկանը նետելէն ետև՝ չորս հատ ձուկ բռնեց որոց ամէն մէկն այս գոյներէն մէկն ունէր։ Որովհետև ասոնց նմանը չէր տեսած, անդադար անոնց վրայ կը հիանար, և կարծելով թէ անով մեծ գումար մը կրնայ ձեռք ձգել, սաստիկ կ'ուրախանար։ «Տար այս ձկներն, ըսաւ Ջինն, և զանոնք սուլթանին տուր։ Քեզի այնչափ ստակ պիտի տայ որ կենացդ մէջ ձեռքդ անցած չէ։ Կրնաս ամէն օր գալ և այս լճակէն ձուկ որսալ. բայց քեզ խրատ կուտամ որ օրը մէկ անգամ միայն ուռկանդ նետես անոր մէջ, թէ ոչ գլխիդ փորձանք կգայ, ուստի աչքդ չորս բաց։ Այս յորդորը կուտամ քեզ, եթէ ճշտիւ անոր հետևիս, բանդ յաջող պիտի ըլլայ։» Այս ըսելով ոտքովը գետինը զարկաւ, գետինը բացուեցաւ և ինքն անոր տակն անցնելէն ետև՝ նորէն հողը գոցուեցաւ։

Ձկնորսը՝ Ջինին խրատները կէտ առ կէտ պահելու միտքը դնելով

զղջացաւ ուռկանն երկրորդ անգամ մ՚ալ նետել ։ Քաղքին Ճամբան բռնեց․ իր սրտէն գոհ էր, և հազար տեսակ խորհրդածութիւններ կ՚ընէր իր արկածին վրայ ։ Շիտակ սուլթանին պալատը գնաց իր ձուկերն անոր առջևը հանելու ։

Կը թողում ձեզ երևակայել, վեհափառ տէր, թէ որչափ մեծ եղաւ սուլթանին զարմանքն երբ ձկնորսին բերած չորս ձուկերը տեսաւ ։ Մի առ մի առաւ և զանոնք քննեց ուշադրութեամբ, և բաւական ժամանակ անոնց վրայ հիանալէն ետև՝ «Առ այս ձուկերն, ըսաւ իր առաջին վէզիրին, և յոյն կայսեր ինձ ղրկած վարպետ խոհարարին տար որ եփէ, կարծեմ թէ որչափ գեղեցիկ նոյնչափ համով պիտի ըլլան ։» Վէզիրն անձամբ խոհակեր կնոջ տարաւ և զանոնք իրեն ձեռքը տալով՝ ըսաւ․ «Ահաւասիկ չորս հատ ձուկ՝ զոր սուլթանին բերին․ կը հրամայէ որ զանոնք աղէկ մ՚եփես պատրաստես ։» Այս յանձնարարութիւնը կատարելէն ետև՝ վէզիրը սուլթանին քովը դարձաւ, որ պատուիրեց անոր իր գանձէն չորս հարիւր ոսկի տալ ձկնորսին․ այս պատուէրը հաւատարմութեամբ կատարեց ։ Ձկնորսն որ այսպիսի մեծ գումար մը ձեռքէն անցած չէր, հազիւ թէ իր երջանկութիւնը կ՚ըղձար և զայն իբր երազ կը նկատէր ։ Բայց վերջն երբ նոյն գումարն իր ընտանեաց պիտոյից գործածեց, հասկցաւ որ ճշմարիտ դրամ է ։

«Բայց, վեհափառ տէր, յարեց Շէհէրազատ, ձեզ ձկնորսին վրայ խօսելէն ետև՝ հարկ է նաև խոհակեր կնոջ վրայ ալ խօսիլ, զոր մեծ մտատանջութեան մէջ պիտի գտնենք ։ Վէզիրին բերած ձուկերը մաքրելէն ետև՝ եղով սանի մէջ դրաւ որ տապկէ ։ Երբ տեսաւ որ մէկ կողմէն բաւական եփած են միւս կողմը դարձուց ։ Բայց, ինչ անլուր հրաշք, հազիւ թէ դարձուց որ խոհանոցին պատը բացուեցաւ, և մէջէն հրաշագեղ և վայելչահասակ տիկին մ՚ելաւ, որ եգիպտական ձևով ծաղկաւէտ կերպաս հագած էր, ականջներն օղ ունէր, վիզը՝ խոշոր մարգարիտներով մանեակ մը, ոսկեղէն սուտակազարդ ապարանջանք և ձեռքն ալ մրտենիէ գաւազան մ՚ունէր ։ Խոհարար կինն այս տեսնելուն ապշած անշարժ կեցաւ․ և նորատեսիլ կինը գաւազանին ծայրովը ձուկերէն մէկուն զարնելով՝ ըսաւ անոր․ «Ձո՛ւկ, ձո՛ւկ, դու պարտաւորութեանդ մէջն ես ։ Տեսնելով որ ձուկը ձայն չհանէր մի և

նոյն խօսքերը նորէն կրկնեց, ու այն ատեն չորս ձուկերն ալ գլուխնին վեր վերցուցին և որոշակի անոր ըսին․ «Այո՛, այո՛, թէ որ համրես, մենք ալ կը համրենք, եթէ ձեր պարտքը վճարէք, մենք ալ մերինը կը վճարենք․ թէ որ փախչիք, կը յաղթենք և գոհ կ՚ըլլանք ։»

Այս խօսքերն որ լմնցուցին, գեռահաս տիկինը սանը դարձուց և նորէն պատին ճեղքուածքին մէջ մտաւ, որ իսկոյն գոցուեցաւ և իր առջի վիճակին դարձաւ ։

Խոհարար կինն որ այս տեսած հրաշքներէն զարհուրեր էր, ուշաբերելով՝ գնաց որ կրակին մէջ թափած ձուկերը ժողվէ․ բայց զանոնք ածխէն աւելի սև գտաւ, և անկարելի էր սուլթանին սեղանը հանել մեծարել զանոնք ։ Ասոր վրայ մեծ կսկիծ զգաց և սկսաւ բոլոր ուժովը լալ ։ «Ափսոս կ՚ըսէր, հիմա ես ինչ պիտի ըլլամ․ երբ տեսածներս սուլթանին պատմեմ, ստոյգ եմ որ ինձ չպիտի հաւտայ, և արդեօք ինչպէս ինծի դէմ պիտի բարկանայ ։»

Երբ այսպէս կը տրտմէր՝ մեծ վէզիրը ներս մտաւ և հարցուց թէ ձուկերը պատրաստ են ։ Պատասխանն անոր պատմեց, և այս պատմութիւնն, ինչպէս որ դիւրին է երևակայել, զինքը շատ զարմացուց․ բայց սուլթանին չիմացուց և հնարք մը մտածեց որով սուլթանը գոհ եղաւ ։ Սակայն մարդ ղրկեց որ ձկնորսը կանչեն անմիջապէս, և երբ եկաւ, անոր ըսաւ ։ «Ձկնորս, գնա և բերած ձուկերուդ նման չորս հատ ալ բեր․ վասն զի դժբաղդութիւն մը պատահելով չկրցանք սուլթանին սեղանը հանել զանոնք ։» Ձկնորսը Ճինին հրամանին վրայ բան մը չըսաւ վէզիրին և նոյն օրը ձուկերը չբերելու համար Ճամբուն երկարութիւնը պատրուակ բռնեց և խօսք տուաւ հետևեալ օրը բերելու ։

Ու իրօք ձկնորսը գիշերուան ելաւ Ճամբայ գնաց ։ Ուռկանը նետեց, և զայն քաշելէն ետև՝ միւսներուն պէս անոր մէջ չորս ձուկ գտաւ, ամէն մէկը տարբեր գոյնով ։ Շուտ մը պալատը դարձաւ և խօսք տուած ժամանակը զանոնք վէզիրին բերաւ ։ Այս պաշտօնատարը ձուկերն առաւ և ինքն անձամբ խոհանոցը տարաւ, խոհարար կնկան հետ առանձին մնաց, և տապկեց որ պատրաստէ, կրակին վրայ դնէ

որ եփին ինչպէս որ առջի օրն ալ միւսներն ըրած էր ։ Երբ մէկ կողմէն եփելով միւս կողմը դարձուց , խոհանոցին պատը նորէն բացուեցաւ , և մի և նոյն տիկինը դուրս ելաւ ցուպը ձեռքը բռնած , տանին մօտեցաւ , ձկներէն մէկուն զարկաւ , մի և նոյն խօսքերն անոր ուղղեց , և ամէնքն ալ նոյն պատասխանը տուին գլուխնին վերցնելով ։

Այն ատեն տանը տապալեց դաւազանի հարուած մը տալով , և ելած պատէն մի և նոյն տեղը քաշուեցաւ ։ Վէզիրն անցած դարձածին ականատես ըլլալով « Ասի շատ զարմանալի բան է , ըսաւ , և միանգամայն տարօրինակ , ուստի աւելորդ է սուլթանէն ծածուկ պահել . անմիջապէս երթամ պիտի այս հրաշքն անոր իմացնեմ ։» Եւ իրօք , սուլթանին քովը գնաց և իրողութիւնը ճշտիւ պատմեց ։

Սուլթանը շատ զարմացաւ , և շտապեց այս սքանչելիքը տեսնելու ։ Այս նպատակաւ , ձկնորսը կանչել տուաւ . « Բարեկամդ իմ , ըսաւ անոր , չե՞ս կրնար արդեօք տարբեր գոյնով չորս հատ ձուկ ևս բերել ինծի ։» Ձկնորսը պատասխան տուաւ սուլթանին որ եթէ նորին վեհափառութիւնը չորս օր պայմանաժամ շնորհէ իրեն՝ փափաքը կատարելու կը խոստանայ ։

Այս պայմանաժամը ստանալէն ետև՝ երրորդ անգամ լճակը դիմեց և առջի երկու անգամին պէս բանը յաջող գնաց . ինչու որ առաջին անգամ ուռկանը նետելուն՝ չորս հատ տարբեր գոյնով ձկներ բռնեց . անմիջապէս սուլթանին տարաւ , որուն ուրախութիւնը չափազանց եղաւ , վասն զի չէր յուսար որ ձկներն այնքան շուտով իր ձեռքը կը հասնին . ուստի նորէն չորս հարիւր ոսկի ձկնորսին շնորհեց ։

Երբ սուլթանը ձկներն առաւ՝ իր սենեակը տանել տուաւ՝ զանոնք եփելու համար պէտք եղած բաներն առնելով ։ Այն տեղ իր մեծ վէզիրին հետ փակուելով , այս պաշտօնատարը զանոնք սրբեց , տապակի մը մէջ կրակին վրայ դրաւ , և երբ մէկ կողմէ եփեցան , միւս կողմը դարձուց ։

Այն ատեն սենեկին պատը բացուեցաւ , բայց նորատի կնկան տեղ սև մարդ մ'երևցաւ ։ Այս սևը գերիի մը հագուստը հագեր էր . մարմինը հսկայի պէս խոշոր էր և տարապայման , և ձեռքը կանաչ դաւազան մը բռներ էր ։ Մինչև տապակին մօտեցաւ , և ձկներէն մէ-

կուն դաւազանով դպչելով՝ սոսկալի ձայնով մ'անոր ըսաւ . « Ո՛ ձուկ , ձուկ , պարտաւորութեանդ մէ՞ջն ես ։» Այս խօսքին , ձկները գլուխնին վերուցին և պատասխան տուին . « Այո՛ , այո՛ , ենք . եթէ համրէք , կը համրենք , եթէ ձեր պարտքը վճարէք , մերինները կը վճարենք , եթէ փախչիք կը յաղթենք և գոհ ենք ։»

Ձկներն այն ինչ այս խօսքերն ըսին որ սև մարդը տապակը տապալեց սենեկին մէջ տեղն և ձկներն ածուխ դարձուց ։ Այս ընելէն ետև՝ զուարթաբար քաշուեցաւ և պատին ճեղքուածքը մտաւ , որ գոցուելով նորէն առաջին վիճակին մէջ տեսնուեցաւ ։ « Այս բաները տեսնելէն ետև՝ ըսաւ սուլթանը վէզիրին , անկարելի պիտի ըլլայ ինծի միտքս հանդարտ պահել ։ Անտարակոյս այս ձկները բան մը կը նշանակեն տարօրինակ , և կ'ուզեմ այս բանն երևան հանել ։» Ուստի ձկնորսը կանչել տուաւ . և ձկնորսը բերին ։ « Ձկնորս , ըսաւ անոր , բերած ձկներդ ինծի մեծ անհանգստութիւն կը պատճառեն ։ Ո՞ւր տեղէն որսացիր զանոնք ։ — Տէր իմ , պատասխանեց ձկնորսը , չորս բլրի մէջ գտնուած լճակէ մ'որսացի զանոնք , որ ասկից տեսնուած լեռնէն անդին կը գտնուի ։ — Միթէ այն լճակը կը ճանչնա՞ս , ըսաւ սուլթանը վէզիրին . — Ո՛չ , տէր իմ վեհափառ , պատասխանեց վէզիրն , երբէք անոր անունն անգամ լսած չեմ . թէև վաթսուն տարիէ վեր նոյն լերան շրջակաները որսորդութիւն կ'ընեմ ։» Սուլթանը հարցուց ձկնորսին թէ լճակը պալատէն ո՞րչափ հեռու է . ձկնորսը հաւաստեց որ երեք ժամու ճամբայ հազիւ կը տևէ ։ Այս խօսքին վրայ , քանի որ մութը չկոխած բաւական ատեն կար նոյն վայրը հասնելու , սուլթանը հրամայեց պալատականներուն որ ձի հեծնան , և ձկնորսն անոնց առաջնորդն եղաւ ։

Ամէնքը լեռն 'ի վեր ելան . և զառ 'ի թափին վրայէն մեծ զարմանքով ընդարձակ դաշտ մը տեսան , զոր մինչև այն օրն ոչ ոք դիտեր էր ։ Ի վերջէ լճակը հասան , որ իրօք չորս բլրի մէջ կը գտնուէր , ինչպէս որ ձկնորսն ըսեր էր ։ Անոր ջուրը թափանցիկ էր և տեսան որ բոլոր ձկները ձկնորսին բերած ձկներուն կը նմանէին ։ Սուլթանը լճակին եզրը կանգ առաւ , և քանի մը վայրկեան ձկները զարմացմամբ դիտելէն ետև՝ հարցուց իր էմիրներուն և պալատականներուն թէ,

քնչպէս մինչեւ այն օրն այս լճակը տեսած չունէին, քանի որ քաղքէն այնքան մօտ էր : Պաշտօնատարները պատասխան տուին թէ բնաւ անոր խօսքը լսած չէին : «Քանի որ ամէնքնիդ միաբերան կը խոստովանիք, ըսաւ անոնց, որ անոր խօսքը լսած չէք, եւ նոյնպէս ես ձեզի չափ կը զարմանամ այս նոր բանին վրայ, միտքս դրած եմ պալատս չդառնալ, մինչեւ որ չհասկնամ թէ ինչ պատճառաւ այս լճակն այն տեղս կը գտնուի, եւ ինչու համար անոր մէջ չորս գոյն ձկներ կան միայն :» Այս խօսքերն ըսելէն ետեւ՝ հրաման տուաւ որ նոյն վայրն իջեւանին, եւ իսկոյն իր տաղաւարն ու վրանները լճակին եզերքը կանգնեցին :

Երբ մութը կոխեց՝ սուլթանն՝ իր տաղաւարին տակ քաշուած՝ իր մեծ վէզիրին առանձին խօսելով ըսաւ . «Վէզիր, միտքս այլանդակ անհանգստութեան մէջ է, այս լճակն որ յանկարծ այն վայրերը կը գտնուի, այն սեւ մարդն որ սենեկիս մէջ ինձ երեւցաւ, այն ձկներն որոց խօսիլը լսեցինք, այս ամէն բաներն այնչափ կը գրգռեն իմ հետաքրքրութիւնս, որ չեմ կրնար դիմանալ եւ զայն գոհ ընելու անհամբեր եմ : Այս նպատակիս հասնելու համար, խորհուրդ մը գլխիս մէջ կը դառնայ, եւ զայն պիտի գործադրեմ : Ես մինակս այս բանակէս պիտի հեռանամ, կը պատուիրեմ քեզ որ իմ բացակայութիւնս գաղտնի պահես . իմ տաղաւարիս տակ կեցիր, եւ վաղն առտու երբ իմ էմիրներս ու պալատականներս այցի գան, զանոնք ճամբէ, ըսելով թէ թեթեւ անհանգստութիւն մ'ունիմ եւ մարդ չեմ ընդունիր : Հետեւեալ օրերն ալ նոյն պատրուակը յառաջ կը բերես, մինչեւ որ դառնամ :»

Մեծ վէզիրը սուլթանին միտքը փոխելու համար շատ բաներ ըսաւ . ներկայացուց թէ ինչ վտանգի մէջ կրնայ իյնալ եւ թէ կարելի է ինչ անօգուտ տեղ նեղութիւն պիտի քաշէ : Բայց պարապ տեղն իր ճարտասանութիւնը թափեց, սուլթանը խորհուրդէն ետ չկեցաւ եւ զայն գործադրելու պատրաստուեցաւ : Թեթեւ հագուստ մը հագաւ հետիոտն քալելու համար, թուր մը կախեց մէջքէն, եւ երբ տեսաւ որ ամէնքը հանդարտ են իր բանակին մէջ, միս մինակ ճամբայ ելաւ :

Բլուրներուն կողմը բռնեց եւ առանց դժուարութեան մէկուն վրայ ելաւ : Զառ 'ի վայրն աւելի հեշտ գտաւ, եւ երբ դաշտն իջաւ, քալեց մինչեւ արեւուն ծագիլը : Այն ատեն իր առջեւ մեծ շէնք մը տեսնելով՝ ուրախացաւ, այն յուսով որ իր փափաքած բանը պիտի կարենայ իմանալ : Երբոր այն շէնքին մօտ եկաւ, գիտեց որ փառաւոր պալատ մ'է, կամ լաւ եւս ամուր դղեակ մը, որ սեւ փայլուն մարմարէ շինուած, եւ հայլիի պէս բարակ եւ հաւասար պողովատէ ծածկուած էր : Սքանչանալով որ շատ ժամանակ չանցուց իր հետաքրքրութեան արժանի բան մը տեսնելու, դղեկին առջեւը կեցաւ եւ մեծ ուշադրութեամբ դիտեց զայն :

Վերջը մինչեւ դուռը գնաց, որ երկու թեւ ունէր եւ մէկը բաց էր : Թէեւ ազատ էր ներս մտնելու, սակայն արժան գտաւ զարնելու : Առաջ թեթեւ մը զարկաւ դրան եւ քիչ մը սպասեց . տեսնելով որ մարդ մը չերեւիր, կարծեց թէ չլսեցին, ուստի նորէն աւելի ուժով զարկաւ, սակայն ոչ մարդ տեսաւ եւ ոչ ձայն լսեց, աւելի սաստկացուց հարուածը, նորէն ձայն չելաւ : Այս բանիս վրայ յետին ծայր զարմանքը տարաւ, վասն զի չէր կրնար երեւակայել որ այնպիսի մաքուր շտկուած պալատ մը թափուր ըլլայ : «Եթէ հոգի չկայ հոս, կ'ըսէր ինքն իրեն, վախնալիք տեղ մը չունիմ, եւ եթէ մարդ կայ, ինքզինքս պաշտպանելու համար զէնք ունիմ :»

Վերջապէս սուլթանը ներս մտաւ, եւ ներքնագաւիթը յառաջանալով՝ գոչեց . «Արդեօք մարդ մը չկա՞յ հոս որ զովանալու պէտք ունեցող անցորդն ընդունի :» Մի եւ նոյն խօսքն երկու երեք անգամ կրկնեց, սակայն որչափ որ բարձր կը խօսէր, ոչ ոք իրեն պատասխան տուաւ : Այս լռութիւնն իր զարմանքը սաստկացուց : Ընդարձակ բակէ մ'անցաւ, եւ ամէն կողմ նայելով որ անձ մը տեսնէ, շնչաւոր էակ մը չտեսաւ . լայն սրահներ որ մտաւ, որոց օթոցները մետաքսէ, սարներն ու բազմոցները Մէքքէի կերպասով, եւ դռնակները Հնդկաստանի ոսկեթել եւ արծաթափայլ պերճ դիպակներով ծածկուած էին : Ապա հրաշալի սրահիկ մը մտաւ, որուն մէջ տեղ աւազան մը կար, եւ ամէն մէկ անկիւնը միաձոյլ ոսկեղէն առիւծ մը : Չորս առիւծներուն կոկորդէն ջուր կը հոսէր, եւ այս ջուրը հոսելով՝ անդամանդներ եւ մարգարիտներ կը յօրինէր . եւ այս ալ շատ կը յարմարէր շատրուանի մ'որ ա-

տաղին մէջ տեղէն դէպ 'ի վեր ցայտելով՝ մղալիքէ գմբէթի մը կը հասնէր ։

Դղեակն երեք կողմէն պարտէզով պատած էր ; որուն զարդերն էին ծաղկալի ածուներ, ջրաշեղջներ և ուրիշ այլազան գեղեցկութիւններ ; և որ աւելի սքանչելին, անհամար թռչուններն էին, որ օդն իրենց ներդաշնակ երգերով կը լեցնէին, և միշտ նոյն վայրը կը բնակէին, վասն զի ծառերուն և պալատին վրայէն ցանցեր ձգուած ըլլալով չէին կարող դուրս ելնել ։

Սուլթանն երկար ատեն սենեկէ սենեակ պտոյտ ըրաւ, և ամէն ինչ շքեղ և փառաւոր գտաւ ։ Երբ քալելէն յոգնեցաւ, բաց դահլիճի մը մէջ՝ որ պարտիզին վրայ կը նայէր, նստաւ. և այն տեղ ամէն տեսած և դեռ ևս տեսնելիք բաներէն զմայլած՝ կը մտմտար այս այլազան առարկաներու վրայ, երբ յանկարծ լսեց ողորմագին ձայն մ'որուն ողբալի աղաղակներ կը միանային ։ Մտադիր ականջ կախեց, և այս տխուր խօսքերը լսեց որոշակի. Ո՛ բաղդ, որ չթողիր ինձ վայելել երկար ժամանակ երջանիկ վիճակ մը, և իս աշխարհիս ամենէն թշուառն ըրիր, դադրէ իս հալածելէն, և արագահաս մահուամբ վերջ տուր իմ ցաւերուս ։ Աւա՜ղ, միթէ կարելի՞ է որ տակաւին ապրիմ բոլոր քաշած տառապանքէս ետքը ։»

Սուլթանն՝ այս ողորմելի տրտունջներէն շարժելով՝ ոտք ելաւ և գնաց այն կողմն ուսկէ նոյն ձայները կ'ելնէին ։ Երբ մեծ սրահի մը դուռը հասաւ, դռնակը բացաւ, և տեսաւ վայելչադէմ և պերճազգեստ երիտասարդ մը, որ նոյն միջոցին գետնէն քիչ մը բարձր աթոռի մը վրայ նստեր էր ։ Դէմքին վրայ տրտմութիւն կը դիտէր. սուլթանն անոր մօտեցաւ և բարևեց ։ Երիտասարդն անոր բարեւն ընդունեց, գլխով ստորին խոնարհութիւն մ'ընելով, և որովհետև ոտք չէր ելներ. «Տէր իմ, ըսաւ սուլթանին, քաջ կը դիտեմ որ արժան էր ինձ ոտք ելնել քեզ ընդունելու և կարելի եղած պատւով ընդունելու. բայց անանկ զօրաւոր պատճառ մը կ'արգիլէ, որ պէտք չէ մեղադրես իս այս մասին ։ — Տէր իմ, պատասխանեց սուլթանը, ձեր իմ վրայ ունեցած լաւ կարծիքին համար շնորհակալ եմ մեծապէս. իսկ ձեր ոտք չելնելուն պատճառն ինչ որ ըլլայ սրտովին կ'ընդունիմ ։ Ողբդ,

վշտալի ձայնդ լսելով՝ եկայ քեզ օգնութեան ։ Տար Աստուած որ ձեր աղէտից մխիթարութիւն բերելու կարող ըլլայի, ձեռքէս եկածին չափ պիտի աշխատէի ։ Յուսամ որ ձեր տառապանաց պատմութիւնն ինձ պիտի պատմէք. բայց, կաղաչեմ ըսէք առաջ թէ ինչ կը նշանակէ այս մօտակայ լճակն, ուր չորս տարբեր գոյներով ձկներ կը տեսնուին. ինչ է այս դղեակն, ինչու համար այս տեղ կը գտնուիք, և ինչ պատճառաւ մին մինակ էք ։ Այս հարցմանց պատասխանելու տեղ, երիտասարդն սկսաւ լալ դառնապէս ։ «Որչափ անհաստատ է բաղդը, գոչեց նա. կ'ախորժէր վար իջեցնել այն մարդիկը զոր բարձրացուցեր էր ։ Ո՞ւր են անոնք որ խաղաղիկ կը վայելեն անորմէ ստացած երջանկութիւննին, և որոց օրերը միշտ անամպ են և պայծառ ։»

Սուլթանն՝ որուն սիրտը շարժեր էր՝ զինքն այս վիճակիս մէջ տեսնելուն, թախանձագին աղաչեց որ առանց մեծ վշտի մը պատճառն իրեն յայտնէ ։ Աւա՜ղ, տէր իմ, պատասխանեց երիտասարդն, ինչպէս կարելի է ինձ չվշտանալ, և ինչպէս կրնամ արգիլել որ աչքերս արտասուաց մշտաբուղխ աղբիւրներ չդառնան ։ Այս խօսքիս՝ իր պարեգօտը վեր առնելով ցոյց տուաւ սուլթանին որ գլխէն մինչև կէս մէջքը միայն մարդ է, և թէ մարմնոյն միւս կէս մասը սև մարմարիոն է ։

Քաջ կրնաս դատել, շարունակեց Շէհէրազատ, որ սուլթանն անհնարին զարմացաւ երբ այս երիտասարդին ողբալի վիճակը դիտեց ։ «Ցոյց տուածդ, ըսաւ անոր, ինձ սոսկում տալով հետաքրքրութիւնս կը գրգռէ. պատմութիւնդ իմանալու կ'եփիմ կը մրկիմ, վասն զի շատ տարօրինակ պիտի ըլլայ. և ստոյգ եմ որ լճակն ու ձկներն ալ անոր մէջ մաս ունին. ուստի կը պաղատիմ ձեզ պատմելու ինձ. տեսակ մը մխիթարութիւն կրնաս գտնել անոր մէջ, քանզի այս իրաւ է որ դժբաղդ մարդիկ կերպ մը սփոփանք կը գտնեն իրենց աղէտքը պատմելով ։ — Չեմ ուզեր այդ ձեր փափաքը մերժել, պատասխանեց երիտասարդը, թէև զայն կատարելովս իմ կսկծալի ցաւերս պիտի նորոգեմ. բայց կանխաւ կ'իմացնեմ ձեզ պատրաստել ականջներդ, միտքդ և աչքերդ այնպիսի բաներու որ

մարդկային երեւակայութեան յղացած խելքէ մտքէ դուրս բաներէն աւելի տարօրինակ են ։

ՄԵԾ ԿՂԶԻՆԵՐՈՒՆ ՆՈՐԱՑԻ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տէր իմ, շարունակեց երկրորդը ; պէտք է գիտնաս որ իմ Մահմուտ անուն հայրս սոյն տէրութեան թագաւորն էր ։ Այս է Մեծ Կղզիներուն թագաւորութիւնն, որ իր անունը մօտակայ չորս փոքր լեռներէն կ՚առնու․ քանզի այս լեռներն առաջ կղզիներ էին․ իսկ իմ հօրս բնակութեան համար ընտրած թագաւորանիստ քաղաքն այն տեղն էր ուր այժմ տեսած լճակդ կը գտնուի ։ Պատմութեանս շարունակութիւնը բոլոր այս փոփոխութիւնները քեզ պիտի յայտնէ ։

Իմ թագաւոր հայրս եօթսուն տարու մեռաւ ։ Այն ինչ իր տեղը նստայ որ արժան դատեցի կարգուելու․ իսկ սոյն արքայական պատիւին մասնակից ընելու համար ընտրած անձս՝ հօրեղբօրս աղջիկն էր ։ Ինծի ցոյց տուած սիրոյ նշաններէն շատ գոհ էի, և ես ալ իմ կողմէս անանկ կաթոգին կը սիրէի զինքն, որ մեր սիրայօժարութիւնն աննման էր, և հինգ տարի տեւեց ։ Այս ժամանակէս ետքը՝ գիտցայ որ իմ թագուհիս ալ իս չսիրեր ։

Օր մ՚որ կէսօրէն ետքը բաղնիք մտեր էր, քնանալու իղձ մ՚ունեցայ և բազմոցի մը վրայ երկնցայ ։ Իր կիներէն երկուքն որ նոյն միջոցին սենեակս կը գտնուէին՝ եկան ու մէկը գլխուս վերեւն, և միւս ոտքիս քով նստան, որպէս զի թէ տաքութիւնը մեղմեն հովահարով և թէ ճանճերը վանեն՝ որ կրնային քունս վրդովել ։ Կարծէին թէ քուն եմ և կամացուկ կը խօսակցէին իրարու հետ․ բայց աչքերս միայն գոց էին և իրենց խօսակցութենէ բառ մ՚անգամ չփախցուցի ։

Այս կիներէն մէկը կ՚ըսէր միւսին․ «Ի՞նչ կ՚ըսես, միթէ թա-

գուհին յանցաւոր չէ՞ մեր իշխանին պէս սիրուն իշխան մը չսիրելուն ։ — Անշուշտ, պատասխանեց երկրորդը ։ Ճշմարիտն ըսեմ, բան մը չեմ հասկնար իր ընթացքէն և չգիտեմ թէ ինչու համար ամէն իրկուն դուրս կ՚ելնէ և իշխանը մինակ կը թողու ։ Արդեօք թագաւորը չտեսներ այս բանն ։ — Է՛հ, ինչպէս կ՚ուզես որ տեսնէ, վրայ բերաւ միւսն ։ Ամէն իրկուն անոր խմելիքին մէջ անանկ խոտի մը նիւթը կը խառնէ որ բոլոր գիշեր խոր քուն մը կը քաշէ, և ինքն ալ հաւնած տեղը կ՚երթայ․ իսկ, արշալոյսը ծագելուն, կը դառնայ և անոր քովը կը պառկի․ այն ատեն զանի կ՚արթնցնէ քթին տեսակ մը հոտ տալով ։»

Տէր իմ, դատէ հիմա թէ այս խօսքերը լսելուս ինչ զարմանք զգացի և ինչ զգացումներ ունեցայ ։ Սակայն որչափ որ այլայլեր էի, ինքզինքս զսպելու և սուտ խուլ ըլլալու կարող եղայ․ ուստի քնէս արթննալու և բան մը չլսելու զարկի ։

Թագուհին բաղնիքէն դարձաւ․ միատեղ ընթրիք ըրինք, և պառկելէն առաջ ինքն իր ձեռօքը տուաւ ինձ ջրով լեցուն բաժակը զոր խմելու սովորութիւն ունէի․ բայց բաժակը բերնիս տանելու տեղ, բաց պատուհանի մը մօտ գացի և ջուրն այնպիսի վարպետութեամբ մը վար թափեցի որ թագուհին չտեսաւ ։ Յետոյ բաժակը ձեռքը տուի որ բնաւ կասկած չունենայ թէ խմած չեմ ։

Վերջը պառկելու գացինք․ և քիչ մ՚ետքը կարծելով թէ քնացեր եմ, թէև քուն չէի, անանկ անզգոյշ կերպով անկողինէն ելաւ, որ բաւական բարձր ձայնով ըսաւ․ «Քնացի՛ր, և երանի թէ բնաւ աչքդ չբանաս ։» Շուտ մը հագուեցաւ և սենեկէն դուրս ելաւ․․․ ։

Դուրս ելածին պէս, իսկոյն ելայ և հագուեցայ․ սուրս առի, մօտէն գացի և անոր իմ առջևէս քալելը տեսայ ։ Այն ատեն անոր հետքին հետեւելով՝ կամաց կամաց քալեցի, որ ոտքիս ձայնը չլսէ ։ Շատ մը դռներէ անցաւ, որ՝ իր արտասանած բանի մը մոգական բառերու զօրութեամբը, բացուեցան․ իսկ վերջին բացուած դուռը պարտէզինն էր, ուր մտաւ ։ Նոյն դրան առջև կանգ առի, որ ածու մ՚անցնելու միջոցին զիս չտեսնէ, և աչքով անոր ետևէն դիտեցի որչափ որ մութը կը ներէր, և տեսայ որ անտառակ մը մտաւ, որուն

բոլորտիքը թանձր ցանկեր կային ։ Ուրիշ Ճամբէ մը նոյն տեղը մտայ , և երկար ծառուղիի մ՚եւսէն սահելով՝ տեսայ որ մարդու մը հետ կը պտըտէր Թագուհիս ։

Իրենց խօսակցութեան մօտ գրի , և սա խօսքերը լսեցի ։ «Բաւական ժիր չեմ , և ուշ եկայ քու կարծիքովդ , կ՚ըսէր Թագուհին իր սիրողին , բայց արժանի չեմ այդ յանդիմանութեան , քանի որ գիտես թէ ինչ արգելք ունիմ ։ Բայց թէ որ իմ անկեղծութեանս վրայ տակաւին կը կասկածիս այնքան սիրոյ փորձեր քեզ տալէս ետքը՝ պատրաստ եմ աւելի նշանաւոր ապացոյցներ տալ , հերիք է որ հրամայես . գիտես ինչ զօրութիւն ունիմ ։ Եթէ փափաքիս՝ հիմակ՝ արեւն ելնելէն առաջ , կրնամ այս մեծ քաղաքն և այս գեղեցիկ պալատը սոսկալի աւերակներ դարձնել , այնպէս որ գայլերու , բուերու և ագռաւներու բնակութիւնն ըլլան ։ Միթէ կ՚ուզե՞ս որ այս ամուր պատերուն բոլոր քարերը փոխադրեմ Կովկաս լեռնէն և բնակելի աշխարհիս սահմաններէն անդին . բաւական է որ խօսք մ՚ըսես , և բոլոր այս բաներն իրենց կերպարանը կը փոխեն ։

Թագուհին այս խօսքերը լմնցնելու ատեն՝ ինքն ու սիրողը ծառուղիին ծայրը գտնուելով՝ դարձան ուրիշ մը մտնելու և իմ առջեւէս անցան ։ Սուրս քաշեր էի , և որովհետև սիրողն իմ կողմն կը գտնուէր , վզին զարկի և գետինը տապալեցի ։ Կարծեցի թէ սպաննեցի զանի , և այս կարծիքով արտորնօք քաշուեցայ՝ առանց ինքզինքս Թագուհիին ճանչցնելու , քանզի ազգականս ըլլալուն ուզեցի զինքը խնայել ։

Սակայն իր սիրողին տուած հարուածս մահաբեր էր , թէև իր հմայից զօրութեամբն անոր կեանքը պահեց , այնպէս որ կրնանք ըսել թէ ոչ մեռած է և ոչ կենդանի ։ Երբ պարտէզին մէջէն անցնելով պալատը կը դառնայի , լսեցի որ Թագուհին ողբ ու աղաղակ կ՚արձակէր . և ասով իր ցաւը գատեցի և գոհ եղայ անոր կենաց վնաս մը չտալուս ։

Երբ սենեակս մտայ , նորէն պառկեցայ , և իմ անպատուող ախոյեանը սպաննելուս վրայ գոհ՝ քնացայ ։ Միւս օրն արթննալուս տեսայ որ Թագուհին իմ մօտ պառկած է ։ Չգիտի ըսեմ որ քնացած էր թէ արթուն . բայց ես ելայ անկողնէս անձայն և դահլիճս մտայ , ուր հա-

գուեցայ կապուեցայ ։ Այնուհետև գացի խորհրդարանս , և իմ վերադարձիս տեսայ որ Թագուհին սեւեր հագած՝ մազերը ցիր ու ցան և մասամբ փետտած էր , և իմ առջեւս ներկայացաւ ։ «Վեհափառ , ըսաւ ինձ , եկայ ձեզ աղաչելու որ այսպէս հագուելս տարօրինակ չգտնէք ։ Մի և նոյն միջոցին ստացած երեք տրտմալից լուրերս են պատճառ կսկծալի վշտերուս՝ որոց տկար նշանները միայն կը տեսնէք ։ — Ե՞հ , որո՞նք են այս լուրերը , տիկին , հարցի անոր ։ — Իմ Թագուհի սիրական մօրս , նոյնպէս հօրս մահը , պատասխանեց ինձ , որ ճակատամարտի մը մէջ սպաննուեցաւ , նոյնպէս եղբօրս մէկուն մահն , որ վհի մէջ ինկաւ ։

Իր տրտմութեան ճշմարիտ պատճառը պահելու համար գործածած պատրուակը գժգոհութիւն մը չտուաւ ինձ , և հասկցայ որ չէր կարծեր թէ ես սպաննեցի իր սիրողը ։ «Տիկին , ըսի անոր , ոչ միայն տրտմութիւնդ չեմ մեղադրեր , այլ և անոր մասնակից կ՚ըլլամ իրաւամբ ։ Զարմանքս մեծ պիտի ըլլար թէ որ ըրած կորուստիդ անզգայ մնայիր . արտասուք թափէ , այդ արտասուքդ քու ընտիր բնաւորութեանդ անժխտելի նշաններն են ։ Սակայն յուսամ որ ժամանակն և խոհականութիւնը կրնան մեղմել ցաւերդ ։»

Թագուհին իր սենեակը քաշուեցաւ , և ինքզինքը լիովին իր տրտմութեան տալով՝ լման տարի մ՚անցուց լալով ու ողբալով ։ Այնուհետև հրաման ուզեց ինձ պալատին շրջապատին մէջ իր գերեզմանը շինել , ուր կը փափաքէր , ըսաւ , մինչև կենաց վախճանը բնակիլ ։ Այս հրամանը տուի , և շքեղ պալատ մը հիմնել տուաւ , գմբեթով մը՝ զոր ասկէ կը տեսնուի . այս շէնքին անունն արտասուաց Պալատ դրաւ ։

Երբ շէնքը լմնցաւ , իր սիրողը հոն բերել տուաւ , որ վիրաւորուած գիշերը յարմար գտած տեղը փոխադրուեր էր ։ Մինչև այն ատեն մահուանէ ազատեր էր անոր տուած ըմպելիներով . և նոյնը շարունակեց անձամբ տալու ամէն օր , երբ սիրողն արտասուաց Պալատը դրուեցաւ ։

Սակայն իր բոլոր կախարդութիւններովը չէր կրնար բժշկել այս թշուառականն ։ Ոչ միայն անզօր էր քալելու և յոտն կենալու , այլ և խօսելու ձիրքն ալ կորուսեր էր , և միայն նայուածքով կենդանութեան

նշան մը կտար ։ Թէպէտև Թագուհին մխիթարութիւն ունէր միայն տեսնել իր սիրողն և իր յիմարական սիրոյն ներշնչած փափուկ և խանդակիր խօսքեր ըսել, բայց դարձեալ օրն երկու անգամ երկար այցելութիւն մ՚ընելէն չէր դադրեր ։ Ես այս բանիս տեղեկութիւն ունէի, սակայն չգիտնալու կը զարնէի ։

Օր մը հետաքրքրութենէ շարժեալ արտաքուստ Պալատը դացի որպէս զի տեսնեմ թէ իշխանուհին ինչով կ՚զբաղի ․ և անանկ տեղ մը կեցայ ուսկէ առանց տեսնուելու՝ լսեցի իր սիրողին բսած սա խօսքերը ․ «Ցերեկն ծայր կը տրտմիմ քեզ այս վիճակիս մէջ տեսնելուս ․ ես ալ քեզի չափ կ՚զգամ քաշած կսկծալի ցաւերդ ․ բայց սիրելի հոգիս, ես միշտ կը խօսիմ քեզի հետ և դու պատասխան մը չես տար ինձ ։ Մինչև ե՞րբ պիտի պահես այս լռութիւնը ։ Խօսք մը միայն ըսէ ։ Ափսոս, կենացս ամենէն անուշ վայրկեանները ցաւոյս մամանակից գտնուելով անցուցած վայրկեաններս են ։ Զեմ կրնար քեզնէ հեռու ապրիլ, և քեզ անդադար տեսնելու հաճոյքն աւելի վեր կը դասեմ քան տիեզերքի տիրապետութիւնը ։»

Այս խօսքիս վրայ, զոր քանի քանի անգամ ընդմիջեց իր հառաչներով և հեծկլտանքով, համբերութիւնս վերջապէս հատաւ ։ Երևան ելայ, և անոր մօտ երթալով, «Տիկին, ըսի, բաւական լացիր, ժամ է արդ վերջ տալ այդ տրտմութեանդ որ թէ քեզ և թէ ինձ անպատուութիւն կը բերէ ․ չափէն աւելի կը մոռնաս ինչ որ ինձ և անձիդ պարտաւոր ես ։ — Վեհափառ, պատասխանեց ինձ, եթէ առջևդ քիչ մը յարգ կամ բարեկամութիւն ունիմ, կ՚աղաչեմ որ զիս չբռնադատես ։ Թող տուր ինձ որ այս դժնդակ վշտացս մէջ տառապիմ, անկարելի է որ ժամանակը կարենայ զանոնք թեթևցնել ։»

Երբ դիտեցի որ իմ խօսքերս՝ փոխանակ զինքն իր պարտաւորութեան յորդորելու, աւելի իր կատղութիւնը կը գրգռէին, բերանս գոցեցի և դուրս ելայ ։ Իսկ իշխանուհին ամէն օր իր սիրողին այցելութիւն կ՚ընէր, և երկու տարի ամբողջ, յուսահատութեան մէջ մնաց ։

Երկրորդ անգամ մ՚ալ՝ իր նոյն տեղ գտնուած ատենն, արտաքուստ Պալատը դացի ։ Նորէն ծածուկ տեղ մը կեցայ և լսեցի որ սա խօսքերը կ՚ըսէր իր սիրողին ․ «Երեք տարի կայ որ ինծի բառ մ՚անգամ չըսիր, և իմ սիրոյս նշաններուն, զոր խօսքերովս և հեծեծանքովս կը կը յայտնեմ, պատասխան չտուիր ․ անզգայութիւնն թէ արհամարհանքդ է պատճառն ։ Ո՛ գերեզման, արդեօք ջնջեցի՞ր այն տափագին սէրն որ ինծի համար ունէր ․ միթէ գոցեցի՞ր այն աչերն որ այնքան սէր կը յայտնէր և իմ բոլոր ուրախութիւնս էր ։ Չէ՛, չէ՛, չեմ կրնար հաւատալ այս բանիս ։ Խնդրեմ ըսէ ինձ թէ ինչ հրաշքով անգին գանձի մ՚աւանդապահն եղար ։»

Ճշմարիտը կ՚ըսեմ, տէր, որ այս խօսքերը բարկութիւնս շարժեցին, վասն զի, այս սիրական տարփաւորն, այս պաշտուած մահկանացուն՝ քու երևակայած անմահն անձ մը չէր, այլ պարզապէս սև հնդկացի մ՚էր, նոյն երկիրներուն մէկ բնակիչն ։ Այս խօսքերէն՝ ինչպէս որ ըսի, անանկ սրտմտեցայ որ յանկարծ ինքզինքս ցոյց տուի, և նոյն գերեզմանին բացադարձաբար խօսելով ․ «Ո՛ գերեզման, գոչեցի, ինչո՞ւ չես կլլեր սա հրէշն որ բնութեան սոսկում կ՚ազդէ, կամ լաւ ես, ինչո՞ւ համար թէ սիրողն և թէ սիրուհին չես շանթահարեր ։»

Հազիւ թէ այս խօսքս աւարտեցի՝ Թագուհին որ խափշիկին մօտ նստեր էր, կատաղի կնկան մը պէս ոտք ելաւ և ըսաւ ․ «Ա՛հ, անգութ, դու կը պատճառես իմ ցաւերս ։ Մի կարծեր թէ չեմ գիտեր ։ Ի վաղուց չգիտնալու կը զարնեմ ։ Քու արիւնարբու ձեռքդ իմ տարփաւորս այս ողբալի վիճակին հասուց, և սիրտդ այնքան անգութ է որ յուսահատ սիրող մը թշնամանելու կգաս ։ — Այո՛, ես եմ, ընդմիջեցի, բարկութեան բռնելով՝ ես պատժեցի այս հրէշն իրեն արժանի պատժով ․ քեզի հետ ալ նոյն կերպով վարուիլ պէտք էր ․ կը ցաւիմ որ չըրի, և երկար ատենէ վեր իմ բարութիւնս ՚ի չար կը գործածես ։» Այս ըսելով սուրս քաշեցի և թևս վերուցի որ զանի պատժեմ, բայց նա իմ շարժումս հանդարտիկ նայելով ․ «Բարկութիւնդ դադրեցուր» ըսաւ ծաղրական ժպիտով մը ։ Նոյն պահուն ինձ անհասկնալի բառեր արտասանեց և ապա յարեց ․ «Իմ դիւթիչ զօրութեամբս կը հրամայեմ քեզ որ այս ժամուս կէս մարմարին և կէս մարդ դառնաս ։» Անմիջապէս, տէր իմ, ահա ինչ որ կը տեսնես ե-

ղայ, արդէն կենդանիներու մէջ մեռած, և կենդանի՝ մեռելներու մէջ ։

Երբ այս Թագուհիի անուան անարժան՝ անգութ կախարդուհին այսպէս իս պլլակերպեց և այս սրահս բերաւ իր ուրիշ կախարդութեամբ մը, մայրաքաղաքս կործանեց, որ շատ ծաղկած և բազմամարդ էր, տուները, հրապարակները և շուկաները քանդեց, և անոնց տեղը սա տեսած լճակդ և ամայի վայրերը շինեց ։ Լճին մէջի չորս գոյն ձուկները քաղքին չորս տեսակ աղանդէ բնակիչներն են. Ճերմակները՝ հին իսլամները, կարմիրները՝ կրակապաշտ պարսիկներն էին, կապոյտները՝ քրիստոնեայք, դեղինները՝ հրէայք. չորս բլուրներն էին չորս կղզիներն որոց անուամբ կը կոչուէր այս տէրութիւնս ։ Այս ամէնը մագուհիէն իմացայ, որ իմ՝ տրտմութեանս չափը լցնելու համար, իր կատղութեան արդիւնքն ինքն անձամբ յայտնեց ինձ ։ Այս բաւական չէ, իր կատղութիւնը չշատացաւ պետութիւնս կործանելով և իս այլափոխելով՝ ամէն օր կգայ և եզան մի ջիղով ուսերուս վրայ հարիւր անգամ կը զարնէ, և բոլոր մարմինս արիւնլուայ կ'ընէ ։ Երբ այս տանջանքը կը վերջանայ, այծենիով մը կը ծածկէ իս և անոր վրայէն սա տեսակ ձամկաւոր վերարկուն կը նետէ, չէ թէ պատւոյ համար, այլ վրաս ծիծաղելու մտօք ։

Այս ըսելէն ետքը Սև Կղզիներու արքայն չկրցաւ իր արտասուքը բռնել. սուլթանին սիրտը ճմլեցաւ և խօսք մ'անգամ չկրցաւ արտաբերել զանի մխիթարելու համար ։ Քիչ մ'ետքը՝ նորահասակ թագաւորն աչքը դէպ 'ի երկինք վերցնելով՝ պոռաց. «Ամէն արարածներու մեծագոյն Արարիչ, կը հնազանդիմ քու դատաստանիդ և նախախնամութեանդ վճիռներուն ։ Համբերութեամբ կը տանիմ բոլոր աղէտքս, քանի որ այս է քու կամքդ, բայց յուսամ որ քու անբաւ բարերարութիւնդ իս պիտի վարձատրէ ։»

Սուլթանին սիրտն՝ սաստիկ սրտառուչ պատմութենէն շարժեցաւ և այս խեղճ իշխանին վրէժխնդիր ըլլալու համար փափաքելով՝ ըսաւ անոր. Իմացուր ինձ թէ ուր կը բնակի այն նենգաւոր վհուկն, և ուր կրնայ գտնուիլ այն անօրէն սիրողն որ մահուանէ առաջ թաղուեր է ։ — Տէր իմ, պատասխանեց իշխանը, սիրողն, ինչպէս որ արդէն ըսի, արտասուաց Պալատն է, գմբեթական շիրմի մը մէջ, և այս պալատը դրան կողմէն դղեկին հետ հաղորդակցութիւն ունի ։ Իսկ վհուկ կնկան գալով՝ չեմ կարող ըսել ճշտիւ թէ ուր կը բնակի. բայց ամէն օր արեւը ծագելուն՝ իր սիրողին այցելութեան կ'երթայ, իմ վրայ արդէն խօսած արիւնուշտ գործողութիւնս ընելէն ետև. և կրնաս քաջ ըմբռնել որ այս անգթութեան դէմ չեմ կարող ինքզինքս պաշտպանել ։ Վհուկը կը տանի անոր այն ըմպելին որով միայն անմեռ կը պահէ զայն մինչև ցայսօր, և անդադար կը գանգատի որ վիրաւորուելէն վեր շարունակ լռութիւն կը պահէ ։

«Իշխա՛ն, պատասխանեց սուլթանը, դու որ անչափ կարեկցութեան արժանի ես, ես ալ յետին ծայր կը վշտակցիմ քու թշուառութեանդ ։ Երբէք այսպիսի տարօրինակ բան մը հասած չէ մարդու մը, և քու պատմութիւնդ գրող հեղինակներն առաւելութիւն պիտի ունենան յիշատակել իրողութիւն մ'որ երբէք նմանը տեսնուած չէ ։ Բան մը միայն կը պակսի, այս է անկ եղած վրէժխնդրութիւնը, բայց ձեռքէս եկածը պիտի ընեմ այս գոհունակութիւնը քեզ տալու ։»

Եւ արդարև սուլթանը՝ նորահասակ իշխանին հետ սոյն նիւթին վրայ խօսելու ատենը՝ յայտնելէն ետև թէ ինքն ո՛վ էր և ինչ պատճառաւ այն դղեակը մտեր է, անոր վրէժը լուծելու հնար մը մտածեց և զայն անոր հաղորդեց ։ Այս խորհուրդը գլուխ հանելու համար պէտք եղած միջոցներուն վրայ խորհեցաւ, և անոր գործադրութիւնը միւս օրուան ձգեցին ։ Սակայն՝ գիշերը տարաժամ ըլլալով՝ սուլթանը քիչ մը հանգիստ ընելու գնաց ։ Իսկ նորատի իշխանն՝ ըստ սովորականին՝ անքուն մնաց շարունակ (չէր կարող ննջել քանի որ կախարդուեր էր), բայց քիչ մը յոյս ունէր որ մօտ օրերս իր տառապանքէն կ'ազատի ։

Միւս օր՝ սուլթանն ելաւ արեւուն հետ, և իր խորհուրդն 'ի գործ դնելու համար, իր վերարկուն տեղ մը պահեց որ զինք անհանգիստ չընէ, և արտասուաց Պալատը գնաց ։ Տեսաւ որ նոյն պալատը ճերմակ մոմէ անբաւ լապտերներով լուսաւորուած է, և զմայլելի հոտ մը առաւ որ կարգաւ շարուած և գեղեցկաշէն ոսկի խնկամաններէ կը բուրէր ։ Երբ իր անկողնին մէջ պառկած տեսաւ խափշիկն՝ իր սուրը

քաշեց և առանց ընդդիմութեան այն ապիրատը սպաննեց , մարմինը գետնկին բակը քաշքշելով տարաւ և ջրհորի մը մէջ նետեց ։ Այս արշաւանքէն ետքը գնաց սև մարդուն անկողինը պառկեցաւ , վերմակին տակը դրաւ իր սուրն և այն տեղ սպասեց մտքի դրածը կատարելու համար ։

Շատ չանցաւ վհուկ կինն եկաւ ։ Իր առաջին գործն եղաւ Սև Կղզիներու Թագաւորը՝ իր Էրկանը խուցն երթալ ։ Անոր վերարկուն հանեց և սկսաւ ուսերուն զարնել հարիւր հարուած խարազանն , այնպիսի բարբարոսութեամբ մ՚որուն նմանը չէր տեսնուած ։ Խեղճ իշխանը պարապ տեղ կլար կ՚ողբար , կ՚աղաղակէր և կը պաղատէր սրտաճմլիկ կերպով մ՚որ իր վրայ գութ ունենայ , անգութ վհուկը հարիւր հարուածը տալէն ետև միայն դադրեցուց ծեծը ։ «Դու իմ սիրողիս վրայ գութ չունեցար , կ՚ըսէր նա , պէտք չէ որ նոյնն ինծէ սպասես ։» Վերջը հագցուց իշխանին այծենին և ձամկատը վերարկուն ալ վրան նետեց , և արտասուաց Պալատը գնաց . երբ ներս մտաւ նորէն լացն սկսաւ և ողբ ու կոծ արձակեց . և մօտենալով այն անկողինին ուր կարծէր թէ սիրողը պառկած է , «Ի՜նչ անգթութիւն , գոչեց նա , որ ինծի պէս փափկասիրտ և կաթողին սիրուհիի մ՚երջանկութիւնը կը վրդովես ։ Ո՛վ դու , անգութ իշխան , դու որ կը մեղադրես իս իբր թէ բարսիրտ եմ իմ ոխս անորմէ առնլու համար , միթէ քու բարբարոսութիւնդ իմ վրէժխնդրութենէս աւելի ծանր չէ՞ ։ Ա՛հ , դաւաճան , միթէ իմ պաշտած անձս սպաննելով իս սպաննած չեղա՞ր ։ Ափսո՜ս , յարեց վհուկը , խօսքը սուլթանին ուղղելով , և կարծելով թէ սև մարդուն կը խօսի , իմ արևս , իմ կեանքս , միթէ միշտ լռու պիտի կենաս . միթէ հաստատ որոշե՞ր ես իս անմխիթար թողուլ և մեռնելէս առաջ չպիտի ըսես որ իս կը սիրես ։ Հոգիս , գոնէ բառ մ՚ըսէ , կը պաղատիմ քեզ ։»

Այն ատեն սուլթանը՝ խոր քունէ մ՚արթննալուն պէս՝ խափշիկներու լեզուն ձևացուց և թագուհիին պատասխան տուաւ ծանր ձայնով մը . «Աստուծոյ վրայ միայն է զօրութիւն և իշխանութիւն , այն է միայն ամենակարող ։» Թագուհին այս խօսքին վրայ , որուն չէր յուսար , աղաղակ մը ձգեց իր անբաւ խնդութիւնը յայտնելու ։ «Սիրելի

տէր իմ , գոչեց նա , արդեօք չե՞մ սխալիր . միթէ քու ձայնդ լսեցի՞ , դո՞ւ ես ինծի հետ խօսողը ։ — Թշուառական , ըսաւ սուլթանը , միթէ արժանի՞ ես որ քեզ պատասխանեմ ։ — Եւ ինչո՞ւ համար , հարցուց թագուհին , այդպէս կը յանդիմանես զիս ։ — Քու Էրկանդ աղաղակներն և արտասուքն որուն հետ դու այնպէս անարժան և բարբարոս կերպով կը վարուիս ամէն օր , կ՚արգիլեն զիս գիշեր ու ցորեկ քնանալու ։ Շատոնց բժշկուեր էի և լեզուս բացուած կ՚ըլլար , եթէ անոր կախարդութիւնը փարատէիր . այս է ահա իմ լռութեանս պատճառն և որմէ կը գանգատիս ։ — Լա՛ւ , ըսաւ վհուկը , սիրտդ խաղաղելու համար պատրաստ եմ ինչ որ հրամայես կատարելու . միթէ կ՚ուզե՞ս որ իր առաջին կերպարանը տամ անոր ։ — Այո՛ , պատասխանեց սուլթանն , և շուտով անոր ազատութիւն տուր , որպէս զի իր աղաղակներէն անհանգիստ չըլլամ ։»

Վհուկն իսկոյն արտասուաց Պալատէն ելաւ , թաս մը ջուր առաւ , անոր վրայ քանի մը խօսքեր արտասանեց որով ջուրը սկսաւ եռալ այնպէս որ կարծես թէ կրակի վրայ էր ։ Յետոյ իշխանին գտնուած սենեակը գնաց , և այս ջրէն անոր վրայ սրսկեց ըսելով . «Եթէ ամէն արարածոց Արարիչը քեզ ինչպէս որ ես հիմակ տեսնեմ , կամ եթէ քեզի դէմ բարկացած է , այնպէս մնացիր , բայց եթէ միայն իմ կախարդութեանս պատճառաւ այս վիճակին մէջն ես , քու բնական կերպարանդ առ նորէն , և առաջ ինչպէս որ էիր , նոյնն եղիր ։»

Այս խօսքերս ըսաւ չըսաւ որ իշխանն՝ իր առաջին կերպարանն առնլով՝ անարգել ոտք ելաւ , անսահման ուրախութեամբ , և փառք տուաւ Աստուծոյ ։ Մոգուհին , նորէն խօսիլ սկսելով ըսաւ անոր . «Ելիր գնա այս դղեկէն և նորէն մի դառնար այս կողմն , ապա թէ ոչ մահդ կը գտնես ։»

Նորատի թագաւորն՝ ՚ի հարկէ ստիպեալ՝ առանց պատասխան տալու մոգուհիէն հեռացաւ և հեռաւոր տեղ մը քաշուեցաւ . հոն սպասեց անհամբեր սուլթանին խորհրդին ելքն , որուն գործադրութիւնն այնքան յաջողութեամբ սկսեր էր ։

Սակայն մոգուհին արտասուաց Պալատը վերադարձաւ , և մտնելու

տանն՝ կարծելով միշտ որ խափշիկին հետ կը խօսի . «Սիրական սերահարս, ըսաւ անոր, հրամանդ կատարեցի . հիմակ արգելք մը չունիս ոտք ելնելու եւ տալու ինծի մխիթարութիւն մ'որմէ երկար ատենէ վեր զրկուած եմ :»

Սուլթանը սեւերուն լեզուն ձեւացնել շարունակելով եւ խռոխ ձայնով մը պատասխանեց . «Ինչ որ հիմակ ըրիր իս բուժելու համար բաւական չէ, դեռ միայն չարեաց մէկ մասը ջնջեցիր, պէտք է անոր արմատը խլել : — Իմ սիրասուն խափշիկս, վրայ բերաւ վհուկն, ինչ կ'իմանաս արմատ ըսելով : — Թշուառական, պատասխանեց սուլթանը, միթէ չե՞ս հասկնար որ այս քաղքին, իր բնակիչներուն եւ կախարդութիւններովդ կործանած չորս կղզիներուն վրայ է խօսքս : Ամէն օր, կէս գիշերին, ձկները շարունակ գլուխնին ճահէն վեր կը հանեն եւ ինծի ու քու դէմ վրէժխնդրութիւն կը պոռան : Ահա ասոր համար իմ բժշկութիւնս կ'ուշանայ : Շուտ մը գնա եւ ամէն բան իր առաջին վիճակին մէջ դիր, եւ 'ի դարձիդ, ձեռս քեզ պիտի տամ եւ ոտք ելնելու ինծ պիտի օգնես :»

Կախարդուհին՝ այս խօսքերէն նոր յոյսեր առած՝ մեծ ուրախութեամբ պոռաց . «Աչքիս լոյսը, հոգիս, քիչ ատենէն առողջութիւնդ պիտի գտնես, քանզի հրամանդ երթամ պիտի կատարելու :» Եւ իրօք իսկոյն ճամբայ ելաւ, եւ երբ ճահիճին եզրը հասաւ, ափին մէջ քիչ մը ջուր առաւ եւ ճահճին վրայ սրսկեց :

Այն ինչ քանի մը խօսք արտասանեց ձկներուն եւ ճահճին վրայ՝ որ նոյն միջոցին իսկ քաղաքը վերստին երեւցաւ : Ձկները նորէն մարդ՝ կին կամ այր, մահմէտական, քրիստոնեայ, պարսիկ կամ հրեայ, ազատ կամ ստրուկ դարձան եւ ամէն մէկն իր բնական կերպարանն առաւ : Տներն ու կրպակները շուտ մ'իրենց բնակիչներովը լցան՝ եւ հմայքէն առաջ ինչ վիճակի մէջ որ էին, նոյն վիճակին մէջ գտան ամէն բան : Սուլթանին ուղեկիցները, որ մեծ հրապարակին մէջ բանակեր էին, սաստիկ զարմացան ինքզինքնին յանկարծ ընդարձակ, գեղեցիկ եւ բազմամարդ քաղքի մը մէջ գտնելով :

Իսկ վհուկին գալով՝ երբ այս հրաշալի փոփոխութիւնը կատարեց, շուտով արտասուաց Պալատը դիմեց, որ ըրածին պտուղը քաղէ :

«Սիրելի տէր իմ, գոչեց ներս մտնելով, եկայ որ առողջութիւնդ գտնելուդ քեզի խնդակից ըլլամ . ինչ որ ինձմէ պահանջեցիր կատարեցի, ուրեմն ոտք ելիր եւ ձեռքդ ինծի տուր : — Մօտ եկուր, ըսաւ անոր սուլթանը միշտ խափշիկներու լեզուն կեղծելով : Վհուկ թագուհին մօտեցաւ : «Այդ բաւական չէ, վրայ բերաւ նա, քիչ մ'աւելի մօտեցիր :» Վհուկը հնազանդեցաւ : Այն ատեն սուլթանն ոտք ելաւ, եւ անանկ յանկարծակի անոր թեւէն բռնեց որ վհուկն ինքզինք պաշտպանելու ատեն չունեցաւ . եւ սուրի հարուածով մը, անոր մարմինն երկու կտրեց, որմէ մէկ մասը մէկ կողմն եւ միւս մասը դիմացի կողմն ինկաւ : Այս ընելէն ետեւ՝ դիակը նոյն տեղը ձգեց, եւ արտասուաց Պալատէն ելնելով, գնաց Սեւ Կղզիներուն Նորատի թագաւորը գտաւ, որ անհամբեր իրեն կ'սպասէր : «Իշխան, ըսաւ անոր, համբուրելով ուրախ եղիր, ալ վախնալիք բան մը չունիս . քու անգութ թշնամիդ հիմակ անկենդան դիակ մ'է :»

Նորատի իշխանն իր շնորհակալութիւնը յայտնեց այնպէս որ կ'երեւէր թէ երախտագիտութեամբ լցուած է սիրտն, եւ այս մեծ ծառայութեան փոխարէն, անոր երկար կեանք մը մաղթեց, ամէն տեսակ բարօրութեամբ : «Այսուհետեւ կրնաս, ըսաւ սուլթանը, մայրաքաղքիդ մէջ բնակիլ, եւ եթէ կ'ուզես իմ քաղաքս ալ գալ մնալ, որ անկից հեռու չէ . սիրով պիտի ընդունիմ քեզ, եւ ինչպէս այս տեղ նոյնպէս իմ պալատս պէտք եղած պատիւն ու մեծարանքը պիտի տեսնես : — Հզօր միապետ, որուն այնչափ շնորհապարտ եմ, պատասխանեց նորատի իշխանը, միթէ կը կարծե՞ս թէ մայրաքաղքիդ մօտ ես : — Այո՛, պատասխանեց սուլթանն, այնպէս կարծեմ . հազիւ թէ չորս հինգ ժամուան ճամբայ հեռու է : — Մէկ տարուան ճամբայ կայ, վրայ բերաւ իշխանը : Կը հաւատամ որ ըսածիդ չափ քիչ ատենուան մէջ եկար այս տեղ երկրէդ, վասն զի իմն կախարդուած էր, բայց քանի որ կախարդութիւնը գնաց, ամէն բան փոխուեցաւ : Սակայն դարձեալ քեզի հետ պիտի գամ, մինչեւ անգամ եթէ աշխարհիս ծայրն երթաս : Դուն իմ ազատիչս ես, եւ իմ երախտագիտութեանս ապացոյցները տալու համար, քեզի ուղեկից ըլլալու որոշած եմ, եւ յօժարակամ կը թողում իմ թագաւորութիւնս :»

Սուլթանը չափազանց զարմացաւ իմանալով որ իր իշխանութեան երկրէն այնչափ հեռու տեղ մը կը գտնուի, և չէր կրնար հասկնալ թէ ինչպէս այսպիսի բան մը կարելի է ։ Բայց Սև Կղզիներուն նորատի թագաւորն այս բանիս կարելի ըլլալն այնպէս աղէկ հասկցուց որ սուլթանը համոզուեցաւ ։ «Հոգ չէ, վրայ բերաւ Սուլթանն, իմ երկիրս դառնալու նեղութիւնս պիտի վարձատրուի քեզի ըրած երախտիքս յիշելով և քեզ իմ զաւակս ընելով . որովհետև կը հաւանիք ինծի ընկերանալ, և քանի որ ես ալ զաւակ չունիմ, քեզ իմ զաւակս պիտի ընեմ և հիմայէն իմ ժառանգորդս և յաջորդս պիտի ըլլաս ։»

Սուլթանին և Սև Կղզիներուն թագաւորին խօսակցութիւնը սիրոյ գգուանքներով վերջացաւ ։ Այնուհետև դեռահաս իշխանը ճամբորդութեան պատրաստութիւնները տեսաւ, որոնք երեք շաբաթուան մէջ լմնցան ։ Բոլոր պալատականներն և հպատակները մեծ ցաւ յայտնեցին անոր մեկնելուն վրայ, և նորատի իշխանն իր մօտաւոր ազգականներէն մէկն անոնց վրայ թագաւոր դրաւ ։

Վերջապէս, սուլթանն և դեռահաս իշխանը ճամբայ ելան մէկտեղ առնելով անգին հարստութիւններով բեռնաւորուած հարիւր ուղտ, նոյնպէս յիսուն սպառազէն ընտիր ձիաւորներ ։ Յաջող ճամբորդութիւն մ'ունեցան և երբ սուլթանն, որ իր ուշանալուն պատճառն և անոր առիթ տուող արկածն իմաց տալու համար սուրհանդակներ հաներ էր, մայրաքաղքին մօտեցաւ, իր ձգած գլխաւոր պաշտօնատարներն եկան զինքը դիմաւորելու և վստահցուցին որ իր երկար բացակայութեան ժամանակ տէրութեան մէջ փոփոխութիւն մը չէր եղած ։ Բնակիչներն ալ խուռն բազմութեամբ քաղքէն ելան և ցնծութեան աղաղակներով սուլթանն ընդունելով մեծ խրախճանք ըրին որ շատ օրեր տևեց ։

Իր դարձեան հետևեալ օրը սուլթանն իր բոլոր պալատականները ժողվեց, և իր ակնկալութեան դէմ, իր երկար բացակայութեանը պատճառ եղող դէպքերը մանրամասն պատմեց ։ Վերջը չորս Սև Կղզիներու թագաւորն իրեն որդեգիր ընելը յայտնեց, քանի որ յանձն առեր էր մեծ թագաւորութիւն մը թողուլ և իրեն հետ գալով մէկտեղ ապրիլ ։ Վերջապէս ամենուն հաւատարմութիւնը վարձատրելու

համար ըստ աստիճանի ամէն մէկուն զատ զատ պարգևներ շնորհեց ։

Իսկ ձկնորսին, որ նորատի իշխանին ազատութեան առաջին պատճառն էր, սուլթանը մեծ հարստութիւններ պարգևեց և իր կենացը մէջ ընտանեօք երջանիկ ըրաւ ։

ԵՐԵՔ ԱՐՔԱՅԱԶՆ ԳԱԼԷՆՏԷՐՆԵՐՈՒ ԵՒ ՊԱՂՏԱՏՈՒ ՀԻՆԳ ԿԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վեհափառ տէր, ըսաւ Շէհէրազատ խօսքը սուլթանին ուղղելով, Հարուն-ալ-Րաշիտ անուանով ամիրապետին իշխանութեան օրով Պաղտատու մէջ, որ իր մայրաքաղաքն էր, բեռնակիր մը կար, որ թէև անարգ և տաժանելի պաշտօն մը կը վարէր, սակայն ուշիմ և զուարթերես մարդ մ'էր ։ Առտու մը, երբ իր սովորութեանը համեմատ, մեծ կողով մը քովը դրած տեղ մը կ'սպասէր որ մէկը զինքը գործի կանչէ, նորատի վայելչակազմ տիկին մը, որ գլուխը բեհեզեայ մեծ քօղ մը ծածկեր էր, անոր մօտեցաւ և շնորհալի կերպով մ'ըսաւ . «Ինձ նայէ, կողովդ առ ետևէս եկուր ։» Բեռնակիրը կնկան այս քանի մը հաճելի խօսքերուն վրայ զմայլելով, շուտ մ'իր կողովն առաւ, գլխուն վրայ դրաւ, կնկան ետևէն գնաց սա խօսքն ըսելով . «Ի՜նչ երջանիկ օր, ի՜նչ բաղդաւոր հանդիպում ։»

Նախ տիկինը գոց դրան մ'առջևը կանգ առաւ ու զարկաւ ։ Երկայն սպիտակ մօրուքով պատկառելի քրիստոնեայ մը դուռը բացաւ և տիկինն առանց խօսք մ'ըսելու անոր ձեռքը ստակ տուաւ ։ Բայց քրիստոնեայն որ անոր ուզածը գիտէր, ներս մտաւ և քիչ մ'ետքը մեծկակ կուժ մ'ընտիր գինի բերաւ . «Ա՛ռ սա կուժն, ըսաւ տիկինը բեռնակրին և կողովիդ մէջ դիր ։» Այս ընելէն ետև, հրամայեց անոր որ ետևէն գայ և ինքն իր ճամբան շարունակեց՝ մինչդեռ բեռնակիրն ան-

դադար սա խօսքը կ՚ըսէր . «Ի՜նչ երանաւէտ օր , ի՜նչ հիանալի և ուրախառիթ օր :»

Տիկինը պտղավաճառի և ծաղկավաճառի մը կրպակին առջևը կեցաւ , տեսակ տեսակ խնձոր , ծիրան , դեղձ , սերկեւիլ , լիմոն , կիտրոն , նարինջ , մուրտ , շահսպրամ , շուշան , յասմիկ և ուրիշ պէս պէս անուշահոտ ծաղիկներ և բոյսեր ընտրեց , և բեռնակիրին ըսաւ որ ամէնն ալ իր կողովին մէջ դնէ և իրեն ետևէն երթայ : Մսավաճառի մ՚առջևէն անցնելով՝ հրամայեց որ քսան և հինգ լիտր ամենէն լաւ միսէն քաշէ , և այս միսն ալ կնկան հրամանին համեմատ բեռնակիրը կողովին մէջ դրաւ : Ուրիշ խանութէ մ՚ալ կապար , նուշիկ , մանր վարունգներ , քարբեկ և ուրիշ կանաչեղէններ առաւ , որոնք ամէնն ալ քացախի մէջ պատրաստած էին , դարձեալ ուրիշ խանութէ ալ՝ պիստակ , ընկոյզ , կաղին , սոձի պիստակ , նուշ և ասոր նման միրգեր առաւ : Բեռնակիրն այս ամէն բաները կողովին մէջ դնելով , դիտեց որ կը լեցուէր և կնկան ըսաւ . «Իմ բարի տիկին , պէտք էր առաջուց իմացնել ինծի որ այսչափ ուտելիք պիտի առնուս , որպէս զի ձի մը , կամ լաւ ևս ուղտ մը բերէի որ ասոնք տանի : Այն ատեն , այս բեռէն աւելի կրնայի կրել , եթէ ուրիշ բաներ ալ ծախու առնէիր :» Տիկինն այս կատակին վրայ ծիծաղեցաւ , և բեռնակիրին հրամայեց նորէն որ իրեն հետևի :

Անկէ վերջը դեղավաճառի մը խանութը մտաւ , և ամէն տեսակ հոտաւէտ համեմներէն առաւ , ինչպէս , մեխակ , մշկահոտ , պղպեղ , կոճապղպեղ , սպիտակ սաթի կտոր մը և Հնդկաստանի ուրիշ շատ մը նպարներ՝ որով բեռնակիրին կողովը լիովին լեցուեցաւ , և տիկինը դարձեալ բեռնակիրին ըսաւ որ իր ետևէն երթայ : Այն ատեն միասին քալեցին մինչև որ փառաւոր ապարան մը հասան , որուն ճակատը գեղեցիկ սիւներով զարդարուած էր և փղոսկրէ դուռ մ՚ունէր : Անոր առջևը կեցան և տիկինը կամաց մը զարկաւ :

Երբ ապարանին դրան բացուելուն կ՚սպասէին , բեռնակիրը մեծ մտմտուքի մէջ էր : Կը զարմանար որ իր տեսած կնկան պէս կին մը մատակարարի գործ ընէ . վասն զի քաջ կը դատէր որ նա գերի չէր . անոր կերպարանքը շատ ազնիւ կը գտնէր և չէր կրնար մտածել որ ա-

զատ կին մը չըլլայ , մանաւանդ բարձրաստիճան անձ մը : Շատ կը փափաքէր հարց ու փորձ ընելով իմանալու թէ ինչ կարգի կին է , բայց այն միջոցին որ կը պատրաստուէր անոր խօսելու , ուրիշ կին մը , որ եկաւ դուռը բանալու , իրեն այնքան գեղանի երևցաւ , որ ապուշ կրթած մնաց , կամ լաւ ևս , անոր հրապոյրներէն այնքան սաստիկ շուարեցաւ որ քիչ մնաց իր կողովը մէջքիններովը գետին պիտի ձգէր , այնչափ այս էակն իր խելքն առաւ : Բնաւ իր առջևն եղող կնկան պէս գեղեցիկ անձ մը չէր տեսած :

Բեռնակիրին հետ եկող կինն անոր սրտին մէջ անցած յուզմունքն և անոր պատճառը դիտեց : Այս բանս զինքը զուարճացուց , և այնքան կ՚ախորժէր բեռնակիրին կերպարանքը նայելով՝ որ դրան բացուիլը մոռցաւ : «Ներս մտիր , քոյր իմ , ըսաւ գեղանի դռնապանուհին , ինչո՞ւ կ՚սպասես : Չե՞ս տեսներ որ այս խեղճ մարդն անանկ բեռնաւորուած է որ հազիւ բերանն եկեր է :»

Երբ բեռնակիրին հետ ներս մտաւ , դուռը բացող կինը զայն գոցեց , և երեքն ալ աղուոր գաւթէ մ՚անցնելէն ետև՝ մեծ բակ մը մտան , որուն բոլորտիքը վանդակապատ ճեմելիներ կային որ դեռնէ փառաւոր սենեակներու հետ հաղորդակցութիւն ունէին : Այս բակին խորը , ճոխ բազմոց մը կար , մէջ տեղն ալ սաթէ աթոռ մը , որուն նեցուկներն էին յատին ծայր խոշոր մարգարտէ և անգամանդէ զարդարուած չորս եբենոսէ սիւներ , և վրան Հնդկաստանի գեղեցկակերտ ոսկեհուռ կարմիր սնդուս մը ձգուած էր : Բակին մէջ տեղն աւազան մը կար , չորս դին սպիտակ մարմարիոններ , և մէջը վճիտ ջրով լի , որ ոսկեզօծ պղնձէ առիւծի մը ռունգէն առատ կը հոսէր :

Բեռնակիրն իր ծանր բեռին չնայելով՝ այս տան շքեղութեան և տիրած մաքրութեան վրայ կ՚զմայլէր կը մնար . սակայն ամէն բանէ աւելի իր ուշադրութիւնը գրաւողն եղաւ , երրորդ տիկին մ՚որ երկրորդէն աւելի գեղանի երևցաւ աչքին և արդէն ըսած գահին վրայ բազմեր էր : Այս տիկինը միւս երկուքը տեսնելուն վար իջաւ և զանոնք դիմաւորեց : Բեռնակիրը՝ միւսներուն մատուցած յարգանքէն հասկցաւ որ այս երրորդ տիկինը գլխաւորն էր , և բեռնակիրը չէր սխալէր այս

մասին ։ Այս տիկինը Զիւպէյտէ կը կոչուէր , դուռը բացող կնկան անունն էր Սաֆիէ , իսկ Էմինէն ալ ուտելիք դնող կնկան անունն էր ։

Զիւպէյտէ միւս երկու կանանց քով երթալով ըսաւ . «Քոյրերս , չէ՞ք տեսներ որ սա խեղճ մարդը բեռին տակ կը ճզմուի ։ Ինչու համար անոր բեռը վար չէք առներ ։» Այն ատեն Էմինէ և Սաֆիէ կողմն առին , մին առջևի կողմէն , միւսն ետևէն բռնելով ։ Զիւպէյտէն ալ օգնեց , և սկսան պարպել , և երբ այս գործը լմնցաւ , սիրասուն Էմինէ ստակ հանեց և բեռնակրին առատօրէն վճարեց ։

Բեռնակիրն՝ որ շատ գոհ էր , կողմն առնլով մեկնիլ պէտք էր , բայց ոտքն առաջ չէր երթար . ակամայ զինքը կարծես թէ նոյն վայրը կը կեցնէին սոյն հազուագիւտ գեղեցիկ կիները դիտելու համար , որ միօրինակ իրեն գեղանի կ՚երևէին . վասն զի Էմինէն ալ իր քօղը հաներ էր , և բեռնակիրն անոր գեղեցկութիւնը մէկալներէն վար չէր գտներ ։ Բայց մէկ բանի խելք չէր կրնար հասնիլ , այս տան մէջ մարդ մը չէր տեսներ ։ Սակայն իր բերած ուտելիքներէն մեծ մասն , ինչպէս չոր պտուղներ , և զանազան կարկանդակներն ու անուշեղէնները միայն խմելու և զուարճանալու մարդոց բերնին յարմար էին ։

Զիւպէյտէ նախ կարծեց թէ բեռնակիրը շունչ առնլու համար կեցեր էր , բայց տեսնելով որ չափէն աւելի կը կենար . «Ինչի՞ կ՚սպասես , ըսաւ անոր , միթէ վարձքն աւելօքը չառի՞ր ։ Քոյր իմ , յարեց նա , Էմինէին դառնալով՝ քիչ մ՚ալ ստակ տուր այս մարդուն , որ ուրախ զուարթ իր գործին երթայ ։ — Տիկին , պատասխանեց բեռնակիրը , ստակի պատճառաւ չեմ կենար , իմ աշխատութեանս վարձքն աւելօք առի ։ Կը նայիմ որ այս տեղ պէտք եղածէն աւելի մնալով անքաղաքավարութիւն մ՚ըրի , բայց յուսամ որ այս անխոհեմութեանս կը ներէք , վասն զի կը զարմանամ որ այս երեք անման կանանց մարդ մը չեմ տեսներ ։ Առանց մարդու կանանց ընկերութիւն մը տխուր բան մի է որչափ տխուր է մարդոց ընկերութիւն մ՚առանց կանանց ։» Այս խօսքերուն ուրիշ աւելի հաճելի խօսքեր յարեց , իր ըսածը հաստատելու համար ։ Մոռցաւ յիշելու ինչ որ Պաղտատու մէջ կ՚ըսէին թէ՝ Լաւ բան չէ սեղան նստիլ եթէ չորս հոգի չկան , և վերջապէս խօսքը

լմնցուց հետևցնելով՝ թէ ըստ որում երեք հոգի են չորրորդի մ՚ալ պէտք ունին ։

Տիկինները բեռնակրին բանադատութեան վրայ սկսան ծիծաղիլ ։ Այնուհետև Զիւպէյտէ ծանր դէմքով մ՚անոր ըսաւ ։ «Բարեկամ , կարծեմ թէ քիչ մը չափէն աւելի անխոհեմութիւն կ՚ընես , և թէև արժանի չես որ քեզի հետ խօսքի բռնուիմ , սակայն դարձեալ կ՚ուզեմ յայտնել թէ երեք քոյր ենք , և մեր գործերն այնքան ծածուկ կը կատարենք , որ մարդ մը չիմանար ։ Մեծ հոգ կը տանինք որ մեր գաղտնիքն անխոհեմ մարդոց չըսենք , և բարի հեղինակ մը , որուն գիրքերը կարդացած եմ , կ՚ըսէ . Գաղտնիքդ պահէ , և ուրիշի մի յայտներ . ով որ յայտնէ այլ անոր տէրը չմնար ։ Եթէ սիրտդ չէ կարող գաղտնիքդ պահել , ինչպէս կարելի է որ գաղտնիքիդ հաղորդ եղողը պահէ ։»

— Տիկիններ , կրկնեց բեռնակիրը , ձեր դէմքէն միայն հասկցայ որ խիստ արժանաւոր անձեր էք , և կը նայիմ որ չեմ սխալեր ։ Թէև բաղդն իս այնչափ հարուստ ըրած չէ որ այժմեան պաշտօնէս աւելի բարձր պաշտօնի մը հասնիմ , բայց դարձեալ իմ միտքս ձեռքէս եկածին չափ մշակեցի , գիտութեան և պատմութեան գիրքեր կարդալով . և խնդրեմ , ներեցէք ինձ ըսել որ ուրիշ հեղինակի մը գործին մէջ կարդացի առած մը զոր միշտ յաջողութեամբ գործ դրած եմ . «Մեր գաղտնիքը , կ՚ըսէ , մինակ ամենէն իբրև անխոհեմ ճանչցուած մարդիկներէն կը պահենք , որոնք մեր վստահութիւնը չարաչար կը գործածեն . բայց ամենևին չենք դժարիր իմաստուններուն յայտնելու , վասն զի համոզուած ենք որ անոնք մեր գաղտնիքը ծածուկ պահելու պիտի ջանան ։» Իմ քովս գաղտնիքն այնպիսի ապահովութեան մէջ կը գտնուի , իբր թէ բանալին կորսուած և դուռը կնքուած սնտուկի մը մէջ փակուած ըլլար ։

Զիւպէյտէ հասկցաւ որ բեռնակիրն անխելք մարդ մը չէ , բայց մտածելով որ իրենց ընելիք կոչունքին մասնակից ըլլալ կ՚ուզէ , ժպտելով պատասխան տուաւ անոր . «Գիտես որ մենք կոչունքի մը կը պատրաստուինք , բայց գիտես միանգամայն որ խիստ մեծ ծախսեր ըրինք , ուստի իրաւունք չէ՝ որ առանց ծախուց մասնակից ըլլալու »

մեզի հետ սեղան նստիս ։» Գեղանի Սաֆիէն իր քրոջը կարծիքը հաստատեց ։ «Բարեկամ, ըսաւ բեռնակրին, միթէ սա առածը լսած չե՞ս որ հասարակ դարձած է . Եթէ բան մը կը բերես մեզի, մեզի հետ գործ ունիս, եթէ բան մը չես բերեր, առանց բան մը առնելու ետ դարձիր ։»

Բեռնակիրն՝ իր բոլոր ճարտարութեան հանդերձ՝ կարելի է ստիպուէր դուրս ելնելու ամօթապարտ՝ թէ որ Էմինէն՝ իր կողմը բռնելով եռանդագին, Զիւպիտէին և Սաֆիէին չըսէր ։ «Սիրելի քոյրս, կ'աղաչեմ թող տուէք որ մեզի հետ մնայ . աւելորդ է ըսել որ մեզ պիտի զուարճացնէ, կը տեսնէք որ այդ բանին կարող է ։ Ճշմարիտը կ'ըսեմ որ եթէ ինքը բարեյօժարութիւն, թեթևաշարժութիւն և ոյժ չունենար ետևէս գալու համար, չպիտի կարենայի այնչափ քիչ ժամանակի մէջ այնչափ պաշար ծախու առնուլ ։ Մանաւանդ, եթէ ճամբան ինծի ըսած անուշ խօսքերը ձեզի կրկնելու ըլլամ, անշուշտ չպիտի զարմանայիք ըրած պաշտպանութեանս վրայ ։»

Էմինէին այս խօսքերուն վրայ՝ բեռնակիրն ուրախութենէ շուարած՝ ծնկի վրայ եկաւ և այն չքնաղ անձին կոխած հողը համբուրեց, վերջն ոտք ելնելով . «Սիրելիդ իմ տիկին, ըսաւ անոր, դու իմ երջանկութիւնս այսօր սկսար, անոր չափը կը լեցնես այս վեհանձն գործովդ . բառ չունիմ իմ երախտագիտութիւնս քեզ յայտնելու ։ Սակայն, տիկիններ, յարեց բեռնակիրը, խօսքն երեք քոյրերուն ուղղելով, քանի որ այսպիսի մեծ պատիւ մը կ'ընէք ինծի, մի կարծէք թէ զայն չարաչար պիտի գործածեմ, և թէ անոր արժանի մարդ մը կը սեպեմ ինքզինքս, ոչ, միշտ ինքզինքս ձեր գերիներուն ամենէն ստորինը պիտի համարիմ ։» Այս խօսքերն աւարտելով՝ ընդունած ստակն ուզեց ետ տալ, բայց ծանրագլուխ Զիւպիտէ հրամայեց որ նոյն դրամը քովը պահէ ։ «Ինչ որ անգամ մը մեր ձեռքէն ելնէ, ըսաւ նա, մեզի ծառայութիւն ընողները վարձատրելու համար, նորէն մեզի չդառնար ։ Կը հաւանինք որ մեզի հետ մնաս, սակայն կ'իմացնեմ որ մինակ մեր գաղտնիքը պահելու պայմանը չեմ դներ վրադ, այլ և կը պահանջեմ որ մարդավարութեան և պարկեշտութեան կանոնաց դէմ չվարուիս ։» Այսպէս խօսելու ատեն՝ չքնաղագեղ Էմինէն իր քողքի հա-

գուստը հանեց, պարեգօտը գօտին կապեց որ աւելի ազատ շարժի և սեղանը պատրաստեց ։ Տեսակ տեսակ կերակուրներ մեծարեց և սպասակալի մը վրայ գինիի շիշեր և ոսկի թասեր դրաւ ։ Անկէ ետքը կանայք նստան և բեռնակիրն ալ իրենց քովը նստեցուցին, որ յետին ծայր ուրախ էր իրեն սեղանակից տեսնելով երեք արտաքոյ կարգի գեղեցկութեամբ կիներ ։

Առաջին կերակուրն ուտելէն ետև՝ Էմինէ, որ սպասակալին մօտ նստեր էր, շիշ մ'ու բաժակ մ'առաւ, լեցուց և Արաբացւոց սովորութեան համեմատ՝ առաջ ինքը խմեց ։ Յետոյ իր քոյրերուն համար լեցուց, որ իրարմէ ետև խմեցին, վերջը նորէն բաժակը չորրորդ անգամ լեցնելով՝ բեռնակիրին մեծարեց, որ բաժակն ընդունելով Էմինէին ձեռքը պագաւ, և խմելէն առաջ երգ մ'երգեց, որուն իմաստը սա էր թէ՝ Ինչպէս որ հովն իր անցած հոտաւէտ տեղերուն անուշ հոտերն իր հետը կը բերէ, նոյնպէս իր խմելիք գինին, իր ձեռքէն գալով՝ բնական համէն աւելի ընտիր համ մը կ'առնայ ։ Այս երգը տիկիններուն շատ հաճելի երևցաւ, և իրենք ալ կարգով երգեցին ։ Վերջապէս ճաշի ժամանակ բոլոր ընկերութիւնը մեծ խնդութեամբ անցուց, և ամէն ախորժելի բաներով զուարճացաւ ։

Արևը մարը մտնելու մօտ էր, երբ Սաֆիէ երեք կանանց կողմէն բեռնակիրին ըսաւ . «Ելիր, գնա՛, երթալու ատեն է ։» Բեռնակիրն անոնցմէ բաժնուիլ չուզելով՝ պատասխանեց . «Տիկիններ, ո՞ւր կը հրամայէք որ երթամ այս վիճակիս մէջ . ձեզ տեսնելով և գինի խմելով ինքզինքս կորուսած եմ . տանս ճամբան չպիտի գտնեմ բնաւ ։ Թողուցէք որ գիշերը հոս անցնեմ և ինքզինքս գտնեմ, ուր որ ուզէք կը պառկիմ . բայց ձեր տունն եղած ատենս գտնուած վիճակիս դառնալու համար բաւական ժամանակի կարօտ եմ, ասկէ զատ՝ կը վախնամ որ իմ անձիս ամենէն ընտիր մասը հոս պիտի թողում ։»

Էմինէ երկրորդ անգամ բեռնակիրին կողմը քաշեց . «Քոյրս, ըսաւ, իրաւունք ունի . չեմ մեղադրեր զինքն այս խնդիրին առաջարկելուն վրայ ։ Մեզ բաւական զուարճացուց . թէ որ ինծի կը հաւատաք, կամ լաւ ևս, եթէ զիս կարծածիս չափ կը սիրէք, պէտք է ներենք որ այս գիշեր այս տեղ մեզի հետ անցնէ ։ — Քոյր իմ, ըսաւ Զիւ-

վխտէ , աղաչանքդ չենք կրնար մերժել ։ Բեռնակիր , ըսաւ , խօսքն անոր ուղղելով՝ կը հաւանինք այս շնորհն ալ քեզ ընել , բայց նոր պայման մ՚ալ կ՚առաջարկենք ։ Քու առջևդ ինչ որ ընենք թէ մեր վը-րայօք և թէ ուրիշին , զգուշ եղիր որ ամենևին պատճառ հարցնելու համար բերանդ չբանաս , ինչու որ քեզի ամենևին չվերաբերող բանե-րուն վրայ մեզի հարցումներ ընելով՝ չուզած խօսքերդ պիտի լսես ։ Աչքդ չորս բաց , և նայէ որ շատ հետաքրքիր չըլլաս մեր գործերուն գլուխները գիտնալու աշխատելով ։

— Տիկին , ըսաւ բեռնակիրը , կը խոստանամ այդ պայմանը պահե-լու այնչափ ճշտութեամբ որ առիթ չպիտի ունենաք յանդիմանելու թէ իբր պարտազանց և ոչ իսկ պատժելու , իբր անխոհեմ ։ Այս պարա-գային մէջ լեզուս անշարժ պիտի մնայ , աչքերս հայելի մը պէս պիտի ըլլան որ իր ընդունած առարկաներէն բան մը չպահեր ։ — Քեզի հասկցնելու համար որ մեր խնդրածը նոր բան մը չէ մեր մէջ , ելիր և գնա կարդա մեր դրան ներսի կողմը գրուած խօսքը ։» Բեռնակիրը մինչև հոն գնաց և սա բառերը կարդաց որ ոսկեղէն տառերով գրուած էին . «Ո՛վ որ իրեն չվերաբերած բաներու վրայ կը խօսի , չուզած խօսքը կը լսէ ։» Վերջն երեք քոյրերուն քովը եկաւ , և անոնց ըսաւ . «Տիկիններ , կ՚երդնում որ ինծի չվերաբերած խօսք մը պիտի չը-նեմ ։»

Այս դաշինքն ընելէն ետև՝ Էմինէ ընթրիքը բերաւ , ու հալուէի և յամպարի փայտէ շինուած մոմերով սրահը լուսաւորելով՝ որ զմայլելի հոտ մը բուրեցին և աղւոր լոյս մը սփռեցին , իր քոյրերուն և բեռնա-կրին հետ սեղանը նստաւ ։ Ամէնքնին ալ սկսան ուտել , խմել , երգել և տաղեր ըսել ։ Տիկինները կը հրճուէին բեռնակիրը գինովցնելով , իրենց կենացը խմել տալու պատրուակաւ . կծու և մտացի խօսքեր դարձան ։ Վերջապէս ամէնքնին ալ ուրախ զուարթ էին , երբ դրան զարնուիլը լսեցին ։

Երեք տիկինները մէկտեղ ոտք ելան որ դուռն երթան բանան , բայց Սաֆիէ՝ որուն կ՚իյնար յատկապէս այս պաշտօնը , միւսներէն ա-ւելի ճարպիկ ըրթաւ . ուստի երկու տիկինները՝ տեսնելով որ ետ մնացին , կեցան և սպասեցին որ գայ և իրենց իմաց տայ թէ այնպէս

ուշ ատեն ո՛վ կրնայ իրենց դուռը զարնել ։ Սաֆիէ ետ դարձաւ ։ «Իմ քոյրերս , ըսաւ , աղւոր առիթ մը կը պատահի այս գիշեր ուրա-խութեամբ անցնելու , և եթէ դուք ալ իմ կարծիքս ունիք , այս առի-թը ձեռքէ չհանենք ։ Մեր դրան առջև երեք գալէնտէր կան , կամ գէթ իրենց հագուստէն այնպէս երևցաւ ինծի . բայց զարմանալին այն է որ երեքնուն ալ աջ աչքը կոյր է , և գլուխնին , մօրուքնին և յօնք-երնին ածիլուած են ։ Դեռ հիմա Պաղտատ հասեր են , կ՚ըսեն , և ու-րովհետև գիշեր է , և առաջին անգամ այս քաղաքը գալով չգիտեն ուր երթան բնակելու , դիպուածով մեր դուռը զարկեր են , և կ՚ա-ղաչեն որ ՚ի սէր Աստուծոյ իրենց վրայ գթալով ներս առնունք ։ Ուր որ ըլլայ պիտի պառկին , և ախոռն ալ տանինք գոհ պիտի ըլլան ։ Տակաւին երիտասարդ և բաւական վայելուչ են , խիստ խելացի մար-դիկ ալ կ՚երևին . բայց անոնց ծաղրալից ու միօրինակ կերպարանը տեսնելով չեմ կրնար խնդուքս բռնել ։» Այս միջոցին Սաֆիէ խօսքը կտրեց և անանկ սրտով սկսաւ ծիծաղիլ , որ միւս երկու տիկիններն և բեռնակիրը չկրցան իրենց ծիծաղը բռնել ։ «Բարի քոյրերս , ըսաւ , Սաֆիէ , չէ՞ք ուզեր որ զանոնք ներս առնունք ։ Անկարելի է որ այս-պիսի մարդիկներով , որոց նկարագիրը ձեզի ըրի , մեր այս օրուան ու-րախութիւնը կատարեալ չընենք ։ Մեզ չափազանց պիտի զուարճացնեն և մեր վրայ բեռ չպիտի ըլլան , քանի որ այս գիշերուան համար մի-այն օթևան կ՚ուզեն , և միտք ունին առտու կանուխ մեկնիլ ։»

Զուպէյտէ և Էմինէ դժուարութիւն ցոյց տուին Սաֆիէին խնդիրը կատարելու , և ասոր պատճառն ինքն ալ լաւ գիտէր . բայց այս շնոր-հը ձեռք բերելու համար այնպիսի մեծ փափաք մը յայտնեց , որ չկրցան մերժել ։ «Գնա՛ , ըսաւ անոր Զուպէյտէ , գնա՛ ներս կանչէ զանոնք , բայց մի՛ մոռնար անոնց ըսելու որ իրենց չընկած բանին վրայ չխօսին , և դրան վրայ գրուածն անոնց կարդացուր ։» Այս խօսքիս վը-րայ , Սաֆիէ ուրախութեամբ վազեց դուռը բանալու , և քիչ մը ետքն , երեք գալէնտէրներուն հետ ներս մտաւ ։

Երեք գալէնտէրները ներս մտնելով խորին ակնածութեամբ բարև-տուին կանանց , որ ոտք ելեր էին զանոնք ընդունելու , անոնց բարի եկաք ըսին , իրենց ուրախութիւնը յայտնեցին որ այս առթիւ անոնց

քարէ պիտի ըլլան և երկար ուղևորութենէ ետքը պիտի հանգստանան , վերջապէս հրաւիրեցին որ գան իրենց մօտ նստին : Տեղւոյս չքնաղութենէն և կանանց պարկեշտութենէ գաղթականներն իրենց հիւրընկալներուն վրայ մեծ կարծիք մ'ունեցան : Բայց նստելէ առաջ , դիպուածով բեռնակրին վրայ աչք նետելով և տեսնելով որ գրեթէ ուրիշ գաղթականներու պէս հագուած է , և որոց հետ վարդապետութեան քանի մը կէտերու մասին վէճի մէջ էին , և իրենց մօրուքն ու ընքուիները չէին ածիլեր , մէջերնէս մէկն այսպէս խօսեցաւ , «Տեսէք սա մարդը՝ կ'երևի թէ մեր արտաքսի ապստամբ եղբայրներէն մէկն է :»

Բեռնակիրն՝ որ կէս քուն էր և խմած գինիէն գլուխը տաքցեր էր , այս խօսքերուն վրայ բարկացաւ , և առանց տեղէն ելնելու , գաղթականներուն պատասխան տուաւ՝ գոռոզաբար անոնց նայելով . «Նստեցէք և ձեզի չընկած բանին մի խառնուիք : Դրան վրայ գրուածը չկարդացի՞ք : Ամէն մարդ ձեր կամացը համեմատ ապրելու մի ստիպէք :»

— Բարեկամ , վրայ բերաւ արդէն խօսող գաղթականը , ընաւ մի բարկանար , շատ պիտի ցաւինք եթէ բարկութեան ամենաթեթև պատճառ մը տանք , ընդ հակառակն պատրաստ ենք հրամաններդ կատարելու :» Կռիւն աւելի պիտի սաստկանար , բայց կինները մէջ մտան և խաղաղութիւնը հաստատեցին :

Երբ գաղթականները տեղերնին նստան , կանայք անոնց ուտելիք մեծարեցին , և խնդամերես Սաֆիէն մանաւանդ հոգ տարաւ անոնց իր ձեռքը գինի տալու որ խմեն :

Գաղթականներն լաւ հանգիստ կեր ու խում ընելէն ետև՝ ըսին կանանց որ մեծ ուրախութիւն պիտի զգան անոնց նուագահանդէս մը տալով՝ եթէ նուագարաններ ունին և տեղ մը բերել տան : Կանայք այս առաջարկութիւնը խնդագին ընդունեցան : Գեղանի Սաֆիէ ելաւ որ նուագարան բերէ : Քիչ մ'ետքը դարձաւ և երկրին մէկ սրինգը , նոյնպէս պարսկական սրինգ մ'ու թմբուկ մը բերաւ : Ամէն մէկ գաղթականէր իր ընտրած նուագարանն անոր ձեռքէն առաւ , և երեքին ալ սկսան եղանակ մը նուագել : Կանայք որ նոյն զուարթագին եղանակին խօսքերը գիտէին , անոնց ձայնակից եղան , բայց ատեն ատեն

բարձրաձայն ծիծաղելով երգերնին կ'ընդմիջէին : Այս զուարճութեան ամենէն անուշ ժամանակին , և երբ բոլոր ընկերութիւնը մեծ ուրախութեան մէջ էր , դուռը զարկին : Սաֆիէ երգը դադրեցուց և գնաց նայելու թէ ով է :

Բայց , վեհափառ տէր , ըսաւ նոյն միջոցին Շէհէրազատ սուլթանին , պէտք է որ գիտնաք թէ ինչու համար ասանկ ուշ ատեն նոյն կանանց դուռը կը զարնէին : Ահաւասիկ պատճառը . Հարուն-ալ-Րաշիտ ամիրապետը սովորութիւն ունէր շատ անգամ գիշերայն ծպտեալ պտըտիլ , որ անձամբ տեսնէ թէ ամէն բան քաղքին մէջ հանդարտ է և անկարգութիւն մը չէր գործուեր :

Այն գիշեր ամիրապետը կանուխ դուրս ելեր էր , իր հետն առնելով Ջէաֆէր մեծ վէզիրն և պալատին Մէսրուր ներքինին , որոնք իբր վաճառական ծպտեալ էին : Երեք կանանց փողոցէն անցնելով իշխանը նուագարաններուն և երգերուն , նոյնպէս բարձրաձայն ծիծաղի ձայները լսեց և վէզիրին ըսաւ . «Գնա՛ , զարկ սա տան դուռն՝ ուր այնքան աղմուկ կը հանեն , կ'ուզեմ ներս մտնել և անոր պատճառն իմանալ :» Վէզիրը պարապ տեղն ուզեց համոզել որ կանացի խնճոյք մ'էր այն , և թէ գինին թերևս գլուխները տաքցուցած է , թէ պէտք չէր որ նախատանաց ենթարկի անոնց կողմէ , թէ անյարմար ժամանակ մի էր , և թէ պէտք չէր անոնց զուարճութիւնը խանգարել : «Հոգ չէ , պատասխանեց ամիրապետը , դուռը զարկ , այս է հրամանս :»

Ուստի ամիրապետին հրամանաւ Ջէաֆէր մեծ վէզիրն էր որ կանանց դուռը կը զարնէր , թէև իշխանը չէր ուզեր ճանչցուիլ : Սաֆիէ դուռը բացաւ , և վէզիրն , անոր բռնած մոմին լուսովը դիտելով որ չափազանց գեղեցիկ կին մ'է , իր դերը շատ լաւ խաղաց . Ակնածութեամբ ողջոյն տուաւ և յարգական կերպով մ'անոր ըսաւ . «Տիկին , Մուսուլի երեք վաճառականներ ենք , գրեթէ տաս օրէ վեր եկեր ենք , ճոխ ապրանքներ ունինք մեր օթևանաց խանին մթերանոցն : Այսօր քաղքին մէկ վաճառականէն հրաւիրուելով իր տունը գացինք : Մեզի հացկերոյթ մը տուաւ , և որովհետև գինին զուարթութիւն տուեր էր մեզ , խումբ մը պարուհիներ բերել տուաւ : Արդէն գիշեր եղեր էր , և այն միջոցին որ նուագարանները կը խաղա-

ցին , պարուհիները կը կաքաւէին և ընկերութիւնը մեծ աղմուկ մը կը հանէր , գիշերապահ զօրքերն անցան և դուռը բանալ տուին ։ Ընկերութեան կոչնականներէն մէկ քանին բռնուեցան . իսկ մենք յաջողութեամբ պատէ մ՚անցնելով փախանք . բայց որովհետև , յարեց վէզիրն , օտարականներ ենք , և քիչ մ՚ալ արբած , կը վախնանք որ քաղաքապահ զօրաց ուրիշ գնդի մը չհանդիպինք , կամ թէ նոյնին , մեր խանը հասնելէն առաջ՝ որ ասկէ հեռու է ։ Բայց անօգուտ տեղն ալ մեր օթևանը գացած պիտի ըլլանք , վասն զի դուռը գոց է , և մինակ վաղն առտու պիտի բացուի , ինչ որ պատահելու ալ ըլլայ ։ Ուստի , տիկին , ասկէ անցնելու ատեն նուագարաններ և ձայներ լսելով մտածեցինք որ տակաւին պառկած չէք և համարձակեցանք դուռը զարնելու , որպէս զի աղաչենք որ մինչև վաղուան համար մեզի պատսպարան մը տայիք ։ Եթէ ձեր զբօսանաց մասնակից ըլլալու արժանի կը դատէք մեզ , մեր ձեռքէն եկածին չափ ձեզի աջակից պիտի գտնուինք , որ մեր պատճառած դադարման տեղը լեցնենք , թէ ոչ շնորհ ըրէք միայն հրաման տալու որ այս գիշեր ձեր յարկին տակ անցընենք ։»

Ճեաֆէր այս խօսքերն ըսելու ատենը , գեղանի Սաֆիէն ժամանակ գտաւ՝ վէզիրն և իրեն պէս վաճառական եղող երկու անձինքը դիտել . անոնց կերպարանքէն կը հասկնար որ անշան մարդիկ չէին . անոնց ըսաւ թէ ինքը տան տիրուհին չէ , և եթէ պահ մը համբերելու կը զիջանին , պիտի դառնայ պատասխանը տալու ։

Սաֆիէ գնաց բանն իր քոյրերուն իմաց տալու , որ պահ մը վարանեցան թէ ինչ ընթացք բռնեն ։ Բայց բնականապէս բարեսէր էին , և նոյն շնորհը տուեր էին նաև երեք գալէնտէրներուն ։ Ուստի որոշեցին որ թոյլ տան անոնց ներս գալու ։

Ամիրապետն , իր մեծ վէզիրն և ներքինապետը՝ Սաֆիէին առաջնորդութեամբը ներս մտնելով տիկիններն ու գալէնտէրներն ողջունենեցին մեծ մարդավարութեամբ ։ Կանայք մի և նոյն կերպով ընդունեցան զանոնք , կարծելով թէ վաճառական են . իսկ Զէպիտէ , իբր տան մեծն , իր յարմար ծանր և հանդարտ կերպովը ըսաւ . «Բարի առաքեցաք , բայց ամէն բանէ առաջ մի դժկամակիք եթէ ձեզմէ

շնորհ մը պիտի խնդրենք ։ — Ի՛հ , ի՞նչ շնորհ կը խնդրէք , տիկին , պատասխանեց վէզիրը ։ Մի՞թէ կարելի՞ է բան մը մերժել ասանկ գեղանի կանանց ։ — Մեր խնդիրը սա է , վրայ բերաւ Զէպիտէ , որ աչքեր ունենաք և ոչ լեզու , մեզի ձեր տեսած բաներուն վրայ հարցումներ չընէք պատճառն իմանալու համար , և ընաւ ձեզի չվերաբերող բաներու վրայ չխօսիք , որպէս զի ձեր չախորժածն ալ չլսէք ։ — Ձեզի պիտի հնազանդինք , տիկին , վրայ բերաւ վէզիրն ։ Ոչ դատաքննիչ ենք և ոչ անխոհեմ հետաքրքիր մարդիկ , բաւական է որ մենք մեր գործին նայինք , առանց ուրիշին գործերուն խառնուելու ։» Այս խօսքիս վրայ , ամէն մարդ իր տեղը նստաւ , խօսակցութիւնն սկսաւ , և նոր եկողներուն կենաց գինի խմեցին ։

Մինչդեռ Ճեաֆէր վէզիրը կանանց հետ կը խօսակցէր , ամիրապետն անդադար անոնց տարօրէն գեղեցկութեան , շէն շնորհին , զուարթութեան և ուշմտութեան վրայ կ՚զմայլէր ։ Միւս կողմէն իրեն զարմանք կը պատճառէին գալէնտէրներն որոնք կոյր էին աջ աչքով ։ Փափաք ունէր այս տարօրինակ բանին վրայ հարց ու փորձ ընել , բայց իրեն և ընկերներուն վրայ դրուած պայմանը կ՚արգիլէր խօսելու ։ Ասկէ զատ՝ երբ կահ կարասեաց ճոխութեան , ընտիր կարգադրութեան և տան մաքրութեան վրայ կը մտածէր , անկարելի էր իրեն կասկածիլ որ այս ամէն բաներու մէջ կախարդութիւն մը կայ ։

Խօսակցութիւնը զուարճութենէ և զանազան խաղերու դառնալով գալէնտէրներն ոտք ելան և իրենց կերպովը պար մը պարեցին , որով կանանց բարի կարծիքն անոնց վրայ աւելի աւելցաւ , և միանգամայն ամիրապետին և բոլոր ընկերութեան համարումը գրաւեցին ։

Երբ երեք գալէնտէրներն իրենց պարն աւարտեցին , Զէպիտէ ոտք ելաւ և Էմինէին ձեռքէն բռնելով «Քոյր իմ , ըսաւ անոր , եկուր , ընկերութիւնը չմեղադրեր մեզ անշուշտ եթէ ազատ համարձակ զբօսնունք , և անոր ներկայութիւնը չկրնար արգիլել ինչ որ սովոր ենք ընելու ։» Էմինէ՝ որ իր քրոջ ըսածը հասկցաւ , ոտք ելաւ և սինիները , սեղանը , սրուակները , թասերն և բոլոր նուագարանները , որով գալէնտէրները կը խաղային , առաւ տարաւ ։

Սաֆիէ ալ անգործ չնստաւ . սրահն աւլեց , ամէն բան կարգի

դրաւ , ամենուն քիթը կտրեց , և ուրիշ հալուէ ու հոտաւէտ խնկեր ծխեց ։ Այս ընելէն ետքն՝ երեք գալէնտէրներն աղաչեց որ բազմոցին մէկ կողմը նստին , և ամիրապետն ալ իր ընկերներովը միւս կողմը ։ Իսկ բեռնակրին ըսաւ . «Ոտք ելիր , և մեր ընելիք բաներուն օգնէ . քեզի պէս մարդ մ՚որ տանէն է , պէտք չէ որ անգործ նստի ։»

Բեռնակիրը քիչ մը գինիէն սթափեր էր . շուտ մ՚ոտք ելաւ , և պատմուճանին ծայրը գօտիին կապելէն ետքն՝ «Ահաւասիկ պատրաստ եմ , ըսաւ , ինչ կ՚ուզես որ ընեմ ։ — Շատ աղէկ է , պատասխան տուաւ Սաֆիէ , սպասէ քիչ մ՚որ ըսեմ , երկար ատեն թեւերդ կապած չպիտի մնաս ։» Քիչ մ՚ետքն՝ Էմինէն երեւցաւ աթոռով մը՝ զոր սրահին մէջ տեղը դրաւ ։ Վերջը դահլիճին դուռը գնաց և բանալով՝ բեռնակրին նշան ըրաւ որ մօտենայ ։ «Եկուր , ըսաւ անոր , և օգնէ ինձ ։» Բեռնակիրը հնազանդեցաւ , և անոր հետ սենեակը մտնելով՝ պահ մ՚ետքը դուրս ելաւ , որուն ետեւէն երկու սեւ մատակ շներ կը գային , որոց ամէն մէկը մանեակ մ՚ունէր շղթայէ մը կապուած և շղթան բեռնակիրը բռներ էր , իսկ շները կարծես թէ սաստիկ ծեծ կերեր էին մտրակով ։ Բեռնակիրը սոյն շուներուն հետ սրահին մէջ տեղը եկաւ կեցաւ ։

Այն ատեն Զօպէիտէ , որ գալէնտէրներուն և ամիրապետին մէջ տեղը կեցեր էր , ոտք ելաւ և մինչև բեռնակրին եղած տեղը ծանրաքայլ գնաց ։ «Եկէք նայիմ , ըսաւ նա խորին հառաչ մը հանելով , կատարենք մեր պարտքը ։» Թեւերը մինչև արմուկները սոթթեց , և Սաֆիէին տուած մտրակն առնելով . «Բեռնակիր , ըսաւ , այդ երկու քածերուն մին Էմինէ քրոջս յանձնէ , և միւսով ինծի մօտեցիր ։»

Բեռնակիրն այս պատուէրը կատարեց , և երբ Զօպէիտէին մօտ եկաւ , ձեռքը բռնած շունն սկսաւ հաչել , դէպ 'ի Զօպէիտէին դարձաւ և աղերսալի կերպով մը գլուխ վերուց ։ Բայց Զօպէիտէ , առանց շան խղճալի կերպարանին ուշադրութիւն ընելու , և ոչ ձայնին որով տունը կը թնդէր , մտրակով շունչը կտրելու չափ ծեծեց , և երբ ոյժը հատաւ և կարողութիւն չունէր աւելի զարնելու , մտրակը գետինը

նետեց . յետոյ՝ բեռնակրին ձեռքէն շղթան առնելով՝ շան թաթերէն բռնեց վերուց , և երկուքնին ալ տխուր և սրտաշարժ կերպով մ՚իրարու երես նայելով՝ երկուքնին ալ լացին ։ Վերջապէս , Զօպէիտէ իր թաշկինակը հանեց , շան արտասուքը սրբեց , զայն պագաւ , և շղթան բեռնակրին յանձնելով . «Առ , ըսաւ անոր , տարած տեղդ տար , և միւսն ինծի բեր ։»

Բեռնակիրը գանակոծ շունը դահլիճը տարաւ , և Էմինէին ձեռքէն միւսն առաւ , եւ դառնալու ատենն , ու ներկայացուց Զօպէիտէին որ կ՚սպասէր նոյն տեղն ։ «Առաջինին պէս բռնէ» ըսաւ անոր ։ Յետոյ մտրակն առնելով նոյն կերպով զանի թակեց ։ Վերջն անոր հետ լացաւ , արտասուքը սրբեց , զայն պագաւ , և բեռնակրին յանձնեց . իսկ սիրանուշ Էմինէն բեռնակրին ծանրութիւն չըլլալու համար շունն առաւ և ինքը տարաւ ։

Սակայն երեք գալէնտէրներն , ամիրապետն և իր ընկերները յետին ծայր զարմացան այս գործողութեան վրայ ։ Չէին կարող ըմբռնել թէ ինչպէս Զօպէիտէ , երկու քածերն , որ՝ մահմէտական կրօնին նայելով պիղծ կենդանիներ էին , մտրակելէն ետև՝ անոնց հետ լայ , արտասուքնին սրբէ և պագնէ ։ Այս բանին վրայ առանձին տրտնջացին ։ Մանաւանդ ամիրապետն , որ միւսներէն աւելի անհամբեր էր , կ՚եռար կը մրկէր այսանկ տարօրինակ գործի մը պատճառն իմանալու , և անդադար նշան կ՚ընէր վէզիրին որ հարց ու փորձ ընէ հասկնայ ։ Բայց վէզիրը միւս կողմը կը դարձնէր գլուխը , մինչև որ կրկին և կրկին ըրած նշաններէն ստիպուելով՝ պատասխան տուաւ որ իր հետաքրքրութիւնը գոհ ընելու ատենը չէր ։

Զօպէիտէ քանի մը վայրկեան սրահին մէջ նոյն տեղը կեցաւ որպէսզի շները ծեծելով առած յոգնութենէ քիչ մը դադրի ։ Սիրելի քոյրիկ , ըսաւ անոր գեղանի Սաֆիէն , միթէ չե՞ս հաճիր տեղդ դառնալու , որպէս զի ես ալ կարգաւ իմ դերս խաղամ ։ — Այո՛» պատասխանեց Զօպէիտէ ։ Այս ըսելով՝ գնաց բազմոցին վրայ նստաւ , աջ կողմն էին ամիրապետը , Ճէաֆէր և Մէսրուր , և ձախ կողմն՝ երեք գալէնտէրներն և բեռնակիրը ։

Երբ Զօպէիտէ դարձաւ իր տեղը նստաւ , բոլոր հանդիսականները

պահ մը լռութիւն պահեցին ։ Վերջապէս Սափիէ, որ սրահին մէջ սեղաթոռի մը վրայ նստեր էր, իր Էմինէ քրոջն ըսաւ. «Իմ սիրելի քոյրս, կ՚աղաչեմ, առ ելիր, կը հասկնաս ինչ ըսել կ՚ուզեմ ։» Էմինէ ոտք ելաւ, և չիներուն գործուած սնտուկէն տարբեր սնտուկ մը գնաց ։ Անկէ դարձաւ, գեղնով պատած և ոսկեթել մետաքսով բանուած պահարանով մը ։ Սափիէին մօտեցաւ, և պահարանը բացաւ, որուն մէջէն տուփ մը հանեց և անոր տուաւ ։ Սափիէ առաւ զայն, և քանի մը վայրկենի մէջ լարելէն ետև՝ սկսաւ զարնել, եղանակին ձայնակից ըլլալով՝ և հեռաւորութեան տանջանաց վրայ երգ մ՚երգեց, այնպիսի սիրալիր կերպով մ՚որ ամիրապետն և միւս հանդիսականները զմայլեցան միանգամին ։ Երբոր վերջացուց, որովհետև շատ եռանդով և աշխուժով երգեր էր. «Ու նայիմ, քոյր իմ, ըսաւ սիրանուշ Էմինէին, չեմ կարող աւելի շարունակել, ձայնս մարեցաւ. իմ տեղս խաղալով ու երգելով ընկերութիւնը զուարճացուր ։ — Յօժարակամ» պատասխան տուաւ Էմինէ, Սափիէին մօտենալով, որ տաւիղն անոր ձեռքը յանձնեց և իր տեղը տուաւ ։

Էմինէ, տեսնելու համար որ նուագարանը լարուած է, քանի մը ձայներ հանեց, և ապա սկսաւ նոյն նիւթին վրայ նուագել ու երգել, բայց այնպիսի խանդով, և այնպէս այլայլեր, կամ լաւ ևս ըսել, իր երգած երգին իմաստին անանկ վառեր բորբոքեր էր, որ աւարտելու ժամանակ ուժաթափ մնաց ։

Զիւլիխէ իր գոհունակութիւնն անոր յայտնել ուզեց. «Քոյր իմ, ըսաւ անոր, սքանչելի կերպով երգեցիր. յայտնի է որ այդչափ աշխուժիւ բացատրած ցաւերդ կ՚զգաս ։» Էմինէ ժամանակ չունեցաւ այս քաղաքավարութեան պատասխան տալու. նոյն պահուն սիրտն այնքան ճնշուած էր, որ քիչ մը հով առնուլ ուզեց և բոլոր ընկերութեան առջև բացաւ վիզն ու ծոցն, որ ակնտակ չէին, ինչպէս Էմինէի պէս կին մը պէտք էր ունենալ, այլ վէրքերով սեւցած. այս բանս բոլոր հանդիսականներուն տեսակ մը սոսկում ազդեց ։ Սակայն ասով ալ չզովացաւ և ակամայ գետին ընկաւ մարեցաւ ։

Մինչդեռ Զիւլիխէ և Սափիէ իրենց քրոջ օգնութեան վազեցին, գալէնտէրներէն մէկը չկրցաւ համբերել ու ըսաւ. «Աւելի աղէկ ու-

նէինք բաց օդին պառկիլ քան թէ այս տեղ գալ, եթէ գիտնայինք որ ասանկ տեսարաններու ականատես պիտի ըլլանք ։» Ամիրապետն որ այս խօսքը լսեց, անոր մօտեցաւ նոյնպէս միւս գալէնտէրներուն ու ըսաւ. «Ի՞նչ կը նշանակեն այս բաները ։» Արդէն խօսողն անոր պատասխանեց. «Տէր իմ, մենք ալ ձեզի պէս այս մասին բան մը չգիտենք ։ — Ինչ, վրայ բերաւ ամիրապետը, միթէ դուք այս տունէն չէ՞ք ։ Չէ՞ք կրնար մեզի յայտնել թէ ինչ են այն երկու սև մատակ շուներն, և այն անարժանապէս գանակոծ եղած կինը ։ — Տէր իմ, պատասխան տուին գալէնտէրներն, երբէք այս տունն եկած չենք, և միայն ձեզմէ քանի մը վայրկեան առաջ այս տեղ մտանք ։»

Այս բանս ամիրապետին զարմանքն աւելցուց ։ «Կարելի է, պատասխան տուաւ նա, որ ձեզի հետ եղող սև մարդը կրնայ մեզի տեղեկութիւն մը տալ ։» Գալէնտէրներէն մէկը բեռնակրին նշան ըրաւ որ մօտենայ, և հարցուց թէ արդեօք գիտէ՞ թէ ինչո՞ւ համար սև շները ծեծ կերան, և ինչո՞ւ համար Էմինէին կուրծքը վիրալի էր ։ «Տէր իմ, պատասխան տուաւ բեռնակիրը, կրնամ կենդանի Աստուծոյ վրայ երդում ընել, որ, ինչպէս դուք, մենք ալ բան մը չենք գիտեր այս կինին վրայ ։ Իրաւ է որ այս քաղքէն եմ, բայց այսօր միայն մտայ այս տունն, և եթէ կը զարմանաք որ հոս եմ, ես ալ նոյնչափ կը զարմանամ որ ձեզի հետ կը գտնուիմ այս տեղ ։ Իմ զարմանքս աւելի կը սաստկանայ գիտելով որ այս կանանց հետ մարդ մը չկայ ։»

Ամիրապետն՝ իր ընկերներն ու գալէնտէրները կարծեր էին թէ բեռնակիրը տունէն է, և կարող է իրենց խնդրած տեղեկութիւնները հաղորդել ։ Ամիրապետն՝ իր հետաքրքրութիւնը գոհ ընելու միտքը դրած ըլլալով՝ որ և է կերպով մը, միւսներուն ըսաւ. «Մտիկ ըրէք, քանի որ այս տեղ եօթը մարդ ենք, և մեր գործն երեք կանանց հետ է, եկէք ստիպենք զանոնք որ մեր փափաքած ծանօթութիւնները մեզի տան ։ Եթէ յօժարակամ զանոնք տալու մերժեն, բռնակամ ուժ ունինք զանոնք բռնադատելու որ մեր կամքը կատարեն ։»

Ճեաֆէր մեծ վէզիրն՝ այս կարծիքին դէմ ելաւ, և անոր վատ հետևանքն ամիրապետին բացատրեց, առանց այս իշխանին ով ըլլալը գալէնտէրներուն յայտնելու. և անոր ուղղելով խօսքն՝ որպէս թէ վա-

Ճառակամ մ'ըլլար . «Տէր իմ , ըսաւ , մտածէ անգամ մ'որ պարտաւոր ենք մեր անունն անարատ պահել : Գիտես թէ այս կանայք մեզ ընդունելու համար ինչ պայման դրին , և ինչպէս այս պայմանին հնազանդելու խօսք տուինք : Ինչ պիտի ըսեն , եթէ այս խոստման հակառակ վարուինք : Աւելի դատապարտելի պիտի ըլլանք եթէ մեզի դժբաղդութիւն մը հասնի : Տարակոյս չկայ որ՝ այս խոստումը մեզնէ պահանջողները կարողութիւն ալ ունին մեզ պատժել եթէ անոր հակառակ վարուինք :

Նոյն միջոցին վէզիրը ղամբրապետը մէկդի կանչեց և անոր կամացուկ մը խօսելով՝ «Տէր իմ , շարունակեց նա , լուսնալու մօտ է , թող Ձեր վեհափառութիւնը շնորհ ընէ քիչ մը ևս համբերելու : Վաղն առտու պիտի գամ այս կիներն առնել և ձեր դահլիճն առջևը բերել , անոնց բերնէն կիմանաք ինչ որ կը փափաքիք :» Թէև այս խորհուրդը շատ խոհական խորհուրդ մ'էր , ամիրապետը զայն մերժեց , վէզիրին հրամայեց որ լռէ , ըսելով թէ այնչափ երկար ատեն չկրնար համբերել , և թէ կը պահանջէ նոյն ժամուն իսկ փափաքած բացատրութիւնը ստանալ :

Ուստի կը մնար որոշել թէ ո՛վ պիտի խօսքը բանայ : Ամիրապետը ջանաց յորդորելու գալէնտէրներն որ առաջ խօսին . բայց յանձն չառին : Վերջապէս ամէնքը յարմար դատեցին որ բեռնակիրն առնու այս պաշտօնն իր վրայ : Այս աղէտալի հարցումն ընելու կը պատրաստուէր , երբ Զիւպիտէ , էմինէին օգնելէն ետև՝ որուն մարմրուքն անցեր էր , անոնց մօտեցաւ : Որովհետև անոնց բարձրաձայն և տաք տաք խօսիլը լսեր էր , ըսաւ . «Տեարք , ինչ բանի վրայ կը խօսիք , ինչ է ձեր վիճաբանութիւնը :»

Այն ատեն բեռնակիրն սկսաւ խօսիլ ու ըսաւ . «Տիկին , այս տեարք կ'աղաչեն որ շնորհ ընէք անոնց բացատրելու թէ ինչ պատճառաւ ձեր երկու մատակ շները ծեծելէն ետև՝ անոնց հետ լացիք , և ինչ պատճառաւ նուաղող կնկան կուրծքը վէրքով լեցուն է : Ահա այս հարցումս , տիկին , հանդիսականներուն կողմէն ձեզի ընելու պաշտօն ունիմ :»

Զիւպիտէ այս հարցման վրայ մէս կերպարանք մ'առաւ , և ամի-

րապետին ընկերներուն և գալէնտէրներուն կողմը դառնալով՝ «Մի՞թէ իրաւ է , տեարք իմ , ըսաւ անոնց , որ այս հարցումն ընելու յորդորեցիք զինքն : Ամէնքն Այո՛ , պատասխան տուին , բաց 'ի Ճեաֆէր վէզիրէն , որ բերնէն բառ մը չհանեց : Այս խոստովանութեան վրայ Զիւպիտէ ըսաւ այնպիսի ձայնով մ'որ իր սաստիկ դժգոհութիւնը կը յայտնէր . «Ձեր խնդրած շնորհը ձեզի ընելէն առաջ , ձեզ այս տեղ ընդունելէն առաջ , որպէս զի վերջէն դժգոհութիւն մը չպատահի մեր կողմէն , քանի որ մինակ ենք , պայման մ'առաջարկեցինք ձեզի . այս է ձեզի չըսկած բաներուն վրայ չխօսիլ , որ ձեր չսիրածը չլսէք , և այս պայմանն ընդունեցաք : Արդ՝ ձեզ ընդունելէն , ձեզի՝ ըստ կարի , խնջոյք տալէն ետև՝ դարձեալ ձեր խոստման հակառակ կը վարուիք : Իրաւ է որ այս համարձակութիւնը ձեզի տուողը մեր հեշտ հիւրասիրութիւնն է , բայց սակայն չէք արդարանար և ձեր ընթացքը պարկեշտ մարդու ընթացք չէ :» Այս խօսքերն աւարտելով՝ երեք անգամ ձեռներն ու ոտքերն ուժգին զարկաւ , և պոռաց . «Շուտ հասիք :» Խուցին դուռ մը բացուեցաւ , և եօթ սև գերիներ , որ զօրաւոր էին և հուժկու , ներս մտան սուր 'ի ձեռին , ամէն մէկը հանդիսական մը բռնեց , գետին զարկաւ սրահին մէջ տեղը քշեց և ամէնքը մէկէն պատրաստեցան անոնց գլուխը կտրելու :

Դիւրին է երևակայել թէ ո՛րչափ մեծ եղաւ ամիրապետին սարսափն : Այն ատեն զղջաց , բայց շատ ուշ , որ իր վէզիրին խորհուրդին չուզեց անսալ : Սակայն այս դժբաղդ իշխանը , Ճեաֆէր , Մէսրուր , բեռնակիրն ու գալէնտէրներն իրենց անխորհուրդ հետաքրքրութիւնը կեանքերնին վրայ տալով պիտի տուժէին . սակայն մահուան հարուածն ընդունելէն առաջ՝ գերիներէն մէկը Զիւպիտէին ու իր քոյրերուն ըսաւ . «Բարձրապատիւ , հզօր , մեծարելի տիրուհիք , հրաման ունի՞ք որ գլուխնին կտրենք : — Սպասեցէք , պատասխան տուաւ անոր Զիւպիտէ , պէտք է որ նախ հարց ու փորձ ընեմ : — Տիկին , ընդմիջեց ահաբեկ բեռնակիրը , յանուն Աստուծոյ իս ուրիշի յանցանքին համար սպաննել մի՛ տար : Ես անմեղ եմ , ասոնք են յանցաւորներն : Ափսո՛ս , շարունակեց նա լալով , ո՛րչափ զուարճութեամբ կ'անցնէինք մեր ժամե-

րը ։ Սա միականի գալէնտէրներն են այս դժբաղդութեան պատճառն ։ Այսպիսի չարաղուշակ մարդկան առջև չկայ քաղաք մ՚որ աւերակ չդառնայ ։ Տիկին, կ՚աղերսեմ որ առաջինը վերջնոյն հետ չշփոթէք․ մտածեցէք որ աւելի վեհանձնական գործ մ՚է ինձի պէս թշուառի մը ներել, քան զանի ձեր իշխանութեամբը ճզմել և ատելութեան զոհ ընել ։»

Ջիւլիանէ՝ թէև բարկացած էր, չկրցաւ իր ծիծաղը բռնել բեռնակրին ողբը լսելով․ սակայն առանց անոր ուշ դնելու, երկրորդ անգամ միւսներուն ուղղեց խօսքն ըսելով․ «Պատասխան տուէք ինձ և ըսէք թէ ո՛վ էք դուք, թէ ոչ վայրկեան մ՚ունիք միայն ապրելու ։ Չեմ կրնար հաւատալ որ պարկեշտ մարդիկ ըլլաք, կամ ձեր քաղքին մէջ իշխանութեան տէր և ազնուական անձինք գտնուիք ։ Եթէ այս այսպէս ըլլար, այն ատեն իմ առջևս աւելի պարկեշտութիւն և անվախութիւն կ՚ունենայիք ։»

Ամիրապետն՝ որ ՚ի բնէ անհամբեր էր, միւսներէն աւելի կը տառապէր քանի կը տեսնէր որ իր կեանքն իրաւամբ զայրացած և թշնամանուած կնիկէ մը կախում ունի, բայց սկսաւ քիչ մը յուսալ, երբ գիտեց որ Ջիւլիանէ կը փափաքի իմանալ թէ իրենք ո՛վ են․ վասն զի կարծեց թէ զինքը սպաննել չպիտի տայ երբ իր աստիճանն իմանայ ։ Ուստի կամացուկ մը վեզիրին, որ իր քովն էր, պատուիրեց որ իրեն ով ըլլալը շուտ մը յայտնէ ։ Բայց վեզիրն՝ որ խոհական և իմաստուն անձ մ՚էր, կ՚ուզէր իր տիրոջ պատիւը պահել անաղարտ, և չուզելով հրապարակ հանել ինքն իրեն վրայ բերած մեծ նախատինքը, միայն պատասխանեց․ «Մեզի այս վիճակը կը վայլէր և պատիժնիս գտանք ։» Բայց երբ ամիրապետին հնազանդելու համար, խօսելու ալ փորձ փորձէր, դարձեալ Ջիւլիանէ անոր ժամանակ չպիտի տար ։ Վասն զի գալէնտէրներուն դարձեր էր և տեսնելով որ երեքն ալ միականի են, հարցուց եթէ երեք եղբարք են ։ Անոնցմէ մէկը միւսներուն կողմէն պատասխանեց․ «Ոչ, տիկին, արենակից եղբարք չենք, այլ իբր գալէնտէր եղբարք ենք, այսինքն նոր կեանք վարելով ։ — Դու, ըսաւ, յատկապէս մէկուն խօսելով՝ միթէ ՚ի ծնէ՞ միականի ես ։ — Ո՛չ,

տիկին, պատասխանեց նա, այնպիսի զարմանալի արկածով աչքս կորսայ որ եթէ գրուի ամէն մարդ կրնայ անկից օգուտ քաղել ։ Այս դժբաղդութենէ ետքը՝ մօրուքս ու ընքուիներս ածիլել տուի, և գալէնտէր դարձայ, այս հագած զգեստս հագնելով ։» Ջիւլիանէ մի և նոյն հարցումն ըրաւ միւս երկու գալէնտէրներուն, որ առաջնոյն տուած պատասխանը տուին ։ Բայց վերջին խօսողն յարեց․ «Հասկցնելու համար, տիկին, որ գռեհիկ մարդիկ չենք, և որպէս զի քիչ մը յարգ ունենաս մեր վրայ, գիտցիր որ երեք արքայազուն որդիք ենք ։ Թէպէտ այս իրկուն միայն իրարու հետ տեսութիւն ըրինք, սակայն ժամանակ ունեցանք զիրար ճանչնալ, և կը համարձակիմ հաւաստելու ձեզ որ մեզի արև տուող թագաւորներն աշխարհիս մէջ բաւական անուն ստացան ։»

Այս խօսքիս վրայ՝ Ջիւլիանէ իր զայրոյթը մեղմեց, և գերիներուն ըսաւ․ «Քիչ մ՚ազատութիւն տուէք ասոնց, բայց այս տեղէն մի հեռանաք ։ Անոնք որ իրենց պատմութիւնն և այս տունը գալու համար ունեցած նպատակնին պիտի պատմեն, ազատ են, և կրնաք թողուլ որ ուզած տեղերնին երթան․ բայց մի խնայէք անոնք որ այս հատուցումը տալու կը մերժեն ։»

Տէր իմ, շարունակեց Շէհէրազատ, երեք գալէնտէրներն, ամիրապետը, Ճեաֆէր մեծ վեզիրը, Մէսրուր ներքինին և բեռնակիրը սրահին մէջ տեղը գետնի օթոցին վրայ նստեր էին, ՚ի ներկայութեան երեք կանանց՝ որ բազմոցին վրայ կը գտնուէին, և այն գերիներուն որ պատրաստ էին կանանց հրամաններն ՚ի գործ դնելու ։

Բեռնակիրն՝ իմանալով որ ասանկ մեծ վտանգէ ազատելու համար բաւական է իր պատմութիւնը պատմել, խօսք ուզեց և ըսաւ․ «Տիկին, արդէն իմ պատմութիւնս և զիս այս տեղ բերող պատճառը գիտես ։ Ուստի իմ պատմելիքս շատ համառօտ պիտի ըլլայ և շուտով պիտի լմննայ ։ Քոյրդ զիս այս առտու կանչեց, երբ հրապարակը կեցած՝ կ՚սպասէի որ մէկն զիս գործի դնէ որ աւուր պարէնս ճարեմ ։ Անոր հետ գացի գինետուն մը, ընդեղէնաց խանութ մը, նարնջի, լեմոնի, կիտրոնի վաճառողի մը․ յե~

տոյ նուշ, ընկոյզ, կաղին և ուրիշ պտուղներ ծախողի մը խանութը, վերջը շաքարագործի և համեմավաճառի մը խանութն. իսկ համեմավաճառին խանութէն ելայ, ըստ կարի բեռնաւորուած կողովը գլուխս՝ և մինչև այս տունն եկայ, ուր ձեր շնորհիւը մինչև հիմակ այս տեղ կը գտնուիմ: Այս շնորհը յաւիտեան պիտի յիշեմ: Ահաւասիկ իմ պատմութիւնս այս է:»

Երբ բեռնակիրը խօսքն աւարտեց, Զիւպիտէ գոհ ըլլալով ըսաւ անոր. «Ելիր գնա, ուրիշ անգամ մեր աչքին չերևիս: — Տիկին, յարեց բեռնակիրը, կ'աղաչեմ որ թոյլ տաս ինձ մնալ այս տեղ: Արդար է որ ուրիշներուն իմ պատմութիւնս լսելու հաճոյքը տալէն ետև՝ ես ալ իրենցը լսելու հաճոյքն ունենամ:» Այս ըսելով՝ բազմոցին ծայրը նստաւ, և ուրախացաւ որ ազատ մնաց այնպիսի վտանգէ մ'որ զինքն ահ ու դողի մէջ ձգեր էր: Բեռնակրէն ետքն՝ երեք գալէնտէրներէն մին Զիւպիտէին դարձաւ, քանի որ տիկիններուն գլխաւորն էր և անի հրամայեր էր որ խօսի, և այսպէս իր պատմութիւնն սկսաւ:

ԱՌԱՋԻՆ ԱՐՔԱՅՈՐԴԻ ԳԱԼԷՆՏԷՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տիկին, պէտք է նախ յայտնեմ որ թագաւորի որդի եմ, որպէս զի բացատրեմ թէ ինչպէս իմ աջ աչքս կորուսի և ինչ պատճառաւ ստիպուեցայ գալէնտէրի հագուստ առնուլ: Իմ թագաւոր հայրս եղբայր մ'ունէր որ իրեն պէս մօտակայ երկրի մը վրայ կ'իշխէր: Այս եղբայրն երկու զաւակ ունեցաւ, իշխան մը ու իշխանուհի մը. իշխանն ու ես գրեթէ տարեկից էինք:

Երբ բոլոր իմ պարտաւորութիւններս կը կատարէի և հայրս օրինաւոր թոյլտուութիւն մը կուտար ինձ, ամէն տարի կանոնաւոր կերպով թագաւոր հօրեղբայրս տեսնելու կ'երթայի, և իր պալա-

տը մէկ երկու ամիս կենալէն ետև նորէն հօրս քովը կը դառնայի: Այս ճամբորդութիւններն առիթ տուին իմ հօրեղբօր որդւոյս և ինձ խիստ հաստատուն և յատուկ բարեկամութիւն մը կապելու: Վերջին անգամ որ տեսայ՝ սիրոյ աննման զգուանօք ընդունեց զիս, և օր մ'ինձ խնջոյք մը տալու համար արտաքոյ կարգի պատրաստութիւններ տեսաւ: Երկար ատեն սեղան նստանք, և լաւ մ'ընթրելէն ետև՝ «Հօրեղբօր որդիդ իմ՝, ըսաւ ինձ, չես կրնար գուշակել թէ վերջին ճամբորդութենէդ վեր ինչ բանի զբաղեցայ: Մեկնելէդ վեր՝ տարի մը կայ՝ շատ մը գործաւորներ աշխատցուցի ունեցած մէկ խորհուրդս գլուխ հանելու համար: Շէնք մը կանգնել տուի որ արդէն լմնցած է, և հիմակ կարելի է այն տեղը բնակիլ. պիտի ախորժիս յուսամ զայն տեսնելու. բայց նախ պէտք է որ երդում ընես թէ գործը գաղտնի պիտի պահես և հաւատարիմ պիտի մնաս. այս երկու պայմանները կը պահանջեմ քեզմէ:»

Մեր մէջ եղած բարեկամութիւնն ու ընտանութիւնը չներեցին որ խնդիրը մերժեմ, ուզածին պէս երդումն ըրի. այն ատեն ինձ ըսաւ. «Սպասէ ինձ այս տեղ, քիչ ատենէն կը դառնամ:» Եւ իրօք դառնալու չուշացաւ, և տեսայ որ հիանալի գեղեցկութեամբ և փառաւոր հագուած կնկան մը հետ ներս մտաւ: Չըսաւ ինձ թէ այն կինն ով է, և հարկ չսեպեցի հարց ու փորձ ընել այս մասին: Կնկան հետ սեղան նստանք, քիչ մ'ատեն ես անցուցինք անտարբեր բաներու վրայ խօսակցելով, և իրարու կենաց բաժակներ պարպելով: Այնուհետև իշխանն ինձ ըսաւ. «Բարեկամ, ժամանակ կորսնցնելու ատեն չէ, խնդրեմ շնորհ ըրէ այս տիկինը հետդ տանելու, և անանկ տեղ մը առաջնորդելու վայր մ'ուր շիրիմ մը պիտի տեսնես նորաշէն գմբեթով մը: Դիւրաւ աչքիդ պիտի զարնէ այս շիրիմը. դուռը բաց է, միասին ներս մտէք և այն տեղ ինձ սպասեցէք: Քիչ ատենէն ես ալ պիտի գամ:»

Իմ երդմանս հաւատարիմ՝ ուրիշ բան իմանալու փորձ չըրի. Ձեռքս կնկան տուի, և իշխանին ինձ տուած հրահանգին համեմատ՝ յաջողութեամբ, առանց մոլորելու կինն առաջնորդեցի լուսնկային:

Ան ինչ գերեզմանը հասեր էինք , իշխանին երեւիլը տեսանք , ջրով կոյժ մը , բահ մը և պզտիկ պարկ մ'որուն մէջ գաճ կար ։

Գերեզմանին մէջ տեղ գտնուած օպրաալ տապանը փլելու համար բահը գործածեց . քարերը հեռացնելէ քակեց և անկիւն մը շարեց ։ Երբ բոլորն ալ դուրս հանեց , գետինը փորեց , և տեսայ որ տապանին ներքեւ կափարիչ մը կայ ։ Վերցուց նոյն կափարիչն , և անոր տակ շրջանաւոր սանդղի մը գլուխը տեսնուեցաւ ։ Այն ատեն հօրեղբօրորդիս տիկնոջ դառնալով ըսաւ անոր . «Տիկին ահա ասկէ կ'երթուի ըսած տեղս ։» Այս խօսքիս վրայ , տիկինը մօտեցաւ վար իջաւ և իշխանն ալ անոր ետեւէն իջնելու կը պատրաստուէր . բայց նախ իմ կողմս դառնալով . «Հօրեղբօրորդիս , ըսաւ ինձ , ըրած ծառայութեանդ համար քեզի մեծապէս շնորհակալ եմ , մնաս բարով ։ — Սիրելիդ իմ հօրեղբօրորդի , պոռացի , ինչ կը նշանակէ այս բանս ։ — Այսչափս քեզ բաւական ըլլայ , պատասխան տուաւ ինձ , հիմակ ուսկից որ եկար , կրնաս նոյն ճամբայէն ետ դառնալ ։»

Իմ իշխան հօրեղբօրորդիէս ուրիշ պատասխան մը չառի և ստիպուեցայ անորմէ բաժնուելու ։ Թագաւոր հօրեղբօրս պալատը դառնալով՝ գինիին շոգին գլխուս կը զարնէր ։ Սակայն սենեակս քաշուեցայ և անկողինս մտայ ։ Միւս օրն՝ երբ արթնցայ՝ սկսայ գիշերը գլխուս եկածին վրայ խորհիլ՝ և ասանկ անօրինակ արկածի մը բոլոր պարագաները միտքս բերելէն ետք՝ կարծեցի թէ երազ մը տեսեր եմ ։ Այս մտմտուքով՝ մարդ ղրկեցի որ իմանայ թէ արդեօք իմ իշխան հօրեղբօրորդիս կրնա՞յ տեսնուիլ ։ Բայց երբ իմացուցին ինձ թէ գիշերը տուն չէ դարձեր , թէ ինչ ըլլալը չգիտեն և թէ մեծ մտատանջութեան մէջ են , խսկոյն հասկցայ որ գերեզմանին տարօրինակ դէպքը շատ ստոյգ պէտի ըլլայ ։ Սիրտս սաստիկ վիշտ զգաց , և գաղտն ու գողի ու անտես հասարակաց գերեզմանատունը գացի՝ ուր իմ տեսածիս նման անթիւ շիրիմներ կային ։ Բոլոր օրն ամէնն ալ մէկիկ մէկիկ քննեցի , բայց փնտռածս չկրցայ գտնել , չորս օր շարունակ մի և նոյն հետազօտութիւնն ըրի պարապ տեղը ։

Պէտք է գիտնալ որ իմ թագաւոր քեռիս բացակայ էր ։ Քանի մը օրէ վեր որսի ելեր էր ։ Անոր սպասելէն ձանձրոյթ զգացի , և առաջելով իր նախարարներուն որ իմ կողմէ ներում խնդրեն ՚ի դարձին , իր պալատէն մեկնեցայ հօրս պալատն երթալու համար , ուսկէ այնչափ երկար ատեն տարակայ գտնուելու սովորութիւն չունէի ։ Իմ քեռիին նախարարները մեծ տրտմութեան մէջ ձգեցի հօրեղբօրորդւոյս աներեւոյթ ըլլալուն վրայ ։ Բայց որպէս զի ամէն բան գաղտնի պահելու համար ըրած երդումս չդրժեմ , չկրցայ անոնց անհանգստութիւնը փարատել , և իմ գիտցածներէս բան մը չուզեցի անոնց հաղորդել ։

Թագաւոր հօրս մայրաքաղաքը հասայ՝ և սովորականին հակառակ՝ պալատին դրան առջև շատ մը պահապաններ տեսայ , որոնք ներս մտնելու ատեն չորս կողմս առին ։ Պատճառը հարցուցի , ու պաշտօնատարն ըսաւ . «Իշխան , զօրքը հօրդ տեղ վէզիրը թագաւորական աթոռը նստեցուց . հայրդ մեռաւ , և նոր թագաւորին հրամանաւը քեզ ձերբակալ կ'ընենք ։» Այս խօսքիս վրայ՝ պահապաններն զիս բռնեցին և բռնաւորին առջեւը տարին ։ Դատեցէք , տիկին , թէ ինչ զարմանք ու վիշտ գրաւեր էին իմ սիրտս ։

Այս ապստամբ վէզիրն ինձի դէմ մեծ ոխ մը պահեր էր և երկար ատենէ վեր կը սածէր ։ Ահաւասիկ այս ոխին պատճառն ։ Իմ մանկութեանս ատեն բալիստր նետելու կ'ախորժէի , օր մը պալատին պատշգամին վրայ բալիստր մը բռնած նետելով կ'զբօսնուի , թռչուն մ'առջեւս ելաւ , նշան առի որ զարնեմ , բայց չկրցայ , և նետը՝ պատահմամբ գնաց շիտակ վէզիրին աչքը մտաւ , որ իր տան պատշգամին վրայ հով կ'առնուր , և աչքը հանեց ։ Երբ այս դժբաղդ արկածը լսեցի , վէզիրէն ներում խնդրեցի ուրիշներուն միջոցաւ և ես ալ իմ ցաւս յայտնապէս յայտնեցի անոր ։ Սակայն դարձեալ իր սրտին մէջ սաստիկ ոխ մը պահեց , որուն նշանները կը տեսնէի երբ առիթը պատահէր ։ Իր այս ատելութիւնն անխնայ երեւան հանեց երբ զիս իր իշխանութեան տակ տեսաւ ։ Ան ինչ տեսաւ զիս որ կատաղաբար վրաս վազեց և մատներն աջ կողմի աչքս խօթելով՝ զայն հանեց ։ Ահա այս կերպով միականի մնացի ։

Բայց բռնակալին անգթութիւնն ասով չշատցաւ ։ Զիս սնտուկի մը մէջ փակել տուաւ , հրամայեց դահճին որ նոյն վիճակին մէջ հեռաւոր տեղ մը տանի , գլուխս կտրէ և գիշակեր թռչուններուն ճարակ

տայ ։ Դաշինն ուրիշ մարդու մը հետ ձի հեծաւ մտաւխ սանըլով՝ և դաշտ մը հասաւ արքայական հրամանն 'ի գործ դնելու համար ։ Բայց այնչափ աղաչեցի և արտասուք թափեցի որ իր գութը շարժեցի ։ «Ելիր դնա , ըսաւ ինծ , շուտով այս տէրութենէ հեռացիր , և նայէ որ նորէն չդառնաս , վասն զի մահդ կը գտնես և ինձ ալ կը պատճառես ։» Շնորհակալ եղայ այս ըրած շնորհին համար , և այն ինչ առանձին մնացի , որ աչքս կորուսելու մխիթարուեցայ , մտածելով որ աւելի մեծ դժբաղդութենէ մը զերծ մնացի ։

Այն իմ վիճակիս մէջ՝ շատ կամաց կը քալէի ։ Ցորեկը գաղտուկ տեղեր կը քաշուէի և գիշերը ճամբայ կը կտրէի ուժս ներածին չափ ։ Վերջապէս հօրեղբօրս տէրութեան սահմանները մտայ և անոր մայրաքաղաքը հասայ ։

Իմ դարձիս աղետալի պատճառն և տխուր վիճակն անոր մանր պատմեցի ։ «Ափսո՜ս , գոչեց նա , բաւական չէր որ որդիս կորուսեմ , հիմակ ալ իմ սիրելի եղբօրս մահը կ'իմանամ և քեզ այդ ողբալի վիճակին մէջ կը տեսնեմ ։» Իր որդին գտնելու համար ըրած բոլոր խուզարկութիւններն ու ջանքն ապարդիւն ելնելուն վրայ զգացած վիշտն ինծի յայտնեց ։ Այս անբաղդ հայրը ջերմագին արտասուքներ կը թափէր ինծ խօսելու ատեն , և այնքան սաստիկ վշտահար երեցաւ ինծ որ չկրցայ իր ցաւերուն դիմանալ ։ Որչափ որ իմ իշխան հօրեղբօրորդուս երդում ըրեր էի գաղտնապահ ըլլալու , սակայն անկարելի եղաւ ինծ այն գաղտնիքը պահելու ։ Ուստի՝ գիտցածս անոր թագաւոր հօրը պատմեցի ։

Թագաւորը մխիթարութեամբ մը մտիկ ըրաւ ինծ և երբ խօսքս աւարտեցի , ինծ ըսաւ . «Եղբօրորդիս , ինծ ըրած պատմութեամբդ քիչ մը յոյս կ'առնում ։ Լսեր էի որ որդիս այն գերեզմանը շինել կը տար , և գիտեմ գրեթէ ուր տեղ գտնուիլը . քու ունեցած տեղեկութիւններովդ յուսամ՝ որ զայն պիտի գտնենք ։ Բայց քանի որ գաղտնի շինել տուաւ զայն և պահանջեց որ մարդու մը չըսես , կարծեմ թէ լաւ կ'ըլլայ թէ որ մենք երկուքնիս երթանք որ գործն ամէն մարդ չիմանայ ։»

Երկուքնիս ալ ուրիշ լաթեր հագանք , և դաշտին վրայ բացուող

պարտիզի մը դռնէն դուրս ելանք ։ Բարեբաղդօրէն մեր ուզածը գտանք ։ Գերեզմանը ճանչեցի , և շատ ուրախացայ , որովհետև պարապ տեղը երկար ժամանակ փնտռեր էի ։ Ներս մտանք և երկաթէ կափարիչը գտանք , որ սանդուխին մուտքը գոցեր էր ։ Դժուարաւ կրցանք զայն բանալու , վասն զի իշխանն իր հետը բերած գաճով ու ջրով ներսէն ծեփեր էր . բայց վերջապէս կափարիչը վեր առինք ։

Նախ իմ քեռիս թագաւորը վար իջաւ . ես ալ ետևէն գացի , և գրեթէ յիսուն աստիճան վար իջանք ։ Երբ սանդուխին տակը հասանք , նախասենեկի նման տեղ մը գտանք որ թանձր մխով և գէշ հոտով լցուած էր , և որով գեղեցիկ ճրագի մը սփռած լոյսը մթնցած էր ։

Այս նախասենեկէն ուրիշ մեծ սենեակ մ'անցանք , որ սիւնազարդ էր և շատ մը ճրագներով լուսաւորուած ։ Մէջ տեղը ջրամբար մը կար , և մէկ կողմը դիզուած կը տեսնուէր շատ մը պաշար ։ Մեծապէս զարմացանք մարդ մը չտեսնելով ։ Դիմացի կողմը բարձրիկ բազմոց մը կար , որուն վրայ քանի մ'աստիճաններով կ'ելլէր , և վարագուրները փակ խիստ ընդարձակ անկողին մը կը տեսնուէր ։ Թագաւորը վեր ելաւ , և զանոնք բանալով տեսաւ որ իշխանորդին և տիկինն անկողինին մէջ պառկեր էին միասին , բայց այրեր ածուխ դարձեր էին , որպէս թէ մեծ կրակի մը մէջ նետուած ըլլային և մոխիր դառնալէն առաջ կրակէն հաներ էին ։

Բայց ամէն բանէ աւելի իմ զարմանքս պատճառողը սա եղաւ որ իմ քեռիս՝ փոխանակ սուգով յայտնելու իր որդին այն ահաւոր վիճակին մէջ տեսնելով՝ անոր երեսը թքաւ , զայրացկոտ դէմքով մ'անոր ըսելով . «Ահա այս է աշխարհիս պատիժը , բայց միւս աշխարհիս պատիժը յաւիտեան պիտի ըլլայ ։» Այս խօսքերը հերիք չսեպեց , կօշիկն ոտքէն հանեց և անով որդւոյն այտին վրայ սաստիկ հարուած մ'իջեցուց ։

Չեմ կրնար բացատրել , տիկին , թէ որչափ մեծ եղաւ իմ զարմանքս երբ իր որդւոյն մահուանէ ետքն իմ հօրեղբօրս այս անգութ ընթացքը տեսայ ։ «Տէր իմ , ըսի անոր , որչափ որ այսպիսի աղէտալի տեսարան մ'ինծի սաստիկ վիշտ կը պատճառէ , սակայն այս վիշտս կը զսպեմ Ձեր վեհափառութեան հարցնելու համար թէ ինչ յանցանք

ըրած է՝ ձեր իշխանորդին որ իր գլխուն այդպէս նախատուելու ձեր կողմէն արժանի ըլլայ : — Եղբօրորդիս, պատասխանեց Թագաւորը, պարտիմ ըսել քեզ որ որդիս, սոյն անուան անարժան որդիս, 'ի մանկութենէ իր քոյրը սիրեց, և քոյրն ալ զինքը նոյնպէս սիրեց : Այս նորածին բարեկամութեան դէմ չըրի, վասն զի անկից ծագելիք չարիքը չէի գուշակեր : Եւ ո՞վ կրնար էր գուշակել : Այս գորովը իրենց հասակին հետ մեծցաւ և այն աստիճան հասաւ որ վերջապէս անոր հետեւանքէն վախցայ : Այն ատեն ձեռքէս եկած դարմանն ըրի : Բաւական չսեպեցի իմ որդիս առանձին կանչել խրատելը՝ յայտնելով որ ինչ քստմնելի կրից կը ծառայէ և ինչ մշտատև նախատինք պիտի բերէ իր ընտանիքին և եթէ նոյն մեղսապարտ զգացումներուն մէջ յարատևէ. նոյն յանդիմանութիւններն ըրի նաև աղջկանս և անանկ տեղ մը փակեցի որ իր եղբօրը հետ հաղորդակցութիւն չունենայ : Բայց դժբաղդ աղջկին սիրտը թունաւորեր էր և ինչ արգելքներ որ իմ խոհեմութեամբս անոր առջևը հանեցի իր սէրն աւելի զայրացուցին :

Որդիս՝ համոզուած ըլլալով որ իր քոյրը նոյն սէրն ունի իր վրայ՝ շիրիմ մը շինելու պատրուակով՝ այն ստորերկրեայ բնակարանը պատրաստել տուաւ, այն յուսով որ օրին մէկին իր մեղսապարտ քոյրը յափշտակելու և այս տեղ բերելու առիթ մը կ'ունենայ : Իմ բացակայութեանս ժամանակը յարմար առիթ սեպելով՝ իր քոյրը պահած տեղէս գողեր և բռնի յափշտակեր տարեր է. խսկ այս պարագան ծածուկ պահեցի որ վրաս անպատուութիւն մը չբերեմ : Այս դատապարտելի գործն ըներէն ետև՝ քրոջը հետ այս տեղ փակուեր է, և ամէն տեսակ պաշար ալ հետն առեր է, որպէս զի իր զարշելի կրից՝ որ ամենուն զզուանք կը պատճառէ, յագուրդ տայ : Սակայն Աստուած այս զարշանքն անտես չըրաւ և երկուքն ալ արդարապէս պատժեց :» Այս խօսքերն աւարտելով՝ Թագաւորը յորդ արտասուք թափեց և ես ալ իմ արտասուքս իրեններուն հետ խառնեցի :

Քիչ մ'ատենէն ետքն՝ աչքերն իմ վրայ դարձուց և իս գրկելով ըսաւ. «Սիրելի եղբօրորդիս, եթէ անարժան որդի մը կորսնցուցի, քեզ անոր տեղն անցնելու բարեբաղդութիւնն ունիմ :» Իշխանին և իշխա-

նուհիին տխուր վախճանին վրայ ըրած խորհրդածութիւնները մեր արտասուքը շարժեցին :

Վերջապէս այն սանդղէն վեր ելանք և սոյն աղէտալի տեղէն հեռացանք : Երկաթէ կափարիչը նորէն վար առինք և հողով ծածկեցինք գերեզմանն, որպէս զի, որչափ կարելի է, ծածուկ պահուի Աստուծոյ բարկութեան այս ահուելի մէկ նշանը :

Պալատը դառնալէն քիչ մ'ետքն՝ ուր բնաւ մէկը չէր իմացած մեր բացակայութիւնը, փողերու, թմբուկներու և պատերազմական ուրիշ գործիներու խառն ու շփոթ ձայնն առինք : Թանձր փոշի մ'որով օդը լեցուեցաւ՝ յայտնեց մեզի բանին էութիւնն, և հասկցուեցաւ որ ահագին բանակ մը քաղաքը մտեր է : Իմ հօրս գահն ու պետութիւնը յափշտակող վէզիրն էր որ եկեր էր իմ հօրեղբօրս թագաւորութիւնն ալ գրաւէ անհամար զօրքերով :

Այս իշխանն՝ որ այն ատեն իր սովորական զօրքն ունէր, չկրցաւ այնքան թշնամիներու դիմադրել. ուստի քաղաքը պաշարեցին, և ուրիշ հետև առանց ընդդիմութեան քաղքին դուները բացին, և դիւրաւ անոր տիրեցին, նոյնչափ դիւրութեամբ հօրեղբօրս պալատը մտան զօրքերը : Հօրեղբայրս դէմ կեցաւ, բայց սպաննուեցաւ, արիաբար պատերազմելէն ետքն : Ես ալ կռուեցայ ժամանակ մը, բայց տեսնելով որ հարկ էր բաղմութեան անձնատուր ըլլալ, մտածեցի որ ետ քաշուիմ, և բարեբաղդօրէն փախայ և պատ 'ի պատ Ճամբաներէ Թագաւորին մէկ պաշտօնատարին տունը գացի, որուն հաւատարմութիւնն ինծի ծանօթ էր :

Այսպէս վշտահար և բաղդէն հալածուելով՝ հնարք մը մտածեցի, որով կարելի էր միայն կեանքս ազատել : Մօրուքս և ունքերս ածիլել տուի, և գալէնտէրի զգեստ հագնելով՝ քաղքէն դուրս ելայ և բնաւ մարդ մ'իս չճանչեց : Այնուհետև՝ Թագաւոր հօրեղբօրս տէրութենէ հեռանալը դիւրին եղաւ ինծ, հեռաւոր Ճամբաներէ քալելով : Քաղաքներուն մէջէն անցնելու զգուշացայ մինչև որ Հարուն-ալ-Ռաշիտ փառաւոր և անուանի ամիրապետին իշխանութեան երկիրները հասնելով՝ երկիւղս բոլորովին փարատեցի : Այն ատեն ինչ ընելիքս մտածելով՝ որոշեցի Պաղտատ գալ, այն մեծ միապետին ոտքն իյնալ, որուն

վեհանձնութիւնն ամէն տեղ հռչակ առած է ։ «Անոր գութը պիտի շարժեմ, կ՚ըսէի, իմ հիւանդի պատմութիւնս ընելով անոր, պիտի խղճայ, անշուշտ, տարաբաղդ իշխանիս վրայ և իր պաշտպանութիւնն ՚ի զուր չպիտի հայցեմ ։»

Վերջապէս՝ շատ մ՚ամիսներ՝ համբորդութիւն ընելէ ետև՝ այսօր սոյն քաղքիս դուռը հասայ, և իրիկուան դէմ ներս մտայ ․ քիչ մը դադար առի որ մտածեմ բռնելիք ընթացքս, և ահա այս միւս գալէնտէրն ալ իբր համբորդ հասաւ նոյն տեղը ։ Բարև տուաւ ինծ, ես ալ բարևն առի ։ «Կը նայիմ որ դու ալ ինծի պէս օտարական մ՚ես ։» Պատասխան տուաւ որ չէմ սխալիր ։ Այս պատասխանը տալու ատեն՝ երրորդ գալէնտէրն՝ որ ահա այս տեղ է՝ վրայ հասաւ ։ Մեզ բարևւեց, և ըսաւ որ դեռ նոր կը հասնի Պաղտատ ։ Իբր եղբայր իրարու կը միանանք, և կ՚որոշենք իրարմէ բնաւ չբաժնուիլ ։

Սակայն ժամանակն ուշ էր, և չգիտէինք թէ ուր պէտք էր երթալ օթևան փնտռել քաղքի մը մէջ որ մեզի համար նոր էր ։ Բայց մեր քաղքէն ձեր դրան առջև գալով՝ զարնելու համարձակեցանք ․ մեզ այնպիսի ողորմածէր և բարեսէր կերպով ընդունեցաք որ որչափ շնորհակալ ըլլանք դարձեալ քիչ է ։ Ահա, տիկին, յարեց գալէնտէրն, այս է իմ պատմութիւնս զոր ձեր հրամանաւ պատմեցի ․ ինչպէս իմ աջ կողմի աչքս կորուսի, ինչու համար մօրուքս և ունքերս ածիլուած են, և ինչպէս այս պահուս ձեր տունը կը գտնուիմ ։

«Բաւական է, ըսաւ Զոպէյտէ, գոհ ենք ․ հիմակ ուր որ կ՚ուզես գնա ։» Գալէնտէրը ներում խնդրեց և աղաչեց տիկնոջ որ հոն մնայ, որպէս զի իր երկու ընկերակիցներուն պատմութիւնը մտիկ ընելու բարեբաղդութիւնն ունենայ, քանի որ անհաւատարմութիւն մ՚ըրած կ՚ըլլայ եթէ հեռանայ, նոյնպէս ընկերութեան միւս երեք անձերունը ։

Առաջին գալէնտէրին պատմութիւնը բոլոր հանդիսականաց տարօրինակ երևցաւ, նա մանաւանդ ամիրապետին ։ Սրահէն գերիներուն ներկայութենէ չվախնալով՝ ամիրապետը վէզիրին ըսաւ ․ «Բոլոր կենացս մէջ շատ պատմութիւններ լսեր եմ, բայց այս գալէնտէրին պատմածին նման բան մը լսած չէմ ։» Մինչդեռ այսպէս կը խօսէր,

երկրորդ գալէնտէրը բերանը բացաւ և իր խօսքը Զոպէյտէին ուղղելով՝ ըսաւ ․

ԵՐԿՐՈՐԴ ԱՐՔԱՅՈՐԴԻ ԳԱԼԷՆՏԷՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տիկին, ձեր հրամանին հնազանդելու և ինչ այլանդակ արկածով աջ կողմի աչքիս կորուստը յայտնելու համար պէտք է որ բոլոր կենացս պատմութիւնը պատմեմ ։

Հազիւ թէ մանկութեան հասակէս կ՚ելնէի որ իմ թագաւոր հայրս (քանզի պէտք է գիտնալ, տիկին, որ իշխան ծնած եմ) տեսնելով որ խելացի եմ, ոչ ինչ չխնայեց միտքս մշակելու համար ․ ուստի իր տէրութեան մէջ գտնուող որչափ երևելի գիտուն և արհեստապէտներ որ կային հրաւիրեց և իս անոնց խնամոցյանձնեց ։ Հազիւ թէ գրել կարդալ սորվեցայ, որ բոլոր Գուրանը բերնուց սորվեցայ, այս աքանչելի մատեան մ՚է, որ մեր կրօնին հիմունքը, հրահանգներն ու կանոնը կը պարունակէ ։ Եւ որպէս զի հիմնովին կրթուիմ, ամենընտիր հեղինակներու գործերը կարդացի, որոնք իրենց մեկնութիւններովը զայն պարզաբանեցին ։ Այս վերծանութենէ զատ՝ հետամուտ եղայ այն ամէն աւանդութիւններուն զոր մեր մարգարէներուն բերնէն քաղած են անոնց ժամանակակից մեծ մարդիկ ։ Հերիք չսեպեցի հմտանալ այն ամէն բաներուն որ մեր կրօնին կը վերաբերէր, յատկապէս մեր պատմութիւններն ալ սորվեցայ ․ գեղարուեստից մէջ, մեր ընտիր բանահիւսները կարդալով և տաղաչափութեան մէջ ուսմունքս կատարելագործեցի ։ Աշխարհագրութեան, ժամանակագրութեան հետևեցայ և մեր լեզուն մաքուր խօսելու ջանք ըրի, առանց իշխանի յարմար եղած որ և է կրթութիւններ զանց ընելու ։ Բայց ամենէն շատ սիրած բանս էր՝ արաբական լեզուին տառերը յօրինել ։ Այնչափ յառաջ գացի այս ուսման մէջ, որ մեր պետութեան մէջ մեծ համբաւ ստացող բոլոր վարպետ գրչագիրներէն գերազանց գտայ ։

Համբաւն իմ արժանի եղածէս աւելի պատիւ բերաւ ինձ․ բաւական չսեպեց հօրս իշխանութեան երկիրներուն մէջ իմ տաղանդիս հռչակը հանել, այլ մինչև Հնդկաց արքունիքը տարաւ, որուն հզօր միապետն՝ իս տեսնելու հետաքրքիր ըլլալով՝ ճոխ ընծաներով դեսպան մը ղրկեց իս հրաւիրելու համար․ հայրս այս դեսպանութեան վրայ շատ մը պատճառներու համար ուրախացաւ ։ Համոզուած էր որ իմ հասակիս իշխանի մը շատ յարմար էր օտար տէրութեանց երկիրները ճամբորդել, և ասկէ զատ ուրախ էր որ այս առթիւ Հնդկաստանի սուլթանին բարեկամութիւնը պիտի շահի ։ Ուստի դեսպանին հետ մեկնեցանք, բայց ճամբուն երկարութեան և դժուարութեան պատճառաւ միայն քիչ սպասաւոր առինք ։

Ամիս մը կար որ կը ճամբորդէինք՝ երբ հեռուէն փոշիէ խոշոր ամպ մը նշմարեցինք, և շատ չանցած անոր տակ յիսուն հատ սպառազէն ձիաւորներ տեսանք ։ Գողեր էին անոնք որ դէպ ՚ի մեր վրայ կը վազէին սրընթաց ։

Որովհետև տասն ձի ունէինք որ մեր սպասքն ու Հնդկաստանի սուլթանին սահմանուած պարգևները կը կրէին, և սակաւաթիւ էինք, կրնաք երևակայել որ այն գողերն աներկիւղ մեր վրայ յարձակեցան ։ Անոնց զօրութեան դէմ զօրութեամբ կռուելու անկարող ըլլալով՝ ըսինք անոնց թէ Հնդկաց սուլթանին դեսպաններն ենք, և թէ կը յուսայինք որ ՚ի յարգանս վեհապետին մեզի վնաս մը չեն հասցներ ։ Այս միջոցաւ կարծեցինք որ մեր մարդիկն ու մեր կեանքը կ՚ազատենք, բայց գողերը մեզի լրբօրէն պատասխան տուին․ «Ի՞նչ պատճառաւ կ՚ուզէք որ ձեր սուլթանը յարգենք ։ Մենք անոր հպատակները չենք, և ոչ ալ անոր հողերուն մէջն ենք ։» Այս խօսքերն ըսելէն ետև՝ մեզ պաշարեցին և մեր վրայ յարձակեցան ։ Որչափ որ կարելի էր ինքզինքս երկար ժամանակ պաշտպանեցի, բայց տեսնելով որ վիրաւորուեր եմ և թէ դեսպանն, իր մարդիկն և իմիններս գետինը տապաստ ընկեր էին անշունչ, ձիուս մնացած ոյժէն օգուտ քաղեցի, որ նոյնպէս սաստիկ վիրաւորուեր էր, և անոնցմէ հեռացայ ։ Որչափ որ կրցայ ձիս առաջ քշեցի, և յանկարծ ոյժը հատնելով՝ յոգնութենէ և վազած արիւնէն գետինը փռուեցաւ կիսամեռ ։ Իսկոյն անորմէ ինքզինքս ազա-

տեցի, և գիտնալով որ մարդ մ՚ետևէս չկար, մտածեցի որ գողերն իրենց կողոպուտէն չեն ուզած հեռանալ ։

Ահա այսպէս մինակ, վիրաւոր և անօգնական մնացի ինծի անծանօթ երկրի մը մէջ ։ Չէի համարձակեր արահետ ճամբան բռնել՝ վախնալով որ դարձեալ այն գողերուն ձեռքը չիյնամ ։ Վէրքս՝ որ վտանգաւոր չէր, կապելէն ետև՝ մինչև իրկուն քալեցի, և լերան մը ստորոտը հասայ, որուն կողին վրայ քարայր մը տեսայ․ ներս մտայ և ճամբու վրայ ժողված քանի մը պտուղներ ուտելով՝ քիչ մը հանգստութեամբ գիշերն անցուցի ։

Հետևեալ առտու և քանի մ՚օր շարունակ քալեցի, բայց օթևան մը չգտայ ։ Ամիս մ՚ետքը բազմամարդ քաղաք մը հասայ, որ շատ գեղեցիկ դիրք մ՚ունէր և բազմաթիւ գետեր անոր շրջակաները ջրելուն՝ մշտանև գարուն մը կը տիրէր ։ Այն ատեն իմ կրած տխրժելի բաներս ուրախութիւն տուին ինծ և քանի մը վայրկեան փարատեցին իմ վիճակիս դառնաղէտ վիշտերն ։ Երեսս, ձեռներս, ոտներս արևէն այրեր և թուխ գոյն մ՚առեր էին․ անդուլ քալելէն մուճակներս մաշեր էին և ստիպուեր էի բոպիկ քալելու․ ասկէ զատ լաթերս բզիկ բզիկ եղեր էին ։

Քաղաքը մտայ որ հարց ու փորձ ընեմ և իմանամ ուր գտնուիլս, իր խանութին մէջ աշխատող դերձակի մը հանդիպեցայ ։ Իմ երիտասարդ հասակս և կերպարանս դիտելով հասկցաւ որ չեմ ինչ որ կ՚երևէի և իս իր մօտ նստեցուց ։ Հարց ու փորձ ըրաւ թէ ո՛վ եմ, ուսկից կուգամ և ինչո՞ւ համար եկեր եմ ։ Ինչ որ գլխիս եկեր էր մանր պատմեցի, և իմ ով ըլլալս անգամ անոր յայտնելու չվարանեցայ ։ Դերձակն ուշի ուշով մտիկ ըրաւ ինձ, բայց երբ խօսքս աւարտեցի, փոխանակ մխիթարելու, իմ ցաւերս աւելցուց ։ «Զգուշ եղիր, ըսաւ, և ինչ որ ինծ պատմեցիր ուրիշին չյայտնես․ վասն զի գահակալ իշխանը հօրդ ամենամեծ թշնամին է և, եթէ գալուստդ իմանայ, անտարակոյս քեզի փորձանք մը կը հասցնէ ։» Դերձակին անկեղծութեան վրայ կասկած մը չունեցայ, երբ իշխանին անունն ինծ յայտնեց ։ Բայց որովհետև այն իշխանին և հօրս մէջ տիրած ատելու-

թիւնը մեր արկածներուն հետ յարաբերութիւն չունի ; չէք դժարիր անշուշտ , տիկին , եթէ նոյն կէտը լռութեամբ անցնիմ :

Շնորհակալ եղայ դերձակին որ ինծի այնպէս խրատ տուաւ , և ըսի որ լիովին իր խորհրդոց համեմատ պիտի վարուիմ և ինծի ընելիք երախտիքը երբէք չպիտի մոռնամ : Գուշակելով որ անօթի եմ , ուտելիք բերել տուաւ ինծի համար , և մինչև անգամ սննեակ մը շնորհեց , և ես ալ ընդունեցայ :

Իմ գալէս քանի մ՚օր ետքը՝ տեսնելով որ իմ ըրած երկար և տաժանելի ճամբորդութեանս խոնջէնքն առած եմ , և գիտնալով որ մեր կրօնակից իշխաններէն շատերն՝ արհեստ մը կամ գործ մը կը սորվին որպէս զի եթէ բաղդը ձախորդ դառնայ , ՚ի հարկին գործածեն և ապրին , հարցուց ինծ թէ բան մը գիտեմ որով կարող ըլլամ ապրուստս ճարել , առանց ուրիշի բեռ ըլլալու : Պատասխան տուի որ երկուքն ալ գիտեմ , թէ՛ քերական , բանաստեղծ եմ , և թէ մանաւանդ շատ լնաւոր գիր ունիմ : «Բոլոր այդ գիտութեամբ , պատասխանեց ինծ , այս երկրիս մէջ պատառ մը հաց չես կրնար շահիլ . այդ գիտութիւններուն պէս անօգուտ բան չկայ այս քաղքիս մէջ : Եթէ կ՚ուզես խորհրդիս հետևիլ , յարեց նա , կարճ հագուստ մը հագիր , և որովհետև կորովի և ուժեղ կ՚երևիս ինծ , մօտակայ անտառը գնա ու վառելու փայտ կտրէ . ետքը զանիկ շուկան տար ծախէ , և ստոյգ եղիր որ պզտիկ եկամուտ մը կ՚ունենաս , ասով մարդու բերան չես ծուեր և անկախ կ՚ապրիս : Այս կերպով՝ կ՚սպասես որ Աստուած քեզ յաջողէ , և կենացդ երջանկութեան մասը բերող ամպը փարատէ և ստիպէ քեզ ծնունդդ պահելու : Կը խոստանամ քեզի առասան մը և տապար մը գտնելու :»

Անյայտ մնալու փափաքս և ապրուստս ճարելու հարկը յորդորեցին զիս այս գործը սկսելու , թէև անարգ և տաժանելի գործ մ՚էր : Հետևեալ օրն իսկ դերձակն ինծի համար առասան մը , տապար մը գնեց և կարճ հագուստ մը . յետոյ զիս աղքատիկ բնակիչներու պաշտպանութեան յանձնեց որ փայտահարութեամբ իրենց օրապահիկը կը շահէին , և աղաչեց որ զիս իրենց հետ տանին : Անտառը գացի անոնց հետ , և առջի օրէն՝ գլխիս վրայ կրելով փայտի բեռ մը քաղա-

քը բերի և կէս ոսկիի ծախեցի . վասն զի՝ թէև անտառը հեռու չէր , բայց քիչ փայտատ գտնուելուն գործին ծանրութեան պատճառաւ , փայտը շատ սուղ էր : Քիչ ատենի մէջ շատ ստակ շահեցայ , և դերձակին հատուցի ինծի փոխ տուած գումարը :

Արդէն տարի մը կար որ այսպէս կ՚ապրէի , երբ օր մը՝ սովորականէն աւելի անտառին խորերը գացի , ախորժելի վայր մը հասայ . և սկսայ փայտ կտրել : Ծառի մ՚արմատը խլելու ատենս երկաթէ օղակ մը տեսայ որ նոյն մետաղէ կափարիչէ մ՚անցուցեր էին . իսկոյն վրայէ հողը հանեցի , կափարիչը վեր առի և սանդուղ մը տեսնելով՝ անկէ վար իջայ տապարովս : Երբ սանդղին ստորոտը հասայ , ինքզինքս ընդարձակ պալատի մը մէջ գտայ , որ ինծի մեծ զարմանք պատճառեց , երբ անոր մէջ գտնուած լոյսը տեսայ , այնպէս որ կարծես թէ երկրիս վրայ ամենէն բացօթեայ տեղը շինուեր էր : Յասպիսէ սիւներով շինուած՝ որոյ պատուանդաններն ու խոյակները միաձոյլ էին , գալթէ մ՚անցայ . բայց տեսնելով որ տիկին մ՚իս դիմաւորելու կուգայ , անոր կերպարանն այնքան ազնիւ , հեշտալի և գեղահրաշ երևցաւ ինծ՝ որ աչքերս ուրիշ առարկաներէ դարձնելով՝ մի միայն անոր վրայ յարեցի և նայեցայ :

Գեղանի կնկան մինչև քովս գալու ծանրութիւն չտալու համար , ես շտապեցի անոր մօտենալու , և անոր ազնուութեամբ ողջոյն տալու ատենս , ինծ ըսաւ . «Ո՞վ ես դու . մա՞րդ ես թէ ջին . — Մարդ եմ , տիկին , պատասխան տուի անոր ոտք ելնելով , և ջիներու հետ գործ չունիմ : — Ի՞նչ դիպուածով , յարեց նա խորին հառաչով մը , այս տեղ կը գտնուիս : Քսան հինգ տարիէ վեր հոս կը բնակիմ և բոլոր այս ժամանակիս մէջ քեզնէ զատ մարդ տեսած չեմ :»

Այս կնկան հիանալի գեղեցկութիւնն՝ որ աչքիս զարկեր էր , իր անուշութիւնն և հիւրասէր պարկեշտութիւնը համարձակութիւն տուին ինծ անոր ըսելու : «Տիկին , ձեր հետաքրքրութիւնը գոհ ընելու պատիւն ունենալէն առաջ , ներուի ինծ ըսելու որ չափազանց ուրախ եմ այս անակնկալ հանդիպումին վրայ , որ իմ տրտմութիւնս սփոփելու , և կարելի է ձեզ ալ աւելի երջանիկ ընելու առիթ մը կ՚ընծայէ ինծ :» Ճշտիւ պատմեցի այնուհետև թէ ինչ տարօրինակ

գլխուածով ինծի պէս արքայորդւոյ մ'առջև կը գտնուի, թէ ինչպէս բարձր ուզեց որ փառաւոր բայց ըստ երևոյթին տաղտկալի բանտին դուռը գտնեմ։

Աւա՜ղ, իշխան, ըսաւ նա նորէն հառաչելով, իրաւունք ունիս կարծելու որ այս շքեղ և ճոխ բանտը խիստ տաղտկալի բնակարան մի է։ Ամենէն չքնաղ վայրերն անախորժ են մարդուս երբ իր կամաց հակառակ այն տեղ կը գտնուի։ Անտարակոյս լսած ես մեծ Եպիտիմարոս թագաւորին անունն որ Եբենոս կղզին կ'իշխէր. այս անունը կը կրէ վասն զի նոյն մեծագին փայտն առատօրէն կ'արտադրէ։ Ես անոր աղջիկն եմ։

Թագաւոր հայրս իշխան մ'իբր ամուսին ընտրեր էր ինծի համար որ իր եղբօրորդին էր. բայց հարսանեաց առաջին գիշերն՝ երբ արքունիքն և Եբենոս կղզւոյն մայրաքաղաքը մեծ խրախճանութեան մէջ էին, դեռ ամուսնոյս չյանձնուած՝ ջին մ'եկաւ զիս յափշտակեց։ Նոյն միջոցին մարեցայ և ինքզինքս կորուսի. և երբ ուշաբերեցայ, ինքզինքս այս պալատին մէջ գտայ։ Երկար ատեն անմխիթար մնացի, բայց ժամանակ անցնելով և 'ի հարկէ սովորեալ ոգիին հետ ընտանեցայ։ Քսան և հինգ տարի կայ, ինչպէս որ արդէն ըսի, այս տեղ կը գտնուիմ, ուր ըստ հաճոյս կը վայելեմ ամէն ինչ որ կենաց պիտանի է, և ամէն ինչ որ կրնայ գոհ ընել իշխանուհիի մը զարդերու և հագուստի մասին։ Տասն օրն անգամ մը միայն ջինը կուգայ գիշեր մ'անցընելու հետս, և աւելի չմնար, վասն զի պատճառ կը բերէ թէ ուրիշ կնկան մը հետ կարգուած է, որ պիտի նախանձի եթէ իմանայ որ էրիկն անհաւատարիմ է։ Սակայն, եթէ իրմէ պէտք ունենամ, թէ ցորեկը և թէ գիշեր, այն ինչ սենեկիս դուռը կախուած հմայիլի մը կը դպիմ որ ջինն երևան կ'ելնէ։ Չորս օր առաջ եկած է, ուստի վեց օրէն կրնայ դառնալ։ Հետևապէս կրնաս հինգ օր ինծի հետ մնալ՝ ինծի ընկերութիւն ընելու, եթէ կը կամիս, և պիտի աշխատիմ քեզ մեծարել պատուոյդ և աստիճանիդ համաձայն։»

Այսպիսի շնորհ մը հայցելով եթէ ընդունէի երջանիկ պիտի ըլլայի, ինքն որ յօժարակամ կ'առաջարկէ հարկաւ չէի կրնար մերժել։ Իշխանուհին զիս մաքուր, հանգիստ և շքեղ բաղնիք մը մտցուց, և

երբ դուրս ելայ իմ հագուստիս տեղ փառաւոր զգեստ մը գտայ և ոչ այնչափ ճոխութեան որչափ անոր հետ նստելու արժանի ըլլալու համար հագայ։

Բազմոցի մը վրայ նստանք, որ ճոխ գորգով մը ծածկուեր՝ և Հնդկաստանի ամենէն աղուոր դիպակներէ բարձեր ունէր. իսկ քանի մը վայրկեան ետքը սեղանին վրայ խիստ ընտիր կերակուրներ դրաւ։ Միասին ճաշ ըրինք, մինչև իրկուն շատ ախորժելի կերպով անցուցինք և գիշերն ալ զիս իր անկողինն ընդունեց։

Միւս օր՝ որովհետև ինծի հաճելի ըլլալու ամէն միջոցներ գործածելու կը ջանար, ճաշին ամենընտիր շիշ մը հին գինի մեծարեց, և ինքն ալ բարեսիրաբար ինծի հետ քանի մը բաժակ պարպել ուզեց։ Երբ գլուխս այս ախորժահամ ըմպելիով տաքցաւ. «Գեղանի իշխանուհիս, ըսի, երկար ատենէ վեր ողջ ողջ թաղուած ես. եկուր ետևէս եկուր, արի վայելելու այն ճշմարիտ արևուն լոյսն որմէ տարիներով զուրկ մնացեր ես։ Թող տուր այն շինծու լոյսն որ քեզ կը պաշարէ։»

— Իշխան, պատասխան տուաւ ինծ ժպտելով, մէկդի՛ թող այդ խօսքերն։ Աշխարհիս ամենէն շքեղ արևը բանի տեղ չեմ դներ, բայց միայն տալիք տաս օրէդ, ինը հատն ինծ շնորհես, և տասներորդը ջինին պարգևես։ «Իշխանուհի, վրայ բերի, կը նայիմ որ ջինէն վախնալուդ այսպէս կը խօսիս։ Իսկ ես այնքան չեմ երկնչիր իրմէ որ հիմակ իր հմայեկն անոր վրայ գրուած հմայական խօսքերը կտոր կտոր պիտի ընեմ։ Թող այն ատեն առջևս երևի, իրեն կ'սպասեմ։ Որչափ.քաջ և ահարկու ալ ըլլայ, իմ բազկիս զօրութիւնն անոր պիտի զգացնեմ։ Կ'երդնում աշխարհիս բոլոր ջիները բնաջինջ ընել, և քուկդ ամենէն առաջ։» Իշխանուհին՝ որ իմ խօսքիս հետևութիւնը կը գուշակէր, աղաչեց որ հմայեկին չդպչիմ։ «Այս կերպով թէ իմ և թէ քու կորուստդ կը պատճառես։ Ես քեզմէ աւելի լաւ կը ճանչեմ ջիները։» Գինիին շոգին արգիլեց իշխանուհիին մէջ բերած պատճառները կշռելու, ոտքով հմայեկին զարկի, և զայն կտոր կտոր ըրի։

Հազիւ հմայեկը կտոր կտոր ըրի որ պալատը տատանեցաւ, կարծես թէ փլելու մօտ էր, որոտալիր ձայներ և կայծակներ լուսեցան և ապա խաւար յաջորդեց։ Այս ահարկու գոռ ու գոչումն խելքս գինիին շո-

դին ցրուեց , և զգացուց ինձ , թէև շատ ուշ , թէ ինչ մեծ սխալ գործեցի ։ «Իշխանուհի , ըսի անոր , այս ի՞նչ կը նշանակէ ։» Պատասխան տուաւ ինձ բոլորովին զարհուրած և առանց իր դժբաղդութիւնը մտածելու . «Աւա՜ղ , բանդ կը բուսնի , թէ որ ասկէ խոյս տալու ճար մը չգտնես ։»

Իր խորհրդին հետևեցայ . և իմ սարսափս այնքան մեծ եղաւ որ տապարս և հողաթափներս մոռցայ ։ Այն ինչ իջած սանդղէս ելեր էի որ հմայեալ պալատը բացուեցաւ , և ճինին ճամբայ տուաւ ։ Ճինն իշխանուհիին հարցուց բարկութեամբ . «Ի՞նչ պատահեցաւ քեզ , և ինչո՞ւ համար իս կը կոչես ։ — Սրտի ցաւ մը բռնեց և ստիպեց իս սա տեսած գինիիդ շիշն առնելու . քանի մը ումպ խմեցի . դժբաղդաբար ոտքս սահեցաւ և հմայեկին վրայ ինկայ և կոտրեցի ։ Ուրիշ բան մը չկայ ։»

Այս պատասխանին վրայ ճինը կատղօրէն ըսաւ . «Դու անիրաւ , ստախօս կին մ'ես ։ Ինչո՞ւ համար սա տապարն ու ոտքի ամաններն այս տեղ կը գտնուին ։ — Դեռ հիմակ կը տեսնեմ զանոնք , վրայ բերաւ իշխանուհին ։ Այնչափ զայրոյթով եկար հասար , կարելի է որ հետդ բերիր , տեղէ մ'անցնելով անզգուշութեամբ ։»

Ճինը նախատինք և հարուած տեղալով իշխանուհիին վրայ պատասխանեց և անոնց ձայնը լսեցի ։ Այսպիսի անգութ կերպով իշխանուհին չարչարելուն՝ երբ անոր արտասուագին ողբն ու կոծը լսեցի չկրցայ դիմանալ ։ Արդէն ինձի տուած հագուստը հաներ էի , և իմս հագեր էի , զոր բաղնիքէն ելած օրուանս հետևեալ օրը սանդղին վրայ դրեր էի ։ Այսպէս վեր ելայ , և սիրտս այնքան ցաւով և կարեկցութեամբ շարժած էր որչափ որ այս մեծ դժբաղդութեան պատճառն ես էի , և ամենագեղեցիկ իշխանուհի մը խուժկի և անհաշտ ճինի մը անգթութեան զոհելով՝ ինքզինքս յանցաւոր և յետին ծայր ապերախտ մարդ մը կը համարէի ։ Իրաւ է որ քսան և հինգ տարիէ վեր բանտն է , կ'ըսէի , բայց 'ի բաց առեալ ազատութիւնն՝ երջանիկ ըլլալու համար բան մը կարօտ չէր ։ Իմ սաստիկ սրամտութիւնս անոր երջանկութեան վերջ տալով՝ անխիղճ դևի մը բռնութեան ճանկին տակ կը ձգէ ։ Կափարիչը ծածկեցի , վրան հող դրի , և փայտի բեռ մ'առած

քաղաքը դարձայ առանց ըրածս գրածս գիտնալու , այնքան յուզուեր էի և վրդովեր ։

Իմ հիւրընկալ դերձակս իս նորէն տեսնելուն մեծ ուրախութիւն յայտնեց ։ «Բացակայութիւնդ մեծ անհանգստութիւն պատճառեց ինձ , ըսաւ , վասն զի ծննդեանդ գաղտնիքը գիտեմ ։ Ինչ մտածելս չգիտէի և կը վախնայի որ մէկը քեզ ճանչած ըլլար ։ Օրհնեալ ըլլայ Աստուած որ դարձար ։» Շնորհակալ եղայ իր ջերմագին սիրոյն համար . բայց չըսի անոր թէ գլխիս ինչ փորձանք եկեր էր և թէ ինչու համար առանց տապարի և մուճակի դարձեր եմ ։ Խուցս քաշուեցայ և հազար անգամ զղջացի դատապարտելով իմ անխոհեմութիւնս ։ «Իմ և իշխանուհւոյն երջանկութիւնը տեղ մը չպակսի գտնուէր , կ'ըսէի իւրովի , եթէ ինքզինքս զսպէի և հմայեկը չխորտակէի ։ Մինչդեռ այս տրտմալի մտմտուքին մէջն էի , դերձակը ներս մտաւ ու ըսաւ . «Ծերունի մը , զոր չեմ ճանչեր , այս տեղ եկեր է իր ճամբուն վրայ գտած տապարդ և մուճակներդ միասին բերելով , ինչպէս որ ինքը կ'ըսէ ։ Ընկերներէդ իմացեր է որ այս տեղ կը բնակիս ։ Եկուր անոր հետ խօսելու , ինքն անձամբ կ'ուզէ զանոնք ձեռքդ յանձնել ։» Այս խօսքիս վրայ , գոյնս նետեց և բոլոր մարմինս դող ելաւ ։ Դերձակին առոր պատճառը կը հարցնէր , երբ սենեկիս յատակը բացուեցաւ ։ Ծերունին՝ որ սպասելու համբերութիւն չէր ունեցեր , երևան ելաւ տապարով և հողաթափներով ։ Նոյն ինքն Եփենոս կղզին իշխանուհիին առևանգիչն էր , որ այսպէս ծպտեալ եկեր էր անհնարին բարբարոսութեամբ զանի չարչարելէն ետև ։ «Ես ճին եմ , ըսաւ մեզ , Եպլիսի աղջկան որդին , ճիներուն իշխանը ։ Միթէ այս քու տապարդ չէ՞ , յարեց նա խօսքն ինձ ուղղելով . միթէ ասոնք քու հողաթափներդ չե՞ն ։»

Եւ պատասխան տալու ժամանակ չթողլով ինձ , և այս ալ իմ ձեռքէս չէր գար , այնքան իր ահուելի ներկայութիւնն իս շփոթեր էր , մէջքէս բռնեց , սենեկէն դուրս քաշքշեց , և դէպ 'ի վեր սլանալով՝ այնչափ ուժով և արագութեամբ իս վերուց դէպ 'ի երկինք՝ որ շուտով հասկցայ թէ որչափ ճամբայ ըրեր է քանի մը վայրկենի մէջ ։ Նոյն արագութեամբ երկիրս իջաւ , ոտքով զարնելով զայն բացաւ , անոր

մէջ մտաւ և յանկարծ դիւթեալ պալատը գտայ ինքզինքս , Եփինոս կոզկին գեղեցիկ իշխանուհւոյն առջև ։ Բայց , աւա՜ղ , ինչ տեսարան էր այն . բան մը տեսայ որ սիրտս խշխշացուց ։ Այս իշխանուհին ձերկ էր և արիւնլուայ , գետնին վրայ փռուած էր մեռեալ քան կենդանի , և այտերն արտասուքով թրջած ։ «Դեռնդաւոր , ըսաւ անոր Ճինն զիս անոր ցոյց տալով , միթէ այս չէ՞ քու սիրողդ ։» Իշխանուհին իմ վրայ նետեց իր նուաղուն աչքերն և պատասխան տուաւ տրտմագին . «Չեմ ճանչեր զինքը , մինակ այս միջոցիս կը տեսնեմ ։ — Ի՞նչ , կրկնեց Ճինն , այն է պատճառ որ քեզ իրաւամբ այդ վիճակին մէջ դրի , և կը համարձակիս ըսելու որ զանի չես ճանչեր ։ — Եթէ զանի չեմ ճանչեր , վրայ բերաւ իշխանուհին , կ'ուզե՞ս որ սուտ խօսիմ , որով իր կորստեանը պատճառ ըլլամ ։ — Լաւ ուրեմն , ըսաւ Ճինը , սուր մը քաշելով և իշխանուհւոյն տալով , եթէ զինքը բնաւ տեսած չես , առ այս սուրս և անոր գլուխը կտրէ ։ — Ափսո՜ս , ըսաւ իշխանուհին , ի՞նչպէս այդ հրամանդ կրնամ կատարել ։ Անչափ ուժէ ընկած եմ որ թեւս չեմ կրնար վեր առնուլ , և եթէ կարող ալ ըլլամ , կարելի՞ էր ինծ չճանչցած մէկ անձս , անմեղ մը սպաննելու սիրտը ունենալ ։ — Այդպէս մերժելով խնդիրս , ըսաւ այն ատեն Ճինը , բոլոր յանցանքդ երևան կը հանես ։» Վերջը դէպ ինծ դառնալով՝ ըսաւ . «Իսկ դու , զինքը չե՞ս ճանչեր ։»

Մարդկան մէջ ամենէն նենգամիտն ու ապաշնորհն եղած կ'ըլլայի եթէ իշխանուհւոյն առ իս ունեցած մի և նոյն հաւատարմութիւնն իրեն համար չտածէի , քանի որ անոր դժբաղդութեան պատճառն ես էի ։

Այս պատճառաւ Ճինին պատասխան տուի . «Ի՞նչպէս հնար է ինծ ճանչել զինքը , քանի որ այս անգամ միայն զինքը կը տեսնեմ ։ — Եթէ այդ այդպէս է , կրկնեց նա , առ այս սուրս և անոր գլուխը կտրէ ։ Այս պայմանաւ միայն քեզ ազատ պիտի թողում , և պիտի համոզուիմ որ իրօք հիմակ միայն կը տեսնես զինքն , ինչպէս որ կ'ըսես ։ — Ամենայն սիրով» պատասխան տուի անոր ։ Սուրը ձեռքէն առի , և Եփինոս կոզկին իշխանուհւոյն մօտեցայ , չէ թէ Ճինին բարբարիկ հրամանին գործակատարն ըլլալու , այլ միայն ձևերով՝ որչափ

որ հնար էր , հասկցնելու համար , թէ ինչպէս որ ինքն հաստատապէս իր կեանքն իմ սիրոյս զոհելու պատրաստ է , ես ալ իմս իրեն համար զոհելու տրամադիր կը գտնուիմ ։ Իշխանուհին միտքս իմացաւ ։ Իր ցաւերուն և տրտմութեան չնայելով՝ կարծիքը յայտնեց շնորհապէր նայուածքով մը և իմացուց թէ մտադիւր կը մեռնի և շատ գոհ է տեսնելով որ ես ալ իրեն համար մեռնիլ կը փափաքիմ ։ Այն ատեն ետ քաշուեցայ , և սուրը գետինը նետելով . «Ամէն մարդկան առջև պարսաւելի պիտի ըլլայի , ըսի Ճինին , եթէ վատօրէն սպաննէի , չէ թէ չճանչած անձս , այլ այս տեսած տիկնոջս պէս տիկին մը , այն միջոցին իսկ որ հոգին փչելու վիճակին մէջն է ։ Ինչ որ կ'ուզես ըրէ ինծ , քանի որ քու իշխանութեանդ տակն եմ , բայց քու բարբարիկ հրամանիդ չեմ կրնար հնազանդիլ ։

— Քաջ կը գիտեմ , ըսաւ Ճինն , որ երկուքնիդ ալ ինծի դէմ կը զինիք , և իմ նախանձս կը թշնամանէք , բայց ձեզի հետ այնպէս պիտի վարուիմ որ պիտի հասկնաք թէ որչափ մեծ է իմ կարողութիւնս ։» Այս խօսքիս վրայ՝ հրէշն առաւ սուրն և իշխանուհւոյն ձեռքը կտրեց , որ հազիւ թէ միւսովը նշան մ'ընել կրցաւ ինծ վերջին յաւիտենական ողջոյնը տալու համար . վասն զի արդէն կորուսած արիւնէն , և այն ատենն ալ թափածէն՝ այս յետին անգթութենէ ետև՝ հազիւ մէկ երկու վայրկեան կրցաւ ապրիլ , և այս տեսարանէս մարելով գետին ընկայ ։

Երբ ինքզինքս գտայ , զանգատ ըրի Ճինին որ զիս կը տանջէ և ժամ առաջ չսպաններ որ ազատիմ ։ «Զարկ , ըսի անոր , պատրաստ եմ մահաբեր հարուածն ընդունելու . այդ հարուածը կ'սպասեմ քեզմէ իբրև գերագոյն շնորհ մը ։» Բայց փոխանակ այս շնորհն ընելու . «Ահա տեսար , ըսաւ , ինչ կերպով կը պատժեն Ճիները անհաւատարմութեամբ կասկածելի կիները ։ Նա քեզ այս տեղ ընդունեց . եթէ ապահով ըլլայի որ աւելի մեծ նախատինք մ'ըրած է ինծ , այս միջոցիս իսկ քեզ բնաջինջ կ'ընէի . բայց գոհ պիտի ըլլամ քեզի շունի , իշու , առիւծի կամ թռչունի փոխելով ։ Այս փոփոխութիւններէն մէկն ընտրէ , քեզ ազատ կը թողում որ հաճածդ ընտրես ։»

Այս խօսքերը յոյս տուին ինծ անոր սիրտը կակղեցնելու ։ «Ո՜ Ճին ,

ըսի անոր , մեղմէ բարկութիւնդ , և քանի որ չես կամիր իմ կեանքս բառնալ՝ վեհանձնաբար շնորհէ ինձ զայն ։ Պիտի յիշեմ հանապազ քու ներողամտութիւնդ , եթէ ինձ ներես , ինչպէս որ լաւագոյն մարդն իր դրացիներէն մէկուն ներեց թէև իր վրայ մահու չափ կը նախանձէր ։

Ճինը հարցուց ինձ թէ ինչ անցեր է այս երկու դրացիներուն մէջ , յայտնելով միանգամայն որ այն պատմութիւնը մտիկ ընելու համբերութիւն պիտի ունենայ ։ Ահա ինչպէս ըրի անոր այս պատմութիւնը ։ Յուսամ , տիկին , որ չես դժարիր եթէ նոյնը ձեզի պատմեմ ։

ՆԱԽԱՆՁՈՑԻՆ ԵՒ ՆԱԽԱՆՁԵԱԼԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Բաւական մեծկակ քաղքի մը մէջ՝ երկու մարդիկ պատկից տներու մէջ կը բնակէին ։ Մէկը միւսին դէմ այնպիսի բուռն նախանձ մ'ունեցաւ , որ այս նախանձին առարկայ եղող մարդը միտքը դրաւ բնակարանը փոխել և հեռանալ , ստոյգ ըլլալով որ իր դրացւոյն նախանձը գրգռած է իրեն մօտ բնակելուն . վասն զի , որչափ որ անոր բարիք կ'ընէր , դարձեալ կը գիտէր որ ատելի է իր դրացւոյն ։ Ուստի իր ունեցած դոյզն ինչ գոյքով տունը ծախեց , քաշուեցաւ երկրին մայրաքաղաքն որ հեռու չէր , և քաղքէն կէս մղոնի չափ հեռի փոքրիկ հող մը գնեց ։ Բաւական կոկիկ տուն մը , աղուոր պարտէզ մը կար , նոյնպէս մեծկակ բակ մ'որուն մէջ անգործածելի ջրամբար մը կը գտնուէր ։

Բարի մարդն այս կալուածն առնելէն ետքը՝ տէրվիշի հագուստ դրաւ՝ մենաւոր կեանք մը վարելու համար , և իր տան մէջ շատ մը խցիկներ շինել տուաւ , ուր տէրվիշներու միաբանութիւն մը հաստատեց քիչ ժամանակի մէջ ։ Իր առաքինութեամբը քիչ ատենէն ծանօթ եղաւ ամենուն , և թէ ժողովրդեան մարդիկ և թէ քաղքին գլխաւոր-

ներն իր տնակը կը դիմէին ։ Վերջապէս ամէն մարդ զանի կը պատուէր և կը սիրէր սաստիկ ։ Հեռու տեղերէն ալ կուգային և անոր աղօթից միջնորդութիւնը կը հայցէին , և անոնք որ իր քովէն կը հեռանային իբր անոր միջոցաւ 'ի վերուստ ընդունած բարիքը կը հռչակէին ։

Այս մարդուն համբաւն իր ձգած քաղքին մէջ ալ տարածուելով՝ նախանձոտն այնքան կծու վիշտ մ'զգաց որ իր տունը տեղը , գործերը ձգեց երեսի վրայ՝ որպէս զի երթայ զանի 'ի կորուստ մատնէ ։ Այս նպատակաւ տէրվիշներու նոր մենաստանը գնաց , որուն մեծաւորն՝ որ առջէն իր դրացին էր , կարելի եղած բարեկամութեան նշաններով զանի ընդունեց ։ Նախանձոտն ըսաւ անոր որ յատկապէս կարևոր գործի մը վրայ իրմէ խորհուրդ ուզելու համար եկած է և կը խնդրէ առանձին տեսակցիլ ։ «Եւ որպէս զի , յարեց նա , մարդ մը մեզ չլսէ , խնդրեմ բակը մէջ պտոյտ ընենք , և որովհետև մութն ալ կը կոխէ , պատուիրէ տէրվիշներուդ որ իրենց յատուկ խցիկները քաշուին ։» Տէրվիշներու գլխաւորն անոր փափաքածը կատարեց ։

Երբ նախանձոտը բարի մարդուն հետ առանձին մնաց , ինչ որ ուզեց անոր պատմելու սկսաւ , բակին մէջ իրարու մօտ ման գալով , մինչև որ ջրամբարին եզրը հասաւ , զանի հրեց և մէջը նետեց , և ոչ ոք տեսաւ այս անօրէն գործն ։ Այս ընելէն ետև՝ շուտ մը հեռացաւ մենաստանէն , դուռը բացաւ անտես , և ուրախ զուարթ իր տունը դարձաւ իր ըրած Ճամբորդութեան վրայ , համոզուած ըլլալով որ իր նախանձը գրգռող մարդը բնաջինջ ըրած է . բայց կը սխալէր ։ Այն հին ջրամբարին մէջ պարիկներ և Ճիներ կը բնակէին , որոնք անանկ պատեհ ժամանակ այն վայրը գտնուեցան տէրվիշներու գլխաւորին օգնելու , որ մինչև վար իյնալը բռնեցին զանի և պահպանեցին , այնպէս որ վնաս մը չկրեց ։ Տէրվիշը գիտեց որ այս անկման մէջ՝ որով իր կեանքը պիտի կորսուէր , տարօրէն բան մը կար , բայց ոչ բան մը կը տեսնէր և ոչ կ'զգար ։ Սակայն քիչ ատենէն ձայն մը լսեց որ ըսաւ . «Գիտէ՞ք ով է այս բարի մարդն որուն օգնութեան հասանք ։» Եւ ուրիշ ձայներ՝ Ոչ՝ պատասխանելով՝ առաջին ձայնը կրկնեց . «Հիմակ ես ձեզի պիտի յայտնեմ ։ Այս մարդը յետին ողորմածութենէ շարժեալ՝

իր բնակած քաղաքէն ելաւ և եկաւ այս տեղ հաստատուեցաւ, իրեն դէմ նախանձող դրացիներէն մէկը բռնելու յուսով ։ Այս վայրս ամենուն համարումը գրաւեց, և նախանձոտն այս բանիս չհանդուրժելով՝ ելաւ հոս եկաւ զանի բնաջինջ ընելու մտօք, և այս խորհուրդը պիտի 'ի գործ դնէր, եթէ այս բարի մարդուն աջակից չգտնուէինք, որուն համբաւն այնչափ մեծ է, որ սուլթանն, որ մօտակայ քաղաքը կը բնակի, վաղն անոր այցի պիտի գայ խնդրելու համար որ իր աղջկան համար աղօթք ընէ ։

Ուրիշ ձայն մ'ալ հարցուց թէ իշխանուհին ինչ պէտք ունէր տէրվիշին աղօթքէն. ասոր ալ առաջին ձայնը պատասխան տուաւ. «Չգիտես ուրեմն որ իշխանուհին Տէմնէմի որդի՝ Մէմուն ճինէն դիւահարած ու սիրահարած է ։ Բայց գիտեմ թէ ինչպէս տէրվիշներու այս բարեսիրտ գլխաւորը կրնայ զանի բուժել. գործը շատ դիւրին է և հիմակ պիտի ըսեմ քեզի ։ Իր մենաստանին մէջ սև կատու մը կայ, որ պոչին ծայրը ճերմակ պիսակ մ'ունի արծաթէ ստակի մեծութեամբ ։ Բաւական է այս ճերմակ պիսակին վրայ եղած մազերէն եօթ թել մազ քաշել հանել այրել և անով իշխանուհիին գլուխը մխել ։ Իսկոյն այնպէս պիտի բժշկուի Մէմուն այնէն որ այնուհետև անոր երկրորդ անգամ մօտենալու չպիտի յանդգնի ։

Տէրվիշներուն գլխաւորը փէրիներու և ճիներու այս խօսակցութեան ամէն մէկ մասը միտքը պահեց, որոնք այն խօսքերն ըսելէն ետև՝ բոլոր գիշեր լուռ կեցան ։ Միւս առտու, արև ծագելուն՝ տէրվիշն աւերակները կրցաւ նշմարել և որովհետև ջրամբարը շատ տեղերէ փլած էր, ծակ մը տեսաւ և առանց դժուարութեան անկէց դուրս ելաւ ։

Իր ընկերակից տէրվիշներն՝ որ զինքը կը փնտռէին, սքանչացան զանի տեսնելով ։ Պատմեց անոնց առջի օր հիւրընկալած մարդուն անգթամտութիւնն և իր խուցը քաշուեցաւ ։ Շատ չանցաւ այն սև կատուն՝ որուն վրայ առջի իրիկուն փէրիներն ու ճիները խօսեր էին, եկաւ և իր սովորական գգուանքը սիրոջն ըրաւ ։ Տէրվիշը զանի առաւ, պոչին ճերմակ պիսակէն եօթը թել մազ փրցուց և զատ դրաւ, որպէս զի 'ի հարկին զանոնք գործածէ ։

Դեռ արևը նոր ելեր էր որ սուլթանն՝ որ ամէն ձեռքէն եկածը կ'ընէր իշխանուհիին շուտ մը բժշկութիւն գտնելու համար, վանատան դուռը հասաւ ։ Իր առաջնորդին ըսաւ որ կանկ առնու և իրեն ընկերացող քանի մը մեծ նախարարներով ներս մտաւ ։ Տէրվիշներն ընդունեցան զանի խորին ակնածութեամբ մը ։

Սուլթանն անոնց գլխաւորը մէկդի կանչեց և ըսաւ. «Բարի Շէյխ (ծերունի), կարելի է արդէն գիտես թէ ինչ պատճառաւ հոս եկայ ։
— Այո՛, վեհափառ, պատասխանեց տէրվիշը համեստութեամբ. կարծեմ թէ, եթէ չեմ սխալիր, այս պատիւն՝ որուն արժանի չեմ, իշխանուհիին հիւանդութեան պարտաւոր եմ ։ — Ճիշդ այդ է, պատասխանեց սուլթանն ։ Ինձի կեանք պիտի տաս; եթէ, ինչպէս որ կը յուսամ, աղօթքովդ կարենաս աղջկանս բժշկութիւն տալ ։ — Վեհափա՛ռ տէր, պատասխանեց բարի մարդն, եթէ կը հաճիս զանի այս տեղ բերել տալ, կը յուսամ որ Աստուծոյ օգնութեամբն ու շնորհիւն անոր կատարեալ առողջութիւնը կ'ստանամ ։

Իշխանն ուրախութենէ յափշտակուած՝ իսկոյն մարդ ղրկեց որ աղջիկը բերեն, որ շատ չանցաւ եկաւ, հետն ունենալով շատ մը կիներ ու ներքինիներ, և այնպէս երեսին վրայ քօղ մը ձգեր էր որ անճանաչելի էր ։ Տէրվիշներուն գլխաւորը կրակարան մը բռնել տուաւ իշխանուհիին գլխոյն վերև, և հազիւ թէ վառած ածուխներուն վրայ բերել տուած եօթը թել մազը դրաւ որ Մէմուն ճինը, Տէմնէմի որդին՝ մեծ աղաղակներ հանեց, առանց տեսնուելու, և իշխանուհին ազատ թողուց ։ Նախ երեսը ծածկող քօղին տարաւ ձեռքն և վերցուց որ նայի թէ ո՞ւր կը գտնուի ։ «Ո՞ւր եմ ես, գոչեց նա, ո՞վ բերաւ զիս այս տեղ ։» Այս խօսքիս վրայ՝ սուլթանն իր խնդութիւնը չկրցաւ ծածկել. իր աղջիկը գրկեց, և աչքերէն պագաւ. պագաւ նաև տէրվիշներու գլխաւորին ձեռքն և իրեն ընկերացող պաշտօնատարներուն ըսաւ. «Ըսէք ինձ ձեր կարծիքն ինչ վարձքի արժանի է այն որ այսպէս իմ աղջիկս բժշկեց ։» Ամէնքը պատասխան տուին թէ արժանի է անոր հետ կարգուելու ։ «Ես ալ այդպէս կը մտածէի, վրայ բերաւ սուլթանն, և այս վայրկենէս իմ փեսաս կ'ընեմ զանի ։»

Քիչ ատենէն առաջին վէզիրը մեռաւ ։ Սուլթանը տէրվիշն անոր

տեղը դրաւ , և սուլթանն ալ առանց արու զաւակ թողլու մեռնելուն՝ կրօնական և զինուորական դասերը գումարուեցան՝ և ընդհանուր հաւանութեամբ բարի տէրվիշը սուլթան անուանեցին :

Այսպէս բարի տէրվիշն իր աներին աթոռն ելնելով՝ օր մը հանդէսի առեն պալատականներով շրջապատուած՝ իր Ճամբուն վրայ տեսաւ նախանձոտը բազմաթիւ ամբոխին մէջ : Վէզիրներուն մէկն իր քովը կանչեց և կամացուկ մ'ըսաւ . «Գնա՛ , և սա մարդն որ կը տեսնես ինծի բեր , և նայէ որ չվախցնես :» Վէզիրը հնազանդեցաւ , և երբ նախանձոտը սուլթանին առջեն ելաւ , սուլթանն անոր ըսաւ . «Բարեկամ , սաստիկ ուրախ եմ քեզ տեսնելուս :» Եւ այն առեն խօսքը պաշտօնատարի մ'ուղղելով՝ ըսաւ . «Հատ մը գանձէս հազար ոսկի բերէք , ասկէ զատ՝ մթերանոցներէս քսան բեռ թանկագին ապրանք առէք և անոր տուէք և զինքն իր տունն առաջնորդելու համար շատ պահապաններ առնուն թող զանի տանին :» Այս յանձնարարութիւնը պաշտօնատարին ընելէն ետև՝ մնաս բարև ըսաւ նախանձոտին և իր Ճամբան շարունակեց :

Երբ այս պատմութիւնը պատմեցի Եպենոս կղզւոյն իշխանուհին սպաննող ճինին , անոր հետևելու յորդորեցի զինքն : «Ո՛ ճին , ըսի անոր , կը տեսնես որ այս բարեբար սուլթանն ոչ միայն չշատացաւ մոռնալով որ նախանձոտն իր կեանքը բնաջինջ ընել կ'ուզէր , այլ նաև մեծարեց զինքն և շատ մ'երախտիք ընելով Ճամբեց : Վերջապէս բոլոր Ճարտասանութիւնս թափեցի և աղաչեցի որ սանկ աղուոր օրինակի մը հետևի և ինծի ներողամիտ ըլլայ , բայց կարելի չեղաւ ինձ անոր սիրտը շարժել : «Այսչափ միայն կրնամ ընել քեզի համար , ըսաւ , որ քեզ չեմ սպաններ . բայց մի յուսար որ քեզ ողջ առողջ պիտի դարձնեմ : Պէտք է որ քեզ զգացնեմ թէ ինչ կարող եմ ընել իմ կախարդական արհեստովս :»

Այս ըսելով իս բռնեց ուժգին , դէպ 'ի սարերկրեայ պալատին կամարը վերցուց , և կամարը բացուելով որ իրեն Ճամբայ բանայ , իս այնչափ բարձր տարաւ , որ երկիրն ինծ փոքրիկ սպիտակ ամպ մ'երևցաւ : Այս բարձունքէն դէպ 'ի վար սլացաւ շանթի պէս և լերան մը կատարին վրայ դադար առաւ :

Այն տեղ ափ մը հող առաւ գետնէն , քանի մը բառեր արտասանեց կամ մռմռեց , թէև բան մը չհասկցայ , և հողն իմ վրայ նետելով . «Թող , ըսաւ , մարդու կերպարանքդ , և կապիկի դէմք առ :» Խօսքն աներևոյթ եղաւ , և կապիկի փոխուած , վշտաբեկ , անծանօթ երկրի մը մէջ մնացի , և չգիտէի թէ հօրս իշխանութեան երկիրներուն մօտ էի թէ հեռու :

Լերան կատարէն վար իջայ , դաշտ մը մտայ , որուն ծայրն ամսէ մը ետքը գտայ , և ծովուն եզերքը հասայ : Նոյն միջոցին ծովը հանդարտ էր , և ցամաքէն կէս մղոն հեռի նաւ մը նշմարեցի : Այսպիսի պատեհ առիթ մը ձեռքէ չհանելու համար , ծառի հաստ ճիւղ մը կտրեցի , ծովը նետեցի և անոր վրայ հեծայ մէկ ոտքս մէկ կողմէն , միւսը մէկալ կողմը նետելով՝ և մէյ մի ձեռքս գաւազան մ'առի թիակի տեղ գործածելու համար :

Այս կերպով նաւարկեցի և նաւուն մօտեցայ : Երբ բաւական մօտ եկայ և իս տեսան՝ նաւուն կամրջին վրայ գտնուող նաւաստիներուն և անցորդներուն արտաքոյ կարգի տեսարան մ'եղայ : Ամէնքը զարմանալով կը նայէին իս : Սակայն նաւին մօտ եկայ , և պարանի մը փաթթուելով՝ մինչև վեր ելայ : Բայց որովհետև չէի կարող խօսիլ , սոսկալի շփոթութեան մէջ ընկայ : Եւ իրօք նոյն միջոցին անանկ վտանգի մէջ էի որ ճինին իշխանութեան տակ գտնուած ատենս անցուցած վտանգիս չափ մեծ էր :

Վաճառականներն որ աւելորդապաշտ էին և խղճահար , կարծեցին թէ իրենց նաւարկութեան փորձանք կրնայ գալ եթէ նաւուն մէջ մնամ . ուստի անոնցմէ մին ըսաւ . «Լախտով մ'անոր գլուխը պիտի ճզմեմ :» Ուրիշ մը . «Նետ մը մարմնէն թափ պիտի անցնեմ :» Ուրիշ մը . «Պէտք է զանի ծովը նետել :»

Անտարակոյս անոնցմէ մէկն ըսածն 'ի գործ պիտի դնէր , եթէ նաւապետին քով երթալով անոր ոտքը չընկնէի . բայց որովհետև զգեստէն բռներ էի , և սաստիկ կ'աղաչէի , այնչափ սիրան եղաւ իմ ընթացքէս և թափած արտասուքէս որ իս իր պաշտպանութեան տակ առաւ , և սպառնաց պատժել այն մարդն որ ինծ չարիք հասցնելու կ'ընէ : Նոյնպէս շատ մը գգուեց իս : Ես ալ իմ կողմէս , խօսիլ չկարենալուս , իմ

երախտագիտութիւնս յայտնեցի կարելի եղած նշանները գործածելով։

Այնուհետեւ ծովուն հանդարտութեան հով մը յաջորդեց որ շատ տաքուկ չէր, մանաւանդ թէ մեղմ յաջող. յետոյ օր շարունակ նոյն հովը փչեց եւ բազմամարդ ու վաճառաշահ քաղաքի մը նաւահանգիստը անվնաս քշեց մեզ. այն տեղ երկաթ նետեցինք։ Այս քաղաքն մեծ էր, քանզի զօրաւոր տէրութեան մը մայրաքաղաքն էր։

Շատ չանցաւ մեր նաւին չորս կողմն առին անթիւ փոքրիկ նաւակներ՝ որոց մէջ լեցուն էին մարդիկ եւ եկեր էին իրենց բարեկամներուն դալուստը շնորհաւորելու, կամ իրենց հեռաւոր ծանօթներուն վրայ լուրեր հարցնելու, կամ պարզապէս հեռուէն եկած նաւ մը հետաքրքրութեամբ տեսնելու համար։ Անոնցմէ զատ՝ սուլթանին կողմէն քանի մը պաշտօնատարներ եկան եւ նաւին մէջ գտնուող վաճառականներուն հետ խօսիլ ուզեցին։ Վաճառականներն անոնց առջեւն ելան, եւ պաշտօնատարներէն մէկն՝ այսպէս սկսաւ խօսիլ.

«Մեր տէրը սուլթանը հրամայեց մեզ գալ յայտնել ձեզ իր ուրախութիւնը ձեր գալստեան վրայ, եւ խնդրել որ սա թղթին վրայ քանի մը տող գիր գրէք՝ ամէն մէկն իր ձեռօքը։ Ձեզի իր խորհուրդն իմացնելու համար պէտք է ըսել որ առաջին վէզիր մ'ունէր՝ որ գործոց մէջ մեծ յաջողակութեան տէր ըլլալէն զատ՝ սքանչելի գիր մ'ալ ունէր։ Քանի մ'օրէ վեր այս պաշտօնեայն մեռաւ։ Սուլթանը մեծ ցաւի մէջ է. եւ որովհետեւ միշտ անոր գրոյն վրայ զմայլելով կը նայէր, հանդիսաւոր երդում ըրաւ որ անոր պաշտօնն իրեն պէս քաջ գրող մէկու մը տայ։ Շատ մարդիկ իրենց գիրերը ներկայացուցին, բայց մինչեւ այսօր՝ բոլոր այս ընդարձակ պետութեան մէջ, մէկը չելաւ որ արժանի ըլլայ վէզիրութեան պաշտօնը վարելու։»

Այն վաճառականները որ կարծեցին թէ բաւական լաւ կը գրեն այն բարձր պաշտօնին արժանի ըլլալու համար, ետեւէ ետեւ ուզածնին գրեցին։ Երբոր լմնցուցին, յառաջ անցայ եւ թուղթին պատառը բռնողին ձեռքէն առի։ Ամէնքը, մանաւանդ նոր գրող վաճառականները՝ կարծելով թէ զայն պատռել կամ ծովը նետել կ'ուզեմ, ահագին աղաղակներ արձակեցին. բայց հանդարտ կեցան երբ տեսան որ թուղթը շատ վայելուչ կերպով բռներ եմ, եւ ես ալ գրելու համար փափաքս կը

յայտնեմ նշաններ ընելով։ Ասով ամենուն վախը զարմանքի փոխուեցաւ։ Բայց որովհետեւ բնաւ տեսած չէին որ կապիկ մը գիր գրել գիտնայ, եւ չէին կրնար հաւտալ որ միւս կապիկներէն աւելի ճարտար ըլլամ այս մասին, փորձ ըրին թուղթը ձեռքէս խլելու. սակայն նաւապետն իմ կողմս նորէն բռնեց եւ ըսաւ. «Թողուցէք որ գրէ։ Եթէ թուղթը մրոտէ, կը խոստանամ որ զինքն անմիջապէս պիտի պատժեմ։ Իսկ եթէ լաւ գրէ, ինչպէս որ կը յուսամ, վասն զի ասոր նման ճարպիկ, ուշիմ, եւ ամէն բան շուտ ըմբռնող կապիկ մը տեսած չեմ, այն ատեն իմ որդիս պիտի ընեմ զանի։ Որդի մ'ունէի որ գրեթէ ասոր չափ խելացի չէր։»

Տեսնելով որ ոչ ոք իմ դիտաւորութեանս կը հակառակէր, գրիչն առի, եւ արապացւոց մէջ գործածուած վեց տեսակ գիր գրելէն ետեւ՝ զայն վար դրի, եւ ամէն մէկ օրինակը սուլթանին 'ի գովեստ չորեքտողեան տաղեր կը պարունակէր։ Ոչ միայն իմ գիրս վաճառականներուն գրածէն գերազանց էր, այլ եւ կրնամ ըսել որ անոր նմանը նոյն երկրին մէջ դեռ չէին տեսած։ Երբոր լմնցուցի, պաշտօնատարները թղթի պատառն առին եւ սուլթանին տարին։

Սուլթանը միւս գիրերուն ուշադրութիւն չըրաւ. այլ միայն իմս քննեց, եւ այնչափ հաւնեցաւ որ պաշտօնատարներուն ըսաւ. «Ախոռէն ձի մ'առէք, եւ ամենէն գեղեցիկն ու պերճօրէն զարդարուած ձի մ'ըլլայ, նոյնպէս փառաւոր դիպակէ պատմուճան մը եւ տարէք այն մարդուն որ այս վեց տեսակ գիրերը գրած է։

Պաշտօնատարները սուլթանին այս հրամանին վրայ սկսան ծիծաղիլ։ Այս իշխանն անոնց համարձակութենէ սրտմտելով քիչ մնաց զանոնք պիտի պատժէր, բայց պաշտօնատարներն ըսին. «Վեհափառ տէր, կ'աղաչենք որ մեզի ներէք. այս գիրերը գրողը մարդ չէ, այլ կապիկ մը։ — Ի՞նչ կ'ըսէք, գոչեց սուլթանը, միթէ այս հիանալի գիրերը մարդու մը ձեռքով գրուած չեն։ — Ո՛չ, տէր իմ, պատասխանեց պաշտօնատար մը, կը հաւատենք որ կապիկ մը գրած է զանոնք մեր առջեւ։» Սուլթանը շատ զարմանալի գտաւ այս բանս եւ զիս տեսնելու հետաքրքրութիւն ունեցաւ։ «Հրամանս կատարեցէք, ըսաւ անոնց, շուտով ինծի բերէք այսպիսի հազուագիւտ կապիկ մը։»

Պաշտօնատարները նաւը դարձան և իրենց տրուած հրամանը նաւապետին հաղորդեցին . Նաւապետն ըսաւ որ սուլթանին կամքը թող ըլլայ ։ Իսկոյն պերճ դիպակէ պատմուճան մը հագցուցին ինձ և ցամաքը տարին , ուր սուլթանին ձին հեծուցին . սուլթանն ալ ինձի կ'ըսպասէր իր բազմաթիւ պալատականներով , որոնք գումարեր էր իս պատուելու համար ։

Ուղարկաւորութիւնը սկսաւ ։ Նաւահանգիստը , փողոցները , մայռանները , պատուհանները , պալատներու և տուներու պատշգամները , ամէն տեղ արանց և կանանց անհամար բազմութեամբ լցուեր էին , որոնք քաղքին ամէն կողմէն եկեր էին հետաքրքրութենէ շարժեալ իս տեսնելու համար . վասն զի ձայն մ'ելեր էր նոյն պահուն որ սուլթանն իրեն վէզիր ընտրեր է կապիկ մը ։ Այս ժողովուրդին այսպիսի նոր տեսարան մը տալէն ետև , որ անդուլ աղաղակներով իր զարմանքը կը յայտնէր , սուլթանին պալատը հասայ ։

Սուլթանն իր աթոռին վրայ նստեր էր և նախարարները զինքը շրջապատեր էին ։ Երեք անգամ խոնարհութիւն ըրի և վերջինին երկիրը պագի իր առջևը ։ Յետոյ կապկի դիրքով մը կեցայ ։ Բոլոր հանդիսականներն իմ վրայ հիանալով կը հիանային և չէին կարող հասկնալ թէ ինչպէս կարելի է որ կապիկ մը սուլթաններու վայել յարգանքը մատուցանելը գիտնայ . իսկ սուլթանն ալ ամենէն աւելի ապշեր մնացեր էր ։ Վերջապէս այս հանդիսին արարողութիւնը կատարեալ եղած կ'ըլլար եթէ իմ ձևերուս աւելցնէի նաև ճառ մը . բայց կապիկներն երբէք խօսած չեն , և թէև առաջուց մարդ ըլլալուս առաւելութիւնն ունէի , սակայն այս առաւելութիւնն ալ խօսելու արտօնութիւն մը չէր տար ինձ ։

Սուլթանն իր պալատականները ճամբեց . իր քովը միայն ներքինապետը , նորատի գերի մ'ու ես մնացինք ։ Ունկնդրութեան սենեկէն իր խուցը մտաւ , և ապսպրեց որ կերակուր բերեն ։ Երբ սեղան նստաւ , նշան ըրաւ ինձ մօտենալու և իրեն հետ կերակուր ուտելու ։ Իմ հնազանդութիւնս յայտնելու համար , գետինը պագի , ոտք ելայ և սեղան նստայ ։ Շատ համեստութիւն և երկչոտութիւն ցոյց տուի կերակուրի ժամանակ ։

Սեղանը վերցնելէն առաջ՝ կաղամար մը տեսայ , և նշան ըրի որ մօտ բերեն . երբ զայն առի , իմ կերպովս դեղձի մը վրայ ոտանաւորներ գրեցի , որ իմ երախտագիտութիւնս առ սուլթանն կը յայտնէին ։ Երբ սուլթանը զանոնք կարդաց , դեղձն անոր ներկայացնելուս , զարմանքն աւելցաւ ։ Սեղանը վերցնելէն ետև՝ տեսակ մ'ըմպելի բերին անոր և բաժակ մ'ալ ինձ տուաւ . խմեցի և անոր վրայ նոր ոտանաւորներ գրեցի , որով կը յայտնէի թէ ինչ վիճակի մէջ կը գտնուիմ շատ մը տառապանք քաշելէն ետև ։ Սուլթանն այս գրածներս ալ կարդաց և ըսաւ . «Եթէ մարդ մ'այսչափ բան գրէր , մեծ մարդերէն անգամ գերազանց պիտի հանդիսանար ։»

Այս իշխանը՝ սատրընջի խաղ մը բերել տալով՝ հարցուց ինձ նշանացի եթէ խաղալ գիտեմ և կ'ուզեմ իրեն հետ խաղալ ։ Գետինը պագի , և ձեռքս գլխիս տանելով՝ իմաց տուի որ պատրաստ եմ այս պատիւն ընդունելու ։ Առաջին խաղը սուլթանը շահեցաւ , սակայն երկրորդն ու երրորդն ես վաստկեցայ , և գիտնալով որ ասոր վրայ կը դժարի , զինքը մխիթարելու համար , տաղ մը շինեցի և անոր ներկայացուցի ։ Այս ոտանաւորին մէջ կ'ըսէի թէ երկու զօրաւոր բանակներ եռանդագին պատերազմեր էին բոլոր օրը՝ սակայն իրիկուան դէմ հաշտուեր և պատերազմի դաշտին վրայ հանդարտօրէն գիշերն անցուցեր էին ։

Այս ամէն բաները կապիկներու ճարպիկութեան և խելքին վրայ տեսած և լսած բաներէն շատ վեր կը գտնէր սուլթանն , և այսչափ սքանչելեաց առանձին ականատես միայ ըլլալ չուզեց ։ Աղջիկ մ'ունէր , զոր գեղեցկութեան Տիկին կ'անուանէին ։ «Գնա , ըսաւ ներքինապետին , գնա այն տիկինը բերել տուր այս տեղ . կը փափաքիմ որ իմ զգացած զուարճութեանս մասնակից ըլլայ ։»

Ներքինապետը դուրս ելաւ և քիչ առենէն իշխանուհին հետը բերաւ ։ Երեսը բաց էր . բայց այն ինչ սենեակը մտաւ որ իսկոյն քօղով զայն գոցեց , սուլթանին ըսելով . «Վեհափառ տէր , կ'երևի թէ շուարեր էք , կը զարմանամ որ զիս կը կանչէք մարդկան առջև երևելու համար ։ — Ի՞նչ ըսել կ'ուզես , աղջիկս , պատասխանեց սուլթանը , միթէ կատակ կ'ընես ։ Այս տեղ միայն փոքր գերին կայ , նոյնպէս վերակացու ներքինին և ես , որ երեսդ տեսնելու ազատութիւն ունինք .

ալ սակայն քօղդ վար առիր, և ես կը յանդիմանեմ որ քեզ այս տեղ բերել տուի: — Վեհափառ, պատասխանեց իշխանուհին, հիմակ պիտի հասկնաք որ իրաւունք ունիմ: Սա կապիկը՝ զոր կը տեսնէք, թէև կապիկի կերպարան ունի, գեղահասակ իշխան մ'է, և մեծ թագաւորի մ'որդին: Թովչութեամբ կապիկի կերպարան առած է: Էպլիսի աղջկան որդին՝ ջին մը՝ անոր այս խաղը խաղաց, Եպիդիմարոս թագաւորին աղջկան, Էպենոս կղզւոյն իշխանուհիին կեանքն անգթաբար ջնջելէն ետև:»

Սուլթանն այս խօսքերէն զարմանալով դէպ իմ կողմ դարձաւ, և առանց նշանով խօսելու ինծի հետ, հարցուց եթէ իր աղջկան ըսածները ստոյգ են: Որովհետև չէի կրնար խօսիլ, ձեռքս գլխիս վրայ դրի և ըսել ուզեցի որ իշխանուհին ճշմարտութիւնը կը յայտնէր: «Աղջիկս, ըսաւ այն ատեն սուլթանն, ինչպէս գիտես որ այս իշխանը թովչութեամբ կապիկի կերպարան առեր է: — Տէր իմ, պատասխան տուաւ իշխանուհին, կրնաք յիշել որ երբ պատանեկութեան հասակս կը մտնէի, պառաւ կին մ'ունէի իմ քովս: Այս կինը վարպետ վհուկ մ'էր. իր գիտութեան վրայ եօթանասուն կանոն սորվեցուց ինծի, որոց ուժովը կրնամ ակնթարթի մը մէջ՝ քու մայրաքաղաքդ Ովկիանոսի մէջ՝ Կովկասու լեռնէն անդին փոխադրել: Այս գիտութեամբս ամէն կախարդեալ մարդիկը կը ճանչեմ, եթէ միայն տեսնեմ. գիտեմ թէ ով են և որոց ձեռօք կախարդուած են. ուստի մի զարմանար եթէ իսկոյն հասկցայ թէ ով է այս իշխանն որ իր հմայութեան պատճառաւ բնական վիճակին մէջ քու աչքիդ չերևիր: — Աղջիկս, ըսաւ սուլթանն, ես քեզ այսչափ ճարպիկ չէի կարծեր: — Տէր իմ, պատասխանեց իշխանուհին, ասոնք հետաքրքրական և գիտնալու պիտանի բաներ են, բայց ինծի այնպէս երևցաւ որ պէտք չէ անով պարծիլ: — Քանի որ այդ հմտութիւնն ունիս, կրկնեց սուլթանն, ուրեմն կրնաս իշխանին հմայքը ցրուել: — Այո, տէր իմ, պատասխանեց իշխանուհին, կրնամ իր առջի կերպարանը տալ անոր: — Տուր ուրեմն անոր առջի կերպարանն, ընդմիջեց սուլթանն. ասկէ աւելի մեծ հաճոյք մը չես կրնար պատճառել ինծի, վասն զի կ'ուզեմ զանի իմ մեծ վէզիրս ընել և քեզի հետ կարգել: — Տէր իմ, ըսաւ իշխանուհին,

ինչ որ հրամայես, պատրաստ եմ կատարելու:»

Իշխանուհին իր սենեակը գնաց, դանակ մը բերաւ որուն երկաթին վրայ եբրայերէն տառեր դրոշմուած էին: Այնուհետև սուլթանին, ներքինապետին, պզտիկ գերիին և ինծի ըսաւ որ վար իջնենք, և մեզի պալատին մէկ ծածուկ բակը տարաւ, այն տեղ չորս կողմը գտնուած ճեմարանի մը մէջ թողլով մեզ՝ բակին մէջ տեղ գնաց, մեծ բոլորակ մը քաշեց և անոր մէջ հին և նոր արաբերէն տառեր գծեց, որոնք Կղէոպատրայի տառք կ'ըսուին:

Երբ իշխանուհին գործը լմնցուց և ուզածին պէս բոլորակը պատրաստեց, անոր մէջ տեղը կեցաւ, և սկսաւ երդումներ ընել և Գուրանէն տուներ ըսել: Անզգայօրէն օդը մթնցաւ, այնպէս որ կարծես թէ գիշեր եղաւ և աշխարհս կործանելու վրայ էր: Անհնարին երկիւղ մը մեզ պաշարեց, և այս երկիւղն աւելցաւ երբ յանկարծ տեսանք ջինին երևիլը, Էպլիսի աղջկան որդին, առիւծի մը կերպարանքով որ ահուելի մեծութիւն մ'ունէր:

Այն ինչ իշխանուհին տեսաւ այս հրէշն որ ըսաւ. «Շուն, փոխանակ իմ առջևս սողալու, ինչպէս կը յանդգնիս այս սոսկալի կերպարանքով ինծի ներկայիլ, և միթէ կարծես թէ ես կը վախնամ: Իսկ դուն ալ, կրկնեց առիւծն, ինչպէս չես երկնչիր հանդիսաւոր երդմամբ մը ըրած դաշինքին դէմ գործել, որ էր իրարու չվնասել և չարիք չընել: — Ա՛հ, անիծեալ, պատասխանեց իշխանուհին, քեզի պարտիմ ընել այդ կշտամբանքը: — Դու ալ հիմակ, ընդմիջեց առիւծը, պիտի վարձատրուիս ինծի այս տեղ բերել տալուդ ծանրութեան համար:»

Այս ըսելով՝ ահուելի կոկորդը բացաւ և անոր վրայ քալեց կլլելու համար: Բայց նա որ զգոյշ կը կենար, դէպ ետին ցատկեց, ժամանակ ունեցաւ մազ մը գլխէն փետել, և երկու երեք բառ արտասանելէն ետև՝ սրածայր սուր մը դարձուց զանի, և անով առիւծին մարմինն երկուքի կտրեց: Առիւծին մասերն անհետ եղան, և միայն գլուխը մնաց որ խոշոր կարիճի մը փոխուեցաւ: Անմիջապէս իշխանուհին ալ օձ դարձաւ և ահագին կռիւ մը սկսաւ կարիճին հետ, որ յաղթուելով՝ արծիւի կերպարանն առաւ և թռաւ գնաց: Բայց օձն ալ այն ատեն սև արծիւ մը դարձաւ որ աւելի զօրաւոր էր և միւսին ետևէն

սրացաւ ։ Երկուքն ալ մեր աչաց առջևէն աներևոյթ եղան ։

Քանի մը վայրկեան ետքն՝ երկիրը մեր առջևը բացուեցաւ և անոր մէջէն ելաւ սև ու սպիտակ կատու մը, որուն մազերը ցցուած էին և զարհուրելի կերպով կը մլաւէր ։ Շատ չանցաւ սև գայլ մ'ալ երևան ելաւ և անոր ետևէն ընկաւ ։ Կատուին ձայն հանելովը՝ որդ դարձաւ և նռնենիէ մ'ընկած նուռի մը մօտ գտնուեցաւ, որ բաւական խորունկ բայց նեղ ջրանցքի մ'եզրը անկուած էր ։ Այս որդն իսկոյն նուռը ծակեց և անոր մէջ պահուըտեցաւ ։ Այն ատեն նուռը ուռեցաւ և դդումի չափ խոշորցաւ, և ճեմարանին տանիքին վրայ ելաւ, ուր, գլորելով քանի մը շրջան ընելէն ետև՝ բակն ընկաւ, և կտոր կտոր եղաւ ։

Գայլն որ նոյն միջոցին ագռաւի փոխուեր էր, նուռին հատիկներուն վազեց և ետևէ ետև ամէնն ալ կլլեց ։ Երբ հատիկները հատան, թևատարած դէպ մեզի թռաւ, բարձր ձայն մը հանելով՝ և կարծես թէ հարցնել կ'ուզէր թէ արդեօք ուրիշ նուռի հատիկ չկա՞յ ։ Ջրանցքին եզրը հատ մ'ալ մնացեր էր, զոր դառնալով տեսաւ ։ Շուտ անոր վազեց, բայց այն վայրկենին որ կտուցովը պիտի առնէր, հատիկը ջրանցքին մէջ գլորեցաւ, և փոքրիկ ձուկ մը դարձաւ ։

Ագռաւը ջրանցքին մէջ նետուեցաւ և գայլաձուկի փոխուեցաւ, և ձկան ետևէն ընկաւ, երկու ժամ շարունակ ջրին տակը մնացին, և չգիտէին թէ ինչ եղան, երբ ահռելի ձայներ լսեցինք որ մեր սիրտը թունդ հանեցին ։ Քիչ մ'ետքը, Ճինն ու իշխանուհին կրակ դարձած տեսանք ։ Իրարու դէմ բոցեր արձակեցին իրենց բերնէն մինչև որ Ճակատ Ճակատի եկան ու կռուի բռնուեցան ։ Այն ատեն երկու կրակները սաստկացան, և թանձր ու բոցավառ մուխ մ'արձակեցին որ շատ բարձրերն ելաւ ։ Իրաւամբ վախցանք որ անով պալատը չբռնկի, սակայն քիչ մ'ետքը վախնալու աւելի մեծ պատճառ մ'ունեցանք. վասն զի Ճինն իշխանուհիին ձեռքէն պրծելով՝ մինչև մեր կեցած ճեմարանն եկաւ և կրակ ու բոց փչեց մեր վրայ ։ Մեր բանը բուսեր էր, եթէ իշխանուհին, մեզի օգնութեան գալով՝ իր աղաղակներով չստիպէր մեզնէ հեռանալու և ինքզինքն անորմէ պաշտպանելու ։ Սակայն որչափ որ արագ շարժեցաւ, չկրցաւ արգիլել որ սուլթանին մօրուքը չայրի և դէմքը չխանձի, ներքինապետը չխղդուի և բոլորովին կրակին ճարակ

չըլլայ և կայծ մ'ալ գալով իմ աջ կողմի աչքս չմնէ և իս միականի չդարձնէ ։ Սուլթանն ու ես կարծէինք որ լիովին բնաջինջ պիտի ըլլանք, բայց յանկարծ աղաղակ մը լսեցինք որ կ'ըսէր. «Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն» և տեսանք իշխանուհին որ իր բնական կերպարանքով մեզի երևցաւ և Ճինը մոխրի գոյն դարձած ։

Իշխանուհին մեզի մօտ եկաւ, և ժամանակ չկորսնելու համար, թաս մը ջուր ուզեց, զոր փոքր գերին իսկոյն բերաւ, և որուն կրակը վնաս մը չէր հասուցեր ։ Իշխանուհին ջուրն առաւ, անոր վրայ քանի մը խօսք կարդաց, և ջուրն իմ վրայ թափեց ըսելով. «Եթէ կախարդութեամբ կապիկ դարձեր ես, փոխէ կերպարանդ և քու առջի մարդու կերպարանդ առ ։» Այն ինչ այս խօսքերն ըսաւ, որ վերստին մարդու փոխուեցայ, ինչպէս որ այլափոխութենէս առաջ էի, միայն աչքիս մէկը պակաս էր ։

Իշխանուհին շնորհակալ ըլլալու կը պատրաստուէր, բայց նա ժամանակ չտուաւ ինծի ։ Իր հօրը սուլթանին դարձաւ և անոր ըսաւ.

«Վեհափառ իշխան, Ճինին վրայ յաղթութիւն տարի, ինչպէս որ կը տեսնէք, բայց այս յաղթութիւնն ինձի սուղի նստաւ ։ Քանի մը վայրկեան միայն ունիմ ապրելու, ուստի ձեր միտքը դրած ամուսնութիւնը կատարելու չպիտի յաջողիք ։ Այս սոսկալի պատերազմին մէջ կրակը սիրտս թափանցեց և կ'զգամ որ քիչ քիչ պիտի մաշէ իս ։ Այս բանս գլուխս չպիտի գար, եթէ նուռին վերջին հատը տեսած և միւսներուն պէս զայն կլլած ըլլայի երբ ագռաւի փոխուեցայ ։ Ճինն այն հատին մէջ յետին ապաստանարան մը փնտռեր էր, և անկէ կախուած ունէր պատերազմին յաջողելքն ինձի համար, քանի որ անվտանգ պիտի յաղթանակէի ։ Այս սխալմունքը ստիպեց իս կրակն իբր զէնք գործածել և այս հզօր միջոցներով անոր դէմ մաքառիլ, ինչպէս որ ըրի երկնի և երկրի մէջ տեղն ու ձեր առջևը ։ Թէև Ճինն իր արհեստին մէջ ահարկու էր և փորձառու, բայց ես անոր ցոյց տուի որ իրմէ աւելի յաջողակ եմ. զինքը մոխիր դարձուցի, բայց ես ալ մօտալուտ մահուանէ չպիտի կարենամ ազատիլ ։»

Սուլթանը թոյլ տուաւ որ իշխանուհին իր պատերազմին պատմութիւնն աւարտէ, և երբ լմնցուց, ըսաւ անոր այնպիսի ձայնով մ'որ կը

յայտնէր թէ որչափ սաստիկ էր ցաւն. «Աղջիկս, կը տեսնես թէ հայրդ ինչ վիճակի մէջ է։ Ափսոս, չեմ զարմանար եթէ տակաւին կենդանի եմ։ Ներքինապետդ մեռաւ, և կախարդութենէ ազատած իշխանդ աչքին մէկը կորսնցուց։» Սուլթանը չկրցաւ շարունակել, թափած արտասուքը, հառաչանքն ու հեծկլտանքն իր խօսքը կտրեցին։ Ես և իր աղջիկը սաստիկ վշտակից եղանք իր ցաւերուն և անոր հետ լացինք։

Երբ այսպէս իր տրտմութեան պատճառաւ մեր սիրտը յուզուեր էր, իշխանուհին սկսաւ պոռալ. «Կ'այրիմ, կ'այրիմ։» Զգաց որ գինքը մաշող կրակը բոլոր մարմինը գրաւեր էր և անդադար կը գոչէր. Կ'այրիմ, մինչև որ մահն իր անտանելի ցաւերուն վերջ տուաւ։ Այս կրակին ազդեցութիւնն այնչափ տարօրինակ էր, որ ճինին պէս իշխանուհին մոխիր դարձաւ քանի մը վայրկենի մէջ։

Տիկին, չեմ կարող ըսել թէ այս աղէտալի տեսարանէն որչափ սիրտս շարժեցաւ։ Աւելի աղէկ ունէի իմ բոլոր կենացս մէջ կապիկ կամ շուն մնալ քան իմ բարերարիս ողորմելի մահը տեսնել։ Միւս կողմէն՝ սուլթանն ալ տարապայման ցաւերով պաշարուած, որպէս ձայներ արձակեց գլխին և կրծքին ուժգին հարուածներ տալով, մինչև որ յուսահատութենէ չդիմանալով մարեցաւ և վախցայ որ չմեռնի։

Սակայն ներքինիներն ու պաշտօնատարները սուլթանին աղաղակները լսելով վազեցին եկան և մեծ դժուարութեամբ անոր խելքը գլուխը բերին։ Այս իշխանն ու ես պէտք չունեցանք երկարօրէն պատմելով մեր տրտմութեան պատճառն անոնց բացատրել։ Իշխանուհիին ու ճինին մոխրի երկու կոյտերը բաւական ակներև ապացոյցներ եղան։ Որովհետև սուլթանը հազիւ կարող էր ոտքի վրայ կենալ, ներքինիներուն վրայ կռթնեցաւ իր սենեակն երթալու համար։

Այս եղերական դէպքին դոյժը պալատին և քաղաքին մէջ տարածուելուն՝ ամէն մարդ իշխանուհիին դժբաղդութեան վրայ ցաւեցաւ և սուլթանին վշտակից եղաւ։ Եօթն օր շարունակ մեծ սուգ պահեցին և արարողութիւններ կատարեցին. Ճինին մոխիրն օդին ցրուեցին, իսկ իշխանուհւոյն մեծագին ամանի մը մէջ պահեցին և նոյն մոխիրը ժողված տեղերնին փառաւոր ու շքեղ գերեզման մը շինեցին և աճիւնն ա-

նոր վրայ դրին։

Սուլթանն իր աղջկան մահուան վրայ զգացած բուռն ցաւէն հիւանդ եղաւ և ամբողջ ամիս մ'անկողնէն դուրս չելաւ։ Դեռ բոլորովին իր առողջութիւնը գտած չէր, երբ զիս առջևը կանչել տուաւ ու ըսաւ. «Իշխան, մտիկ ըրէ քեզի տալու հրամանս, զոր եթէ չգործադրես կեանքդ վրայ կուտաս։» Վստահացուցի զինքն որ ճշտիւ պիտի հնազանդիմ։ Այնուհետև նորէն սկսաւ խօսիլ ու շարունակեց. «Ես կատարեալ երջանկութեան մէջ կ'ապրէի միշտ. և երբէք դիպուած մը այս երջանկութիւնը վրդոված չունէր. քու գալուստդ իմ վայելած երանութիւնս փարատեց։ Աղջիկս մեռաւ, անոր խնամակալը կորսուի, և իմ ապրիլս ալ հրաշք մ'է։ Դուն ես այս ամէն աղէտից պատճառը դուն ես, և անկարելի է ինձ ըրած կորուստներուս վրայ մխիթարուիլ։ Այս պատճառաւ երթ գնա խաղաղութեամբ, բայց հիմակ անմիջապէս գնա. ես ալ պիտի մեռնիմ թէ որ աւելի հոս մնաս. վասն զի համոզուած եմ որ ներկայութիւնդ ամենուն դժբաղդութիւն կը բերէ։ Ահա այս էր քեզի ըսելիքս։ Երթ գնա և նայէ որ ուրիշ անգամ տէրութեանս մէջ չերևիս, այն ատեն խօսք մտիկ չպիտի ընեմ և գլխուդ ձին պիտի բերեմ։» Խօսիլ կ'ուզէի, սակայն զայրալից խօսքերով բերանս կարկեց և ստիպուեցայ իր պալատէն հեռանալ։

Այսպէս ամենուն կողմէն երեսէ ընկած, վռնտուած՝ ինչ ընելիքս չգիտէի. քաղաքէն դուրս ելած՝ բաղնիք մը մտայ, մօրուքս և ունքերս ածիլել տուի և գալէնտէրի հագուստ հագայ։ Ճամբայ ընկայ լալով ոչ այնչափ թշուառութեանս վրայ, այլ երկու իշխանուհիներու մահուան պատճառն ըլլալուս համար։ Շատ մը քաղաքներէ անցայ անծանօթ, և վերջապէս Պաղտատ գալու որոշեցի, հաւատացելոց իշխանին առջև ներկայանալ յուսալով, որպէս զի անոր գութն իմ վրայ շարժեմ այսպիսի տարօրինակ պատմութիւն մը պատմելով։ Այս իրկուն հասայ, և ամենէն առաջ այն եղբայր գալէնտէրը տեսայ որ ինծ առաջ խօսեցաւ։ Այնուհետև գիտէք եկածներս և ինչպէս այս ապարանը գալու պատիւ ունենալս, տիկին։

Երբ երկրորդ գալէնտէրն իր պատմութիւնն աւարտեց, Զուպէյտէ ըսաւ անոր. «Պատմութիւնդ աղւոր է, հիմակ երթ և ուր որ կ'ուզես

գնա, ազատ ես։» Բայց գալէնտէրը՝ փոխանակ դուրս ելնելու, աղաչեց որ առաջին գալէնտէրին ըրած շնորհն իրեն ալ ընէ, և գնաց անոր մօտ նստաւ։

Երրորդ գալէնտէրը տեսնելով որ խօսելու կարգն իրն է, միւսներուն պէս՝ խօսքը Զօպէյտէին ուղղեց, և սապէս իր պատմութիւնն սկսաւ։

ԵՐՐՈՐԴ ԱՐՔԱՑՈՐԴԻ ԳԱԼԷՆՏԷՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատուարժան տիկին, իմ պատմելիքս ձեր մինչև հիմակ լսածներէն շատ տարբեր է։ Իմնէ առաջ խօսող իշխանազուններն իրենց ճակատագրին բերմունքէն կորուսին իւրաքանչիւրն իր մէկ աչքը, մինչդեռ ես, իմ յանցանքովս իմս կորուսի կամաւ և անզգուշութենէ, ինչպէս որ պատմութենէս պիտի իմանաք։

Անունս Էյիպ է և Գասըպ անուն թագաւորի մ'որդին եմ։ Հօրս մահուանէ ետքն՝ անոր յաջորդեցի և աթոռս իր բնակած քաղաքը դրի։ Այս քաղաքը ծովեզրը շինուած է. խիստ անքոյթ նաւահանգիստ մը ունի, նոյնպէս նաւարան մ'որ կրնայ պատերազմի առեն յիսուն նաւ պատրաստել և 'ի հարկին գործ տեսնել. սակէ զատ՝ յիսուն կտոր վաճառականի, և նոյնչափ թեթև նաւեր կրնայ պարունակել ջրի վրայ զբօսանքի և ժուռ գալու համար։ Իմ թագաւորութեանս մէջ շատ մը գեղեցիկ գաւառներ կային, և անթիւ մեծամեծ կղզիներ և ամէնքը մայրաքաղքիս առջևը կը տեսնուէին։

Նախ գաւառները պտըտելու ելայ, վերջը նաւատորմիղս զինել պատրաստել տուի և գացի կղզիներս իջայ, որպէս զի իմ ներկայութեամբս հպատակներուս սիրտը շահիմ և իրենց պարտաւորութեանց յորդորեմ։ Անկէ դառնալէս քանի մը ժամանակ ետքը՝ նորէն գացի, և այս ուղևորութիւններն ինձ նաւարկութեան վրայ քիչ մը հմտութիւն

տալով՝ այնչափ հրապոյր զգացի, որ միտքս դրի կղզիներէս անդին նոր նոր տեղեր գտնելու ելնել։ Այս նպատակաւ մինակ տաս նաւ պատրաստել և կազմել տուի և ճամբայ ելայ։

Քառասուն օր շարունակ յաջող նաւարկութիւն մ'ունեցանք, բայց քառասուն և մէկերորդ գիշերը՝ հովն այնքան հակառակ և մոլեգին դարձաւ՝ որ ահագին մրրկի մը բռնուեցանք և քիչ մնաց որ ծովին խորը պիտի իջնէինք։ Սակայն՝ այգուն՝ հովը դադրեցաւ, ամպերը ցրուեցան, և արևին հետ աղուոր օր մը սկսելով՝ կղզի մ'ելանք և երկու օր հոն մնացինք պաշար առնելու համար։ Երբ այս գործը լմնցաւ, նորէն առագաստները բացինք։ Տաս օր նաւարկելէն ետև՝ յոյս ունէինք ցամաք մը տեսնել. վասն զի այն ալեկոծութենէ ետքը՝ միտքս փոխեր և դէպ իմ երկիրներս դառնալու ճամբան բռներ էի, երբ իմացայ որ նաւուղիղս չգիտեր ուր գտնուինք։ Իրօք տասներորդ օրը՝ նաւաստի մը՝ որ հրաման առած էր կայմին վրայ ելնել ու ցամաք երկիր մը դիտել, եկաւ ըսաւ որ նաւուն աջ ու ձախ կողմը միայն երկինք ու ծով կը տեսնէ որոնք հորիզոնին սահմաններն են, բայց դիմացի կողմն, այսինքն՝ նաւուն գլխուն ուղղութեամբը, սաստիկ սևութիւն մը նշմարեր է։

Նաւուղիղն՝ այս լսելուն՝ գոյնը նետեց, մէկ ձեռքով տարբօշը տամալին վրայ նետեց և միւս ձեռքով ճակտին զարնելով, «Ա՜հ, վեհափառ տէր, գոչեց, կորսուեցանք։ Մեր առջևը գտնուած վտանգէն մեզնէ ոչ մէկը պիտի կրնայ ազատիլ, և իմ բոլոր փորձառութեամբս չեմ կարող ձեզ ազատել։» Այս խօսքերն ըսելով սկսաւ լալ այնպէս մարդու մը պէս որ ինքզինքն անխուսելի վտանգի մէջ կը կարծէ, և իր յուսահատութենէ բոլոր նաւաստիներն ահ ու դողի մէջ ինկան։ Հարցուցի անոր թէ այսպէս յուսահատելուն պատճառն ինչ է. «Ափսոս, վեհափառ տէր, պատասխանեց նա, մեզի պատահած մրրիկը մեր ճամբէն այնքան մոլորեցուց մեզ, որ վաղը կէսօրին սա դիմացի սև նշանին առջևը պիտի գտնուինք, որ ուրիշ բան չէ, բայց եթէ Սև լեռն. և այս Սև լեռը մագնիսի հանք մ'է, որ այժմէն ձեր բոլոր նաւատորմն իրեն կը քաշէ, նաւերուն վրայ գտնուած բևեռներուն և երկաթէ գործիքներուն պատճառաւ։ Եթէ վաղը բաւական մօտենանք, մագնիսին զօրութիւնն այնչափ պիտի սաստկանայ որ նաւուն գամերը պիտի

քակուին և պիտի երթան լեռին փակին . նաւերդ պիտի խարխլին և ծովուն յատակը պիտի իջնեն ։ Ինչպէս որ մագնիսին երկաթն իրեն քաշելու , և ասով զօրանալու յատկութիւնն ունի , այս լեռը ծովուն կողմէն ընկղմած անթիւ նաւերու գամերով ծածկուած է , որոնք մագնիսին զօրութիւնը կը պահեն և կը զօրացնեն ։

«Այս լեռը , շարունակեց նաւուղիղը , սեպաձև է , և իր կատարը բարակ պղնձէ գմբէթ մը կայ , նոյնամետաղ սիւներու վրայ կեցած . գմբէթին սալը , նոյնպէս պղնձէ ձի մը կը տեսնուի , որուն վրայ ձիաւոր մը կայ , լանջին վրայ կապարէ տախտակ մը դրած . այս տախտակին վրայ հմայական տառեր գրուած են ։ Աւանդութեան նայելով , տէր իմ , այն արձանն է այնչափ ընկղմած նաւերու և մարդիկներու կորստեան գլխաւոր պատճառն , և մինչև որ չկործանի , դժբաղդաբար իրեն մօտեցողներուն մահաբեր պիտի ըլլայ ։»

Նաւուղիղն այս նկարագիրն ընելէն ետքը՝ նորէն սկսաւ լալ , և իրեն հետ բոլոր նաւորդներն արտասուք թափեցին ։ Իսկ ես աներկիւղ էի որ կենացս վերջին օրերը հասած են ։ Սակայն դարձեալ ամէն մարդ ինքզինքն ազատելու միջոցները մտածեց և կարելի եղած զգուշութիւններն ըրաւ . և գալիք պատահարին անստուգութեան ժամանակ ամէնքն իրարու համար կտակ ըրին , այնպէս որ ազատողներն մեռնողներուն ժառանգորդներն ըլլան ։

Հետևեալ առտու ալն յայտնի տեսանք Սև լեռն . և անոր վրայ մեր ունեցած գաղափարն աւելի ահարկու երևցաւ մեզ . քան ինչ որ էր ։ Կէսօրին մօտ՝ այնչափ մօտեցանք անոր , որ նաւուղիղին գուշակութեան կատարումը տեսանք ։ Գիտեցինք որ նաւատորմին գամերն և ուրիշ երկաթներ դէպ 'ի լեռը կը թռէին և առձգական զօրութեամբ ահռելի դղրդիւնով մ'անոր կը փակէին ։ Նաւերը բացուեցան և ծովին մէջ ընկղմեցան , և ծովն այն տեղն այնքան բարձր էր որ խորաչափով անգամ անոր խորութիւնը չպիտի կարենայինք գտնել ։ Բոլոր նաւաստիներս ջրամոյն մեռան , բայց Աստուած իմ վրայ գթաց և ներեց որ ազատիմ . տախտակի մը փաթթուեցայ որ հովէն մղուելով շիտակ լեռին ստորոտը տարաւ զիս ։ Ամենևին վնաս մը չկրեցի , վասն զի բաղդէս անանկ տեղ մը ցամաքն ելայ ուր աստիճաններ կային կատարը ելնելու

համար ։

Այս աստիճանները տեսնելուս՝ (վասն զի ոչ աջ և ոչ ձախ կողմը հող կար ոտք կոխելու և հետևապէս ազատելու համար) , շնորհակալ եղայ Աստուծոյ , իր սուրբ անունն օգնութեան կոչեցի և սկսայ դէպ 'ի վեր ելնել ։ Սանդուղն այնքան նեղ էր , ցից և դժուարին , որ եթէ հովը քիչ մ'ուժին փչէր , անտարակոյս զիս թաւալգլոր բերելով ծովը պիտի գահավիժէր ։ Սակայն վերջապէս մինչև սարը հասայ անվտանգ , գմբէթին տակը մտայ , և գետինը բազկատարած ինալով՝ շնորհակալ եղայ Աստուծոյ ինձ ըրած շնորհաց համար ։

Նոյն գիշերը գմբէթին տակն անցուցի ։ Քնանալու ատենս պատկառելի ծերունի մ'ինձ երևցաւ ու ըսաւ . «Մտիկ ըրէ , Էյիպ , երբ արթննաս , ոտքիդ տակի հողը փորէ , անոր մէջ պղնձէ աղեղ մը , և երեք կապարեայ նետեր պիտի գտնես որ քանի մը համաստեղութեանց ներքև շինուած են , մարդկային ազգը սպառնացող անհամար վտանգներէ ազատելու համար ։ Այն երեք նետերն արձանին նետէ , ձիաւորը ծովն և ձին քու կողմդ պիտի իյնայ , և այն ձին պիտի թաղես այն տեղն ուսկէ աղեղն ու նետերը հանեցիր ։ Այս ընելէդ ետքը՝ ծովը պիտի ուռի և մինչև գմբէթին ոտքը՝ լեռին բարձրութեան չափ պիտի ելնէ ։ Երբ այն տեղ հասնին ջրերը՝ պիտի տեսնես որ նաւակ մը պիտի մօտենայ , և այս նաւակին մէջ լոկ մարդ մ'որուն մէն մի ձեռքը թի մը պիտի ունենայ ։ Այս մարդը պղնձէ՝ և սպաննած ձիաւորէդ տարբեր անձ մը պիտի ըլլայ ։ Անոր հետ նաւակը մտիր առանց Աստուծոյ անունն արտասանելու և թող որ քեզ առնու տանի ։ Տաս օրուան մէջ ուրիշ ծով մը պիտի տանի քեզ , և այն տեղէն ողջ առողջ երկիրդ դառնալու ճարը պիտի գտնես , այս պայմանաւ որ , ինչպէս ըսի , ճամբորդութեանդ ատեն Աստուծոյ անունը չարտասանես ։»

Այսպէս խօսեցաւ ծերունին ։ Երբ արթնցայ , այս երազս իս սաստիկ ախորժեր էր , և իսկոյն ծերունիին հրամայածը կատարեցի ։ Գետնին տակէն աղեղն ու նետերը հանեցի , և ձիաւորին դէմ քաշեցի ։ Երրորդ նետը նետելուս զանի ծովը գահավիժեցի , և ձին իմ կողմս ինկաւ ։ Աղեղն ու նետերը գտած վայրս թաղեցի զանի , և նոյն միջոցին ծովն ուռեցաւ և քիչ քիչ բարձրացաւ ։ Երբ գմբէթին ոտքը լեռին ծայ-

ըր հասաւ հեռուէն նաւակ մը տեսայ որ դէպ ինծի կուգար, օրհնեցի զԱստուած գիտելով որ երազիս համաձայն ամէն բան կը պատահէր յաջորդաբար։

Վերջապէս նաւակը մօտեցաւ, և, ինչպէս որ նկարագրուած էր, պղնձէ մարդը տեսայ։ Անոր նաւակը մտայ և Աստուծոյ անունը տալու զգուշացայ. և ոչ իսկ ուրիշ բառ մ'արտասանեցի։ Նստայ, և պղնձէ մարդը նորէն սկսաւ թիւքաշել լեռնէն հեռանալով։ Մինչև ինններորդ օրն անդուլ նաւարկեց, և կղզիներ տեսայ որ յոյս տուին ինծի քիչ ատենէն պրծիլ վախցած վտանգէս։ Ուրախութեանս սաստկութենէ մոռցայ ինծի տրուած պատուէրն, այն ատեն՝ «Օրհնեալ ըլլայ Աստուած ըսի. օրհնեալ ըլլայ Աստուած։»

Հազիւ թէ այս խօսքերս ըսի որ նաւակը պղնձէ մարդուն հետ ծովը սուզաւ։ Ջրին վրայ կեցայ և ինծի ամենէն մօտակայ երևցող ցամաքին կողմը լողալ սկսայ մինչև իրկուն։ Յետին ծայր մութ գիշեր մը վրայ հասաւ և որովհետև ուր ըլլալս չգիտէի, ըստ դիպուածոյ կը լողայի։ Ի վերջէ ոյժս հատաւ, և ազատելու յուսահատ էի, երբ հովը յանկարծ սաստկանալով լեռի նման ալիք մ'առաւ զիս և ծովափը նետեց և հոն ձգեց նորէն քաշուելով։ Իսկոյն դէպ 'ի ցամաքը վազեցի, որպէս զի նորէն ալիքը գալով զիս չտանի, և առաջին գործս եղաւ հագուստս հանել, և արևուն ջերմութենէ տաքցած աւազին վրայ փռել չորցնելու համար։

Միւս օրն արևը բոլորովին չորցուց հագուստս։ Հագայ զայն և յառաջ անցայ գիտելու համար թէ ուր եմ։ Քիչ ատենէն հասկցայ որ փոքրիկ ամայի կղզիի մը մէջ կը գտնուիմ շատ ախորժելի, ուր շատ տեսակ պտղատու ու վայրի ծառեր կը գտնուէին։ Բայց տեսայ որ ցամաքէն շատ հեռու էր կղզին և այս բանս ծովէն ազատելու խնդութիւնս ակարացուց։ Սակայն Աստուծոյ կ'ապաւինէի և կը թողուի որ ինչպէս որ կամի այնպէս վճռէ իմ բաղդս, երբ ցամաքի կողմէն եկող առագաստալից նաւ մը տեսայ որ դէպ 'ի կղզիիս կողմը դարձած կը յառաջանար։

Որովհետև գուշակեցի որ կղզիիս մօտ երկաթ նետելու կուգար, և չգիտէի թէ մէջի մարդիկը բարեկամ էին թէ թշնամի, յարմար դա-

տեցի առջի բերան երևան չելնել։ Տերևախիտ ծառի մը վրայ ելայ, ուսկէ անպատիժ նորեկներուն արարքը կրնայի դիտել։ Նաւն եկաւ պզտիկ խորշի մը մէջ կեցաւ, և տաս գերի ցամաքն ելան որոնք բահ մը և երկիրը շարժելու ուրիշ գործիներ ունէին։ Կղզւոյն դէպ 'ի միջավայրը քալեցին, և տեսայ որ կանգ առին և քիչ մ'ատեն հողը փորեցին. անկից ըրածէն այնպէս մ'եկաւ ինծի որ կափարիչ մը կը շարժէին։ Վերջը նաւը դարձան, շատ մը պաշար և կահ կարասի առած դուրս ելան, և հողը փորած տեղերնին հասնելով՝ վար իջան, ասկէ իմացայ որ նոյն վայրը ստորերկրեայ քարայր մը կայ։ Վերստին տեսայ որ նաւը կը դառնան, և քիչ մ'ետքը ծերունի մը կը բերեն, որուն ուղեկից էր տասն հինգ տարեկան պատանի մը, շատ վայելուչ։ Ամէնքը կափարիչին բացուած տեղն իջան, և երբ նորէն վեր ելան, կափարիչը գոցեցին, հողով ծածկեցին, և նաւուն գտնուած խորշին կողմը դիմեցին, գիտցի որ պատանին հետերնին չէր, և հետևցուցի որ ստորերկրեայ տեղը մնացած է. այս պարագան իմ զարմանքս սաստիկ շարժեց։

Ծերունին և գերիները նորէն նաւ մտան, և նաւն առագաստները բանալով՝ ցամաքի կողմը դիմեց։ Երբ տեսայ որ բաւական հեռացեր է և նաւաստիներն զիս չեն կրնար տեսնել, ծառէն վար իջայ, և իսկոյն գացի այն տեղն որուն հողը փորեր էին։ Ես ալ սկսայ փորել, մինչև որ երկու երեք քառակուսի ոտնաչափ քար մը գտնելով զայն վերուցի, և գիտցի որ քարաշէն սանդղի մը մուտքը կը ծածկէր։ Անկէ վար իջայ և ինքզինքս մեծ սենեկի մը մէջ գտայ, ուր ոտքի օթոց մը և ուրիշ գորգով մը ծածկուած և ընտիր կերպասէ շինուած ձոխ բարձերով զարդարուն բազմոց մը կար, և այս բազմոցին վրայ պատանին նստեր էր հովահար 'ի ձեռին։ Այս ամէն բաները, նոյնպէս պտուղներ ու ծաղկալից թաղարներ նշմարեցի երկու մոմերու լուսովը։ Պատանին զիս տեսնելուն զարհուրեցաւ, բայց անոր վախը փարատելու համար, ներս մտնելու ատենս անոր ըսի.

«Ինչ որ ես, տէր իմ, բանէ մը մի վախնար. ինծի պէս թագաւոր մ'ու թագաւորի որդի մը չէ կարող քեզ ամենաթեթև վնաս մը հասցնել։ Կարելի է քու աղուոր բաղդէդ է որ այս տեղ գտնուեցայ որ

քեզ այս գերեզմանէն հանեմ, ուր կ՚երեւի թէ քեզ ողջ ողջ թաղեցին ինծի անյայտ պատճառներու համար։ Բայց ամենէն շատ ես զարմացողն, և իմ խելքս չառնող բանն է (վասն զի պէտք է ըսել որ այս կղզին գալէդ 'ի վեր անցած գացած բաներուն ականատես եղայ) ու՝ քու կողմէդ առանց ընդդիմութեան՝ այս գերեզմանին մէջ թաղեցին քեզ։»

Այս խօսքիս վրայ պատանին հանդարտեցաւ և խնդալիր դէմքով մը աղաչեց որ իր քովը նստիմ։ Երբ նստայ. «Իշխան, ըսաւ ինծի, քեզի այնպիսի բան մը պիտի յայտնեմ որ սաստիկ պիտի զարմանաս և եղածն պիտի գտնես։ Հայրս ակնավաճառ մ՚է որ իր արհեստին մէջ ունեցած աշխատութեան և ճարպիկութեան պատճառաւ շատ հարստութիւն դիզեց։ Բազմաթիւ գերիներ և գործակալներ ունի, որ ծովով ուղեւորութիւններ կ՚ընեն իր նաւերուն մէջ, որպէս զի զանազան արքունեաց հետ, որոց պէտք եղած գոհարներ կը մատակարարէ, թղթակցութիւններ ընեն։ Երկար ատենէ վեր կարգուած և զաւակ չէր ունեցած, երբ երազ մը տեսաւ որուն մէջ իմացաւ թէ որդի մը պիտի ունենայ որ երկար չպիտի ապրի. և այս բանիս վրայ շատ ցաւ զգաց արթննալուն։ Քանի մ՚օրէ ետքը, մայրս իմացուց անոր որ յղի է, և իմ հօրս տեսած երազին օրը շատ կը յարմարէր մօրս յղութեան ժամանակին հետ։ Ինն ամսէն ես ծնայ, և ընտանիքին մէջ մեծ ուրախութիւն պատճառեցի։ Հայրս՝ որ ծննդեանս ժամը ճշտիւ գիտեր էր, աստղագէտներուն խորհուրդ հարցուց, և անոնք ալ ըսին.

«Քու որդիդ առանց վտանգի պիտի ապրի մինչև տասն և հինգ տարին. բայց այն ատեն կեանքը կորսնցնելու վտանգին մէջ պիտի իյնայ, և անկէ դժուարաւ պիտի ազատի։ Սակայն եթէ բաղդ ունենայ և կենդանի մնայ, իր կեանքն երկար պիտի տեւէ։ Վասն զի այն միջոցին, ըսին, պղնձէ ձիաւորին արձանն, որ մագնիսէ լերին կատարն է, Էջիպ իշխանին ձեռօք ծովը ընկած պիտի ըլլայ, և աստղերը կը յայտնեն որ յիսուն օր ետքն՝ որդիդ այս իշխանին կողմէն պիտի սպաննուի։»

Այս գուշակութիւնը հօրս երազին հետ կը համաձայնէր և աւել չափազանց հիացաւ և տրտմեցաւ։ Սակայն դարձեալ իմ դաստիարա-

կութեանս հոգ տարաւ, մինչև այս ներկայ տարիս, որ իմ հասակիս հնգետասաներորդ տարին է։ Երէկ իմացաւ որ տասն օրէ վեր իմ արդէն անուանուած իշխանին ձեռօք պղնձէ ձիաւորը ծովը ընկած է։ Այս լրին վրայ այնքան լացաւ և շփոթեցաւ, որ բոլորովին իր առջի վիճակին մէջ անճանաչ եղաւ։ Քաղդեաններուն գուշակութիւնն իմ ճակատագրիս մասին՝ պարապ հանելու միջոցներ փնտռեց որ կեանքս անվնաս պահէ։ Երկար ատեն կայ որ այս բնակարանը շինեց գաղտագողի, որպէս զի յիսուն օր այս տեղ ծածուկ պահէ զիս, երբ իմանայ որ արձանը ծովը տապալեր է։ Եւ որովհետև իմացաւ որ տասն օրէ վեր արձանը տապալեր է, շուտ մ՚եկաւ զիս այս տեղ պահեց, և խօսք տուաւ որ քառսուն օրէն դայ պիտի զիս առնու։

«Իսկ ես, յարեց նա, մեծ յոյս ունիմ, և չեմ կարծեր որ Էջիպ իշխանը գայ պիտի զիս այս անմարդի կղզւոյն մէկ ստորերկրեայ քարայրին մէջ փնտռելու։ Ահա, տէր իմ, այս էր իմ քեզի պատմելիքս։»

Երբոր ակնավաճառին որդին այս պատմութիւնը կ՚ընէր ինծ, ինքն իրենս կը ծաղրէի այն աստղագէտներն որ գուշակեր էին թէ զանի պիտի սպաննեմ, և այնքան հեռու էի այս գուշակութիւնն իրացնելու, որ այն ինչ խօսքն աւարտեց որ եռանդագին ուրախութեամբ անոր ըսի. «Սիրելի տէր իմ, Աստուծոյ բարութեան վրայ դիր վստահութիւնդ, և բանէ մը մի վախնար։ Համարէ թէ պարտ մ՚ունէիր վճարելու և այժմէն նոյնը հատուցիր։ Յետին ծայր ուրախ եմ որ նաւաբեկութենէ մ՚ետքն՝ այս տեղ կը գտնուիմ բարեբաղդօրէն՝ կենացդ դաւաճաններուն դէմ քեզ պաշտպանելու համար։ Այս քառսուն օրուան միջոցին քեզմէ չպիտի հեռանամ, քանի որ աստղագէտներուն սնոտի գուշակութիւններն այն քառսուն օրը քեզ վտանգաւոր կը ցուցնեն։ Նոյն միջոցին ձեռքէս եկած ծառայութիւնը քեզ պիտի ընեմ։ Անկէ ետև՝ քեզի հետ նաւ մտնելով ցամաքն ելնելու առիթ պիտի գտնեմ հօրդ և քու հրամանովդ, և երբ իմ տէրութեանս երկիրը դառնամ, չպիտի մոռնամ քեզ ունեցած պարտաւորութիւնս, և պիտի աշխատիմ պարտ ու պատշաճ կերպով իմ երախտագիտութիւնս քեզ յայտնել։»

Այս խօսքերովս ակնավաճառին որդւոյն սիրտը հանդարտեցուցի և անոր վստահութիւնը գրաւեցի։ Զգուշացայ ըսելու որ ես նոյն ինքն իր

վախցած էյիսն եմ՝ որպէս զի չպարհուրի, և ամէն զգուշութիւն ձեռք առի կասկած մը չտալու։ Մինչև գիշեր շատ մը բաներու վրայ խօսեցանք, և տեսայ որ պատանին շատ մտացի անձ մ՚էր։ Իր ուտելիքէն միասին կերանք։ Այնչափ առատ էր պաշարն որ եթէ իմնէ զատ հիւրեր ալ ունենար, դարձեալ քառսուն օրէն ետքը՝ պիտի աւելնար։ Ընթրիքէն ետքը՝ խօսակցութիւնը շարունակեցինք և ապա պառկեցանք։

Միւս օրն արթննալուն՝ կոնքն ու ջուրը ներկայացուցի։ Երեսը լուաց, ճաշը պատրաստեցի և ժամանակին մատուցի։ Ճաշէն ետքը՝ խաղ մը հնարեցի զբօսնլու համար, ոչ միայն այն օրն, այլ հետևեալ օրերն ալ։ Ընթրիքն ալ պատրաստեցի, ինչպէս որ ճաշը պատրաստեր էի։ Նախորդ օրուան պէս կերակուր կերանք և պառկեցանք։ Իրարու հետ բարեկամութեամբ կապուելու ժամանակ ունեցանք։ Տեսայ որ իմ վրայ համակրութիւն ունի, և ես ալ իմ կողմէս այնքան սաստիկ սիրեցի զինքն որ սուտ ինքնովին կ՚ըսէի թէ այն աստղաբաշխներն որ իր հօրը յայտներ էին թէ որդին իմ ձեռօքս պիտի սպաննուէր՝ խաբեբաներ են, և թէ անկարելի բան էր որ անանկ անօրէն գործ մ՚ընեմ։ Վերջապէս, տիկին, այն ստորերկրեայ վայրին երսուն ինն օր շատ զուարճալի կերպով անցուցինք։

Քառասներորդ օրը հասաւ։ Առտու՝ պատանին արթննալով՝ ինծի ըսաւ տարապայման ուրախութեամբ մը. «Իշխան, ահա այսօր քառասներորդ օրուան մէջն եմ և Աստուծոյ ու քու ընտիր ընկերութեանդ շնորհիւը չմեռայ։ Հայրս անտարակոյս իր երախտագիտութիւնը պիտի յայտնէ քեզ և թագաւորութեանդ դառնալու համար ամէն դիւրութիւններ քեզ պիտի ընծայէ։ Բայց առայժմ, ըսաւ, կ՚աղաչեմ շնորհ ընէիր քիչ մը ջուր տաքի դնել որպէս զի դիւրատար լոգարանին մէջ մարմինս լուամ. մաքրուիլ և հագուստս փոխել կ՚ուզեմ հայրս ըստ արժանւոյն ընդունելու համար։»

Կրակի վրայ ջուր դրի և երբ եղկ դարձաւ, դիւրատար լոգարանը լեցուցի։ Պատանին մէջը մտաւ, և զինքը լուացի և ես ձեռօքս մարմինը շփեցի։ Վերջը լոգարանէն ելաւ, պատրաստած անկողնոյս մէջ պառկեցաւ և վրան վերմակով մը ծածկեցի։ Քիչ մը հանգիստ առնելէն

և քնանալէն ետև՝ «Իշխանդ իմ, ըսաւ ինծի, շնորհ ըրէ ինծի սեխ մ՚ու շաքար բերելու որ ուտեմ և քիչ մը զովանամ։»

Մնացած շատ մը սեխերէն, լաւագոյնն ընտրեցի և պնակի մը մէջ դրի. և որովհետև զայն կտրելու համար դանակ չէի գտներ, պատանիին հարցուցի որ արդեօք գիտէ՞ թէ դանակ մ՚ուր կը գտնուի։ «Հատ մը կայ, պատասխան տուաւ ինծի, գլխիս վերևը գտնուած դարակին վրայ։» Իրօք, հատ մը տեսայ անոր վրայ, բայց այնչափ շտապեցի զայն առնելու, և զայն ձեռքս բռնելու ատենս ոտքս այնպէս խառնուեցաւ վերմակին որ սահեցայ, և այնպիսի չարաղէտ կերպով մը պատանիին վրայ ինկայ որ դանակը սրտին մխեցի։ Նոյն վայրկենին խկ հոգին փչեց։

Այս տեսարանիս՝ ողբալի աղաղակներ արձակեցի։ Գլուխս, երեսս ու կուրծքս կը ծեծէի։ Հագուստս պատռեցի և գետին ինկայ անմեկնելի վիշտ ու ցաւ յայտնելով։ «Ափսոս, գոչեցի, միայն քանի մը ժամու կարօտ էր որ վտանգէ զերծ մնայ, որուն դէմ սոյն ապաւէնը փնտռեր էր, և ճիշտ այն միջոցին որ ես ինքս կը յուսայի որ վտանգն անցած է, զինքը կ՚սպաննեմ և քաղդեաներուն գուշակութիւնը կը կատարեմ։ Բայց, տէր իմ, յարեցի գլուխս ու ձեռներս դէպ 'ի երկին վերցնելով ներողութիւն կը խնդրեմ քեզնէ, և եթէ իր մահուանը պատճառն ես եմ, մի թողուր որ երկար ժամանակ ապրիմ։»

Այս վերահաս դժբաղդութենէ ետքը՝ մահն աներկիւղ պիտի ընդունէի եթէ ինծի ներկայանար։ Բայց չարիքն, ինչպէս նաև բարիքը մեր փափաքած ժամուն մեզի չհասնիր միշտ։ Սակայն, մտածելով որ իմ արտասուքս և վիշտս պատանիին կենդանութիւն չեն կարող տալ, և թէ քառսուն օրը լմննալուն, կրնար հայրը վրայ հասնիլ և զիս բռնել, այս ստորերկրեայ բնակարանէն դուրս ելայ և սանդղին գլուխը հասայ։ Խոշոր քարով մուտքը գոցեցի և վրան հող թափեցի։

Հազիւ թէ գործս աւարտեր էի որ աչքս դէպ 'ի ցամաքի կողմի ծովուն վրայ դարձնելով՝ տեսայ այն նաւն որ պատանին առնելու կուգար։ Այն ատեն՝ առանձին մտածելով ընելիքս, ըսի ինքնիրենս. «Եթէ յայտնուիմ, անտարակոյս ծերունին զիս բռնել տալով կարելի է գերիներուն ձեռօք կ՚սպաննէ, երբ տեսնէ թէ որդին իմ պատճառաւս ինչ վիճակի

մէջէ ։ Ինչ որ ըսեմ ինքզինքս արդարացնելու, դարձեալ չկրնար համո-զուի անմեղութեանս վրայ ։ Ուստի աւելի լաւ է իր վրէժխնդրութենէ խոյս տալ, քանի որ միջոցն ունիմ, քան թէ վտանգի ենթարկիլ ։»

Սորերկրեայ բնակարանին մօտ խոշոր ծառ մը կար, որուն տերե-ւախիտ ոստերն զիս կրնային պահել ։ Անոր վրայ ելայ, և այն ինչ տե-ղաւորուեցայ այնպէս որ ոչ ոք կարող էր զիս տեսնել, որ նաւը առաջին անգամուն պէս նոյն ծովեզերքին մօտեցաւ ։

Ծերունին և գերիները ցամաքն ելան իսկոյն, և սորերկրեայ բնա-կարանը դիմեցին, այնպիսի դէմքով մ՚որով կ՚իմացուէր թէ յոյս ունէ-ին, բայց երբ տեսան որ հողը նոր շարժեր են, գոյն առին տուին, մանաւանդ ծերունին ։ Քարը վեր առին և վար իջան ։ Անունը տալով պատանին կը կանչեն, պատասխան չկար. իրենց երկիւղը կ՚աւելնայ. վերջապէս կը փնտռեն և զինքն իր անկողնին մէջ պառկած կը գտնեն, դանակը սրտին մխուած, վասն զի զայն հանելու արիութիւն չունեցեր էի ։ Այս տեսքէն վշտալի ձայներ կը հանեն, որով իմ աղաղակներս ալ կը գրգռեն. Ծերունին ընչասպառ գետին ինկաւ. Իր գերիները զայն գրկեցին և վեր բերին որ օդ առնու և իմ կեցած ծառիս տակը դրին ։ Բայց, ինչ խնամք որ տարին, դարձեալ այն անբաղդ ծերունին երկար ատեն նոյն վիճակին մէջ մնաց, և ետքը անոր կենդանութեան վրայ յոյսերնին կտրեցին ։

Սակայն այս երկարատև թմրութենէ սթափեցաւ ։ Այն ատեն գե-րիներն անոր որդւոյն մարմինը բերին. ամենէն աղուոր զգեստները հա-գուեր էր, և երբ անոր համար պատրաստուած փոսը լմնցաւ, զայն անոր մէջ իջեցուցին ։ Ծերունին, որ երկու գերիներու թևը մտեր՝ յորդ արտասուք կը թափէր, ամենէն առաջ քիչ մը հող ցանեց դիակին վրայ, և յետոյ գերիները փոսը լեցուցին ։

Այս գործողութիւնս լմննալէն ետև՝ սորերկրեայ բնակարանին կա-րասին և մնացած պաշարն առին և նաւ տարին ։ Յետոյ ծերունին, վշտաբեկ, ուժաթափ՝ տեսակ մը պատգարակի մէջ դրին և նաւը փո-խադրեցին. նաւն ալ շատ չանցաւ ճամբայ ելաւ ։ Քիչ ատենէն կղզիէն հեռացաւ և աչքէս աներևոյթ եղաւ ։

Ծերունին, գերիներն ու նաւը մեկնելէն ետև՝ մինակ մնացի կղզին.

գիշերը սորերկրեայ բնակարանն անցուցի՝ զոր բաց թողեր էին, իսկ ցորեկը՝ կղզւոյն բոլորտիքը ժուռ կգայի, և ուր որ հանգիստ առնելու յարմար տեղ մը գտնէի կանգ կ՚առնուի ։

Այս տաղտկալի կեանքն ամիս մ՚անցուցի ։ Նոյն միջոցին դիտեցի որ ծովը անզգայօրէն վար կ՚իջնէր և կղզին կը մեծնար, կարծես թէ ցա-մաքը կը մօտենար ։ Եւ արդարև ջրերն այնքան նուազեցան որ իմ և ցամաքին մէջ լոկ նեղ ջրի անցք մը կար ։ Այն ջուրէն անցայ և ջուրը մինակ սրունքիս կէսը հասաւ ։ Աւազուտ ծովափին վրայ ընդ երկար քալեցի և յոգնեցայ ։ Ի վերջէ, աւելի պինդ ցամաք մը հասայ և արդէն ծովէն բաւական հեռի էի երբ հեռուն կրակի պէս բան մը տեսայ առջևս, որով փոքր ինչ ուրախութիւն զգացի ։ «Անտարակոյս հոգի մը պիտի գտնեմ, կ՚ըսէի խրովի, և կարելի բան չէ որ այս կրակն ինքն իրեն վառուած ըլլայ ։» Բայց քանի մօտենայի, սխալմունքս կը փարա-տէր, և շատ չանցաւ հասկցայ որ կրակ կարծածս կարմիր պղնձէ դղեակ մ՚էր, որ բոցավառ կ՚երևէր հեռուէն արևուն ճառագայթնե-րէն ։

Այս դղեկին մօտ կանգ առի ու նստայ, ոչ միայն անոր հիանալի շէնքը նկատելու այլև քիչ մը խոնջէնքս առնելու համար ։ Տակաւին այն ինչ սկսեր էի արժանի եղած ուշադրութեամբ սոյն դուռը նայիլ, երբ տասը խիստ վայելչակազմ երիտասարդներ տեսայ որ շրջագայութենէ կը դառնային ։ Բայց զարմանալին այն էր որ ամէնքն ալ աջ աչքի կողմէն միականի էին ։ Բարձրահասակ և պատկառելի ծերունիի մը կ՚ընկերա-նային ։

Յետին ծայր զարմանքս տարեր էր այսչափ միականիք մէկէն տես-նելս, և ամէնքն ալ աջ աչքէ զուրկ ։ Երբ կը մտածէի թէ ինչ դիպուա-ծով իրարու միացեր էին, իմ քովս եկան և ըսին որ ուրախ են իս տեսնելնուն ։ Առաջին ողջոյնները տրուելէն ետև՝ հարցուցին թէ ինչ պատճառաւ այն կողմերն եկեր եմ ։ Պատասխան տուի որ պատմու-թիւնս փոքր ինչ երկայն է, և թէ, իրենց փափաքը պիտի կատարեմ ե-թէ հաճին նստելու ։ Ամէնքը նստան, և պատմեցի անոնց բոլոր գլուխս եկածները քանի որ տէրութենէս ելեր եմ. այս պատմութիւնս իրենց մեծ զարմանք պատճառեց ։

Իմ խօսքս աւարտելէն ետեւ՝ այս նորահասակ իշխանները խնդրեցին որ իրենց հետ դղեակը մտնեմ։ Իրենց առաջնորդութիւնն ընդունեցայ։ Շարք մը սրահներէ, նախասենեակներէ, խուցերէ և դահլիճներէ անցանք, որոնք կոկիկ զարդարուած էին կարասեօք, և 'ի վերջէ հասանք սրահիկ մ'ուր բոլորակի տաս հատ կապտագոյն բազմոցներ կային զատ զատ դրուած. ասոնք թէ ցորեկը նստելու և թէ գիշերը քնանալու կը ծառայէին։ Այս բոլորակին մէջ տեղը տասն մէկերորդ բազմոց մի ալ կար ոչ այնչափ բարձր, թէև նոյն գոյնն ունէր. անոր վրայ արդէն ակնարկած ծերունիս նստաւ. իսկ միւս տաս նորահասակ իշխանները միւսներուն վրայ բազմեցան։

Եւ որովհետև իւրաքանչիւր բազմոց մէկ հոգիէն աւելի չէր առնուր, երիտասարդներէն մին ինձ ըսաւ. «Ընկեր, մէջ տեղ օթոցին վրայ նստիր, և ընաւ մեզի վերաբերող բաներու վրայ ոչ ինչ մի հարցըներ, և թէ ինչու համար ամէնքնիս ալ աջ աչքէ զուրկ միականի ենք. շատ համարէ միայն տեսնել և ասկէ աւելի հետաքրքիր մի ըլլար։»

Ծերունին երկար ատեն նստած չմնաց. ոտք ելաւ ու դուրս գնաց. բայց քիչ մ'ետքը դարձաւ տաս իշխաններուն ընթրիքը բերելով, և ամէն մէկուն ընկած բաժինը բաշխեց։ Ինծի ալ տուաւ, զոր միւսներուն պէս առանձին կերայ, և կերակուրէն ետքը՝ նոյն ծերունին մեղ իւրաքանչիւրին թաս մը գինի մեծարեց։

Իմ պատմութիւնս իրենց այնչափ տարօրինակ երեցաւ որ ընթրիքէն ետեւ նորէն կրկնել տուին, և ասոր վրայ խօսք բացուելով գիշերուան մէկ մասն անցուցինք։ Իշխաններէն մէկը մտածելով որ ժամանակն ուշ է, ծերունիին ըսաւ. «Կը նայիս որ քնանալու ատեն է, և չես երթար պէտք եղածը բերել որպէս զի մեր պարտքը կատարենք։» Այս խօսքիս վրայ, ծերունին ելաւ և դահլիճ մը մտաւ, ուսկէ հետզհետէ տաս կոնք բերաւ գլխին վրայ կրելով. ամէնքն ալ կապոյտ կերպասով մը ծածկուած էին։ Մէկմէկ հատ առաւ և իւրաքանչիւր իշխանի առջև կանթեղով մը դրաւ։

Երբ կոնքերուն ծածկոցը բացին, տեսայ որ անոնց մէջ մոխիր, ածխի փոշի և սև ներկ կային։ Այս ամէն բաները մէկտեղ խառնեցին և սկսան անով երեսնին շփել և մրոտել, այնպէս որ մարդ կը սոսկար

տեսնելու։ Այսպէս մրոտուելէն ետեւ՝ սկսան լալ, ողբալ և իրենց գլուխն ու կուրծքը ծեծել, անդադար գոչելով. «Ահա այս է մեր անգործութեան և շուայտութեան պտուղը։»

Բոլոր գիշեր գրեթէ այս այլանդակ գործին զբաղեցան։ Վերջապէս դադրեցան. ծերունին անոնց ջուր բերաւ, որով երեսնին և ձեռքերնին լուացին. նոյնպէս թերմաշ լաթերնին հանեցին և ուրիշներ հագան այնպիսի կերպով մ'որ կարծես թէ իրենք չէին սոյն զարմանալի բաներն ընողներն որոց ականատես էի։

Դատեցէք, տիկին, թէ ինչ նեղութեան մէջ էի նոյն միջոցին։ Հազար անգամ բերանս բացի՝ որպէս զի իշխաններուն պատուէրին հակառակ՝ քանի մը հարցումներ ընեմ, բայց չկրցայ և բոլոր գիշերն անկարելի եղաւ ինձ աչքս գոցել։

Հետևեալ օրն՝ երբ արթնցայ՝ դուրս ելանք հով առնելու, և այն ատեն անոնց ըսի. «Իշխաններ, կը յայտնեմ ձեզ որ երէկ իրկուն ձեր ինձի տուած պատուէրը չեմ կրնար պահել։ Ինչպէս որ դիտեցի, իմաստուն և յետին ծայր խելացի մարդիկ էք, սակայն տեսայ որ այնպիսի գործեր ըրիք որ յիմար մարդիկ անգամ չեն ըներ։ Գլխիս ինչ փորձանք որ բերէք չեմ կրնար համբերել և պիտի հարցնեմ թէ ինչու համար մոխիրով, ածուխով և սև ներկով երեսնիդ մրոտեցիք, և վերջապէս ինչու համար ամէնքնիդ ալ միականի էք. անշուշտ այս բաներուն պատճառն եղական բան մը պիտի ըլլայ. ուստի կ'աղաչեմ որ իմ հետաքրքրութիւնս գոհ ընէք։»

Այս թախանձագին աղաչանացս և ոչ իսկ պատասխան տուին. միայն հասկցուցին որ իրենց ըրած հարցումներս ինձի չեն վերաբերիր, թէ ինձ օգուտ մը չունին և թէ պէտք է որ հանդարտ տեղս նստիմ։

Բոլոր օրն այլ և այլ աննշան խնդիրներու վրայ խօսելով անցուցին. և երբ գիշեր եղաւ, ամէնքը զատ զատ ընթրելէն ետեւ՝ ծերունին նորէն բերաւ կապոյտ կոնքերը. դեռահաս իշխանները մրոտեցան, լացին, ինքզինքնին ծեծեցին և պոռացին. «Ահա մեր անգործութեան և շուայտութեան պտուղը։» Հետևեալ գիշերներն ալ նոյն բանը կրկնեցին։

Վերջապէս հետաքրքրութիւնս չկրցայ զսպել, և աղաչեցի որոշակի

որ կամ խնդիրս կատարեն և կամ ինծի ցոյց տան թէ ինչ ճամբով կրնամ իմ թագաւորութեանս դառնալ. վասն զի, ըսի անոնց, որ անկարելի էր ինձ անոնց հետ աւելի երկար ժամանակ կենալ և, ամէն իրկուն՝ առանց պատճառը գիտնալու, այնպիսի տարօրինակ բաներու հանդիսատես ըլլալ։

Իշխաններէն մէկն՝ ամենուն կողմէն ինձ պատասխան տուաւ. «Մի զարմանար եթէ քեզի հետ այսպէս կը վարուինք, մի միայն քու օգտիդ և քեզ մեր գտնուած վիճակին մէջ չտեսնելու համար է որ աղաչանքիդ չենք զիջանիր։ Եթէ մեր դժբաղդ ճակատագրին վիճակիլ կ՚ուզես, պատասխան տուր, իսկոյն աղաչանքդ կը կատարենք։» Ըսի անոնց որ ամէն տեսակ դժբաղդութիւն կրելու աչքս առեր եմ։ «Նորէն կ՚ըսեմ, կրկնեց նոյն իշխանը, կը յորդորենք քեզ հեռաքրքրութիւնդ զսպելու. աջ կողմի աչքդ պիտի կորսնես։ — Հոգ չէ, պատասխան տուի, ճշմարիտ կ՚ըսեմ որ եթէ այդ դժբաղդութիւնը պատահի ինձ, ձեզ յանցաւոր չպիտի գտնեմ, այլ ինքզինքս պիտի դատապարտեմ։» Իշխանն աւելի զատ յայտնեց որ երբ աչքիս մէկը կորսնեմ, բնաւ չյուսամ իրենց հետ մնալու, եթէ երբեք այս յոյսն ունիմ, վասն զի իրենց թիւը լման է և անկէ աւելի չեն կրնար ընդունիլ։ Ըսի անոնց որ եթէ իրենց պէս պարկեշտ մարդերու հետ բնակէի՝ մեծ հաճոյք պիտի զգայի, բայց եթէ հարկ է բաժնուիլ, պատրաստ եմ հնազանդելու, վասն զի ամէն պայմանի գլուխ ծռելու յանձնառու էի, բաւական էր որ իմ փափաքս կատարեն։

Տասն իշխանները տեսնելով որ իմ որոշումս անսասանելի է, ոչխար մ՚առին մորթեցին և մորթը հանելէն ետև դանակին ինծի տուին և ըսին. «Առ այս դանակը. հիմակ պիտի ըսենք թէ անով ինչ պիտի ընես։ Քեզ այս մորթին մէջ պիտի կարենք, յետոյ դուրս պիտի ձգենք քեզ և պիտի հեռանանք։ Այն ատեն ահագին խոշորութեամբ թռչուն մ՚որ պասկուճ կ՚ըսուի, օդին մէջ պիտի երևի, և քեզ ոչխարի տեղ առնլով՝ վրադ պիտի յարձակի և մինչև ամպերը պիտի հանէ. բայց մի վախնար. ետքը դէպ ՚ի երկիրը պիտի իջնէ և քեզ լեռի մը կատարը պիտի թողու։ Երբոր զգաս որ գետնի վրայ ես, դանակով կաշին պատռէ և դուրս ելիր։ Պասկուճ թռչունը քեզ տեսնելուն՝ զարմանքէն պի-

տի թողու և քեզ ազատ պիտի թողու։ Ամենևին այն տեղ մի կենար, քալէ մինչև որ հրաշալի մեծութեամբ դղեակ մը հասնիս, որ ոսկի տախտակներով, խոշոր զմրուխտներով և ուրիշ ընտիր գոհարներով ծածկուած է։ Դուռը գտիր, որ միշտ բաց կ՚ըլլայ, և ներս մտիր։ Մենք ամէնքս ալ այն դղեակը գացած ենք։ Բայց թէ այն տեղ ինչ տեսանք և ինչ հասաւ մեզի, չպիտի ըսենք, դու ինքնին պիտի իմանաս։ Այսչափ միայն կրնանք ըսել որ մեր աջ աչքն այն տեղ կորուսինք, և մեր քաշած ապաշխարութիւնն՝ որուն ականատես եղար, այն տեղ երթալնուս համար է։ Մեր ամէն մէկուն պատմութիւնը տարօրինակ դիպուածներով լեցուն է, այնպէս որ կարելի է խոշոր գիրք մը յօրինել. բայց աւելի չենք կրնար ըսել քեզի։»

Տիկին, այս տասը միականի իշխաններէն մէկն այս խօսքերն ըսելէն ետև՝ ոչխարի մորթով փաթթուեցայ, դանակ մ՚առի, և երբ դեռահաս իշխանները զիս անոր մէջ կարեցին, դուրս տարին ձգեցին, և այս սրահը քաշուեցան։ Պասկուճը քիչ ատենէն երևցաւ, վրաս ինկաւ, ճիրաններովը զիս առաւ իբր ոչխար մը և լեռի մը կատարը փոխադրեց։

Երբ գետնի վրայ ըլլալս զգացի, շուտ մը դանակովս մորթը պատռեցի, դուրս ելայ և պասկուճին առջև երևցայ, որ իս տեսնելուն թռաւ գնաց։ Այս պասկուճը սպիտակ թռչուն մ՚է, որ հրէշային խոշորութիւն մ՚ունի։ Այնքան ուժեղ է որ դաշտերու մէջ գտնուած փիղերը կը յափշտակէ, լեռներու գագաթը կը տանի և զանոնք կ՚ուտէ։

Այնքան անհամբեր էի դղեակը հասնելու որ ժամանակ չկորուսի, շտապաւ քալեցի և կէս օր չքշեց հոն հասայ, և կրնամ ըսել թէ աւելի գեղեցիկ գտայ զայն քան ինչ որ պատմեր էին։

Դղեակին դուռը բաց էր. ներս մտայ և քառակուսի և ընդարձակ գաւիթ մը տեսայ, որուն բոլորտիքն իննսուն և ինն ճանդանի և հալուէի փայտէ՝ և մէկ ալ ոսկի դռներ կային, առանց համրելու անթիւ փառաւոր սանդուղներուն դռներն՝ որոնք վերնայարկին սենեակները կը տանէին, և ուրիշներ ալ կային զոր չէի տեսներ։ Այս հարիւր դռները պարտէզներու, ընչաւէտ մթերանոցներու, կամ վերջապէս տեսնելու արժանի հիանալի բաներ պարունակող տեղերու վրայ կը բացուէին։

Գիմացս բաց դուռ մը տեսայ, ուսկէ մեծ սրահ մը մտայ, որուն մէջ անմման գեղեցկութեամբ քառասուն նորատի տիկիններ նստեր էին։ Փառաւոր հագուստ հագեր էին։ Ամէնքը միասին ոտք ելան երբ իս տեսան, և իմ ողջոյնս չառած՝ ըսին ինծի ուրախութեան ակներև նշաններով. «Բարի եկար, քաջդ իշխան, բարի եկար.» և անոնցմէ մէկը միւսներուն կողմէն խօսելով՝ ըսաւ. «Երկար ատենէ վեր քեզի պէս աղւոր մը կ'սպասէինք. կերպարանդ կը յայտնէ որ մեր փափաքած բոլոր ընտիր հանգամանքներն ունիս, և կը յուսանք որ մեր ընկերութիւնն անհաճոյ և քեզ անարժան չպիտի գտնես։»

Թէև շատ դէմ կեցայ, բայց ստիպեցին իս իրենց նստած տեղէն աւելի բարձր տեղ մը նստելու. և որովհետև կ'ըսէի իրենց որ ծանր էր ինծի այս բանս. «Այս է քու տեղդ, ըսին ինծի, այս ժամէն դուն ես մեր իշխանը, մեր տէրը, մեր դատաւորն. և մենք քու գերիներդ ենք, քու հրամաններդ կատարելու պատրաստ։

Տիկին, անկարելի է ինծի նկարագրել թէ ինչ զարմանք կը պատճառէր ինծի այս կանանց եռանդն ու փոյթն որով ամէն կարելի մեծարանք ինծի կը մատուցանէին։ Անոնցմէ մէկը տաք ջուր բերաւ և ոտքերս լուաց. ուրիշ մը ձեռքերուս մէջ հոտաւէտ ջրեր թափեց. մէկ քանին հագուստս փոխելու համար պէտք եղած լաթերը բերին. ոմանք ձոխ ուտելիքներ մեծարեցին ինծի, և վերջապէս ոմանք ալ բաժակ 'ի ձեռին՝ զմայլելի գինի մը տալու պատրաստ էին. և այս ամէն բաներն այնպիսի անշփոթ, կարգաւ, զարմանալի միաբանութեամբ և ձևերով կը կատարէին որ զիս զմայլեցուցին։ Կերայ խմեցի։ Այնուհետև բոլոր տիկիններն չորս կողմս նստելով՝ խնդրեցին որ ուղևորութիւնս պատմեմ։ Ես ալ իմ արկածներուս նկարագիրն ըրի որ մինչև իրկուն տևեց։

Իմ պատմութիւնս քառասուն կանանց պատմելէն ետքն՝ ամէնէն մօտ նստողները մնացին որ հետս խօսակցին, մինչդեռ միւսները՝ տեսնելով որ մթցեր է, ելան որ մոմեր բերեն։ Անհամար մոմեր առնելով եկան և ցորեկուան լոյսը հրաշալի կերպով նորոգեցին, և այնպիսի համեմատութեամբ մոմերը շարեցին որ կարծես թէ անկէ աւելի պակաս չէին կրնար ըլլալ մոմերը։

Ոմանք սեղանի մը վրայ չոր պտուղներ, շաքարեղէն և ուրիշ ըմպե-

լիներ դնելով՝ զայն բերին. դաստակալի մը վրայ ալ շատ տեսակ գինի և օշարակ տեղաւորեցին. այլք նուագարաններով ներս մտան։ Երբ ամէն բան կազմ ու պատրաստ էր, սեղան նստելու հրաւիրեցին իս։ Կանայք ինծի հետ նստան և բաւական երկար ատեն անցուցինք։ Այն կիներն որ պիտի նուագէին և երաժշտուհիներուն ձայնակից պիտի ըլլային ոտք ելան և քաղցրալուր համերգ մը կազմեցին։ Ուրիշներ ալ տեսակ մը պարահանդէս սկսան և հետզհետէ երկ երկու հոգի շնորհալի կերպով մը պարեցին։

Կէս գիշեր անցեր էր երբ այս ամէն զուարճութիւնները լմնցան։ Այն ատեն տիկիններէն մին սկսաւ խօսիլ ու ըսաւ. «Իշխան, այսօրուան ըրած ուղևորութենէդ յոգնած պիտի ըլլաս, ժամ է որ հանգստանաս։ Քու սենեակդ պատրաստ է, բայց երթալէդ առաջ՝ մեզնէ ով որ կը հաճիս ընտրէ և հետդ տար։» Պատասխան տուի թէ այդպիսի ընտրութիւն մ'ընելու կ'զգուշանամ, քանի որ ամէնքը հաւասարապէս գեղանի, ուշիմ, և իմ յարգանաց արժանի էին և թէ մին միւսէն աւելի վեր դասելու անքաղաքավարութիւնը չպիտի ընեմ։

Նոյն տիկինն որ ինծի առաջ խօսեր էր, կրկնեց. «Մենք քու պարկեշտութեանդ վրայ համոզուած ենք, և կը տեսնենք որ մեր մէջը նախանձ չգրգռելու համար կը քաշուիս. բայց քեզի իմաց կուտանք որ քու ընտրած անձիդ երջանկութիւնն և ոչ մէկուն նախանձը պիտի շարժէ, վասն զի որոշած ենք, որ ամէն օր իրարմէ ետև մի և նոյն երջանկութիւնը պիտի ունենանք, և քառասուն օրէ վերջը՝ նորէն պիտի սկսինք։ Ուստի ազատօրէն ընտրէ, և հանգստութեանդ ժամանակը մի կորուսեր։»

Հարկ եղաւ անոնց թախանձանաց զիջանիլ, և ձեռքս կարկառեցի միւսներուն կողմէն խօսող կնկան։ Իր ձեռքն ինծի տուաւ և մեզ փառաւոր սենեակ մը տարին և իրենց տեղը քաշուեցան։

Հետևեալ առտու այն ինչ լաթերս հագեր էի որ միւս երեսուն ինը տիկինները սենեակս եկան և ամէնքն ալ նախորդ օրուանէն տարբեր հագուստներ ու զարդեր դրեր էին։ Բարի լոյս ըսին և իմ առողջութեանս վիճակը հարցուցին։ Վերջը բաղնիք տարին իս, իրենց ձեռօքը լուացին և իմ կամացս հակառակ պէտք եղած ծառայութիւններն ինծի

մատույցին․ իսկ երբ բաղնիքէն դուրս ելայ առջինէն աւելի շքեղ հագուստ մ'ինձ հագցուցին։

Բոլոր օրը գրեթէ սեղանի վրայ անցուցինք և երբ պառկելու ժամը հասաւ, նորէն աղաչեցին որ իրենցմէ մէկն ընտրեմ իբր ընկերուհի։ Վերջապէս, տիկին, մի և նոյն բանը շարունակ կրկնելով քեզ գաղտուկ չպատճառելու համար, այսչափ ըսեմ որ տարի մ'ամբողջ քառասուն կանանց հետ անցուցի հեշտութեամբ և այն միջոցին վիշտ մը չեկաւ այն աղւոր օրերս վրդովելու։

Տարւոյն վերջն (և որչափ մեծ եղաւ իմ զարմանքս), քառասուն կանայք, փոխանակ իրենց սովորական զուարթութեամբ ինձ ներկայանալու և ինչպէս ըլլալս հարցնելու, առտու մը խուցս մտան արտասուաթոր այտերով և իրարմէ ետև եկան իս համբուրելու գորովալիր և ըսին․ «Սիրելի իշխան, մնաս բարև, պէտք է որ քեզնէ բաժնուինք։»

Անոնց լացը տեսնելով իմ սիրտս ալ ելաւ։ Աղաչեցի որ իրենց տրտմութեան և այս անակնկալ բաժանման պատճառն ինձ յայտնեն։ «Յանուն Աստուծոյ, գեղանի տիկիններ, ըսի, իմացուցէք ինձ թէ արդեօք կարող եմ ձեզ մխիթարելու կամ օգնելու։» Տիկինները փոխանակ ինձ ճշգրիտ պատասխան մը տալու․ «Երանի թէ, ըսին, քեզ ամենևին տեսած և ճանչցած չըլլայինք։ Քեզնէ առաջ շատ ճամբորդներ եկան մեզ այցելութիւն ըրին, բայց անոնցմէ և ոչ մէկը քու շնորհքդ, անուշութիւնդ, զուարթութիւնդ և արժանիքդ ունէր։ Չենք գիտեր թէ ինչպէս քեզնէ հեռու պիտի ապրինք։» Այս ըսելէն ետև՝ նորէն սկսան դառնապէս լալ․ «Սիրասուն տիկիններս, կրկնեցի ես, կ'աղաչեմ, սիրտս մի թափէք, ըսէք ինձ ձեր տրտմութեան պատճառն։ — Ափսոս, պատասխան տուին ինձ, ուրիշ ինչ պատճառ կրնանք ունենալ վշտանալու քան թէ իրարմէ զատուելու հարկը։ Կարելի է ալ զիրար չպիտի տեսնենք։ Բայց եթէ դու կամիս, և եթէ ինքզինքդ զսպելու կարողութիւն ունենաս, նորէն կրնանք իրարու միանալ։ — Տիկիններ, ըսի, ձեր խօսքերէն բան մը չեմ հասկնար, կ'աղաչեմ աւելի բացորոշ խօսեցէք։

— Շատ աղէկ, ըսաւ անոնցմէ մէկը, քու կամքդ կատարելու համար, քեզ պիտի ըսենք որ՝ մենք ամէնքս ալ թագաւորներու աղջիկներ

ենք։ Ամէնքնիս մէկտեղ կ'ապրինք, ինչպէս որ տեսար մեծ զուարճութեամբ․ բայց ամէն տարւոյն վերջն՝ անհրաժեշտ և անբացատրելի պարտուց համար ստիպուած ենք քառասուն օր ասկէ հեռանալու, այնուհետև նորէն այս դղեակը կգանք։ Երէկ տարին լմնցաւ և պէտք է որ այսօր քեզնէ բաժնուինք, ահա այս է մեր տրտմութեան պատճառը։ Բայց մեկնելէն առաջ՝ ամէն բաներուն բանալիները քեզի պիտի թողունք, մանաւանդ այս հարիւր դռներուն, որ մեր բացակայութեան ատեն կրնան քու հետաքրքրութիւնդ գոհ ընել և առանձնութեան նեղութիւնները թեթևցնել։ Բայց քու օգտիդ և մեր շահուն համար կ'աղաչենք քեզ որ ոսկիէ դուռը չբանաս։ Եթէ բանաս, ամենևին քեզ չպիտի տեսնենք և այս բանին համար մեր ունեցած երկիւղը տրտմութիւննիս կ'աւելցնէ։ Յուսանք որ մեր տուած պատուէրը պիտի կատարես, եթէ ոչ քու հանգստութիւնդ և երջանկութիւնդ 'ի սպառ պիտի կորսնցնես, ուստի աչքդ չորս բաց։ Եթէ անխորհուրդ հետաքրքրութենէդ մղուիս, ինքզինքիդ մեծ վնաս պիտի հասցնես։ Ուստի կը պաղատինք քեզ որ այս սխալմունքը չգործես որպէս զի քառասուն օրէն քեզ այս տեղ գտնելով մխիթարուինք։ Ոսկի դրան բանալին կրնայինք մեր հետը տանիլ, բայց քեզի պէս իշխանի մը խոհականութեան և զգաստութեան վրայ կասկած յայտնելով՝ քեզ նախատինք մ'ըրած կ'ըլլայինք։»

Այս գեղանի իշխանուհիներուն խօսքերն սաստիկ ինձի մեծ տրտմութիւն մը պատճառեցին։ Ի հարկէ յայտնեցի որ իրենց բացակայութիւնն ինձի մեծ ցաւ պիտի տայ, և շնորհակալ եղայ իրենց տուած ընտիր խրատներուն համար։ Խօսք տուի զանոնք պահել և ասկէ աւելի դժուարին բաներ ընելու պատրաստ էի իրենց պէս հազուագիւտ կանանց հետ ապրելու երջանկութիւնը ստանալու համար։ Մեր հրաժարական բարևները շատ սրտառուչ եղան, իրարմէ ետև՝ ամէնքն ալ համբուրեցի, վերջը հեռացան գացին և ես առանձին մնացի դղեկին մէջ։

Բոլոր տարին զուարճութեամբ, կեր ու խումով, երաժշտութեամբ և ուրախութեամբ անցունելուս՝ ոչ ժամանակ և ոչ փափաք ունեցեր էի այս հմայելի պալատին մէջ գտնուած սքանչելիքը տեսնելու։ Ամէն օր

իմ աչքիս առջին եղած հիանալի բաներն անգամ չէի քննած, այնչափ իշխանուհիներուն գեղեցկութեան զարմուեր էի և զմայլեր միայն տեսնելով թէ ինչ հոգ կը տանէին ինծի հաճելի ըլլալու համար։ Անոնց երթալուն վրայ սիրտս սաստիկ ցաւեցաւ, և թէև մինակ քառսուն օր բացակայ պիտի գտնուէին, բայց կարծէի թէ դար մը պիտի անցնեմ առանձին։

Միտքս դրեր էի ինծի տրուած պատուէրը չմոռնալու և ոսկի դուռը չբանալու, բայց որովհետև հրաման ունէի դէթ հետաքրքրութիւնս գոհ ընել՝ միւս դռներուն բանալիներն առի, որ կարգաւ շարուած էին։

Առաջին դուռը բացի և պտղատու պարտէզ մը մտայ, որուն նմանը կարծեմ թէ աշխարհիս մէջ չկայ։ Չեմ կարծեր նաև որ մեր մահմետական կրօնքին խոստացած պարտէզն ալ անկէ գերազանց ըլլայ։ Ծառերուն զուգաչափութիւնը, զարմանալի դիրքը, հազար տեսակ անծանօթ պտուղներուն առատութիւնն ու զանազանութիւնն, անոնց թարմութիւնը, գեղեցկութիւնը, վերջապէս ամէն բան աչքս կը գրաւէին։ Տիկին, պէտք չէ մոռնամ ըսելու որ այս զմայլելի պարտէզը զարմանալի կերպով մը կ՚ոռոգէին. ճարտարարուեստ համեմատութեամբ խողովակաւ ջրմուղներու միջոցաւ առատօրէն կը ջրէին այն ծառերուն արմատներն որ նոր բողբոջ և ծաղիկ պիտի ծլէին. ուրիշ խողովակներ ալ աւելի քիչ ջուր կու տային պտուղնին կապուած ծառերու, ուրիշներ ալ՝ աւելի քիչ կը ջրէին այն ծառերն որոց պտուղները կը մեծնային, դաս մը խողովակներ ալ ճիշդ պէտք եղածին չափ կ՚ոռոգէին խոշորցած և հասուննալու մօտ եղող պտուղները. բայց այս խոշորութիւնը մեր պարտէզներուն սովորական պտուղներուն մեծութենէ գերազանց էր։ Վերջապէս ուրիշ խողովակներ ալ, որ հասուն պտուղ կրող ծառերու կը հասնէին, զանոնք անապական վիճակի մէջ պահելու չափ խոնաւութիւն ունէին։ Այսպիսի գեղեցիկ վայր մը քննելէն և զմայլելէն չէի կշտանար, և անկէ բնաւ դուրս ելնելիք չունէի, եթէ չմտածէի որ դեռ չտեսած դռներուս մէջ աւելի հիանալի բաներ պիտի գտնեմ։ Երևակայութիւնս այս հրաշալի իրերով լցուած դուրս ելայ, դուռը գոցեցի, և անոր քովը գտնուած դուռը բացի։

Պտղատու պարտէզի մը տեղ, ծաղկալից բուրաստան մը գտայ որ իր տեսակին մէջ նոյնչափ հիանալի էր։ Այս բուրաստանն ընդարձակ ածու մը կը պարունակէր, որ առաջինին պէս առատօրէն չէին ջրեր, այլ աւելի զգուշութեամբ որպէս զի ամէն մէկ ծաղկին պէտք եղածէն աւելի ջուր չտրուի։ Վարդ, յասմիկ, մանիշակ, նարգէս, յակինթ, պուտ, կակաչ, հրանունկ, շահօքրամ, շուշան և ուրիշ բազմաթիւ տեսակ բոյսեր որ ուրիշ տեղեր տարբեր ժամանակներու մէջ կը ծաղկին, նոյն բուրաստանին մէջ ամէնը մէկ կը ծաղկէին, և անմահական հոտ մը կը բուրէին։

Երրորդ դուռը բացի և ընդարձակ թռչնարան մը տեսայ։ Գոյնզգոյն և ընտիր մարմարինէ յատակ մ՚ունէր։ Վանդակը ճանդանի և հալուէի փայտէ շինուած էր, անհամար սոխակներ, եկքանիկներ, դեղձանիկներ, արտուտներ և կենացս մէջ չլսած քաղցրաձայն շատ մը թռչուններ կը պարունակէր։ Իրենց հուներուն և ջրի ամանները մեծագին յասպիս և ակատ քարէ էին։

Այլ սակայն, այս թռչնարանը մաքրութեամբ կը ծփար. անոր ընդարձակութեան նայելով՝ կը մտածէի որ առ նուազն հարիւր հոգի պէտք էր այսպէս մաքուր պահելու համար. սակայն ոչ այս տեղ և ոչ միւս պարտէզներուն մէջ անձ մը տեսայ, և անոնց մէջ ամենամանր աղտեղութիւն մ՚աչքիս չզարկաւ։ Արեւն արդէն մարը մտեր էր, ես ալ այս առթիւ թռչուններուն երգերէն զմայլած, որոնք գիշերային հանգիստը վայելելու համար կոկիկ տեղ մը կը փնտռէին, դուրս ելայ, իմ սենեակս քաշուեցայ և միտքս դրի հետևեալ օրերը միւս դռները բանալու, բաց ՚ի հարիւրերորդ դռնէն։

Հետևեալ օրն իսկոյն գացի չորրորդ դուռը բացի։ Եթէ առջի օր տեսածներս իմ զարմանքս ու արմանքս տարին, նոյն միջոցին աչքիս զարկածն իս յափշտակեց և ապուշ կրթեց։ Մեծ գաւիթ մը մտայ, որուն բոլորտիքը սքանչելի ճարտարապետութեամբ շինուած շէնք մը կար, այս շէնքին նկարագիրը չպիտի ընեմ, տիկին, խօսքս չերկարելու համար։ Այսչափ միայն ըսեմ որ քառսուն հատ բաց դռներ ունէր, և իւրաքանչիւր գանձատան մը վրայ կը նայէր, և անոնց մէջ այնպիսի գանձեր կային որ մեծամեծ թագաւորութիւններ կրնային ծախու առնուլ։

Առաջին գանձը մարգարտէ կոյտեր կը պարունակէր , և որ աւելի ան-հաւատալին է , ամենէն մեծագիններն որ աղաւնիի հաւկիթներու պէս խոշոր էին , միջակներէն աւելի շատ էին : Երկրորդ գանձին մէջ ան-գամանդներ , կարկեհաններ և սուտակներ կային . երրորդին մէջ՝ զմրուխտներ . չորրորդին մէջ՝ ձուլածոյ ոսկի . հինգերորդին մէջ՝ ոսկի ստակ . վեցերորդին մէջ՝ ձոյլ արծաթ . Հետևեալ երկուքին մէջ՝ ար-ծաթ ստակ : Իսկ միւսները մելեսիկ , շափիւղայ , տպազիոն , արևակն , դոճաղմ , յակինթ և բոլոր մեզի ծանօթ ընտիր քարեր կը պարունակէ-ին , թողակատ , յասպիս , սարդիոնքարերը : Մի և նոյն գանձը լեցուն էր ոչ միայն ճիւղերովը , այլ բուսոյ ամբողջ ծառերով :

Այս ամէն ճոխութիւնները տեսնելէն ետև՝ հիացեր մնացեր էի և պոռացի . «Ո՛չ , եթէ տիեզերաց ամէն թագաւորներուն գանձերը մէկ-տեղ բերուին , այս գանձերուն չկրնար հաւասարին : Որչափ երջանիկ եմ որ այս ամէն հարստութիւնները կը վայելեմ սիրասուն իշխանուհի-ներու հետ :»

Հետևեալ օրերը տեսած բոլոր միւս հազուագիւտ և ազնիւ բանե-րուս մանր նկարագիրը չկրնար ըսել , տիկին : Այսչափ միայն պիտի ը-սեմ որ իննսուն ինն դռները բանալու և բոլոր տեսած բաներուս վրայ սքանչանալու համար հազիւ երեսուն ինն օր բաւեց : Կը մնար հարիւ-րերորդ դուռն , որմէ ներս մտնելն ինձ արգիլուած էր :

Զքնաղագեղ իշխանուհիներուն մեկնելէն 'ի վեր քառասուներորդ օրը հասեր էր : Եթէ այն օրը պէտք եղածին պէս ինքզինքս զսպէի , այսօր ամենէն երջանիկ մարդը պիտի ըլլայի , մինչդեռ այժմ ամենէն թշուառն եմ : Իշխանուհիները միւս օրը պիտի դառնային , և զանոնք վերստին տեսնելու ուրախութիւնս հարկ էր որ հետաքրքրութիւնս զսպէր , սակայն տկարութենէ մ'որուն վրայ անդադար պիտի զղջամ , սատանային փորձութեան բռնուեցայ , որ զիս շարունակ չարչարեց և մինչև որ ինքնին կրած նեղութիւնս չտարի հանգիստ չգտայ :

Բացի այն աղէտալի դուռը զոր խոստացեր էի չբանալու : Այն ինչ ոտքս առաջ տարի ներս մտնելու համար որ ախորժելի այլ իմ բնու-թեանս հակառակ՝ հոտ մ'ինձ մարմրուք տուաւ և գետինն ընկայ : Սակայն նորէն սթափեցայ , և այս ազդարարութենէ խրատուելով՝

դուռը գոցելու և հետաքրքրութիւնս գոհ ընելու փափաքէս հրաժա-րելու տեղ , ներս մտայ : Քիչ մը սպասեցի որ արտաքին օդն այս հոտը ցրուէ և այնուհետև անհանգստութիւն մը չզգացի :

Ընդարձակ կամարակապ վայր մը գտայ , որուն յատակը քրքումով ծածկուած էր : Շատ մ'ոսկեձոյլ ճրագներ՝ վառած մոմերով որ հա-լուէի և յամպարի հոտ կը բուրէին , նոյն տեղը կը լուսաւորէին , և այս լոյսն աւ կ'աւելնար ոսկի և արծաթ կանթեղներէ , որ լի էին զանազան հոտաւէտ հիւթերէ բաղկացած եղով մը : Իմ ուշադրութիւնս գրաւող շատ մը բաներու մէջ՝ սև ձի մը տեսայ , որուն նմանը գեղեցկութեան և վայելչութեան կողմէն աշխարհիս մէջ չկար : Առաւօտը գացի մօտէն քննելու համար . գտեցի որ ոսկեձոյլ թամբ և սանձ ունէր գեղա-կերտ . իր մսուրին մէկ կողմը լեցուն էր ստկած գարիով և շուշմայով և միւս կողմէն՝ վարդեջրով : Սանձէն բռնեցի և դուրս լուսին տարի որ լաւ դիտեմ : Վրան հեծայ և ուզեցի առաջ քշել զայն , բայց որով-հետև չէր շարժեր , իր փառաւոր ախոռէն գտած մէկ մտրակովս ա-նոր զարկի : Այն ինչ հարուածն զգաց որ ձին սկսաւ աչուելի կերպով մը վրնջել , յետոյ՝ տարածելով իր թևերը՝ զոր չէի տեսած՝ օդին մէջ բարձրերն ելաւ : Այն ատեն բոլոր ճիգս թափեցի վրան պինդ կենա-լու , և թէև ահ ու դողի մէջ էի , դարձեալ դէշ չէի կենար ձիուն վը-րայ : Այնուհետև նորէն սրացաւ իջաւ դէպ 'ի երկիրն , և դղեկի մը տանիքին վրայ կեցաւ , այն տեղ ժամանակ չտուաւ ինձ որ վար իջնեմ , այլ սաստիկ ցնցեց զիս , կռնակէս վրայ նետեց և պոչին ծայրովը աջ կող-մի աչքս հանեց :

Ահա այս կերպով միականի դարձայ : Այն ատեն յիշեցի տասն նորա-հասակ իշխաններուն գուշակութիւնը : Ձին նորէն թռաւ և աներևոյթ եղաւ : Ես իմ ձեռօքս գլխիս բերած դժբաղդութեանս վրայ ցաւելով՝ ոտք ելայ : Տանիքին վրայ քալեցի , ձեռօքս աչքս գոցելով , վասն զի սաստիկ կը ցաւէր : Վար իջայ և սրահի մը մէջ ինքզինքս գտայ . բոլո-րակի դրուած տասն բազմոցէն , և մէջտեղի աւելի բարձրկեկ նստարա-նէն հասկցայ որ այս դղեակն այն բնակարանն էր ուսկէ պակուճն զիս յափշտակեց տարաւ :

Տասն նորատի իշխանները սրահը չէին : Նոյն տեղն անոնց սպասեցի

եւ քիչ մ՚եարն եկան ծերունիին հետ ։ Ամենեքն ոչ իմ գալստեանս եւ ոչ աչքիս կորսուեանը վրայ զարմացան ։ «Շատ կը ցաւինք, ըսին ինծի, որ միաբերան չենք կրնար շնորհաւորել քեզ ինչ կերպով որ կը փափաքէինք, բայց քու դժբաղդութեանդ պատճառը մենք չենք ։ — Անիրաւութիւն մ՚ըրած կ՚ըլլամ ձեզ մեղադրելով, պատասխան տուի անոնց. այս դժբաղդութիւնն ես իմ ձեռօքս գլխիս բերի, քանի որ ես եմ յանցաւորն ։ — Եթէ, ըսին, դժբաղդներուն մխիթարութիւնը թշուառակիցներ ունենալ է, մեր օրինակը կրնայ քեզ սփոփանք մը տալ ։ Քեզի հասածը մեզի ալ հասաւ ։ Ամբողջ տարի մ՚ամէն տեսակ զուարճութիւն վայելեցինք, եւ նոյն երջանկութիւնը շարունակ պիտի վայելէինք եթէ իշխանուհիներուն բացակայութեան ատեն ոսկի դուռը չբանայինք ։ Դու ալ մեզի չափ անխոհեմ եղեր ես եւ մի եւ նոյն պատիժը կրեր ես ։ Շատ կը փափաքէինք քեզ մեր մէջ ընդունելու եւ մեր ըրած ապաշխարանքին քեզ ալ մասնակից ընելու, որուն տեւողութեան ժամանակն անյայտ է մեզի, բայց արդէն քեզի իմաց տուինք թէ ինչ պատճառաւ այս բանս չենք կրնար ընել ։ Ուստի քաշուեցէք, գացէք Պաղտատու արքունիքն. այն տեղ պիտի գտնէք քու ճակատագրիդ վճիռը տուող անձը ։»

Բռնեցի ճամբաս ինծի ցոյց տուին եւ իրենցմէ հեռացայ ։ Ուղեւորութեանս ատեն մօրուքս եւ ունքերս ածիլել տուի եւ գալէնտէրի հագուստ հագայ ։ Երկար ատենէ վեր կը քալեմ ։ Վերջապէս այսօր հասայ այս քաղաքը գիշերուան դէմ ։ Դրան մօտ այս իմ ընկերակից գալէնտէրներուն հանդիպեցայ, որոնք ինծի պէս օտարական էին ։ Երեքնիս ալ զարմացանք տեսնելով որ մի եւ նոյն կերպով միականի ենք ։ Բայց ժամանակ չունեցանք խօսակցելու թէ ինչպէս մի եւ նոյն բաղդին վիճակեր ենք ։ Այլ միայն, տիկին, կարող եղանք միասին գալ եւ ձեր վեհանձնաբար շնորհած օգնութիւնը ձեզմէ հայցել ։

Երրորդ գալէնտէրին իր պատմութիւնն աւարտելէն ետեւ՝ Զիւպէյտէ սկսաւ խօսիլ եւ անոր եւ իր ընկերներուն դառնալով՝ ըսաւ. «Ելէք գացէք, երեքնիդ ալ ազատ էք, ուր որ կ՚ուզէք կրնաք դիմել ։» Բայց անոնցմէ մէկը պատասխան տուաւ. «Տիկին, կ՚աղաչենք ձեզ ներել մեր հետաքրքրութեան, եւ թողուլ որ մենք ալ դեռ եւս չխօսող իշխաններուն պատմութեան ունկնդիր ըլլանք ։» Այն ատեն տիկինն ամիրապետին, Ճէաֆէր մեծ վէզիրին եւ Մէսրուրին կողմը դառնալով, ըսաւ, առանց գիտնալու թէ ինչ են այս մարդիկն. «Այժմ ձեր կարգն է պատմել ինծի ձեր պատմութիւնը, սկսեցէք ։»

Ճէաֆէր մեծ վէզիրն՝ որ միշտ առաջ նետողն էր՝ պատասխան տուաւ դարձեալ Զիւպէյտէին. «Տիկին, ձեզ հնազանդելու համար՝ պիտի կրկնենք միայն ինչ որ ձեր տունը չմտած արդէն ըսինք ։ Մենք, յարեց նա, Մուսուլի վաճառականներ ենք, եւ Պաղտատ եկանք որպէս զի մեր բնակած խանի մը մթերանոցին մէջ ունեցած ապրանքներս ծախենք ։ Մեզ արհեստակից շատ մը վաճառականներու հետ քաղքիս մէկ վաճառականին տունը ճաշ ըրինք ։ Այս մեր բարեկամը մեզի զուարճ կերակուրներ եւ ընտիր գինի մատուցելէն ետեւ՝ պարողներ եւ պարուհիներ, նոյնպէս գուսաններ եւ նուագածուներ բերել տուաւ ։ Որովհետեւ շատ աղմուկ կը հանէինք՝ պահակներ եկան եւ մեր ժողովէն շատ մը մարդիկ ձերբակալ ըրին ։ Իսկ մենք երջանկաբար փախանք, եւ ժամանակն ուշ եւ մեր խանին դուռը գոց ըլլալուն՝ ուր դիմելնիս չգիտէինք ։ Դիպուածն այնպէս բերաւ որ ձեր փողոցէն անցանք եւ ձեր տունն ուրախութեան ձայներ լսեցինք. ասկէ սիրտ առնելով ձեր դուռը զարկինք ։ Ահա, տիկին, ձեր հրամանը կատարելու համար այս պատմութիւնն ունէի ըսել ։» Զիւպէյտէ այս խօսքերը լսելէն ետեւ՝ կարծես թէ կը վարանէր եւ ինչ ընելիքը չգիտէր ։ Այս բանս գալէնտէրները տեսնելով՝ աղաչեցին զինքն որ Մուսուլի երեք վաճառականներուն հետ իրենց ցոյց տուած բարերարութեամբ վարուի ։ «Շատ աղէկ, ըսաւ նա, կը հաւանիմ. կը փափաքիմ որ ամէնքնիդ ալ մի եւ նոյն երախտագիտութիւնն ունենաք առ իս ։ Ձեզ կը ներեմ, բայց սա պայմանաւ որ իսկոյն այս բնակարանէս ելնէք եւ ձեր հաւնած տեղն երթաք ։»

Զիւպէյտէ մեծասաստ ձայնով մ՚այս հրամանը տալէն ետեւ՝ ամիրապետը, Մէսրուր, մեծ վէզիրն, երեք գալէնտէրներն ու բեռնակիրը դուրս ելան առանց պատասխան տալու, վասն զի եօթը զինեալ գերիներուն ներկայութիւնն իրենց ահ կ՚ազդէր ։ Երբ տունէն դուրս ելան եւ դուռն իրենց վրայէն գոցուեցաւ, ամիրապետն՝ առանց երեւան գալու, երեք գալէնտէրներուն ըսաւ. «Իսկ դուք, իշխաններ, որ նորեկ

էք և օտար այս քաղքիս մէջ՝ ո՞ր կողմը պիտի երթաք հիմակ որ դեռ լուսցած չէ։ — Իշխան, պատասխան տուին անոնք, ահա ճիշդ այդ բանը մեզ կը շփոթէ։ — Ետևէս եկէք, կրկնեց ամիրապետը, հիմակ ձեր շփոթութիւնը պիտի փարատենք։» Այս խօսքս աւարտելէն ետև՝ վէզիրին կամացուկ մը խօսեցաւ, և անոր ըսաւ. «Քու տունդ տար զանոնք, և վաղն առտու իմ առջևս պիտի բերես։ Կը փափաքիմ անոնց պատմութիւնը գրել տալ, իմ թագաւորութեանս տարեգրութեանց մէջ արժանի են յիշատակութեան։»

Ճեաֆէր վէզիրն երեք գալէնտէրները հետը տարաւ. բեռնակիրն իր տունը գնաց. իսկ ամիրապետն ալ Մէսրուրին ընկերակցութեամբը պալատը դարձաւ։ Անկողին մտաւ, բայց բոլոր գիշերն աչքը չգոցեց, այնչափ միտքը յուզուած էր տեսած և լսած տարօրինակ բաներէն։ Մանաւանդ սաստիկ կը տենչար իմանալու թէ ո՛վ էր Զիւպէտէ, ինչ պատճառաւ երկու սև շուները կը չարչարէր և ինչու համար Էմինէի կուրծքը վիրալի էր։ Արդէն լուսցեր էր և տակաւին այս մտմտուքով միտքը կը պաշարէր։ Անկողնէն ելաւ, և իր խորհրդարանն և ատենդրութեան վայրը գնաց և աթոռին վրայ նստաւ։

Քիչ մ'ետքը մեծ վէզիրն եկաւ և ըստ սովորականին իր յարգանքը մատոյց։ «Վէզիր, ըսաւ անոր ամիրապետը, մեր այս օրուան ընելիք գործերը շատ ստիպողական չեն. երեք տիկիններուն և երկու շուներուն գործն աւելի կարևոր է։ Միտքս չպիտի հանդարտի եթէ իմ զարմանքս գրգռող այնքան բաներուն լուծին չտեղեկանամ։ Գնա, այն տիկինները այս տեղ բեր, նոյնպէս գալէնտէրները։ Շուտ ճամբայ ելիր և յիշէ որ վերադարձիդ պիտի սպասեմ անհամբեր։»

Վէզիրն՝ որ իր տիրոջ աշխոյժ և կրակոտ բնաւորութիւնը գիտէր՝ անոր հնազանդելու փութաց։ Կանանց տունը գնաց և մարդավարութեան կերպով մը յայտնեց զիրենք ամիրապետին տանելու համար առած հրամանը, գաղտնի պահելով առջի գիշերուան անցած դարձած բաները։ Կանայք իրենց քօղով ծածկուեցան և վէզիրին հետ ճամբայ ելան. նոյնպէս գնաց երեք գալէնտէրներն ալ առաւ, որոնք իմացեր էին արդէն որ ամիրապետը տեսեր և առանց ճանչելու անոր հետ խօսեր են։ Վէզիրը զանոնք պալատը տարաւ և իրեն տրուած հրամանն

այնպիսի արագութեամբ կատարեց որ ամիրապետը շատ գոհ եղաւ։ Այս իշխանը ներկայ գտնուող պալատականներուն առջև պէտք եղած պատշաճութիւնը պահելու համար, իր սենեակը տանող սրահին դռնակին ետևը կեցնել տուաւ երեք տիկինները, և իր քովը պահեց երեք գալէնտէրները, որոնք իրենց յարգական ձևերով հասկցուցին թէ գիտեն որու առջև գտնուելու պատիւն ունին։

Երբ կիները նստան, ամիրապետն անոնց կողմը դարձաւ ու ըսաւ. «Տիկիններ, անշուշտ պիտի զարմանաք եթէ ըսեմ որ այս գիշեր ձեր տունը մտայ իբր վաճառական ծպտեալ. պիտի վախնաք կարծելով թէ ես թշնամանեցիք և թէ այս տեղ բերել տուած եմ ձեզ իմ վրէժխնդրութիւնս յագեցնելու համար. բայց անհոգ և հաւատի եղէք որ անցեալը մոռցայ, նա մանաւանդ շատ գոհ եմ ձեր բռնած ընթացքէն։ Կը փափաքիմ որ Պաղտատու բոլոր կանայք ձեր ցոյց տուած իմաստութեան չափ իմաստութիւն ունենային։ Պիտի յիշեմ միշտ թէ ինչ խոհականութեամբ վարուեցաք մեզի հետ՝ մեր անմարդավարութեան չնայելով։ Այն ատեն Մուսուլի վաճառական էի, սակայն հիմակ Հարուն-ալ-Րաշիտ եմ, Աբպասեանց շքաւոր ազգատոհմին հինգերորդ ամիրապետն, որ մեր մեծ մարգարէին տեղը կը բռնէ։ Ձեզ այս տեղ բերել տուի մի միայն իմանալու համար թէ ո՛վ էք, և թէ ինչ պատճառաւ ձեզմէ մէկն երկու սև շուները ծեծելէն ետև անոնց հետ լացաւ։ Նոյնչափ հետաքրքիր եմ իմանալու թէ ինչ պատճառաւ ուրիշ մ'ալ կուրծքը վէրքով ծածկուած է։

Թէպէտև ամիրապետն այս խօսքերը խիստ որոշ կերպով արտասանեց և երեք կանայք զանոնք լսեցին, սակայն Ճեաֆէր վէզիրն՝ ըստ արարողութեան՝ նորէն զանոնք կրկնեց։

Երբ ամիրապետն այս կերպով հանդարտեցուց Զիւպէտէն, այս իշխանուհին ալ անոր փափաքը կատարելու փութաց իր պատմութիւնը պատմելով՝ այսպէս։

ՋԻՒՊԻՏԷԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հրամանատարդ հաւատացէք, ըսաւ Ջիւպիտէ, Ձեր վեհափառութեան պատմելիք պատմութեանս պէս երբէք լսուած չէ ։ Երկու սև քածերն ու ես մի և նոյն մօրմէ ու հօրմէ ծնած երեք քոյրեր ենք, և ձեզի պիտի յայտնեմ թէ ինչ պատահական դիպուածով քածի փոխուեցան ։ Այս տեղ ներկայ գտնուող և ինծի հետ բնակող երկու տիկիններն ալ մի և նոյն հօրմէ բայց տարբեր մօրմէ ծնած քոյրերս են ։ Ան՝ որուն ծոցը վէրքով լի է՝ Էմինէ կը կոչուի, միւսը՝ Սաֆիէ, իսկ ես Ջիւպիտէ ։

Հօրս մահուանէ ետքը՝ ձգած հարստութիւնը հաւասարապէս մեր մէջ բաժնեցինք. երբ իմ վերջին երկու քոյրերս իրենց բաժինը ստացան, իրարմէ զատուեցան և գացին իրենց մօրը հետ առանձին բնակելու ։ Իմ միւս երկու քոյրերս և ես մեր մօրը հետ մնացինք, որ դեռ կենդանի էր, և որ այնուհետև մեռնելով՝ իւրաքանչիւրին հազարական ոսկի թողուց ։

Երբ մեզի ինկած գումարը ձեռք ձգեցինք՝ իմ երկու մեծ քոյրերս կարգուեցան, ամէն մէկն իր էրկան հետ գնաց և ես առանձին մնացի ։ Իրենց ամուսնութենէ քիչ ժամանակ ետքն՝ առաջինին ամուսինն ամէն ունեցած գոյքն ու կալուածն ծախեց և անկէ գոյացած՝ նոյնպէս քրոջս դրամովն՝ Աֆրիկէ անցաւ ։ Այն տեղ՝ ամուսինը բոլոր իր և քրոջս բերած ինչքը կեր ու խումի և ցոփութեամբ վատնեց ։ Յետոյ՝ ինքզինքը յետին չքաւորութեան մէջ տեսնելով՝ պատրուակ մը գտաւ անկէ զատուելու և զանի վռնտեց ։

Քոյրս Պաղտատ դարձաւ՝ այս երկար ճամբորդութեան ժամանակ հարկաւ անհաւատալի տառապանք քաշելով՝ և եկաւ իմ տունս իջաւ, անանկ արգահատելի վիճակի մէջ, որ նոյն իսկ քարսիրտ մարդիկ չպիտի կարենային անզգայ մնալ ։ Իր ակնկալած սիրովն ընդունեցայ զինքը ։ Հարց ու փորձ ըրի թէ ինչու համար այնպիսի խղճալի վիճակի մը մէջ կը գտնուի. լալով իմացուց ինծի իր էրկան անշահ վարմունքն և անարժան կերպով զինքը տունէն վռնտելը ։ Սիրտս շարժեցաւ իր դժբաղդութեան վրայ և իրեն հետ լացի ։ Վերջը բաղնիք ղրկեցի զինքն, իմ յատուկ զգեստներէս անոր տուի, և ըսի. «Քոյր իմ, դու իմ անդրանիկ քոյրս ես, և քեզ մօրս տեղ կը դնեմ ։ Քու բացակայութեանդ ատեն Աստուած ինծի բաժին ինկած դրամն ինչքն օրհնեց, երբ մետաքս շինելու համար շերամ պահեցի և մեծցուցի ։ Վստահ եղիր որ իմ ունեցածս քուկդ է, և կրնաս ըստ հաճոյս գործածել, ինչպէս որ ես ինքս կ'ընեմ ։»

Երկուքնիս ալ միաբան սիրով քանի մ'ամիս անցուցինք ։ Մինչդեռ շատ անգամ մեր միւս քրոջ վրայօք կը խօսակցէինք և անորմէ լուր չառնելնուս վրայ կը զարմանայինք, յանկարծ ելաւ եկաւ իմ անդրանիկ քրոջս պէս գէշ վիճակի մէջ ։ Անոր ալ էրիկն այն կերպով վարուեր էր, և ես ալ մի և նոյն սիրով զինքն ընդունեցի ։

Քիչ մ'ետքն՝ իմ երկու քոյրերս իմ վրայ բեռ չըլլալու պատրուակով, ըսին ինծի թէ նորէն կարգուելու միտք ունին ։ Պատասխան տուի որ եթէ ինծի բեռ ըլլալէն զատ պատճառ մը չունին, կրնան առանց քաշուելու ինծի հետ միշտ բնակիլ, և թէ իմ ստացուածքս մեր վիճակին յարմար կերպով ապրելու կրնար մեզ բաւել ։ «Բայց կը խորհիմ, ըսի, որ նորէն կարգուելու փափաք ունիք ։ Եթէ այս է բուն պատճառը, կը խոստովանիմ որ շատ կը զարմանամ ։ Ինչպէս երկրորդ անգամ մ'ալ ամուսնութեան վրայ կը մտածէք, քանի որ առաջնոյն մէջ դժբաղդ եղաք ։ Գիտէք թէ որչափ դժուար բան է կատարելապէս պարկեշտ էրիկ մը գտնելը ։ Հաւատացէք ինծի, առաջուան պէս միասին ապրելու շարունակենք ըստ կարի ախորժելի կերպով մը ։»

Ինչ որ ըսի, անօգուտ եղաւ ։ Որոշեր էին կարգուելու և կարգուեցան ։ Բայց քանի մ'ամիս ետքը նորէն քովս եկան և թողութիւն խնդրեցին որ իմ խրատս չէին հետևեր ։ «Դու մեզմէ աւելի պզտիկ ես, ըսին ինծի, բայց մեզմէ աւելի խելացի ես ։ Եթէ հաճիս նորէն մեզ ձեր տունն ընդունելու և իբր ձեր աղախինները համարելու, հաւաստի եղիր որ նորէն սանկ յանցանք մը չենք գործեր ։ — Իմ սիրական քոյրերս, պատասխանեցի անոնց, ձեզմէ բաժնուելէս ետքը դարձեալ նոյն կերպով կը սիրէի ձեզ. նորէն եկէք, և իմ ունեցածս վայելեցէք ։»

Գրկեցի զանոնք և առաջուան պէս միասին բնակեցանք ։

Տարի մը կար որ կատարեալ միաբանութեամբ մէկտեղ կ'ապրէինք, և տեսնելով որ Աստուած իմ փոքր դրամագլուխս աւելցուցեր էր, միտքս դրի ծովով Ճամբորդութիւն մ'ընել և առուտուրս քիչ մ'ընդարձակել ։ Այս նպատակաւ՝ երկու քոյրերուս հետ Պասրա գացի, ուր կազմ նաւ մը գնեցի և Պաղտատէն հետս բերած ապրանքով զայն բեռնաւորեցի ։ Յաջող հովով մը Ճամբայ ելանք և պարսկային ծոցէն շուտով դուրս ելանք ։ Երբ բաց ծովը հասանք՝ Հնդկաստանի Ճամբան բռնեցինք, և քսան օր նաւարկութենէն ետև՝ ցամաք մը տեսանք ։ Այս երկիրը խիստ բարձր լեռ մ'էր, որուն ստորոտն աղուոր տեսքով քաղաք մը տեսանք ։ Որովհետև ծովը նպաստաւոր էր շուտիկ նաւահանգիստը հասանք և երկաթ նետեցինք ։

Չսպասեցի որ քոյրերս պատրաստուին և ինծի հետ գան, այլ մինակս ցամաք ելայ և շիտակ քաղաքին դուռը գնացի ։ Շատ մը պահակներ տեսայ որ նստեր էին, ոմանք ալ գաւազան 'ի ձեռին կանգուն կեցեր էին ։ Սակայն ամենուն ալ կերպարանն այնքան նողկալի էր որ սոսկացի ։ Բայց տեսնելով որ անշարժ կը կենան և ոչ իսկ աչքերնին կը շարժեն, վախս փարատեցի, և անոնց մօտենալով՝ գիտցի որ քար կտրեր էին ։

Քաղաքը մտայ և շատ մը փողոցներէ անցայ, ուր մարդիկ կային, և տեղ տեղ ամէն տեսակ դիրքով կեցեր էին․ բայց ամէնքն ալ անշարժ և քար կտրած էին ։ Վաճառականներուն թաղը՝ կրպակներէն մեծ մասը գոց գտայ, և տեսայ որ բաց խանութներուն մէջ քարացած մարդիկ կան ։ Աչքս ծխահաններուն վրայ նետեցի, և մուխ չնշմարելուս՝ ասկէ դատեցի որ տուներուն մէջ, նոյնպէս դրսի կողմը գտնուած ամէն բաները քար կտրեր են ։

Քաղքին մէջ տեղն ընդարձակ հրապարակ մը հասնելով՝ ոսկի թիթեղով պատած մեծ դուռ մը նշմարեցի, որուն երկու փեղկերը բաց էին ։ Դրան առջևը մետաքսէ վարագոյր մը կար և վրան կանթեղ մը կախուած էր ։ Այս շէնքն աղէկ մը դիտելէն ետև՝ անկասկած էի որ նոյն երկրին գահակալ իշխանին պալատն է ։ Բայց մարդ մը չտեսնելուս վրայ զարմանքս տանելով՝ մօտեցայ, հոգի մը գտնելու յուսով ։

Վարագոյրը վեր առի և աւելի ևս զարմացայ երբ տեսայ որ գաւթին մէջ քանի մը քարացած դռնապաններ կամ պահակներ կային, ոմանք ոտքի վրայ կանգուն, այլք նստած կամ կէս մը պառկած ։

Մեծ գաւթէ մ'անցայ ուր շատ բազմութիւն կար․ ոմանք կարծես թէ կ'երթային՝ ոմանք կուգային, թէև իրենց տեղէն չէին շարժեր, որովհետև արդէն տեսած մարդերուս պէս քարացեր էին ։ Երկրորդ բակ մը մտայ և անկէց ալ երրորդ մը․ բայց ամէն կողմ առանձնութիւն և ահուելի լռութիւն մը կը տիրէին ։

Չորրորդ գաւիթ մը մտնելուս՝ դիմացս աղուոր շէնք մը տեսայ որուն պատուհանները միակտուր ոսկի վանդակէ շինուած էին ։ Մտածեցի որ այն՝ թագուհիին սենեակը պիտի ըլլայ ։ Ներս մտայ ։ Սրահին մէջ շատ մը սև ներքինիներ կային քար կտրած ։ Անկէց ալ Ճոխ կարասիներով զարդարուած խուց մ'անցայ և տիկին մը տեսայ որ նոյնպէս քարացեր էր ։ Գլուխը դրած ոսկի թագէն և կաղիններու չափ խոշոր մարգարտէ մանեակէն հասկցայ որ թագուհին էր ։ Մօտէն քննեցի, և տեսայ որ հրաշալի բաներ էին ։

Քանի մը վայրկեան այս սենեկին Ճոխութեան ու շքեղութեան՝ մանաւանդ ոսկեզօրգին, բարձերուն և ոսկեգոյն երես ունեցող Հնդկաստանի կերպասէ շինուած բազմոցին վրայ զմայլեցայ մնացի, որ մարդու և կենդանիի արծաթեայ հրաշակերտ նկարներ ունէին ։

Քարացած թագուհիին սենեկէն ուրիշ շատ մը մաքուր և փառաւոր խուցեր ու դահլիճներ անցայ, անկէց ալ տարօրինակ մեծութեամբ խուց մը մտայ, որ միաձոյլ ոսկի գահ մը կար, որ քանի մ'աստիճանաւ բարձր էր և զմրուխտի քարերով զարդարուած․ աթոռին վրայ ընտիր կերպասէ մահիճ մը տեսայ որ մարգարտով բանուած էր ։ Բայց աւելի զարմանալին էր մահճին վերէն հանող փայլփլուն լոյս մը ։ Հետաքրքիր ըլլալով հասկնալու նոյն լուսին աղբիւրը, վեր ելայ և գլուխս վերցնելով փոքրիկ աթոռակի մը վրայ ջայլեմի հաւկթին չափ խոշոր ադամանդ մը տեսայ․ այնքան մաքուր էր որուն վրայ բիծ մը չնշմարեցի, այնքան կը փայլէր որ անոր պայծառութիւնն աչքս կ'առնուր ։

Մահճին վերևն՝ երկու կողմէն՝ վառուած կանթեղ մը կար, որուն նպատակը չհասկցայ ։ Սակայն այս պարագայէն իմացայ որ սոյն հոյա-

կայ պալատին մէջ կենդանի մարդ մը կայ. վասն զի չէի կրնար հաւտալ որ այն կանթեղներն ինքնին վառէին։ Ուրիշ շատ հետաքրքրաշարժ բաներ ալ ուշս գրաւեցին, և արդէն խօսած անդամանդս միայն այս սենեկին անգին փայլ մը կուտար։

Որովհետեւ ամէն դուները բաց կամ կէսփակ էին, արդէն տեսածներուս չափ փառաւոր սենեակներ պտըտեցայ։ Մինչեւ մառաններն և կահարանները (garde-meuble) գացի որ անբաւ հարստութիւններ կը պարունակէին, և այս սքանչելի բաներն այնքան միտքս առին որ ինքզինքս մոռցայ։ Չէի մտածեր ոչ նաւիս և ոչ ընկերներուս վրայ, այլ միայն հետաքրքրութիւնս գոհ ընել։ Սակայն մութը կը կոխէր, և կը գիտէի որ դուրս ելնելու ատենը հասած է, ուզեցի ետ դառնալ այն դահլիճներէն ու խցերէն ուսկէ եկեր էի, բայց կարելի չեղաւ ինծի զայն գտնել։ Սենեակներուն մէջ մոլորեցայ, և յառաջանալով դէպ այն մեծ խուցն՝ ուր աթոռը, մահիճը, խոշոր անդամանդն և վառկանթեղները կը գտնուէին, որոշեցի գիշերն այն տեղ անցնել և միւս օր կանուխ նաւս դառնալ։ Անկողնին վրայ ընկայ, թէեւ ահ ու դողի մէջ էի մինակ այսպիսի վայր մ'առանձին գտնուելուս, և անտարակոյս այս վախն էր որ արգիլեց իս քնանալու։

Գրեթէ կէս գիշեր էր երբ մարդու մը ձայնը լսեցի որ Գուրան կը կարդար, այնպիսի եղանակաւ ու ձայնով որ սովոր ենք մեր տաճարներուն մէջ կարդալու։ Այս բանս ինծի ուրախութիւն տուաւ։ Շուտ մը ելայ, և քալելու համար կանթեղ մ'առնելով սենեկէ սենեակ կը դառնայի ձայնին ելած տեղը գտնելու համար։ Դահլիճի մը դրան առջև կանգ առի, անկասկած ըլլալով որ ձայնն անկէ ելաւ։ Կանթեղը գետինը դրի և ճեղքէ մը դիտելով ինծի այնպէս երեւցաւ որ այն վայրն աղօթատեղի մ'է։ Եւ իրօք, ինչպէս մեր տաճարներուն մէջ կը տեսնուի, հոն ալ խորշ մը կար պատին մէջ որ կը նշանակէր թէ աղօթք ընելու համար ո՛ր կողմը դառնալու է, նոյնպէս վառուած կանթեղներ, և երկու աշտանակներ խոշոր ու վառուած սպիտակ մոմերով։

Նոյնպէս գետինը փոքրիկ օթոց մը տեսայ փռուած, որ կը նմանէր այն օթոցներուն զոր տունը կը փռենք վրան աղօթելու համար։ Վայելչադէմ պատանի մը այն օթոցին վրայ նստած՝ մեծ ուշադրութեամբ

Գուրան կը կարդար որ իր առջև պզտիկ գրասեղանի մը վրայ դրուած էր։ Այս տեսնելով՝ սքանչացայ և մտածեցի թէ ինչպէս կարելի է որ այս միայն ըլլայ կենդանի արարած մը քաղքի մը մէջ ուր ամէն մարդ քար դարձեր է, և աներկմիտ էի որ հրաշալի բան մը պիտի ըլլայ տեսած իրերուս մէջ։

Որովհետեւ դուռը կէս գոց էր՝ զայն բացի, ներս մտայ, և խորշին առջև կանգուն կենալով այս աղօթքն ըրի բարձրաձայն. «Գովեալ ես Աստուած, որ մեզի յաջող նաւարկութիւն մը տուիր։ Շնորհ ըրէ մեզ պաշտպանել մինչեւ որ մեր երկիրը հասնինք։ Ընդունէ աղաչանքս, տէր, և ուխտս կատարէ։»

Պատանին աչքն իմ վրայ նետեց ու ըսաւ. «Իմ բարեսիրտ տիկինս, կ'աղաչեմ, ըսէ ինծի թէ ո՛վ ես դու և ո՛վ բերաւ քեզ այս ամայի քաղաքս։ Ես ալ փոխարէն պիտի պատմեմ քեզ թէ ո՛վ եմ, թէ իմ գլխիս ինչ հասաւ, թէ ինչ պատճառաւ այս քաղքիս բնակիչներն այս տեսած վիճակիդ մէջ կը գտնուին, և ինչո՛ւ համար այսպիսի սոսկալի ձախորդութեան մէջ ես միայն ողջ առողջ եմ։»

Համառօտ պատմեցի թէ ուսկէ կուգայի, և ինչո՛ւ համար այս ուղեւորութիւնս ըրի և ինչ կերպով նաւահանգիստ հասայ քսան օր նաւարկութիւն ընելէն ետքն։ Աւարտելէս ետև՝ աղաչեցի որ ինքն ալ իր ըրած խոստումը կատարէ, և յայտնեցի թէ ինչ մեծ սոսկում պատճառած է ինծի այն աղէտալի տեսարանն որ քաղքիս ամէն կողմէն անցնելուս աչքիս զարկեր էր։

«Սիրելի տիկին, ըսաւ այն ատեն պատանին, քիչ մը համբերէ։» Այս խօսքիս վրայ, Գուրանը գոցեց, մետաղեայ պահարանի մը մէջ դրաւ և պատին խորշին մէջ զետեղեց զայն։ Ես ալ նոյն միջոցը պատեհ սեպելով՝ պատանիին երեսն ուշի ուշով դիտեցի, և այնչափ շնորհալի ու գեղանի գտայ զանի, որ իմ վրայ ինծի անծանօթ տպաւորութիւն մ'ըրաւ։ Իս իր քովը նստեցուց, և խօսքն սկսելէն առաջ՝ չկրցայ ինքզինքս զսպել և անոր ըսի այնպիսի դէմքով մ'որ ինծի ներշնչած զգացումներն երեւան կը հանէր։

«Սիրալիր իշխանս, հոգւոյս սիրական էակն, անկարելի է աւելի համբերութեամբ սպասել որ բացատրես ինծի այս քաղաքս ոտք կոխելէս

վեր տեսած հրաշալեան բաներս , իմ հետաքրքրութիւնս յետին ծայրը հասած է և կը փափաքէի որ ժամ առաջ գոհ ըլլաս ։ Խօսէ , կ'աղաչեմ , և իմացուր ինծի թէ ինչ հրաշքով դու միայն կենդանի մնացեր ես այսպէս անլուր կերպով մեռնող մարդկան մէջ ։

— Տիկին , ըսաւ ինծի պատանին , ըրած աղօթքէդ իմացայ որ Ճշմարիտ Աստուածը կը ճանչես ։ Հիմակ անոր մեծութեան և զօրութեան մէկ նշանաւոր ապացոյցը պիտի իմանաս ։ Այս քաղաքը զօրաւոր տէրութեան մը մայրաքաղաքն էր , որուն թագաւորն իմ հայրս էր ։ Այս թագաւորը , բոլոր իր պալատականները , քաղքին բնակիչներն և բոլոր հպատակները կռապաշտ էին , որ Աստուծոյ դէմ ապստամբող հսկաներուն թագաւոր՝ Նարտունին ու կրակը կը պաշտէին ։

Թէպէտև կռապաշտ հօրէ և մօրէ ծնած եմ , բայց իմ մանկութեանս ժամանակ բարեպաշտ խնամ կնոջ մը ձեռօք դաստիարակուելու բարեբաղդութիւնն ունեցայ . այս կինը Գուրանը գոց գիտէր և շատ աղէկ կը մեկնէր ։ «Իշխան , կ'ըսէր ինծի շատ անգամ , միայն մէկ Ճշմարիտ Աստուած կայ , նայէ որ ուրիշները չճանչես և չպաշտես ։» Արաբերէն կարդալ սորվեցուց ինծի և հրահանգելու համար ինծի տուած գիրքն եղաւ Գուրանն ։ Երբ խելքս գլուխս եկաւ , այս ընտիր գրքին ամէն մութ կէտերը բացատրեց և անոր ոգին ինծի ներշնչեց հօրմէս և մօրմէս գաղտուկ ։ Մահմէտական կրօնին Ճշմարտութիւնները քաջ ըմբռնելու համար ինծի ամէն պէտք եղած հրահանգը տալէն ետև , այս բարի կինը մեռաւ ։ Իր մահուանէ 'ի վեր իր խրատները հաստատապէս պահեցի և Նարտուն սուտ աստուածն ու հրապաշտութիւնն ատեցի ։

Երեք տարի և քանի մ'ամիս կայ որ բոլոր քաղքին մէջ որոտալից ձայն մը լսուեցաւ , այնպիսի որոշ կերպով մ'որ ամէն մարդ այս խօսքերս լսեց . ԲՆԱԿԻՉՆԵՐ , ՆԱՐՏՈՒՆԻ ԵՒ ԿՐԱԿԻ ՊԱՇՏՕՆԸ ԹՈՂՈՒՑԷՔ . ՄԻԱՅՆ ՄԷԿ ՀԱՏԻԿ ԱՍՏՈՒԱԾԸ ՊԱՇՏԵՑԷՔ ՈՐ ՈՂՈՐՄԱԾ Է ։

Հետզհետէ երեք տարի մի և նոյն ձայնը լսուեցաւ . բայց բնաւ մէկն իր մոլորութենէ չդառնալուն՝ երրորդ տարուան վերջին օրն առաւօտեան ժամն երեքին կամ չորսին առ հասարակ բոլոր բնակիչները մէկ

վայրկենի մէջ քար կտրեցան ինչ վիճակի մէջ որ էին ։ Իմ հայրս ալ մի և նոյն դժբաղդութիւնը կրեց սև քարի մը փոխուեցաւ , ինչպէս որ պալատին մէկ անկիւնը կը գտնուի , և թագուհի մայրս ալ մի և նոյն վիճակն ունեցաւ ։

Այս սոսկալի պատուհասէն ես միայն զերծ մնացի ։ Այն ատենէն 'ի վեր աւելի ջերմեռանդ սրտով անոր պաշտօն կը մատուցանեմ , և համոզուած եմ , իմ գեղանի տիկինս , որ քեզ ղրկեց իմ մխիթարելու համար . ուստի անոր շնորհակալիքս անոր կը յայտնեմ , վասն զի կը խոստովանիմ որ այս միայնութիւնն ինծի շատ տաղտկալի է ։

Բոլոր այս պատմութիւնն և յատկապէս սոյն վերջին խօսքերը լսելն սիրտս բորբոքեցին ։ «Իշխան , ըսի անոր , Նախախնամութիւնն անշուշտ ղրկեց զիս այս նաւահանգիստն որպէս զի առիթ մը տամ քեզ որ այս աղէտալի վայրէս հեռանաս ։ Պաղտատու մէջ բաւական անուն տէր ըլլալս իս այս կողմերը բերող նաւէն կրնաս իմանալ , և այն քաղքին մէջ ալ բաւական ինչք թողլով եկած եմ ։ Կը համարձակիմ քեզ ապաստանարան մը տալու մինչև որ հաւատացելոց հզօր հրամանատարը , մեծ Մարգարէին փոխանորդը զոր կը ճանչես , քեզ վայել պատիւ ընծայէ ։ Այս անուանի իշխանը Պաղտատ կը բնակի , և երբ իմանայ թէ իր մայրաքաղաքը հասեր ես , իսկոյն իր պաշտպանութեան արդիւնքը պիտի վայելես ։ Կարելի չէ որ աւելի ևս բնակիս քաղաք մ'որուն բոլոր առարկաները քեզ անտանելի են ։ Նաւս քու հրամանիդ պատրաստ է , և կրնաս ըստ հաճոյս գործածել զայն ։» Այս առաջարկութիւնս ընդունեց և մինչև առտու մեր ուղևորութեան վրայ խօսելով գիշերն անցուցինք ։

Երբ լուսցաւ , պալատէն դուրս ելանք և նաւը գացինք , ուր քոյրերս , նաւապետն և գերիներս գտանք որ մեծ մտատանջութեան մէջ էին իմ մասիս ։ Քոյրերս իշխանին ներկայելէն ետև՝ պատմեցի անոնց թէ ինչ պատճառաւ չկրցայ առջի օրը նաւ դառնալու , թէ ինչպէս պատանին հանդիպեցայ , նոյնպէս իր պատմութիւնն և այնպիսի աղուոր քաղքի մ'անհնարին տառապանքը ։

Նաւաստիները շատ մ'օրեր անցուցին որպէս զի հետս բերած ապրանքս դուրս կրեն , և անոնց տեղ պալատին մեծագին գոհարներն ,

տակին ու արծաթը նաւ բերին ։ Կարասներ և անբաւ արծաթեղէններ ժողովեցինք , որովհետև չէինք կրնար զանոնք տանիլ ։ Շատ մը նաւեր պէտք էին մեր տեսած բոլոր հարստութիւնները կրելու համար ։

Մեր ընտրած բաները նաւը տեղաւորելէն ետև՝ ուղևորութեան համար պիտանի պաշար ու ջուր ալ առինք ։ Արդէն Պասրայէն մեր առած ուտելիքին մեծ մասը սպառեր էր ․ վերջապէս առագաստները պարզեցինք խիստ յաջող հովով մը ։

Ամէն օր նորատի իշխանը , քոյրերս և ես խօսելով ախորժելի ժամեր կ՚անցնէինք ․ բայց , ափսոս , մեր միաբանութիւնն ընդ երկար չտևեց ։ Քոյրերս՝ իմ և նորատի իշխանին մէջ տիրած սրտակցութիւնը գիտելով՝ սկսան նախանձիլ , և օր մը՝ չարամտութեամբ հարցուցին ինձ թէ ինչ պիտի ընենք նորատի իշխանն երբ Պաղտատ հասնինք ։ Քաջ զգացի որ այս մասին իմ միտքս հասկնալու համար այն հարցումը կ՚ընէին ։ Ուստի ես ալ , խօսքը կատակի դարձնելով՝ պատասխան տուի որ իմ էրիկս պիտի ընեմ ․ յետոյ՝ իշխանին ուղղելով խօսքս , անոր ըսի ․

«Իշխանդ իմ , խնդրեմ որ առաջարկութեանս հաւանիս ։ Երբ Պաղտատ հասնինք , միտք ունիմ քեզի հետ կարգուելու , որ քու խոնարհ աղախինդ ըլլամ , քեզ ծառայեմ և իմ կամքիս վրայ քեզ իբր բացարձակ իշխան ճանչեմ ։

— Տիկին , պատասխան տուաւ իշխանը , չգիտեմ թէ կատակ կ՚ընես , սակայն ես ահա քու քոյրերուդ առջև կը յայտնեմ որ այս վայրկենէս սրտագին կ՚ընդունիմ առաջարկութիւնդ , չէ թէ քեզ իբր աղախինս գործածելու , այլ իբր տիկին և տիրուհիս , և բնաւ չեմ պահանջեր քու գործերուդ վրայ իշխանութիւն մը դնել ։» Այս խօսքիս վրայ քոյրերուս երեսին գոյնը նետեց , և այն օրէն դիտեցի որ առաջուան սէրը չունէին իմ վրայ ։

Պարսկային ծոցն էինք և Պասրայի կը մօտենայինք , ուր կը յուսայինք հասնիլ միւս օր , եթէ հովը շարունակ այնպէս յաջող փչէր ։ Բայց գիշերը՝ քուն եղած ատենս , քոյրերս ատեն գտան և զիս ծովը նետեցին , նոյն ձևով իշխանին գլուխն ալ բերին , որ չկրցաւ ազատիլ և խեղդուեցաւ ։ Քիչ մ՚ատեն ջրին վրայ կեցայ , և բարեբաղդօրէն , կամ լաւ ևս հրաշքով մը , տակս գետինը գտայ ․ դիմացս սև առարկայ մը

տեսայ որ հող երևցաւ ինծի , և դէպ այն կողմը գնացի , որչափ մթութիւնը կը ներէր զանազանել առարկաները ։ Իրօք ծովեզրը հասայ , և երբ լուսցաւ տեսայ որ Պասրայէն քանի մղոն հեռու անմարդ կղզի մը կը գտնուէի ։ Իսկոյն լաթերս արևին չորցուցի , և քալելու ատեն՝ տեսակ տեսակ պտղատու ծառեր և անուշ ջուր տեսայ ․ ասկէ յոյս առի կեանքս պահպանելու ։

Մինչդեռ ծառի մը ստուերին տակ հանգիստ կ՚առնուի , թևաւոր օձ մը տեսայ որ շատ խոշոր և շատ երկայն էր և դէպ ինծի կը յառաջանար աջ ու ահեակ թաւալելով և լեզուն դուրս հանելով ․ այս դիրքէն հասկցայ որ վտանգի մէջ է ։ Ոտք ելայ , դիտեցի որ ուրիշ աւելի խոշոր օձ մ՚անոր ետևէն կգար՝ որ պոչէն բռներ՝ բոլոր ճիգը կը թափէր զայն կլլելու , և անոր վրայ գթացի ։ Փախչելու տեղ՝ իմ քովս դիպուածով գտնուած քար մ՚առի արխաբար և բոլոր ուժովս խոշոր օձին նետեցի , գլխին զարկի և զայն ճզմեցի ։ Միւս օձն ազատեցաւ , իսկոյն թևերը բացաւ և թռաւ գնաց ․ երկար ատեն օդին մէջ դիտեցի զայն իբր տարօրինակ բան մը ․ սակայն երբ աներևոյթ եղաւ , ուրիշ տեղ մը նստայ շուքի տակ և քնացայ ։

Երբ քունէս արթնցայ , երևակայէ թէ որչափ մեծ եղաւ իմ զարմանքս՝ տեսնելով իմ քովս սև կին մ՚որ վառվռուն և ախորժելի դէմք մ՚ունէր և նոյն գոյն երկու քածեր կապած բռներ էր ։ Իսկոյն կէս մը նստայ և հարցուցի անոր թէ ով է ։

«Ես , պատասխան տուաւ նա , քիչ մ՚առաջ իր անգութ թշնամին ձեռքէն ազատած անձդ եմ ։ Մտածեցի որ ինծի ըրած կարևոր ծառայութեանդ փոխարէն ասկէ աւելի լաւ գործ մը չէի կրնար ընել ։ Քոյրերուդ մատնութիւնն գիտցայ , և քու վրէժդ լուծելու համար , երբ վեհանձն օգնութեամբդ ազատեցայ , իմ ընկերներս կանչեցի , որ ինծի պէս փէրիներ են ․ նաւուդ մէջ ունեցած գոյքդ Պաղտատու մթերանոցներդ փոխադրեցինք , և յետոյ նաւն ընկղմեցինք ։ Այս երկու սև քածերը քու երկու քոյրերդ են , և ես տուի անոնց այս կերպարանն ։ Այս պատուհասը բաւական չէ , կ՚ուզեմ որ ընկլիք կերպովս անոնց հետ վարուիս ։»

Այս խօսքիս վրայ՝ վհուկը գրկեց զիս մէկ թևով , և միւսովն ալ եր-

ղու քածերն և մեզ իմ Պաղտատու տունս փոխադրեց, և մեծերանոցիս մէջ տեսայ այն ամէն հարստութիւններն որով նաւս բեռնաւորեր էի։ Քովէս երկթալէն առաջ՝ երկու քածերն ինծի յանձնեց ու ըսաւ.

«Եթէ չես ուզեր քոյրերուդ պէս շուն դառնալ, կը հրամայեմ քեզ՝ ծովերուն իշխանին կողմէն՝ որ ամէն գիշեր հարիւրական խարազանի հարուած տաս քոյրերուդ, քու անձիդ և իրենց խղդած իշխանին դէմ գործած յանցանքը պատժելու համար։» Իսկ ես ստիպուեցայ այս հրամանը կատարելու խօսք տալ։

Այն ատենէն վեր՝ ամէն գիշեր ակամայ վարուեցայ անոնց հետ այնպէս ինչպէս որ Ձեր վեհափառութիւնն ականատես եղաւ։ Իմ լացերուս կը յայտնեմ անոնց թէ այս անագորոյն պարտքն ինչ մեծ ցաւով և ակամայ կը կատարեմ, և քաջ կը տեսնէք որ այս պարագայիս մէջ աւելի ցաւակցութեան արժանի եմ քան պարսաւանաց։ Եթէ ինծի վերաբերող բան մ'եւս կայ և կը փափաքիք իմանալ, իմ Էմինէ քոյրս կրնայ պէտք եղած բացատրութիւնը տալ իր պատմութիւնը պատմելով։

Ամիրապետը մեծ զարմանքով Զէպիտէին պատմութիւնը մտիկ ըրաւ և ապա իր վէզիրին միջոցաւ աղաչեց նազելի Էմինէն՝ որ բարեհաճի ըսելու թէ ինչո՞ւ համար կուրծքին վրայ վէրքեր ունի։ Էմինէ՝ ամիրապետին հնազանդելու համար, այս կերպով սկսաւ իր պատմութիւնը։

ԷՄԻՆԷԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հրամանատարդ հաւատացելոց, ըսաւ, քրոջս պատմութեամբը լսածներդ նորէն չկրկնելու համար, պարտիմ ըսել որ մայրս՝ իր այրիութիւնն առանձնակի անցնելու համար՝ տուն մը բռնեց այս քաղքիս մէջ և իս կարգեց տեղւոյս ունեւոր մարդու մը հետ, հօրս թողուցած հարստութիւնն ալ տալով։

Տակաւին մեր ամուսնութեան առաջին տարին անցած չէր որ էրիկս մեռնելով՝ որբեւարի մնացի, բոլոր ունեցածն ինծ թողլով՝ որ իննսուն հազար ոսկիի կը հասնէր։ Այս գումարին եկամուտն անգամ բաւական էր իմ կեանքս հանդարտ և հանգիստ անցնելու։ Սակայն՝ այն ինչ սուգիս առջի վեց ամիսը լրացաւ, որ տաս կերպ այնպիսի շքեղ զգեստներ շինել տուի որ ամէն մէկն ինծ հազար ոսկիի նստաւ, և սուգս վերջը սկսայ հագնիլ։

Օր մը մինակ առ անձին գործերուս զբաղելու ատենս, եկան իմաց տուին որ կին մը կ'ուզէ ինծի հետ խօսիլ։ Հրաման տուի որ ներս բերեն։ Եկողը շատ պառաւ կին մ'էր։ Գետինը պագաւ, ոտքըս տուաւ ինծ և ծունր դնելով ինծ ըսաւ. «Ազնիւ տիկին, կ'աղաչեմ ներել ինծ որ քեզ անհանգիստ ընելու համարձակութիւնը կ'առնում։ Քեզ յայտնելու եկայ, իմ պատուարժան տիկինս, որ աղջիկ մ'ունիմ որբ, և այսօր պիտի կարգուի. երկուքնիս ալ օտարական ենք այս քաղքիս մէջ և բնաւ ծանօթ մը չունինք։ Ուստի շփոթեր մնացեր ենք, վասն զի կ'ուզենք իմաց տալ փեսացուին բազմաթիւ ընտանեաց որ անծանօթ մարդիկ չենք և թէ քիչ շատ յարգ ունինք։ Ուստի, գթասիրտ տիկին, թէ որ հարսանեաց հանդէսը քու ներկայութեամբը պատուելու հաճիս, ոչ միայն շնորհապարտ պիտի ըլլանք քեզ, այլ նաև մեր քաղքին կիներն ալ պիտի իմանան որ այս տեղ բոլորովին թշուառ չենք, երբ լսեն որ քեզի պէս բարձրաստիճան կին մ'այսպիսի մեծ պատիւ մը մեզ ընելու անարժան չէ սեպեր։ Բայց եթէ, աւաղ, իմ աղաչանքս մերժես, ինչ մեծ նախատինք պիտի ըլլայ մեզ. որու դիմենք այն ատեն, չգիտենք։»

Այս խօսքերս՝ զոր խեղճ կինը լալով ըսաւ, գութս շարժեցին։ «Բարի մայրս, ըսի անոր, մի տրտմիր, խնդիրդ յօժարակամ պիտի կատարեմ. ըսէ ինծ թէ ուր գամ, միայն քիչ մը վայելուչ կերպով հագուելու չափ ժամանակ կ'ուզեմ։» Պառաւ կինն՝ այս պատասխանիս վրայ ուրախութենէ կը թռէր և այնպէս շուտով ոտքերս պագաւ որ ժամանակ չտուաւ ինծ զանոնք քաշելու։ «Իմ ողորմած տիկինս, ըսաւ նա ոտք ելնելով, Աստուած աղախիններուդ ըրած բարերարութեանդ համար քեզ պիտի վարձատրէ և սրտիդ փափաքները պիտի կատարէ, ինչպէս որ մերինը կը կատարես։ Հարկ չէ որ հիմակ այդ ծանրու-

թիւնն առնուս. բաւական է որ երիկուան դէմ ինձի հետ գաս, երբ քեզ առնելու համար վերադառնամ: Մնաս բարև, տիկին, յարեց պառաւը, քեզ վերստին տեսնելու պատիւը պիտի ունենամ:»

Պառաւ կինն այն ինչ տունէս ելաւ գնաց՝ որ հանած զգեստներս առի հագայ. խոշոր մարգարտեայ մանեակս և ականակուռ փայլուն ապարանջս, մատանիներս ու օղերս դրուեցայ: Կարծես թէ գլուխս դալիքը պուշակեցի:

Մթննալու վրայ էր, երբ պառաւ կինը տունս եկաւ ուրախ զուարթ դէմքով մը, ձեռքս պագաւ ու ըսաւ. «Սիրելի տիկին, փեսացուիս ազգականներն՝ որ քաղքիս առաջին աստիճանի տիկիններն են, գումարուած են: Երբ որ կ'ուզես կրնաս գալ, ահա պատրաստ եմ քեզ առաջնորդելու:»

Շուտ մը ճամբայ ելանք, պառաւն իմ առջևէս կը քալէր, և ես ալ անոր ետևէն կ'երթայի մաքուր հագուած շատ մ'աղախիններով: Խիստ լայն փողոց մը հասանք, զոր նոր աւլած ու ջրած էին, և մեծ դրան մ'առջևը կանգ առինք. դրան վրայ լապտեր մը կար, որուն լուսով կարող եղայ կարդալ ոսկեղէն տառերով գրուած սա արձանագիրն.
ԱՅՍ ՏԵՂՆ Է ԲԵՐԿՐՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ:

Բակին խորը գտնուած մէկ սրահ մը տարին զիս, ուր աննման գեղեցկութեամբ նորատի տիկին մ'զիս ընդունեց: Դիմաւորեց, պագաւ իր մօտը նստարանին վրայ զիս բազմեցուց. այս բազմոցին վրայ մեծագին փայտէ և գոհարազարդ գահ մը կար: «Տիկին, ըսաւ ինձ, քեզ հրաւիրեցինք որ հարսանեաց հանդիսի մը ներկայ գտնուիս, բայց յուսամ որ այս հարսնիքը քու կարծածէդ տարբեր բան մը պիտի ըլլայ: Եղբայր մ'ունիմ որ խիստ վայելչագէմ և կատարեալ պատանի մ'է. քու գեղեցկութեանդ նկարագիրը լսելով այնքան սքանչացաւ որ իր բաղդը քեզմէ կախում ունի, և շատ դժբաղդ պիտի ըլլայ թէ որ իր վրայ չգթաս: Գիտէ թէ աշխարհիս մէջ ինչ բարձր աստիճան ունիս, և կրնամ հաւաստել որ ինքն ալ այս միութեան անարժան չէ: Եթէ իմ աղաչանքս քու վրադ ազդեցութիւն մ'ընեն, անոր կողմէ ալ կ'աղաչեմ քեզ որ չմերժես իր խնդիրն և հետը կարգուիս»:

Իմ էրկանս մահուանէն վեր դեռ ամենևին կարգուելու միտք չունեցեր էի, բայց այնպիսի գեղեցիկ անձ մը մերժելու արիութիւնը չունեցայ: Երբ նորատի կինն պահած լռութենէս և երեսիս կարմրութենէ գիտեց որ հաւանութիւն կուտամ, ծափ զարկաւ. իսկոյն դահլճի մը դուռը բացուեցաւ և դուրս ելաւ այնպիսի վեհապանծ և շնորհալի պատանի մ'որ ինքզինքս երջանիկ կը համարէի այնպիսի գեղեցիկ յաղթանակ մը տանելուս: Պատանին եկաւ իմ քովս նստաւ և հետն ունեցած խօսակցութենէս տեսայ որ քրոջն ըսածէն աւելի մեծ էր իր արժանիքը:

Երբ տեսաւ որ իրարմէ գոհ ենք, նորէն քոյրը ձեռքերը զարկաւ և դատաւոր մը ներս մտաւ, մեր ամուսնութեան դաշնագիրը գրեց, ստորագրեց և իրեն ընկերացող չորս վկաներու ալ ստորագրել տուաւ: Իմ նոր ամուսինս միայն սա պահանջեց ինձմէ որ ուրիշ մարդու մը չերևիմ և չխօսիմ, և երդում ըրաւ որ այս պայմանաւ զիս գոհ ընելու պիտի ջանայ: Այս կերպով մեր ամուսնութիւնն որոշուեցաւ և լմնցաւ. այսպէս ես եղայ բուն հարսը մինչդեռ իբր հարսանեաց գացեր էի:

Մեր ամուսնութենէ ամիս մը ետքը՝ քիչ մը կերպասի պէտք ունենալով՝ էրիկէս հրաման ուզեցի որ երթամ՝ գնեմ: Հրաման տուաւ, և արդէն խօսած պառաւս իմ հետս առի, որ տունէն էր, նոյնպէս երկու աղախին: Երբ վաճառանոցը հասանք, պառաւն ինձ ըսաւ. «Իմ բարի տիրուհիս, քանի որ մետաքսէ կերպաս կը փնտռես, պէտք է որ քեզ ինձի ծանօթ նորատի խանութպանի մը տանիմ, ամէն տեսակէն ունի. և փոխանակ կրպակէ կրպակ պտըտելով յոգնելու, հաւաստի եղիր որ անոր քով՝ ուրիշին քով չեղածը պիտի գտնես:»

Պառաւին խօսքը կատարեցի, և վայելչագէմ վաճառականի մը կրպակը մտանք: Նստայ, պառաւին բերնով ըսի որ ունեցած ամենէն գեղեցիկ մետաքսէ կերպասները հանէ: Պառաւը կ'ուզէր որ ես ինքս ընեմ այս խնդիրը, բայց ըսի անոր որ իմ ամուսնութեանս պայմաններէն մէկն ալ էրիկէս զատ մարդու մը հետ չխօսիլ է, և թէ պէտք չէ այս պայմանին հակառակ վարուիմ:

Վաճառականը տեսակ տեսակ կերպասներ ցուցուց, որոնց մէկն ամենէն յարմար գտնելուս, հարցնել տուի թէ գինն ինչ է: Պառաւին

պատասխան տուաւ. «Ես ոչ ամչիմ և ոչ արծածիմ կը ծախեմ այս ապրանքս, այլ անոր պարգև պիտի ըսեմ, եթէ թոյլ տաս որ անգամ մը իր երեսը պագնեմ:» Պառաւին հրամայեցի ըսել որ այսպիսի առաջարկութիւն մ՚ընելու համար չափազանց յանդուգն է: Բայց պառաւը՝ փոխանակ ինձ հնազանդելու, յայտնեց թէ վաճառականին պահանջածը կարևոր բան մը չէ, թէ խօսելու պէտք չկար, այլ միայն այտս տալ, և շուտով գործը կը լմննայ: Այնչափ մեծ փափաք ունէի կերպասը ստանալու որ միամտաբար պառաւին խորհրդին ականջ դրի: Պառաւն ու աղախիններս առջևս կեցան որ մարդ չտեսնէ, և քօղս երեսէս հանեցի, բայց վաճառականն իր պագնելու տեղ՝ այտս այնպէս խածաւ որ արիւն հանեց:

Այնչափ ցաւ ու զարմանք զգացի որ հոն մարեցայ ինկայ. այն միջոցին մէջ բաւական ատեն մնացի, որով վաճառականն ալ ատեն ունեցաւ խանութը գոցելու և խոյս տալու: Երբ ինքզինքս գտայ, զգացի որ այտս արիւնլուայ է: Պառաւն ու աղախինները շուտ մ՚երեսս քօղով ծածկեր էին՝ որպէս զի չորս դին ժողովրդոց ամբոխը բան մը չտեսնէ և կարծէ թէ թալկացեր ինկեր եմ միայն:

Հետս պտըտող պառաւը գլխիս եկած ձինին վրայ սաստիկ վշտանալով՝ ջանաց իս սփոփելու. «Բարի տիրուհիս, ըսաւ ինձ, ներում կը խնդրեմ քեզմէ. ես եմ այս դժբաղդութեան պատճառն: Ես տարի քեզ այս վաճառականին խանութն՝ որովհետև իմ հայրենակիցս էր. և երբեք չէի կարծեր որ սանկ անզգամութիւն մ՚ընելու կը յանդգնի. բայց մի տրտմիր, ժամանակ չանցնելով մեր տունը դառնանք. քեզ դարման մը պիտի տամ և այնպէս պիտի բուժեմ որ վէրքին նշանը չպիտի մնայ:» Թալուկս իս այնպէս տկարացուցեր էր, որ հազիւ կրնայի քալել: Սակայն աղէկ գէշ բնակարանս հասայ, թէև նորէն խուցս մտնելու մարեցայ ինկայ: Միւս կողմէն պառաւը դեղն ըրաւ, սթափեցայ և անկողին մտայ:

Երբ գիշեր եղաւ, էրիկս տուն եկաւ. գիտեց որ գլուխս փաթթեր եմ. հարցուց թէ ինչ ունիմ: Ըսի թէ գլխի ցաւ մ՚ունիմ, և կը յուսայի որ այս պատասխանովս գոհ կ՚ըլլայ, բայց մոմ մ՚առաւ, և տեսնելով որ այտիս վրայ վէրք մը կայ. «Այս վէրքն ով ըրաւ» հարցուց

ինձ: Թէև շատ յանցաւոր չէի, բայց չէի իշխեր գործն անոր խոստովանելու. սանկ խոստովանութիւն մ՚ընել էրկան մը պատշաճութեան հակառակ կ՚երևէր ինձ: Ուստի ըսի թէ իր հրամանով մետաքսէ կերպաս մը գնելու գացած ըլլալով՝ փայտ կրող բեռնակիր մը նեղ փողոցէ այնչափ քովէս անցաւ որ դաւաղան մ՚երեսիս այս վէրքն ըրաւ, բայց վտանգաւոր բան մը չէ:

Այս պատճառն էրիկս բարկացուց: «Այդպիսի գործ մը պէտք չէ որ անպատիժ մնայ: Վաղը հրաման պիտի տամ ոստիկանին որ այն կոպիտ բեռնակիրները բռնէ և ամէնն ալ կախաղան հանէ:» Վախնալով որ այնչափ անմեղ մարդկան մահը պիտի պատճառեմ, անոր ըսի. «Տէր իմ, պիտի վշտանամ սաստիկ եթէ այդպիսի անիրաւութիւն մը գործուի. նայէ որ այդպիսի բան մը չընես. աններելի յանցանք մը գործած պիտի ըլլամ եթէ այդ դժբաղդութեան պատճառ ըլլամ: — Ուրեմն անկեղծօրէն ըսէ, կրկնեց էրիկս, թէ այդ վէրքն ուսկէ առիր:»

Պատասխան տուի որ էշի մը վրայ հեծած աւել ծախողի մ՚անզգուշութենէ եղաւ, որ ետևէս կը քշէր՝ մինչդեռ գլուխս ետին դարձուցեր էի. թէ իր էշն այնպէս ուժգին հրեց իս որ ինկայ և երեսս քարին զարկի: — Եթէ այդ ստոյգ է, ըսաւ այն ատեն էրիկս, վաղը արևն ելնելէն առաջ Ճեաֆէր վէզիրն այս լրութիւնը պիտի իմանայ և բոլոր աւել ծախողները սրէ պիտի անցնէ: — Աստուծոյ սիրոյն, տէր իմ, ընդմիջեցի ես, կ՚աղաչեմ որ անոնց ներես. յանցաւոր չեն անոնք: — Ո՞վ է ուրեմն յանցաւորն, ըսաւ ինձ, ինչպէս հաւատամ ըսածներուդ: Խօսէ, քու բերնէդ կ՚ուզեմ իմանալ ճշմարտութիւնն անպատճառ: — Տէր իմ, պատասխանեցի, յանկարծ գլխի պտոյտ մ՚ունեցայ և գետնին ինկայ. ահա այս է բուն եղելութիւնը:»

Այս վերջին խօսքերուս վրայ, էրիկս համբերութիւնը հատաւ: «Ա՛հ, ըսաւ նա, բաւական լսեցի այդ ստութիւններդ:» Այս ըսելով, ձեռքերը զարկաւ, և երեք գերի ներս մտան: «Անկողնէն վար առէք սա կինն, ըսաւ անոնց, սենեկին մէջ տեղը տարածեցէք:» Գերիները այս հրամանը կատարեցին, և մինչդեռ մին գլխէս և միւս ոտքերէս բռներ էր, երրորդին պատուիրեց որ երթայ սուր մը բերէ.

երբ սուրը բերաւ․ «Զարկ, ըսաւ անոր, անոր մարմինն երկու կտոր ըրէ և տար Տիգրիս գետը նետէ, թող ձկներուն ճարակ ըլլայ․ այս պատուհասը կտամ այն անձերուն որոց սիրտս նուիրած եմ և ինձ անհաւատարիմ կ'ըլլան։» Տեսնելով որ գերին շուտ մը չհնազանդիր․ «Ինչու չես զարներ, ըսաւ անոր․ ով կ'արգիլէ քեզ․ որու կ'սպասես։ — Տիկին, ըսաւ ինձ այն սահեն գերին, կենացդ վերջին վայրկեանը մօտ է, նայէ որ մահուանէդ առաջ կարգադրելու բան մ'ունիս։»

Խօսք մ'ըսելու համար ազատութիւն խնդրեցի, և տուայ։ Գլուխս վեր առի և գորովալիր աչօք Էրկանս նայելով անոր ըսի․ — «Աւաղ, ինչ վիճակի մէջ կը տառապիմ․ պէտք է որ ուրեմն այս ծաղիկ հասակիս մէջ մեռնիմ։» Կ'ուզէի շարունակել խօսքս, բայց արտասուքս ու հառաչներս արգելք եղան։ Ասկէ Էրկանս գութը չշարժեցաւ, ընդհակառակն՝ այնպիսի յանդիմանութիւններ ուղղեց ինձ որոց պատասխան տալն անօգուտ էր։ Աղաչել սկսայ, բայց աղաչանքս չլսեց և հրաման տուաւ գերիին որ պարտքը կատարէ։ Նոյն պահուն, պառաւ կինն որ Էրկիս ստնտուն եղեր էր, ներս մտաւ, և անոր ոտքն ընկնելով որպէս զի ջանայ անոր զայրոյթն ամոքելու․ «Որդեակ, ըսաւ անոր, քեզ սնուցի, այս ծառայութեանս փոխարէն կ'աղաչեմ որ այս տիկինին թողութիւն շնորհես։ Մտածէ անգամ մ'որ մարդասպան մը կ'սպաննեն, և դու քու համբաւդ պիտի արատես և պարկեշտ մարդոց համարումը պիտի կորսնես այս ընթացքովդ։ Ինչեր պիտի ըսեն այս արինարբու բարկութեանդ վրայ։» Այս խօսքերն այնպիսի սրտառուչ ձայնով մը արտասանեց, և անանկ լացաւ որ Էրկիս վրայ մեծ տպաւորութիւն մը ըրին։ «Լաւ, ըսաւ ստնտուին, քու սիրոյդ համար կեանքն իրեն կը բաշխեմ, բայց կ'ուզեմ որ իր յանցանքին նշանները կրէ որպէս զի անոր յիշատակը չմոռնայ։»

Այս խօսքիս վրայ՝ Էրկիս հրամանին համեմատ՝ գերին մէկը՝ կողերս իր բոլոր ուժովը այնչափ ծեծեց գիւրակոր փայտով մը՝ կաշիս ու միսս կեղեքելու չափ՝ որ բոլորովին ինքզինքս կորուսի։ Այնուհետև՝ իր կառողութեան գործակատար գերիներուն ձեռօք ես տուն մը տանել տուաւ, ուր պառաւ կինը մեծ հոգ տարաւ վրաս։ Չորս ամիս անկողին մնացի։ վերջապէս բժշկուեցայ, բայց երէկ տեսած սպիներդ, իմ

կամքիս հակառակ, չանցան։ Երբ կարող եղայ քալելու և դուրս ելնելու, իմ առջի Էրիկէս ունեցած տունս դառնալ ուզեցի, բայց միայն անոր աւերակը գտայ։ Իմ երկրորդ Էրիկս՝ կատղութեան ժամանակն՝ ոչ միայն նոյն տունը փլել տուեր էր, այլև անոր փողոցը քանդեր աւերեր էր։ Անլուր էր անշուշտ այս բռնութիւնը, բայց որու կրնայի բողոք տալ։ Հեղինակն անյայտ մնալու համար պէտք եղած զգուշութիւնները ձեռք առեր էր, և չկրցայ զանի ճանչել։ Սակայն, եթէ ճանչէի անգամ՝ դարձեալ ինչ կարող էի ընել, քանի որ այս բռնութեան շարժառիթը բացարձակ իշխանութեան տէր անձ մ'էր։ Ինչպէս զանգատելու պիտի յանդգնէի։

Վշտաբեկ և անօգնական մնալով իմ Զիւպէյտէ սիրականքրոջս դիմեցի, որ Չեր վեհափառութեան հիմակ իր պատմութիւնը պատմեց, և իմ գլխիս եկածներն անոր յայտնեցի։ Իր սովորական բարեսրտութեամբն իս ընդունեց, և յորդորեց որ համբերեմ։ «Այսպէս աշխարհս այսպէս է, ըսաւ, սովորաբար մեր ինչքը, կամ բարեկամները, կամ սիրահարները կ'առնու կը տանի, և շատ անգամ ամէնն ալ կը յափշտակէ։» Նոյն միջոցին՝ իր ըսածը հաստատելու համար, իր երկու քոյրերուն նախանձէն նորանի իշխանին կորուսմն ինձ պատմեց։ Նոյնպէս ըսաւ թէ ինչ կերպով անոնք քածի փոխուեր են։ Վերջապէս՝ իր սիրոյն բազմադիմի նշաններն ինձ յայտնելէն ետև՝ իմ փոքր քոյրս ինձ ներկայացուց, որ մեր մօր մահուանէ ետքն իր քովն ապաւէն մը գտեր էր։

Այսպէս շնորհակալ ըլլալով Աստուծոյ որ երեքնիս ալ միացուց, որոշեցինք ազատ ապրիլ առանց երբէք իրարմէ զատուելու։ Շատ տարիէ վեր այս անդորր կեանքը կը վարենք, և որովհետև տան ծախուց մատակարարութիւնն իմ վրաս է, մեծ հաճոյք կ'զգամ պէտք եղած պաշարն երթալ անձամբ ծախու առնել։ Երէկ ալ գացի գնելու և բեռնակիր մը առի որ գնած բաներս տուն բերէ, և որովհետև խելացի և զուարթերես մարդ մ'էր, զանի վար դրինք զուարճանալու համար։ Մութը կոխելուն երեք գալէնտէրներ ալ եկան, և աղաչեցին որ իրենց պատսպարան մը տանք մինչև առտու մնալու։ Պայմանաւ մ'ընդունեցանք զանոնք, և այս պայմանին ամէնքը հնազանդեցան, և մեր

ծեղմը նստեցնելէն ետև՝ իրենց գլխցած կերպով նուագարան ածե-ցին, երբ յանկարծ մեր դուռը զարկին։ Մուստաֆ երեք բարեշնորհ վաճառականներ էին որ գալէնտէրներուն պէս օթևան մը խնդրեցին. Նոյն պայմանաւ օթևան տուինք անոնց։ Բայց ոչ մենք և ոչ անոնք այս դաշինքը պահեցին. սակայն որչափ որ կարողութիւն և իրաւունք ու-նէինք զանոնք պատժելու, բաւական համարեցինք խնդրել որ իւրաքան-չիւրն իր պատմութիւնն ըսէ, և մեր վրէժն առած համարեցինք զա-նոնք ճամբելով և իրենց խնդրած պատսպարանը մերժելով։

Հարուն-ալ-Րաշիտ ամիրապետն իր փափաքածն իմանալուն վրայ շատ գոհ եղաւ և հրապարակաւ յայտնեց թէ որչափ հիացած կը պատճառեն լսած բաները։

Յետոյ իր մեծութեան և վեհանձնութեան նշաններն ուզեց իշխա-նազուն գալէնտէրներուն յայտնել և իր բարեսրտութիւնն՝ երեք կա-նանց։ Ուստի իր մեծ վէզիրին միջոցաւ խօսելու տեղ, ինքն անձամբ Զօպէյտէին ըսաւ. «Տիկին, այն փէրին որ նախ իբր օձ կ'երևի քեզ, և որ այնպիսի խիստ օրէնքի մը տակ դրաւ քեզ, չըսա՞ւ արդեօք թէ ո՞ւր կը բնակի, կամ լաւ ևս, խօսք չտուա՞ւ արդեօք որ քեզ նորէն տես-նէ և երկու քածերն իրենց առջի վիճակին վերածէ։

«Հրամանատարդ հաւատացելոց, պատասխանեց Զօպէյտէ, մոռցայ ըսելու որ այն վհուկը ծրար մը մազ տուաւ ինձ, ըսելով թէ օր մ'իր ներկայութեանը պէտք պիտի ունենամ, և թէ այն ատեն՝ եթէ լոկ եր-կու թել մազ այրեմ, խոկոյն իմ քովս պիտի գայ, եթէ Կովկասէն ան-դին ալ գտնուի։ — Տիկին կրկնեց ամիրապետն, ո՞ւր է այդ ծրար մը մազը։» Պատասխան տուաւ Զօպէյտէ թէ այն ատենէն վեր միշտ իր վրայ կրելու փոյթ տարեր է։ Եւ արդարև հանեց ծրարն, և զինքը ծածկող վարագոյրը քիչ մը բանալով՝ զայն ամիրապետին ցուց։ «Լաւ ուրեմն, վրայ բերաւ ամիրապետը, վհուկը հոս կանչենք, աւելի աւելի յարմար ժամանակ չկրնար ըլլալ, քանի որ զինքը տեսնել կը փափա-քիմ։»

Զօպէյտէ հաւանութիւն տուաւ, կրակ բերին, և անոր վրայ դրաւ մազի ծրարը։ Նոյն միջոցին իսկ, պալատը դղրդեցաւ, և վհուկն ամի-րապետին առջև երևցաւ, փառաւորապէս հագուած կնկան մը հա-

գուստով։ «Հրամանատար հաւատացելոց, ըսաւ այս իշխանին, ահա պատրաստ եմ ձեր հրամանները կատարելու։ Ձեր պատուէրին համա-ձայն իս կոչող կինն ինձ կարևոր ծառայութիւն մ'ըրաւ։ Իմ երախտա-գիտութիւնս յայտնելու համար անոր վրէժը լուծեցի իր քոյրերուն նեն-գութեան համար և զանոնք քածի փոխեցի։ Բայց եթէ Ձեր վեհափա-ռութիւնը հաւանի, հիմակ կրնամ անոնց բնական կերպարանը տալ։»

Գեղանի փէրի, պատասխան տուաւ անոր ամիրապետն, այդ գոր-ծէն աւելի մեծ հաճոյք չես կրնար պատճառել ինձ. այդ շնորհն ըրէ անոնց, այնուհետև այսպիսի ծանր ապաշխարանքէ մը զանոնք սփոփե-լու միջոցները պիտի գտնեմ. բայց նախ ուրիշ աղաչանք մ'ալ ունիմ ը-նելու քեզ անծանօթ էրկան մը կողմէն տառապող կնկան մը համար։ Ո-րովհետև շատ բաներ գիտես, կարելի է որ այս ալ գիտնաս. շնորհա-պարտ պիտի ըլլամ քեզ եթէ անուանես այն բարբարոս մարդն՝ որ ան-գթաբար զանի չարչարելէն զատ՝ յանիրաւի յափշտակեց իր բոլոր ունե-ցած ինչքը։ Կը զարմանամ որ այսպիսի անիրաւ, անագորոյն գործ մ'որ իմ իշխանութեանս անպատուութիւն է, իմ ականջիս հասած չըլ-լայ։

— Ձեր վեհափառութեան հաճելի ըլլալու համար, պատասխանեց փէրին, երկու քածերն իրենց առջին վիճակին պիտի վերածեմ. կնկան սպիները պիտի բուժեմ, այնպէս որ բնաւ ծեծ կերած ըլլալուն նշանները չմնայ, և ապա զինքը չարչարող մարդուն անունն ալ ձեզի պի-տի ըսեմ։»

Ամիրապետը մարդ ղրկեց որ Զօպէյտէին տունէն երկու քածերը բերին, փէրիին խնդրած թաս մը ջուրը տուին։ Այս ջրին վրայ ան-նուն անիմանալի քանի մը խօսքեր արտասանեց, և անկէ Էմինէին և երկու քածերուն վրայ սրսկեց։ Երկուքն ալ խոկոյն գեղահրաշ կիներ դարձան, և Էմինէին սպիներն անհետ եղան։ Այն ատեն փէրին ըսաւ ամիրապետին.

«Հրամանատարդ հաւատացելոց, հիմակ ալ պիտի յայտնեմ ձեզ թէ ո՛վ է ձեր փնտռած անծանօթ ամուսինը։ Ձեզի մօտ ազգակից է, քաս րոսմէնին իշխանը, ձեր անդրանիկ որդին, Մամուն իշխանին եղբայրն է։ Այս կնկան մըեցին սէր մը կապելուն, երբ անոր գեղեցկութեան

նկարագիրը լսեց, պատրուակ մը գտաւ իր տունն որսալու զանի, և այն տեղ հետն ամուսնացաւ: Իսկ տուած ծեծին գալով՝ կրնամ ըսել թէ մեղադրելի է Էմին իշխանն: Իր կինը քիչ մը դիւրահաւան էր, և անանկ պատճառներ մէջ բերեր էր զինքն արդարացնելու որ կարծել տուաւ թէ իրօք ըրած յանցանքէն աւելի մեծը գործած է: Ահա այսչափ միայն կրնամ ըսել հետաքրքրութիւնդ գոհ ընելու:» Այս խօսքերս աւարտելէն ետև՝ ամիրապետն ողջունեց և աներևոյթ եղաւ:

Այս իշխանն իր միջոցաւ վրայ հասած փոփոխութիւնները տեսնելով յետոյ ծայր գոհ եղաւ ու սքանչացաւ, և այնպիսի գործեր ըրաւ որ յաւիտեան պիտի յիշուին: Նախ իր որդին Էմին իշխանը կանչել տուաւ, յայտնեց թէ անոր գաղտնի ամուսնութեան տեղեակ է, և Էմինէին առած վէրքին պատճառն իմացուց: Իշխանը չսպասեց որ եղբայրը հրաւիրէ զինքն Էմինէն նորէն կին ընելու, այլ իսկոյն իր կինն ըրաւ:

Յետոյ ամիրապետն իմացուց որ իր սիրտն ու ձեռքը Զիւպիտէին կը նուիրէ, և միւս երեք քոյրերն երեք արքայազուն գալէնտէրներուն առաջարկեց, որոնք երախտագիտութեամբ ընդունեցան այս առաջարկութիւնն: Ամիրապետն ամէն մէկուն պալատ մը սահմանեց Պաղտատի մէջ, պետութեան բարձրագոյն աստիճաններուն հասոյց, և իրեն խորհրդական ըրաւ: Պաղտատու առաջին դատաւորը՝ վկաներու հետ հրաւիրուելով՝ ամուսնութեան պայմանագիրներ գրեց, և Հարուն-ալ-Րաշիտ ամիրապետն՝ անհաւատալի աղէտք կրող այսքան մարդոց երջանկութիւնն ընելով՝ բիւր ու բիւր օրհնութեանց արժանի եղաւ:

Դեռ լուսցած չէր, երբ Շէհէրազատ նախորդ պատմութիւնն աւարտեց, զոր քանի քանի անգամ կտրեց և նորէն շարայարեց: Ասով առիթ ունեցաւ ուրիշ պատմութիւն մը սկսելու. ուստի խօսքը սուլթանին ուղղելով՝ անոր ըսաւ.

ՍԻՆՏՊԱՏ ՆԱՒՈՐԴԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Վեհափառ տէր, Հարուն-ալ-Րաշիտ ամիրապետին իշխանութեան օրովը՝ Պաղտատու մէջ խեղճ բեռնակիր մը կար, որուն անունն էր Հինտպատ: Սաստիկ տաք ըրած օր մը ծանր բեռ մը կը կրէր քաղքին մէկ ծայրէն միւս ծայրն: Որովհետև քալած ճամբուն երկարութեան պատճառաւ շատ յոգնած էր, և տակաւին երկար ճամբայ մ'ունէր կտրելու, փողոց մը հասաւ ուր անուշ զեփիւռ մը կը փչէր, և որուն սալայատակը վարդեջրով ոռոգած էր: Ուզեց որ քիչ մը խոնջէնք առնու և ոյժ, բեռը գետինը դրաւ և մեծ տան մը քով անոր վրան նստելով՝ սկսաւ փափաքելի զով օդը ծծել:

Շատ գոհ եղաւ նոյն վայրը կանգ առնելուն, որովհետև հալուէի անուշ հոտ մը զմայլելի կերպով քթին զարկաւ. այս հոտը նոյն ապարանին պատուհաններէն կը բուրէր, և վարդեջրի հոտին հետ խառնուելով՝ բոլորովին օդը կը հոտաւէտէր: Ասկէ զատ՝ ներսի կողմէն, Պաղտատի կլիմային յատուկ շատ մը թռչուններու և սոխակներու դաշնակաւոր դայլայլիկը լսեց և ուրիշ նուագարաններու քաղցրալուր ձայնն: Այս քաղցրանուագ ձայներէն և կերպ կերպ խորտիկներու հոտէն՝ որ դուրս կը տարածուէր, մակաբերեց որ ներսը խնճոյք կայ և ուրախճանք: Ուզեց հասկնալ թէ ով կը բնակէր այն տունը զոր չէր գիտեր, վասն զի նոյն փողոցէն ստէպ անցնելու առիթ չէր ունեցած:

Իր հետաքրքրութիւնը գոհ ընելու համար՝ քանի մը սպասաւորներու մօտեցաւ, որ փառաւոր հագուած՝ դուռը կեցեր էին, և մէկուն հարցուց թէ այն ապարանքին տէրն ով է:

«Էհ, դու ալ, պատասխանեց սպասաւորը, Պաղտատ կը բնակիս և չգիտես որ այս տեղ կը բնակի մեծաշուք Սինտպատ նաւորդն, այն անուանի ուղևորն որ աշխարհիս բոլոր ծովերն ուր արևը կը լուսաւորէ, պտոյտ ըրած է:» Բեռնակիրն՝ որ Սինտպատի հարստութեանց համբաւը լսեր էր, ակամայ նախանձեցաւ այն մարդուն վրայ որուն կացութիւնն այնքան երջանիկ կ'երևէր՝ որչափ իրն ողորմելի էր: Մտո-

քը դառն խորհրդածութիւններով զբաղուած՝ աչքերը դէպ 'ի երկին վերցուց և լսուելու չափ բարձր ձայնով մ'ըսաւ․

«Ամենակարող Արարիչդ ամէն արարածներու, նկատէ Սինտպատի և իմ մէջ գտնուած տարբերութիւնն․ ամէն օր տեսակ տեսակ նեղութիւն ու տառապանք կըքաշեմ, և հազիւ օրապահիկս ճարելու կըյաջողիմ և ես ու ընտանիքս սև գարիի հացով կըկերակրինք, մինչդեռ բարեբաղդն Սինտպատ շռայլօրէն կըվայելէ անթիւ հարստութիւններ և բերկրալի կեանք մը կըվարէ։ Այսպիսի չնաշխարհիկ բաղդի մը հանդիպելու համար ի՞նչ ըրաւ․ իսկ այսպիսի ծանր բաղդի մ'արժանի ըլլալու համար ես ի՞նչ ըրի։» Այս խօսքերն աւարտելով՝ ոտքը գետինը զարկաւ, իբր մարդ մ'որ վշտով և յուսահատութեամբ համակուած է։

Այս տխուր մտմտուքին մէջն էր երբ պալատէն ծառայ մ'ելնելով՝ դէպ իրեն եկաւ և անոր թևէն բռնեց ու ըսաւ․ «Եկուր, ինձի հետևէ, Սինտպատ իշխան, իմ տէրս, քեզի խօսիլ կ'ուզէ։»

Հինտպատ քիչ չզարմացաւ իրեն արուած մեծարանաց համար։ Իր ըսած խօսքերը յիշելով կըվախնար որ Սինտպատ զինքը կանչել կուտայ պատժելու համար․ ուստի չերթալու համար պատրուակ մը գտաւ ու ըսաւ որ իր բեռը չկրնար փողոցին մէջ անտէր թողուլ․ բայց Սինտպատին ծառան ապահովցուց որ իր բեռը կըպահպանեն և այնչափ սաստկեց արուած հրամանը կատարելու, որ բեռնակիրն ստիպուեցաւ անոր թախանձանաց զիջանիլ։

Ծառան մեծ սրահ մը տարաւ բեռնակիրն, ուր շատ մը մարդիկ նստեր էին սեղանի մը բոլորտիքն, որ տեսակ տեսակ գողտրիկ կերակուրներով լի էր։ Սեղանին վերի պատուաւոր կողմը ծանրագլուխ, վայելչադէմ և սպիտակ երկար մօրուքով պատկառելի անձ մը նստեր էր, և իր ետևը բազմաթիւ պաշտօնատարներ և ծառաներ կային որ անոր ծառայելու կըշտապէին։ Այս անձը Սինտպատն էր։ Բեռնակիրն՝ որուն շփոթութիւնն աւելցաւ այնքան կոչնականներ և շքեղ կոչունք մը տեսնելով՝ բոլոր ընկերութեան բարև տուաւ դողդղալով։ Սինտպատ ըսաւ անոր որ մօտենայ, և իր աջ կողմը նստեցնելէն ետև՝ ինքն իր ձեռօք անոր կերակուր մատուցեց, և պատուական գինի մը

խմցուց, գինի մ'որով իր մառանն առատօրէն լեցուն էր։

Ընթրիքին վերջերը՝ Սինտպատ դիտելով որ կոչնականներն ալ կերակուր չեն ուտեր, խօսիլ սկսաւ և Հինտպատին դառնալով՝ զանի եղբայր կոչեց, ինչպէս սովոր են ընել արաբացիք երբ ընտանեբար իրարու հետ խօսակցին, և հարցուց անոր թէ ի՞նչ է անունն և արհեստը։

«Տէր իմ, պատասխանեց բեռնակիրն, անունս Հինտպատ է։ — Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս, կրկնեց Սինտպատ, և հաւատա՛ եղբայր որ բոլոր հանդիսականներն ալ նոյն ուրախութիւնը կ'զգան․ բայց քու բերնէդ կ'ուզեմ իմանալ թէ քիչ մ'առաջ ի՞նչ կ'ըսէիր փողոցը։» Սինտպատ սեղան նստելէն առաջ՝ անոր խօսքը լսեր էր պատուհանէն, և ասոր համար զանի կանչել տուեր էր։

Այս հարցման վրայ, Հինտպատ բոլորովին շուարած՝ գլուխը վար ծռեց և պատասխան տուաւ․ «Տէր իմ, կըխոստովանիմ որ սաստիկ յոգնած ըլլալուս սրտնեղութիւնս բռներ էր և բերնէս քանի մ'անխոհեմ խօսքեր ելան, որոց համար ներողամտութիւնդ կըխնդրեմ։ — Ո՛հ, մի՛ կարծեր, կրկնեց Սինտպատ, որ այնչափ անիրաւ ըլլամ քեզի այդ բանին համար ոխ պահելու։ Կըհասկնամ քու ծանր վիճակդ․ փոխանակ տրտունջներդ պարսաւելու, վրադ կըցաւիմ․ բայց պէտք է իմ մասիս ունեցած սխալ մէկ կարծիքդ ուղղեմ։ Կ'երևակայես անշուշտ որ անաշխատ և առանց նեղութեան շահեցայ այն ամէն դիւրութիւններն ու հանգստութիւնը զոր կըվայելեմ, ինչպէս որ կըտեսնես։ Բայց այդպէս մի՛ կարծեր, այս երջանիկ վիճակին այն ատեն միայն հասայ երբ կարելի եղած մտքի և մարմնոյ աշխատութիւններ շատ տարի կրեցի։ Այո՛, տեարք իմ, յարեց նա, բոլոր ընկերութեան ուղղելով խօսքը, կրնամ ստուգել ձեզ որ այս աշխատանքս այնչափ տարօրինակ են՝ որ նոյն իսկ ամենէն ընչասէր մարդիկ կըվհատին կըմնան եթէ նոյն հարստութիւնները շահելու համար ծովերէ անցնիլ հարկ ըլլայ։ Կարելի է շփոթ կերպով իմացած էք իմ այլանդակ արկածներս և եօթն անգամ ըրած ուղևորութեանս ժամանակ կրած վտանգներս, և քանի որ յարմար առիթը կըներկայանայ այսօր, ճշգրիտ տեղեկութիւն մը պիտի տամ ձեզ այս իմ ճամբորդութեանցս վրայ․ կարծեմ թէ կըփափաքիք զանոնք լսելու։

Որովհետեւ Սինտպատ իր պատմութիւնն ուզեց պատմել , մասնաւո-
րապէս բեռնակրին համար , սկսելէն առաջ՝ հրաման տուաւ որ փողո-
ցը ձգած բեռն առնուն բերեն և Հինտպատի ցոյց տուած տեղը դնեն ։
Այնուհետեւ այս կերպով խօսեցաւ .

ՍԻՆՏՊԱՏ ՆԱՒՈՐԴԻՆ ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Իմ ընտանիքէս անբաւ ստացուածք ժառանգեր էի , երիտասարդու-
թեանս ժամանակ մեծագոյն մասը ցոփութեամբ վատնեցի . բայց իմ
մոլորութիւնս ճանչցայ և ինքզինքիս գալով՝ տեսայ որ հարստութիւն-
ները կորնչելի են և շուտով կը հատնին երբոր ըրածիս պէս անխնայ
գործածուին ։ Նոյնպէս մտածեցի որ ժամանակս կը վատնէի խառնակ
կեանք մը վարելով , թէև ժամանակն աշխարհիս անգին բանն է ։ Դի-
տեցի նաև որ ծերութեան ատեն աղքատ մնալը յետին ծայր ողորմելի
վիճակ մ՚է ։ Միտքս ընկաւ մեծին Սողոմոնի սա խօսքը՝ զոր հօրս բեր-
նէն լսած էի . «Գերեզմանի մէջ գտնուիլ այնքան ծանր չէ որչափ չքա-
ւորութեան ։»

Այս խորհրդածութիւններէն միտքս բանալով՝ իմ ժառանգութեանս
բեկորները ժողվեցի ։ Շուկան իջեցուցի և աճուրդով ծախեցի բոլոր ու-
նեցած կահ կարասիս ։ Վերջը ծովով առուտուր ընող քանի մը վաճա-
ռականներու հետ միացայ ։ Խորհուրդ հարցուցի , ինձի խորհուրդ տա-
լու կարող եղողներուն ։ Վերջապէս որոշեցի մնացած քիչ մը ստակովս
գործի մը ձեռք զարնել , և այս որոշումս որ ըրի՝ անմիջապէս գործա-
դրութեան սկսայ ։ Պասրա գացի , և անկից շատ մը վաճառականներու
հետ նաւ մտայ , զոր պատրաստելու համար մէկտեղ ծախս ըրեր էինք ։

Ճամբայ ելանք և Պարսկական ծոցէն արեւելեան Հնդկաստանի շա-
ւիղը բռնեցինք . այս ծոցին աջ կողմը կը գտնուին Երջանիկ Արաբիոյ
եզերքն , և ձախ կողմը Պարսկաստանի եզերքն , և որուն ամենէն մեծ

լայնութիւնն է եօթանասուն մղոն , սովորական կարծեաց համաձայն ։
Այս ծոցէն դուրս , Արեւելքի ծովը , որ նոյնն է Հնդկաց ըսուածը ,
շատ ընդարձակ է . իր սահմաններն են՝ մէկ կողմէ՝ Եթովպիոյ ծովե-
զերքն և չորս հազար հինգ հարիւր մղոն լայնութիւն մը մինչև Վագ-
վագ կղզիները ։ Առջի բերան շատ նեղութիւն քաշեցի ծովը իս բռնե-
լուն , սակայն քիչ ատենէն վարժեցայ և առողջութիւնս գտայ , և այ-
նուհետեւ այս ակարութեան ենթակայ չեղայ ։

Մեր նաւարկութեան ատեն՝ շատ մը կղզիներ ելանք և մեր ապրան-
քը ծախեցինք կամ փոխանակեցինք ։ Օր մ՚առագաստ պարզած ատեն՝
ծովին երեսը ծփող թերակղզիի մ՚առջև , որ գալարալից մարգագետ-
նի մը կը նմանէր , հով չըլլալուն կեցանք ։ Նաւապետն առագաստները
ծալլել տուաւ և թողուց որ նաւաստիներէն ուզողը ցամաքն ելնէ ։ Ես
ալ դուրս ելնողներուն մէջն էի ։ Բայց այն միջոցին կեր ու խմել կը
զուարճանայինք և ծովու աշխատութենէ կը հանգստանայինք , յան-
կարծ կղզին շարժեցաւ և սաստիկ ցնցում մը տուաւ մեզ ։

Նաւէն կղզիին շարժը տեսան , և պոռացին որ շուտ մը դառնանք ,
թէ ոչ ամէնքնիս ալ պիտի կորսուինք , և թէ մեր կղզի կարծածն իրօք
կէտի մը կռնակն էր ։ Ամենէն փութաջան նաւաստիներն նաւակը շուտ
մը մտան , ոմանք ալ ծովը նետուեցան լողալու ։ Իսկ ես կղզիին , կամ
լաւ եւս , կէտին վրայ էի երբ ծովին մէջ խորասուզուեցաւ , և ժամանակ
չունեցայ վառելու համար նաւէն մեր հետ բերած փայտի կտորի մը
փաթթուիլ ազատելու յուսով ։ Սակայն , նաւապետը՝ նաւակին մէջ
գտնուողները , նոյնպէս ՚ի լող ծովը նետուողներէն մէկ քանին ընդունե-
լէն ետև՝ ուզեց նորաբոյր բարակ և նպաստաւոր հովէ մ՚օգուտ քա-
ղել . ուստի առագաստները բանալ տուաւ և ասով նաւը հասնելու յոյսս
բոլորովին ջնջեց ։

Հետեւապէս ալեաց խաղալիկ մնացի , որ մերթ այս կողմը՝ մերթ այն
կողմը կը մղէին իս . իմ կեանքս ազատելու համար բոլոր օրն և հետե-
ւեալ գիշերը մաքառեցայ ալեաց դէմ ։ Միւս օրն ուժս հատեր էր և
անյոյս էի մահուանէ ազատելու , երբ ալիք մ՚եկաւ և իս բարեբաղդօ-
րէն կղզիի մը վրայ նետեց ։ Ծովեզրը բարձր ու ապառաժ էր և շատ
նեղութիւն պիտի քաշէի վեր ելնելու եթէ քանի մը ծառի արմատներ

քննելով, որ բաղդէս նոյն տեղը կը գտնուէին իմ փրկութեանս համար, չաղատէի։ Հողին վրայ ընկայ և կիսամեռ նոյն տեղը մնացի, մինչև որ լուսցաւ և արեւն ելաւ։

Այն ատեն՝ թէև շատ տկար էի ծովուն վրայ յոգնելուս և առջի օրէն վեր կերակուր չուտելուս, դարձեալ երկրաքարշ գնալով գետնէն խոտեր կը փնտռէի որ ուտէիմ։ Քիչ մը խոտ գտայ, նոյնպէս բաղդէս յստակ ջրի աղբիւր մը, որով փոքր ինչ ուժս կազդուրեցի։ Երբ կարողութիւնս ներեց՝ դէպ առաջ քալեցի կղզիին մէջ, առանց որոշ ճամբայ մը բռնելու։ Աղւոր դաշտ մը մտայ և ձի մը տեսայ հեռուէն որ խոտ կ'ուտէր։ Դէպ 'ի այն կողմը գացի, ուրախութեան և վախի մէջ տատանելով, վասն զի չգիտէի թէ արդեօք կենացս ազատումը պիտի գտնեմ թէ ոչ կորուստը։ Մօտենալով գիտցի որ ցցի մը կապուած մատակ ձի մ'է։ Իր աղւորութիւնն ուշադրութիւնս գրաւեց, բայց դիտելու ատենս մարդու մը ձայնը լսեցի որ գետնին տակէն կ'ելնէր։ Քիչ մ'ետքն՝ այս մարդն երեւան ելաւ, ինձի մօտեցաւ և հարցուց թէ ով եմ։ Պատմեցի անոր իմ արկածս, յետոյ ձեռքէս բռնելով՝ զիս քարայր մը մտցուց, ուր ուրիշ մարդիկ ալ կային որ զիս տեսնելով զարմացան որչափ որ ես ալ զարմացայ զանոնք նոյն տեղը գտնելով։

Անոնք ինձի կերակուր բերին և կերայ. վերջը հարցուցի թէ անանկ ամայի վայր մ'ինչ բան ունին. պատասխան տուին թէ այն կղզիին թագաւորին ձիապաններն են, թէ ամէն տարի, նոյն եղանակին՝ սովորութիւն ունին թագաւորին զամբիկներն այն դաշտը բերելու, և զանոնք՝ տեսածիս պէս՝ կապելու, որպէս զի ծովային երիվարի մը հետ զուգաւորին՝ թէ այնուհետև ծովային երիվարը զանոնք կլլելու կ'աշխատէր, սակայն իրենց ձգած վայնասունէն կ'սարսափի եղեր նորէն ծովը մտնելու. այսպէս զամբիկներն՝ իրենց տեղը կը դարձնեն եղեր, և անկէ ծնած նժոյգները թագաւորին գործածութեան կը պահուին և ծովային ձիեր կ'ըսուին։ Ասկէ զատ ըսին թէ միւս օրը պիտի մեկնէին, և եթէ օր մ'ալ ուշանայի, անտարակոյս պիտի կորսուէի, վասն զի բնակութիւնները հեռի էին և թէ անկարելի պիտի ըլլար ինծի քաղաք դառնալ առանց առաջնորդի։

Մինչդեռ այսպէս կը խօսակցէին հետս, ծովային երիվարը ջրէն ե-

ելաւ, ինչպէս որ ըսեր էին, զամբիկին վրայ ընկաւ . . . և այնուհետև զայն կլլել ուզեց, սակայն ձիապանները մեծ աղմուկ հանեցին և ասոր վրայ երիվարը զամբիկէն հեռացաւ և գնաց ծովը սուզաւ։

Հետևեալ օրը կղզիին մայրաքաղաքն երթալու համար ճամբայ ելան զամբիկներուն հետ, և ես ալ անոնց ուղեկից եղայ։ Երբ հասանք՝ Միհրակ թագաւորին ներկայացայ. ինծի հարցուց թէ ով եմ և ինչ դիպուածով իր տէրութեան մէջ կը գտնուիմ։ Երբ իր հետաքրքրութիւնը գոհ ըրի լսելին, իմ դժբաղդութեանս վշտակցութիւնը յայտնեց։ Նոյն միջոցին պատուիրեց որ իմ վրայ խնամք տանին և պէտք եղածը հոգան։ Այս պատուէրն այնպէս ճշտութեամբ կատարեցին որ առիթ տուաւ ինծ թագաւորին վեհանձնութիւնն և իր պաշտօնատարներուն հաւատարմութիւնը գովել։

Որովհետև վաճառական էի, իմ արհեստակիցներս ստէպ կը տեսնէի, և յատկապէս օտարականները կը փնտռէի, ոչ միայն Պաղտատի վրայ լուրեր հարցնելու, այլև մէկը գտնելու մօք որպէս զի հետը հայրենիք դառնամ. վասն զի Միհրակ թագաւորին մայրաքաղաքը ծովեզերքը շինուած է և աղւոր նաւահանգիստ մ'ունի, աշխարհիս զանազան կողմերէն նաւեր կուգան ամէն օր։ Նոյնպէս Հնդկաստանի գիտուններու հետ ծանօթ ըլլալու ջանացի և շատ կ'ախորժէի անոնց խօսակցութիւնը լսելով. բայց դարձեալ այս յարաբերութիններս արգելք մը չէին թագաւորին հետ կանոնաւոր յարգական տեսակցութիւնս շարունակելու, նոյնպէս իր քովը գտնուող կուսակալներու և մանր մունր հարկատու թագաւորներու հետ խօսակցելու։ Հազար տեսակ հարցումներ կ'ընէին ինծ իմ հայրենիքիս վրայ, և ես ալ իմ կողմէս հետաքրքրութեանս արժանի բաներու վրայ հարցում փորձ կ'ընէի, վասն զի կը փափաքէի այս տէրութեան օրինաց և բարուց վրայ ծանօթութիւն ստանալ։

Միհրակ թագաւորին իշխանութեան ներքև կղզի մը կար որուն անունն էր Կասէլ։ Կը հաւատէին թէ ամէն գիշեր նոյն կղզւոյն մէջ թմբկի ձայներ կը լսուին. ասոր վրայ նաւաստիները սա կարծիքն ունէին թէ Դեջջիալ (հակա-քրիստոս) այն տեղ իր բնակութիւնը հաստատեր է։ Փափաքս բռնեց այս հրաշքը տեսնել, և իմ ուղևորու-

թեման ժամանակ այնպիսի ձկներ տեսայ որ հարիւր երկու հարիւր քաղկաչափ երկայնութիւն ունէին և աւելի ալ կը պատահէին քան զեաս։ Այնքան երկչոտ են որ տախտակներու վրայ զարնելով կը փախցունէինք։ Նոյնպէս ուրիշ ձկներ ալ նշմարեցի որ լոկ մէկ քաղկաչափ երկայն էին, և իրենց գլուխը բուի կը նմանէր։

Օր մը նաւահանգստին եզերքը գտնուելով նաւ մ'եկաւ մօտեցաւ։ Երբ երկաթ նետեց, սկսան ապրանքը դուրս հանել, և ապրանքին տէրերը զանոնք մթերանոցները փոխադրել կուտային։ Աչք մը նետելով հակերուն և այն նշանագիրներուն վրայ որոց տէրերը կը յայտնէին, իմ նունս կարդացի։ Ուշի ուշով քննելէն ետև՝ աներկմիտ եղայ որ Պասրայէն բեռնաւորած նաւուս վաճառքներն են։ Նոյն իսկ նաւապետն ալ ճանչցայ, բայց որովհետև վստահ էի որ զիս մեռած կը կարծէր, անոր մօտ գացի և հարց ու փորձ ըրի թէ այն հակերն որունն են։

«Նաւուս մէջ Պաղտատցի վաճառական մ'ունէի, պատասխանեց ինձ, որուն անունն էր Սինպատ։ Օր մը կղզիի մը մօտ եղած ատեն, ինչպէս որ մեզ կ'երևէր, այն կարծեցեալ կղզին ելաւ ուրիշ շատ մ'ուղևորներու հետ, թէև այն կղզին ուրիշ բան չէր այլ ահագին խոշոր կէտ մը, որ ջրին երեսը քնացեր էր։ Եւ որովհետև բան եփելու համար կռնակին վրայ կրակ վառեր էին, հազիւ թէ տաքցաւ որ սկսաւ շարժիլ և ծովին խորը սուզիլ։ Անոր վրայ գտնուող շատ մը մարդիկ խղդուեցան, և թշուառ Սինպատն ալ անոնց մէջն էր։ Այս հակերն անորն էին և միտքս դրի զանոնք ծախել մինչև որ իր ընտանիքէն մէկը գտնելով վաստակը դրամագլխին հետ անոր յանձնեմ։ — Նաւապետ, ըսի անոր, ես եմ այն մեռած կարծած Սինպատը, դեռ մեռած չէ. այս հակերն իմ ինչքս, իմ ապրանքս են։»

Երբ նաւապետն այսպէս խօսիլս լսեց. «Մեծդ Աստուած, գոչեց նա, որու վստահիլ պէտք է այսօրուան օրս։ Ալ հաւատարմութիւն չկայ մարդոց մէջ։ Իմ աչքովս տեսայ Սինպատին կորուստը. նաւս գտնուող ուղևորներն ալ ինծի պէս զանի տեսան, և ինչպէս կը համարձակիս ըսելու որ նոյն ինքն Սինպատն ես։ Այդ ինչ յանդգնութիւն է։ Քեզ տեսնողը կարծէ թէ ուղիղ մարդ մ'ես. այլ սակայն սոսկալի սուտ մը կը խօսիս, որպէս զի քեզի չվերաբերող ապրանք մը

սեպհականես։ — Քիչ մը համբերէ, պատասխան տուի նաւապետին, և շնորհ ըրէ ըսելիքս մտիկ ընելու։ — Շատ աղէկ, նայիմ ինչ պիտի ըսես, խօսէ, ականջս քեզի է։» Այն ատեն պատմեցի թէ ինչ կերպով ազատեցայ, և ինչ դիպուածով հանդիպեր էի Միհրաճ թագաւորին ձիապաններուն՝ որոնք զիս արքունիքը բերեր էին։

Այս խօսքերս լսելուն զարմացաւ և քիչ ատենէն համոզուեցաւ որ խաբեբայ մը չեմ, վասն զի իր նաւէն քանի մարդիկ եկան և զիս ճանչցան, մեծ յարգանք յայտնեցին ինծի, միանգամայն իս տեսներնուն վրայ իրենց ուրախութիւնը յայտնեցին։ Վերջապէս ինքն ալ զիս ճանչցաւ և վիզէս փաթթուելով «Գովեալ է Աստուած, ըսաւ, որ այնպիսի մեծ վտանգէ մը բարեբաղդօրէն ազատեցար. չեմ կրնար ըստ բաւականին իմ զգացած ուրախութիւնս քեզ յայտնել։ Ահաւասիկ քու ստացուածքդ, առ, քուկդ է, և ինչ որ կ'ուզես ըրէ։» Շնորհակալ եղայ, իր հաւատարմութիւնը գովեցի, և աղաչեցի որ իբր փոխարէն ընդունի տուած քանի մը ապրանքս, բայց մերժեց։

Հակերուս մէջ գտնուած թանկագին բաներն ընտրեցի և Միհրաճ թագաւորին պարգևեցի։ Եւ որովհետև այս իշխանը գլխիս եկած փորձանքը գիտէր, հարցուց թէ անանկ հազուագիւտ բաներն ուսկից գտեր եմ։ Պատմեցի անոր թէ ինչ դիպուածով զանոնք ձեռք ձգեցի. իր ուրախութիւնը բարեսիրաբար ինծի յայտնեց, պարգևս ընդունեց և ինծի աւելի մեծ ընծաներ տուաւ։ Այնուհետև իրեն վերջին բարևս տուի և նոյն նաւով ճամբայ ելայ։ Սակայն նաւ մտնելէն առաջ մնացած ապրանքս նոյն երկրին ուրիշ ապրանքի հետ փոխանակեցի։ Հալուէի փայտ, ճանդան, քափուր, մշկահոտ ընկոյզ, մեխակ, պղպեղ, կոճապղպեղ առի և հետս տարի։ Շատ մը կղզիներէ անցանք, և վերջապէս Պասրա հասանք, ուսկից այս քաղաքս եկայ գրեթէ հարիւր հազար ոսկիով։ Ընտանիքս զիս ընդունեց և եռանդուն ու անկեղծ բարեկամութեան մ'ազդած ուրախութեամբ զանի տեսայ։ Երկու սեաւ ալ գերիներ գնեցի, նոյնպէս աղուոր հողեր և խոշոր տուն մը շինեցի։ Ահա այսպէս բնակութիւնս հաստատեցի և միտքս դրի քաշած տառապանքս մոռնալ և կենաց բերկրութիւնները վայելել։

Սինպատ՝ այս տեղ կանգ առնելով՝ նուագածուներուն պատուիրեց

որ նորէն սկսին իրենց եղանակները, քանի որ իր պատմութեան պատճառաւ դադրեցուցեր էին ։ Մինչեւ իրկուն ուտելով ու խմելով անցուցին շարունակ, եւ երբ բաժնուելու ժամը հասաւ, Սինտպատ հարիւր ոսկիի ծրար մը բերել տուաւ եւ բեռնակիրին ընծայելով. «Առ նայիմ, Հինտպատ, ըսաւ անոր, տունդ դարձիր, եւ վաղը նորէն եկուր պատմութեանս շարունակութիւնը մտիկ ընելու համար ։» Բեռնակիրը քաշուեցաւ, իրեն եղած պատուին եւ պարգեւին վրայ շփոթելով ։ Երբ բնակարանը դարձաւ՝ եղելութիւնն իր կնկան ու որդւոցը պատմեց, որով շատ ախորժեցան եւ Աստուծոյ շնորհակալ եղան Սինտպատի ձեռօք նախախնամութեան ըրած բարեաց վրայ ։

Հինտպատ հագուեցաւ, միւս օրն, առջի օրուանէ աւելի մաքուր կերպով եւ առաւօտուն ուղեւորին տունը գնաց նորէն որ զինքը խնդումերես ընդունեց եւ անոր շատ մը գգուանքներ ըրաւ ։ Երբ բոլոր հրաւիրեալներն եկան, կերակուր մեծարեցին եւ երկար ատեն սեղանի վրայ անցուցին ։ Ճաշէն ատարուելէն ետեւ՝ Սինտպատ նորէն խօսելու սկսաւ եւ խօսքն ընկերութեան ուղղելով՝ ըսաւ. «Տեարք իմ, ըսաւ, կ'աղաչեմ ձեզ, ուշադիր մտիկ ընել իմ երկրորդ ուղեւորութեանս արկածներին. առջինէն աւելի ձեր մտադրութեան արժանի են ։» Ամէնքը լուռ կեցան եւ Սինտպատ այսպէս խօսեցաւ ։

ՍԻՆՏՊԱՏ ՆԱՒՈՐԴԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Իմ առաջին ուղեւորութենէս ետքն՝ որոշեր էի կեանքս հանդարտ անցնել Պաղտատու մէջ, ինչպէս որ երէկ ձեզի ըսելու պատիւ ունեցայ ։ Բայց շատ չանցաւ դատարկ կեանքէ մը ձանձրացայ եւ առեւառութեան համար ծովով ճամբորդելու փափաքս եկ առաւ. իմ ուզած առուտուրիս յարմար ապրանք գնեցի, եւ երկրորդ անգամ ճամբայ ելայ արդարասիրութեան կողմէ ինձ ծանօթ վաճառականներու հետ ։ Պատուական նաւ մը մտանք, եւ Աստուծոյ ապաւինելէն ետեւ՝ մեր նաւագնացութիւնն սկսաւ ։

Մէկ կղզիէ ուրիշ կղզի կ'անցնէինք եւ շատ շահաւոր գործեր կ'ընէինք ։ Օրին մէկը սոյն կղզիներէն մէկուն մէջ ելանք, որ տեսակ տեսակ պտղաբեր ծառերով ծածկուած էր, բայց այնքան ամայի էր որ ոչ բնակութիւն եւ ոչ իսկ մարդ մը գտանք ։ Գացինք մարգերուն վրայ, գոյն ջրոյ առուակներուն երկայնքը՝ նստանք քիչ մը հովանալու համար ։

Մինչդեռ ոմանք պտուղ եւ այլք ծաղիկ քաղելով կ'զբօսնուին, հետս բերած ուտելիքս եւ գինի առի եւ երկու հովանաւոր ծառի մէջ տեղէն վազող վտակի մը մօտ նստայ ։ Աղէկ ճաշ մ'ըրի եւ ապա քունս կոխեց ։ Աւելորդ է ըսել թէ երկար ժամանակ քնացայ, այս իրաւ է որ երբ արթնցայ նաւն իր խարիսխին վրայ կեցած չտեսայ ։

Զարմանքս մեծ եղաւ երբ տեսայ որ նաւն իր գտնուած տեղը չէր ։ Ոտք ելայ, ամէն կողմէն դիտեցի եւ ինձի հետ կղզին եկող վաճառականներէն եւ ոչ մէկը գտայ ։ Մինակ նշմարեցի առագաստալիր նաւը, բայց իմէ այնքան հեռու որ աչքէս աներեւոյթ եղաւ քիչ ժամանակէ ետքը ։

Այս տխուր վիճակին մէջ ըրած խորհրդածութիւններս կրնաք երեւակայել ։ Քիչ մնաց վիշտէս պիտի մեռնէի ։ Սոսկալի աղաղակներ արձակեցի. գլուխս ծեծեցի, գետին ընկայ եւ երկար ատեն խրամէաւելի վշտալի մտմտուքի մէջ թաղուած մնացի ։ Հազար անգամ ինքզինքս մեղադրեցի որ առջի ուղեւորութեամբս գոհ չեղեր էի, քանի որ ուրիշ ճամբորդութեան ձեռնարկելու փափաք ալ եթէ ունենայի պէտք էր որ ջնջէր ։ Բայց բոլոր ցաւերս անօգուտ՝ եւ զղջումս անժամանակ էր ։

Վերջապէս Աստուծոյ կամքին գլուխ ծռեցի, եւ առանց ըլլալիքս գիտնալու, ծառի մը սարն ելայ եւ անկից ամէն կողմը դիտեցի որ նայիմ թէ արդեօք ազատելու ճար մը կրնամ գտնել ։ Աչքս ծովին վրայ նետելով՝ մինակ երկինք եւ ջուր տեսայ, սակայն ցամաքին կողմէն ճերմակ բան մը նշմարեցի, ծառէն վար իջայ, եւ մնացած պաշարովս դէպ 'ի այն ճերմակ կէտը գնացի, որ շատ հեռու ըլլալուն չէի կարող զանազանել թէ ինչ է ։

Երբ բուռակին մօտեցայ, գիտեցի որ սպիտակ գնդակ մ՚էր որ ահագին բարձրութիւն և խոշորութիւն մ՚ունէր։ Այն ինչ մօտ գացի որ անոր դպչիմ և շատ կակուղ գտայ։ Զօրս դին պտըտ ըրի որ նայիմ թէ արդեօք ծակ մը կայ․ ամենեւին ճեղք մը չգտայ և այնպէս երեւցաւ ինծի որ անոր վրան ելնելն անհնար էր, քանի որ այնքան ողորկ էր։ Կարծեմ թէ յիսուն ոտքի չափ կլորութիւն ունէր։

Այն միջոցին արեւը մարը մտնելու մօտ էր։ Օդը յանկարծ կը մթանայ, որպէս թէ թանձր ամպով մը ծածկուած էր։ Սակայն եթէ այս մթութեան վրայ զարմացայ, աւելի եւս զարմանք տարաւ երբ գիտեցի որ զայն պատճառողը տարապայման մեծ և խոշոր թռչուն մ՚էր, որ դէպ իմ կողմս կը յառաջանար թռելով։ Միտքս եկաւ թռչուն մ՚որ պասկուճ կ՚ըսուի, որուն վրայ շատ նաւաստիները խօսեր էին ինծի, և մտածեցի որ իմ հիացումս դրդող խոշոր գնդակն անշուշտ այն թռչունին հաւկիթը պիտի ըլլար։ Եւ արդարեւ անոր վրայ իջաւ նստաւ, որպէս թէ պիտի թուխս ընէր։ Անոր գալը տեսնելով հաւկթին սաստիկ մօտեցեր էի, այնպէս որ աչքիս առջին ունէի թռչունին մէկ ոտքն, և այս ոտքն ալ ծառի մը կոճղի չափ խոշոր էր։ Ապարօշիս կտաւով ամրապէս փաթթուեցայ անոր ոտքին, այն յուսով որ երբ միւս օրը պասկուճը թռելու ըլլայ իս անապատէն դուրս կը հանէ։ Եւ արդարեւ՝ գիշերն այն վիճակին մէջ անցնելէն ետեւ՝ թռչունն առտու կանուխ թռաւ և այնչափ բարձրացուց զիս որ ցամաքն ալ չէի տեսներ․ վերջն այնչափ արագութեամբ վար իջաւ որ զգացողութիւնս կորուսի։ Երբ պասկուճը դադարեցաւ և ինքզինքս գետինը գտայ, շուտ մը հանգոյցը քակեցի որով իր ոտքին կապուեր էի։ Այն ինչ քակուեր էի, որ կտուցովն անլուր երկայնութեամբ օձ մը զարկաւ, զայն առաւ և իսկոյն թռաւ։

Իս ձգած տեղը խորունկ հովիտ մ՚էր, որուն բոլորտիքը լեռներ կային․ այս լեռներն այնքան բարձր էին որ իրենց գագաթն ամպին մէջ աներեւոյթ կ՚ըլլար, և այնքան սեպաձեւ որ շաւիղ մը չունէր վեր ելնելու համար։ Այս ալ ինծի համար նոր փորձանք մ՚էր, և այս վայրս իմ ձգած անապատիս հետ բաղդատելով, տեսայ որ աւելի ծանր էր ինծի այս տեղափոխութիւնը։

Այս հովտին մէջ պտըտելու ատենս՝ գիտեցի որ գետինն ադամանդ սփռուած է, խիստ հիանալի խոշորներ կային։ Մեծ հաճոյք զգացի զանոնք գիտելով, բայց քիչ ատենէն հեռուն այնպիսի առարկաներ տեսայ որ իմ զուարճութիւնս նուաղեցուցին և ինծի ահ ու դող ազդեցին։ Անթիւ օձեր էին, որոնք այնքան խոշոր ու երկայն էին որ ամենէն փոքրը կրնար փիղ մը կլլել։ Ցորեկն իրենց որջերուն մէջ կը քաշուէին և թշնամի պասկուճէն վախնալով այն տեղ կը թաքչէին, և գիշերը միայն դուրս կ՚ելնէին։

Ցորեկն անցուցի հովտին մէջ ժուռ գալով և ատեն ատեն հեշտալի վայրեր հանգիստ ընելով։ Սակայն արեւը մարը մտաւ, և մութը սկսելուն՝ քարայր մը քաշուեցայ այն տեղ ապաւէն մը գտնելու յուսով։ Անոր մուտքն՝ որ ցած էր և նեղ, բաւական մեծկակ քարով մը գոցեցի, որպէս զի օձերէն պատսպարուիմ, բայց քարը ճշտիւ մուտքը չգոցելուն քիչ լոյս ծակերէն ներս կը մտնէր։ Իմ ուտելիքիս մէկ մասը կերայ՝ մինչդեռ կը լսէի օձերուն սուլումն որ սկսեր էին երեւիլ։ Անոնց սոսկալի սուլումն անհնարին սարսափ ազդեց ինծի, և չկրցայ, ինչպէս որ դիւրին է երեւակայել, հանգիստ գիշեր մ՚անցնել։ Երբ լուսցաւ, օձերը քաշուեցան։ Այն ատեն դողդողալով քարայրէս ելայ, և կրնամ ըսել որ երկար ատեն ադամանդներու վրայ քալեցի առանց անոնց աչք ունենալու։ Վերջապէս նստայ և թէեւ մտատանջութիւնն իս կը վրդովէր, բոլոր գիշեր աչքս քուն չմտնելուն, քնացայ նորէն ճաշ մ՚ընելէն ետքը։ Բայց այն ինչ թմրեր էի որ աղմուկով բան մ՚ընկաւ իմ քովս և իս արթնցուց։ Թարմ մսի խոշոր կտոր մ՚էր, նոյն միջոցին տեսայ որ ժայռին գագաթէն և զանազան տեղերէն ուրիշ շատ մը կտորներ ալ վար կ՚իյնան։

Միշտ քմածին վէպ մը սեպեր էի ադամանդէ հովտին վրայ նաւաստիներէն և ուրիշ անձերէ շատ լսածներս, և թէ ինչ վարպետութեամբ կը բանեցնէին քանի մը վաճառականներ այն մեծագին գոհարները ձեռք ձգելու համար։ Այն ատեն հասկցայ որ լսածնիս ճշմարիտ է եղեր։ Եւ արդարեւ այս վաճառականները նոյն հովտին մօտ կ՚երթան այն միջոցին որ արծիւները ձագուկներ ունին․ միսը կը ջարդեն և պատառ պատառ հովտին մէջ կը նետեն, ադամանդներն որոց

ծայրերուն վրայ կ՚ելնան մեխ կտորներն ասոնց կը կպչին։ Արծիւներն որ այս երկրին մէջ աւելի ուժեղ են քան այլուր, այն մեխ կտորներուն վրայ կ՚ելնան և իրենց բոյնը՝ ժայռերուն կատարը կը տանին իրենց ձագերուն ճարակ տալու համար։ Այն ատեն վաճառականները բոյներուն կը վազեն, աղաղակներ կ՚արձակեն և արծիւները հեռանալու ստիպելով՝ մեխին կպած ադամանդները կ՚առնուն կը տանին։ Այս հնարքը կը գործածեն, վասն զի ուրիշ միջոց չկայ այս հովիտէն ադամանդները քաղելու, քանի որ վիհ մ՚է որուն մէջ իջնելն անկարելի է։

Մինչև այն ատեն կարծեր էի որ անհնար պիտի ըլլար ինծի այս վհէն դուրս ելնելու, զոր իմ գերեզմանս կը սեպէի, բայց միտքս փոխեցի և տեսածս կեանքս պահպանելու միջոց մը թելադրեց ինծի։

Սկսայ աչքիս ամենէն խոշոր երեւցող ադամանդները ժողվել, և կաշիէ պայուսակս լեցուցի, որ իմ ուտելիքս պահելու ծառայեր էր ինծի։ Ցետոյ ինծի ամենէն երկար երեւցող մեխ կտոր մ՚առի, ապարօշիս կտաւովը զանի չորս կողմն կապեցի և այս վիճակիս մէջ փորիս վրայ գետինը պառկեցայ, և կաշիէ պարկն ալ մէջքէս կապեցի այնպէս որ չէր կրնար ելնել։

Այն ինչ այս վիճակին մէջն էի որ արծիւներն եկան, իւրաքանչիւրը մէյմէկ կտոր միս առաւ ու տարաւ, և ամենէն զօրաւորներէն մէկն՝ այնպէս վերցնելով իս մեխ կտորին հետ որով փաթթուած էի, մինչև իր բոյնը՝ լեռան կատարը տարաւ։ Այն ատեն վաճառականներն իսկոյն աղաղակներով արծիւները զարհուրեցուցին և երբ իրենց որսը ձգել տալու յաջողեցան, անոնցմէ մէկն ինծի մօտեցաւ. բայց ահ ու դողն առաւ զինքն երբ իս տեսաւ։ Սակայն շուտ մը վախը փարատեց, և փոխանակ հարցնելու թէ ինչ դիպուածով այն տեղ կը գտնուիմ, սկսաւ հետս կռիւ ընել, ըսելով թէ ինչ պատճառաւ իր ստացուածքը կը գրաւեմ։ «Ինծի հետ աւելի մարդասիրութեամբ պիտի վարուիս, ըսի անոր, երբ աւելի աղէկ ճանչես իս։ Հոգ մ՚ըներ, յարեցի, միւս վաճառականներուն ունեցածներէն աւելի խոշոր ադամանդներ ունիմ։ Եթէ խոշորներ ունին, այն ալ դիպուածով է, բայց ես ինքս ընտրեցի՝ հովտին խորէն, այն ադամանդներն որոնք ահա պարկիս մէջ կը գտնուին։»

Այս ըսելով զայն անոր ցոյց տուի, այն ինչ խօսքս լմնցուցեր էի որ միւս վաճառականներն իմ բոլորտիքս խմբովին առին, իս տեսնելով սաստիկ զարմացան, և իմ պատմութիւնս պատմելով իրենց զարմանքն աւելցուցի։ Այնչափ չհիացան իմ երեւակայած հնարքիս վրայ որչափ զայն գործածելու համար ունեցած յանդգնութեանս վրայ։

Տարին զիս իրենց բնակած տունն, և այն տեղ պարկս անոնց առջև բանալով՝ ադամանդներուս խոշորութիւնը զանոնք հիացուց, և խոստովանեցան որ իրենց գտնուած որ և է արքունեաց մէջ՝ ընաւ ադամանդ մը տեսած չեն որ իմիններուս հետ բաղդատուի։ Բոյնին տէրն եղող վաճառականն աղաչեցի, քանի որ անոր մէջ փոխադրուեր էի (վասն զի ամէն վաճառական իրեն յատուկ բոյնն ունէր), իրեն համար որչափ ադամանդ որ ուզէ առնու։ Գոհ եղաւ հատ մը միայն առնելով՝ այն ալ ամենէն պզտիկն էր, և որովհետև կը յորդորէի զինքն որ ուրիշ ալ առնու և չկարծէ թէ ինծի վնաս մը կ՚ըլլայ. «Ո՛չ, ըսաւ ինծի, ասով շատանամ որ բաւական թանկագին ըլլալուն այսուհետև նոր նոր ճամբորդութիւններ ընելու նեղութիւնը չպիտի քաշեմ և իմ կոկիկ հարստութիւնս պիտի կազմեմ։»

Գիշերն այս վաճառականներուն հետ անցուցի, որոց երկրորդ անգամ մ՚ալ իմ պատմութիւնս պատմեցի, որպէս զի զայն մտիկ չընողները գոհ ընեմ։ Չէի կրնար ուրախութիւնս չափաւորել քանի մտածէի որ այն արդէն ըսած վտանգներէս ազատ կը գտնուիմ։ Կարծէի թէ այն իմ վիճակս երազ մ՚է, և պէտք էի վստահ ըլլալ որ ալ վախնալիք բան մը չունէի։

Արդէն շատ օրէ վեր վաճառականները մեխ կտորներ կը նետէին հովտին մէջ, և որովհետև ամէն մէկն իրեն ընկած բաժնէն գոհ էր, միւս օր ամէնքնիս ալ ճամբայ ելանք և բարձր լեռներն անցանք ուր ահագին մեծութեամբ օձեր կային որոցմէ բարեբաղդաբար անվնաս ելանք։ Առաջին նաւահանգիստը հասանք, ուսկէ Րօհա կղզին անցանք, ուր կամֆի ծառն որմէ քափուր կը հանեն, և այնչափ խոշոր է և տերևախիտ որ հարիւր հոգի կրնան դիւրաւ անոր շուքին տակ նստիլ։ Այն հիւթն ուսկից քափուրը կը շինուի ծառին վերևը բացուած ճեղքէ մը կը հոսի, և ամանի մը մէջ ընդունելով կը պնդանայ և քափուր

բուածը կը գտանայ ։ Երբ հիւթն այսպէս առնուի, ծառը կը չորնայ և կը կորսուի ։

Նոյն կղզիին մէջ ռնգեղջիւրներ կան որ փիղէն աւելի փոքր, իսկ գոմէշէն աւելի մեծ կենդանիներ են ։ Իրենց քթին վրայ կանգուն չափ երկար եղջիւր մ'ունին. այս եղջիւրը հաստատուն և մէկ ծայրէն միւս ծայրը միջին վայրէն կտրուած է ։ Անոր վրայ սպիտակ գիծեր կը տեսնուին որ մարդու մը կերպարանը կը ներկայացնեն ։ Ռնգեղջուրը փղին հետ կը կռուի, եղջիւրով փորին տակէն կը ձեղքէ, կը վերցնէ և գլխին վրայ կը տանի. բայց որովհետև փղին արիւնն ու ճարպն աչքերուն վրայ կը վազեն և զայն կը կուրացնեն, գետին կ'իյնայ, և որ աւելի զարմանալին է, պասկուճը կուգայ երկուքն ալ կը բռնէ իր ճիրաններով և իր ձագերուն կեր տալու համար կ'առնու կը տանի ։

Այս կղզին ուրիշ հետաքրքրական բաները կը լռեմ որպէս զի ձեզի ձանձրոյթ չպատճառեմ ։ Անդամանդներէս մէկ քանին ալ որ ապրանքի հետ փոխանակեցի ։ Անկէ ուրիշ կղզիներ անցանք, և վերջապէս ցամաքային շատ մը վաճառաշահ քաղաքներ շրջելէն ետև՝ Պասրա հասանք, և անկէ ես Պաղտատ եկայ ։ Նախ շատ մ'ողորմութիւն տուի աղքատներուն, և մնացած անբաւ հարստութիւններս, զոր վաստըկեր էի այնչափ աշխատութեամբ, պատուով վայելելու սկսայ ։

Ահա այսպէս պատմեց Սինտպատ իր երկրորդ պատմութիւնը ։ Դարձեալ բեռնակիրին հարիւր ոսկի տալ ապսպրեց և հրաւիրեց որ վաղը գայ և երրորդ ճամբորդութիւնը լսէ ։ Հիւրերն իրենց տունը դարձան, և միւս օրն եկան, նոյն ժամուն, ինչպէս նաև բեռնակիրն, որ արդէն մոռցեր էր իր անցեալ թշուառութիւնը ։ Սեղան նստան, և ճաշէն ետքը Սինտպատ ունկնդրութիւն խնդրելով իր երրորդ ուղևորութեան պարագաներն այսպէս պատմեց ։

ՍԻՆՏՊԱՏ ՆԱՒՈՐԴԻՆ ԵՐՐՈՐԴ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Շատ չանցաւ մոռցայ՝ ըսաւ, իմ վարած կեանքիս անուշութիւններուն մէջ՝ իմ նախորդ ճամբորդութեան ժամանակ կրած վտանգներս. որովհետև իմ ծաղիկ հասակիս մէջն էի, հանգստութեան մէջ ապրելէն տաղտկացայ, և նոր եռանդ մ'զգալով այն վտանգներուն համար որոց դէմ դիմադրաւ կենալ կը փափաքէի, Պաղտատէն մեկնեցայ ճոխ ապրանքներ առնլով և Պասրա փոխադրեցի ։ Այն տեղէն ալ ուրիշ վաճառականներու հետ նաւ հեծայ, երկար եղաւ մեր ճամբորդութիւնն, և շատ մը նաւահանգիստներ երթալով՝ ընդարձակ առուտուր մ'ըրինք ։

Օր մ'որ բաց ծովն էինք՝ ահարկու փոթորիկի մը հանդիպեցանք և մեր ճամբան կորուսինք ։ Այս փոթորիկը քանի մ'օր տևեց և մեզ այնպիսի նաւահանգիստ մը քշեց ուսկէ նաւապետը խոյս տալ կը փափաքէր, սակայն ստիպուեցանք այն տեղ երկաթ նետելու ։ Երբ առագաստները փաթթեցինք, նաւապետը մեզ ըսաւ. «Այս կղզին և անոր մօտակայ եղածները մազոտ վայրենիներ կը բնակին, որոնք հիմակ պիտի գան մեր վրայ յարձակելու ։ Թէև թզուկներ են, սակայն դժբաղդաբար հարկ է մեզ դիմադրութիւն մը չընել անոնց, վասն զի մարախներէն աւելի բազմաթիւ են, և եթէ պատահմամբ անոնցմէ մէկը սպաննենք, ամէնքնին ալ մեր վրայ պիտի իյնան և մեզ սպաննեն ։»

Նաւապետին այս խօսքն ահ ու դող ազդեց բոլոր նաւազին, և շատ չանցաւ փորձով տեսանք որ ըսածը շատ ճշմարիտ էր ։ Նողկալի դէմքով անթիւ վայրենիներ երևցան մեզի, որոց մարմինը կարմիր մազերով ծածկուած էր, և միայն երկու ոտք բարձր էին ։ Ամէնքը ծովը թափեցան 'ի լող, և քիչ ատենի մէջ մեր նաւը պաշարեցին, սակայն իրենց լեզուն անհասկանալի էր մեզ ։ Նաւին եզրներն ու պարանները բռնեցին և ամէն կողմէն մագլելով կամուրջն ելան, այնպիսի շուտութեամբ և թեթևաշարժութեամբ որ կարծես թէ ոտքերնին գետինք չէր կոխեր ։

Այս գործողութեան ականատես եղանք ամէն երևակայելի երկիւղով, առանց անոնց դէմ դնել յանդգնելու, կամ բառ մ'ըսելու, որպէս զի իրենց խորհուրդն՝ որ մեզի աղէտաբեր կ'ըլլէր, խափանենք։ Ու իրօք, առագաստները բացին, երկաթին պարանը կտրեցին առանց զայն քաշելու հոգ տանելու, և նաւը ցամաքին մօտ բերելէն ետև՝ ամէնքնիս ալ դուրս հանեցին։ Յետոյ նաւն իրենց եկած մէկ ուրիշ կղզի մը տարին։ Ամէն ուղևորները մեր գտնուած կղզիէն կը խորշէին, վասն զի շատ վտանգաւոր էր այն տեղ մնալ պատճառաւ մը զոր հիմակ պիտի իմանաք, բայց հարկ եղաւ այդ դժբաղդութեան համբերութեամբ գլուխ ծռել։

Ծովեզրէն հեռացանք, կղզին ներսերը գացինք, քիչ մը պտուղ և խոտ գտանք, և կարելի եղածին չափ մեր կենաց վերջին օրերն երկարելու համար անոնք կերանք, վասն զի ամէնքնիս ալ անխուսելի մահուան մը կը յուսայինք։ Քալելու ատեն՝ մեզնէ բաւական հեռու՝ մեծ շէնք մը տեսանք, և մեր ընթացքը դէպ 'ի այն կողմն ուղղեցինք։ Ամուր և խիստ բարձր պալատ մ'էր, եպենոսէ երկփեղկ դուռ մ'ունէր, զայն հրելով բացինք։ Գաւիթը մտանք, և դիմացի կողմը լայն սենեակ մը տեսանք ներքնաբակով մ'որուն մէկ դին՝ մարդու ոսկորաց կոյտն, և միւս դին՝ խորովելու համար շամփուրներ։ Այս տեսարանիս մեր սիրտը թունդ եղաւ, և որովհետև շատ քալելէ յոգներ էինք, կթոտելով ընկանք գետնին անհնարին սարսափ մ'զգալով՝ և նոյն վայրն երկար ատեն անշարժ մնացինք։

Արևը մարը կը մտնէր, և երբ այս նկարագրած ողորմելի վիճակին մէջ կը գտնուէինք, սենեկին դուռը բացուեցաւ մեծ դղրդիւնով և խոյն մեծ արմաւենիի մը բարձրութեամբ սև մարդու մը ահռելի դէմքը տեսանք։ Ճակտին վրայ լոկ աչք մ'ունէր, որ հրավառ ածուխի պէս կարմիր էր և հրատապ, առջևի ակռաներն, որ շատ երկար ու սուր էին, բերնէն դուրս կ'ելնէին, որ ձիու մը բերնին չափ ճեղքուած էր, և ստորին շրթունքը մինչև կուրծքը կ'իջնէր։ Ականջները փղի մ'ականջներուն կը նմանէին և ուսերը կը ծածկէին։ Եղունգները կեռաւոր էին և երկայն մեծ թռչուններու ճիրաններուն պէս։ Այնպիսի զարհուրելի հսկայ մը տեսնելով ամէնքնիս ալ շլոր մլոր եղանք և

իբր անկենդան մնացինք։

Վերջապէս ինքզինքնիս գտանք, և զանի անդաստակին վրայ նստած տեսանք և իր բոլոր աչքովը մեզ կը դիտէր։ Երբ լաւ մը քննեց մեզ, դէպ 'ի մեզ եկաւ և մօտենալով՝ ձեռքն իմ վրայ երկնցուց, վզիս ծոծրակէն բռնեց և ամէն կողմը դարձուց, մսավաճառի մը պէս որ ոչխարի մը գլուխը կը դիտէ։ Լաւ մը դիտելէն ետև՝ տեսնելով որ այնքան նիհար եմ որ միայն կաշիս ու ոսկորներս մնացեր են, զիս արձակեց։ Ամէնքն ալ հետզհետէ առաւ, մի և նոյն կերպով քննեց և որովհետև նաւորդներուն մէջ ամէնէն գէրը նաւապետն էր, մէկ ձեռքովը բռնեց, ինչպէս որ ես ճնճղուկ մը կը բռնեմ, և շամփուր մ'անցուց մարմնէն. յետոյ աղուոր կրակ մը վառելով՝ զանի խորովեց և ընթրիքին կերաւ իր քաշուած սենեկին մէջ։ Այս ճաշը լմնցնելէն ետև՝ նորէն անդաստակը դարձաւ, այն տեղ պառկեցաւ և սկսաւ խորդալ այնպիսի աղմկալի կերպով մ'որ կարծես թէ կ'որոտար։ Իր քունը մինչև հետևեալ առտու տևեց։ Իսկ մենք չկրցանք հանգիստ վայելել, և այն գիշերն ամենասոսկալի մտատանջութեան մէջ անցուցինք։ Երբ լուսցաւ, հսկան արթնցաւ, ոտք ելաւ, դուրս գնաց և մեզ պալատը ձգեց։

Երբ կարծեցինք թէ հեռացած է, մեր ախուր լռութիւնն՝ որ բոլոր գիշեր շարունակեր էր, դադրեցուցինք, և իրարու յայտնելով մեր սաստիկ վիշտն՝ պալատը մեր տրտունջներով և ողբերով հնչեցուցինք։ Թէև բազմաթիւ էինք և մեր թշնամին մէկ հոգի էր, բնաւ չմտածեցինք զանի սպաննելով ձեռքէն պրծիլ։ Այս գործողութիւնը թէև դժուարին էր շատ կատարել, սակայն բնականապէս պէտք էր որ մեր միտքը պաշարէր։

Ուրիշ շատ միջոցներ մտածեցինք, սակայն որոշում մը չըրինք, և վերջապէս Աստուծոյ կամքին ապաւինելով որ ըստ հաճոյս մեր ճակատագիրն որոշէ, բոլոր օրը կղզին շրջելով անցուցինք, առջի օրուան պէս պտուղ և բոյս ուտելով կերակուրի տեղ։ Իրիկունը տեղ մը փնտռեցինք պատսպարուելու, և չգտնելով դարձեալ ակամայ ստիպուեցանք պալատը դառնալու։

Հսկան անխափան եկաւ պալատն և մեր ընկերներէն մէկը նորէն ընթրեց. յետոյ քնացաւ և մինչև լոյս խորդաց. այնուհետև դուրս ելաւ

տուղի օրուան պէս մեզ մինակ թողուց ։ Մեր վիճակն այնքան ահուելի երեւցաւ մեզ՝ որ մեր ընկերներէն շատերը քիչ մնաց պիտի երթային ինքզինքնին ծովը նետելու, քան այսպիսի սոսկալի մահուան մը սպասելու, և միաձայնամբ կը գրգռէին միւսները որ իրենց օրինակին հետեւէին ։ Բայց մեզմէ մէկը խօսիլ սկսելով՝ ըսաւ ․

«Արգիլուած է մեզ ինքնասպան ըլլալ, և եթէ ներելի ալ ըլլար ՝ միթէ աւելի խոհեմութիւն չէ, այսպիսի դժնդակ մահուան մեզ սահմանող բարբարոսին կեանքը վերցնելու միջոցները մտածել ։»

Որովհետեւ այս մասին միտքս խորհուրդ մը ծներ էր, զայն ընկերներուս հաղորդեցի և հաւանութիւն գտայ ։ «Եղբարք իմ, ըսի անոնց, գիտէք որ ծովուն եզերքը շատ անտառներ կան, եթէ կը հաւնիք, մեզ կրելու համար շատ մը լաստեր շինենք, և երբ լմննան, ծովեզրը կը թողունք մինչեւ որ զանոնք գործածելու յարմար առիթը գտնենք ։ Սակայն դարձեալ՝ հսկայէն ազատելու համար ինչ խորհուրդ որ հաղորդեցի ձեզ կը կատարենք, եթէ յաջողինք, կրնանք համբերութեամբ սպասել որ անկից նաւ մ'անցնի և այս մահաբեր կղզիէն մեզ առնու տանի ․ իսկ ընդ հակառակն, եթէ չյաջողինք, իսկոյն լաստերուն կը վազենք և ծովը կ'իջնենք ։ Իրաւ է որ այնպիսի դիւրաբեկ նաւակներով ալեաց կատաղութեան ապաւինելով կարելի է որ մեր կեանքը կորսնցնենք, բայց եթէ պիտի մեռնինք, միթէ աւելի քաղցր չէ ծովին խորը թաղուիլ քան այս հրէշին փորին մէջ, որ արդէն մեր ընկերներէն երկուքը կլլեց ։» Իմ խորհրդիս ամէնքը հաւանեցան, և երեք հոգի բառնալու կարող լաստեր շինեցինք ։

Երեկոյին պալատը դարձանք, և հսկան քիչ մ'ետքը հասաւ ։ Հարկ եղաւ համբերել տեսնելով մեր ընկերներէն մէկուն շամփուրէն անցնիլը ։ Բայց վերջապէս, ահա այս կերպով հսկային անգթութենէ վրէժ առինք ․ իր գարշելի ընթրիքն աւարտելէն ետեւ՝ կռնակին վրայ պառկեցաւ և քուն եղաւ ։ Երբ անոր խորդալու ձայնն՝ իր սովորութեան համեմատ՝ լսեցինք, մեր մէջէն ինն հոգի որ ամենէն յանդուգն էին և ես, զատ զատ շամփուր մ'առինք, ծայրը կրակին մէջ դրինք կարմրելու համար, և ամէնքնիս մէկ աչքին մէջ խօթեցինք զանոնք և զայն հանեցինք ։

Հսկան զգացած ցաւէն զարհուրելի ձայն մ'արձակեց ։ Յանկարծ ոտք ելաւ և ձեռքերն ամէն կողմ տարածեց որ մեզմէ մէկը բռնէ և իր կատղութեան զոհ ընէ ․ սակայն իրմէ հեռանալու ժամանակ ունեցանք և պատին կռթնելու այնպէս որ անկարող ըլլայ մեզ հանդիպիլ ոտքերովը ․ մեզ պարապ տեղ փնտռելէն ետեւ՝ առ խարխափ դուռը գտաւ և ահարկու ղօղանջներ արձակելով դուրս վազեց ։

Հսկային ետեւէն պալատէն դուրս ելանք և ծովեզրը գացինք որ մեր լաստերը գտնենք ։ Նախ զանոնք ջուրն իջեցուցինք և սպասեցինք որ լուսնայ անոնց վրայ հեծնելու համար, եթէ երբէք հսկան իրեն նման առաջնորդի մը հետ մեր վրայ գար ․ բայց կը յուսայինք որ՝ եթէ արեւ ելնելէն ետեւ չերեւէր, և եթէ իր ղօղանջները լսելի չըլլային, ապացոյց մ'էր որ մեռած էր ․ և այս պարագայիս մէջ միտքերնիս դրեր էինք կղզին մնալ և լաստերու վրայ ելնելով մեր կեանքը վտանգի մէջ չդնել ։ Բայց այն ինչ լուսցաւ ահա մեր անգութ թշնամին տեսանք, որ իրեն ուղեկցեր էին գրեթէ նոյն մեծութեամբ երկու հսկաներ և ուրիշ շատեր ալ որ արտորնօք իր առջեւէն կը վազէին ։

Երբ զանոնք տեսանք, առանց վարանելու մեր լաստերուն վրայ նետուեցանք և անդադար թի քաշելով սկսանք ծովեզրէն հեռանալ ։ Հսկաներն ալ այս տեսնելով՝ խոշոր քարեր առին, ծովափը թափեցան, մինչեւ անգամ ջուրը մտան մինչեւ իրենց մարմնոյն կիսովը, և անանկ ճարպիկութեամբ նետեցին մեր վրայ, որ իմ գտնուած լաստէս զատ՝ բոլոր միւսներն խորտակեցան և անոր վրայ եղող մարդիկ խեղդուեցան ։ Իսկ ես և իմ երկու ընկերներս՝ որովհետեւ ուժգին կը թիավարէինք, բաւական հեռացեր էինք ծովեզրէն և քարերը մեզի չէին հասներ ։

Երբ բաց ծովը հասանք, հովին և ալեաց խաղալիկը դարձանք, որոնք երբեմն մէկ կողմն, երբեմն միւս կողմը կը նետէին, և նոյն օրն ու հետեւեալ գիշերը սոսկալի մտատանջութեան մէջ էինք թէ արդեօք մեր վերջն ինչ պիտի ըլլայ, բայց միւս օրը բարեբաղդաբար կղզիի մը կողմը հովէն մղուելով՝ մեծ ուրախութեամբ ազատեցանք ։ Ընտիր պտուղներ գտանք և ուտելով մեր ուժն որ արդէն սպառած էր՝ կազդուրեցինք ։

Իրիկուան դէմ ծովեզրը քնացանք, բայց արմաւենիի պէս երկար օձ մը գետինը սողալով իր թեփերուն հանած աղմուկէն արթնցանք։ Այնչափ մեզի մօտ եկաւ որ երկու ընկերներէս մէկը կլլեց. թէեւ աղաղակներ արձակեց եւ ամէն ճիգը թափեց օձէն ազատելու, սակայն օձը քանի մ'անգամ ցնցելէն ետեւ՝ գետնին վրայ զայն ջախջախեց եւ վերջապէս կլլեց։ Խոյս փախանք, իմ միւս ընկերս եւ ես, եւ թէեւ բաւական հեռու էինք, քիչ ատենէն ետքն աղմուկ մը լսեցինք որմէ հասկցանք որ օձը կլլած թշուառին ոսկորները դուրս կը հանէր։ Եւ իրօք հետեւեալ օրը սոսկումով տեսանք զանոնք, եւ այն ատեն պոռացի. «Ո՛ Աստուած, ինչ վտանգի մէջ կը գտնուինք, երէկ կ'ուրախանայինք որ հսկայի մը անգթութենէ եւ ալեաց կատաղութենէ մեր կեանքն ազատեցինք. եւ ահա այսօր այնպիսի փորձանքի մէջ ինկած ենք որ առաջինէն աւելի ահռելի է։»

Պտըտելու ատեն խիստ բարձր ծառ մը գտնեցինք, եւ միտք ըրինք հետեւեալ գիշերն անոր վրայ անցնել ապահովութեան համար։ Առջի օրուան պէս դարձեալ պտուղներ կերանք, եւ իրկունը ծառին վրայ ելանք։ Շատ չանցաւ օձին գալը լսեցինք որ սուլելով մեր գտնուած ծառին ստորոտը հասաւ։ Կոճղին վրայ ելաւ, եւ ընկերիս հանդիպելով՝ որ ինէ աւելի վար էր, անմիջապէս զայն կլլեց եւ քաշուեցաւ։

Մինչեւ առտու ծառին վրայ մնացի, եւ ետքը վար իջայ աւելի մեռած քան կենդանի։ Եւ արդարեւ ես ալ իմ երկու ընկերներուս պէս օձին որս պիտի ըլլայի, եւ այս մտածմունքն ինձ ահ ու դող կ'ազդէր, անոր համար քանի մը քայլ առի ծովն երթալ նետուելու համար. բայց որովհետեւ քաղցր է ապրիլ որչափ կարելի է երկար ժամանակ, այս յուսահատութեան շարժումիս դիմադրեցի եւ Աստուծոյ կամքին հնազանդեցայ, որ ըստ հաճոյս կը տնօրինէ մեր կեանքը։

Սակայն դարձեալ մանր փայտեր, տատասկներ եւ չոր փուշեր ժողվելու ելայ։ Շատ մը տրցակներ շինեցի եւ իրարու հետ կապեցի, ծառին բոլորտիքը շրջանակ մ'ընելով եւ մէկ քանի հատ ալ վերէն ծուռ կապեցի, գլուխս գոցելու համար։ Այս ընելէն ետքը՝ գիշերը գալուն շրջանակին մէջ փակուեցայ, սա տխուր մխիթարութեամբ որ ինձ սպառնացող անգութ վիճակէն զերծ մնալու համար ձեռքէս եկածն ըրի։ Օ-

ձը նորէն եկաւ, ծառին չորս դին դարձաւ որ իս կլլէ, բայց չյաջողեցաւ, շինած թումբիս պատճառաւ, եւ մինչեւ առտու դիտեց իս, ինչպէս կատու մը ծակին մէջ պահուած մուկ մը կը պաշարէ եւ չէ կարող զայն բզկտել։ Վերջապէս լուսնալուն՝ օձը քաշուեցաւ. բայց մինչեւ արեւուն ելլելն իմ ամրոցէս չկրցայ դուրս ելնել։

Այնչափ յոգներ էի ինձ պատճառած աշխատութենէ, այնչափ իր թունալից շնչէն տառապեր էի որ մահը նախադաս երեւելով ինձ այս նողկալի տեսարանէն, ծառէն հեռացայ, եւ առանց նախորդ օրուան համբերութիւնս յիշելու, դէպ 'ի ծով վազեցայ, գլխիվայր անոր մէջ իյնալու համար։ Բայց Աստուած այս իմ յուսահատութենէս շարժեցաւ. այն միջոցին որ ծովը պիտի նետուէի, ծովեզրէն բաւական հեռու նաւ մը նշմարեցի։ Բոլոր ուժովս պոռացի որ ձայնս լսեն, եւ ապարօշիս կտաւն ալ քակեցի որպէս զի իս դիտեն։ Այս ըրածս ապարդիւն չմնաց. բոլոր նաւաստիներն իս տեսան եւ նաւապետը նաւակը ղրկեց ինձ։ Երբ նաւը հասայ, վաճառականներն ու նաւորդները հարցուցին ինձ շտապաւ թէ ինչ դիպուածով այն անապատ կղզին գտնուեր եմ. եւ երբ գլխէս եկած փորձանքն անոնց պատմեցի, ծերերն ինձ ըսին թէ շատ անգամ զանազան զրոյցներ լսեր են այն կղզին բնակող հսկաներուն վրայ, թէ հաւաստեր են որ անոնք մարդակերներ են եւ թէ հում եւ եփած մարդիկ կ'ուտեն։ Իսկ օձերուն գալով՝ ըսին թէ բազմաթիւ են այն կղզին մէջ եւ ցորեկը կը պահուին իսկ գիշերը դուրս կ'ելնեն։ Այսչափ վտանգներէ ազատելուս վրայ իրենց խնդակցութիւնը յայտնելէն ետեւ՝ գիտնալով որ անշուշտ անօթի պիտի ըլլամ, փութացին իրենց ունեցած լաւագոյն բաներէն ինձ մեծարել, եւ նաւապետը դիտելով որ զգեստս բզիկ բզիկ եղեր է, վեհանձնաբար իրեններէն հատ մ'ինձ տուաւ։

Ատեն մը ծովու վրայ շրջեցանք, շատ մը կղզիներու մօտեցանք, եւ վերջապէս Սալահատ հասանք, ուսկէ ճանդանի փայտը կը հանեն որ բժշկութեան մէջ մեծ օգուտ ունի։ Նաւահանգիստը մտանք եւ երկաթ նետեցինք։ Վաճառականներն սկսան իրենց ապրանքը դուրս հանել, որպէս զի ծախեն կամ փոխանակեն։

Նոյն միջոցին նաւապետը կանչեց իս եւ ըսաւ. «Եղբայր, իմ նաւու-

ուղեւորող վաճառականի մ՚ապրանքն իմ քովս աւանդ կեցած է ։ Որովհետեւ այս վաճառականը մեռաւ, զանոնք պիտի ծախեմ, որպէս զի ժառանգորդներուն հաշիւ տամ, եթէ մէկուն հանդիպիմ ։» Ըսած հակերն արդէն նաւուն կամրջին վրայ էին, զանոնք ցոյց տուաւ ինծ ըսելով. «Ահաւասիկ այն ապրանքը, յուսամ որ յանձն կ՚առնուս ծախելու, աշխատութեանդ վարձքը ստանալու պայմանաւ ։» Համաձայնութիւն տուի, շնորհակալ ըլլալով որ ինծի առիթ մը կուտար անգործ չմնալու ։

Նաւին գրագիրը վաճառականներուն անունին հետ կ՚արձանագրէր անոնց ապրանքն ։ Որովհետեւ կը հարցնէր նաւապետին թէ ինչ անունով պէտք է գրել ինծ յանձնելիք վաճառքը. «Գրէ, ըսաւ անոր, Սինտպատ նաւորդին անուամբ ։» Անունս լսելուս սիրտս ելաւ, եւ նաւապետը դիտելով՝ տեսայ որ նոյն ինքն է որ իմ երկրորդ ուղեւորութեանս ատեն այն կղզին թողեր էր զիս, ուր առուակի մ՚ափունքը քնացեր մնացեր էի, եւ առանց զիս սպասելու կամ փնտռել տալու, ճամբայ ելեր էր ։ Առջի բերան չէի ճանչցած զինքն, որովհետեւ տեսած օրէս վեր շատ փոխուեր էր ։

Իսկ ինքն որ զիս մեռած կը կարծէր, զարմանքս չշարժեց զիս չճանչելուն ։ «Նաւապետ, ըսի անոր, արդեօք այս ապրանքին տիրոջ անունը Սինտպատ կը կոչուէր. — Այո, պատասխան տուաւ ինծ, այդպէս կ՚անուանէր. Պաղտատէն էր, նաւս հեծեր էր Պասրա երթալու ։ Օր մ՚որ կղզի մ՚իջեր էինք ջուր եւ քիչ մ՚ուտելիք առնելու, չգիտեմ ինչպէս սխալեցայ որ առանց դիտելու թէ Սինտպատ նաւ դարձեր է ոչ, ճամբայ ելայ ։ Չորս ժամ ետքը՝ վաճառականներն ու ես, անոր բացակայութիւնը դիտեցինք ։ Հովն ետեւէն էր եւ այնչափ ուժգին որ անկարելի եղաւ նաւը դարձնել եւ երթալ զինքը կղզիէն առնուլ ։ — Ուրեմն կը կարծես թէ հիմակ մեռած է, կրկնեցի ։ — Անտարակոյս, պատասխանեց նաւապետը ։ — Լաւ, նաւապետ, ըսի անոր, աչքդ բաց եւ ճանչցիր այն ամայի կղզին ձգած Սինտպատդ ։ Առուակի մ՚եզրը քնացեր էի եւ երբ քունէս ելայ, նաւորդներէն մէկը չտեսայ ։ Այս խօսքիս նաւապետը պինդ պինդ ինծի նայելու սկսաւ ։

Ուշի ուշով զիս դիտելէն ետեւ՝ վերջապէս զիս ճանչցաւ, գրկելով զիս

պոռաց. «Օրհնեալ ըլլայ Աստուած, յետին ծայր ուրախ եմ որ բաղդն իմ սխալմունքս ուղղեց ։ Ահաւասիկ քու ապրանքդ, զոր խնամօք պահեցի եւ բոլոր գացած նաւահանգիստներս ծախելու ջանացի ։ Նա կը դարձնեմ զանոնք ըրած շահովս ։» Ապրանքս առի, եւ նաւապետին պարտ ու պատշաճ երախտագիտութիւնս յայտնեցի ։

Սալահատ կղզիէն ուրիշ մը գացինք եւ անկից մեխակ, կինամոն եւ տեսակ տեսակ համեմներ գնեցի ։ Երբ հեռացանք, կրիայ մը տեսանք որ քսան կանգուն լայնութիւն ու երկայնութիւն ունէր. նոյնպէս ձուկ մը նշմարեցինք որ կովի կը նմանէր. կաթ ունէր, եւ մորթն այնքան կարծր էր որ անկից վահաններ կը շինեն ։ Ուրիշ մ՚ալ տեսայ որ ուղտի մը կերպարանն ու գոյնն ունէր ։ Վերջապէս երկար ուղեւորութենէ մ՚ետքը՝ Պասրա հասայ, անկից ալ այս Պաղտատու քաղաքը դարձայ այնքան հարստութեամբ որուն քանակութիւնը չգիտէի ։ Նորէն աղքատներուն շատ ողորմութիւն տուի եւ արդէն ունեցած հողերուս ուրիշ կալուածներ ալ աւելցուցի ։

Սինտպատ իր երրորդ ուղեւորութեան պատմութիւնն այսպէս վերջացուց ։ Յետոյ Հինտպատ բեռնակրին հարիւր ոսկի եւս տալ հրամայեց, եւ հրաւիրեց զինքն որ հետեւեալ օրը նորէն ճաշի գայ չորրորդ ուղեւորութեան նկարագիրը լսելու համար ։

Հինտպատ եւ բոլոր կոչնականները քաշուեցան, եւ հետեւեալ օրը Սինտպատ նորէն սկսաւ խօսիլ, ճաշէն ետքն՝ եւ իր արկածներուն պատմութիւնը շարունակեց ։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Երես

Առակ. Էշ, եզ ու մշակ 24

Վաճառականն ու Ճինը 34

Առաջին ծերին և եզին պատմութիւնը 42

Երկրորդ ծերին և երկու սև շներուն պատմութիւնը . . . 47

Յոյն թագաւորին և Տուպան բժշկին » . . . 58

Էրիկի ու թութակի պատմութիւնը 62

Պատժապարտ վէզիրին » 64

Սև կղզիներուն նորատի թագաւորին պատմութիւնը 80

Երեք արքայազն գալէնտէրներու և Պաղտատու հինգ կանանց պատմութիւնը 93

Առաջին արքայորդի գալէնտէրի պատմութիւնը 114

Երկրորդ արքայորդի գալէնտէրի » 123

Նախանձոտին և նախանձեալին » 134

Երրորդ արքայորդի գալէնտէրի » 150

Ջիւպէյտէին պատմութիւնը 178

Էմինէին » 188

Սինտպատ Նաւորդին պատմութիւնը 199

Սինտպատ Նաւորդին առաջին ուղևորութիւնը 202

Սինտպատ Նաւորդին երկրորդ » 208

Սինտպատ Նաւորդին երրորդ » 215

23293-
23294

2013